

3000
24579

ՀԱՅՈՅ




ՅՈՒԵՐԻ ԻԼԻՍԿԱՆԸ


ԵՐ

ՈԴԻՍԱԿԱՆԸ



566





8m 1

ԲՈՅԱ

ԱՎՐՈՐ

այսուհետեւ այսուհետեւ այ 8 թ
և ինքնառ այսէ անշնուրուն ա 2 թ 52
նույնուրուն ա 1 թ 53
սկզբան սկզբան ա 1 թ 54
մաս ա 1 թ 55
ճակարտ ա 7 թ 56
պատու ա 01 թ 57
պատու ա 02 թ 58
պատու ա 03 թ 59
պատու ա 04 թ 60
պատու ա 05 թ 61
պատու ա 06 թ 62
պատու ա 07 թ 63
պատու ա 08 թ 64
պատու ա 09 թ 65
պատու ա 10 թ 66
պատու ա 11 թ 67
պատու ա 12 թ 68
պատու ա 13 թ 69
պատու ա 14 թ 70
պատու ա 15 թ 71
պատու ա 16 թ 72
պատու ա 17 թ 73
պատու ա 18 թ 74
պատու ա 19 թ 75
պատու ա 20 թ 76
պատու ա 21 թ 77
պատու ա 22 թ 78
պատու ա 23 թ 79
պատու ա 24 թ 80
պատու ա 25 թ 81

ԳԵՐԻԴՆԱՆԴ ՀՄԻԴԹ

ՀՈՄԵՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

ԱՐՁԱԿ ՊԱՏՄՈՒԱԾ

Գ Ե Տ Կ Ե Ր Ե Զ Ե Ը Ք

ԳԵՐՄԱՆԿԵՐԵՆԻց ԹԱՐԳՄԱՆԵց

Փ Ի Լ Ի Պ Պ Ո Ս Վ Ա Ր Դ Ա Ն Ե Ա Ն

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՑՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ
ՕՐԵՎԵՆՆ ՓՈՂՈՑ, ՀԱ 1/2.

1886

ԱՅՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՅԻ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ

Վ Ե Ա Շ Ա Մ Ա Ջ Ա Վ Ր Ա Ջ Ա Փ

32880 - Կ. Հ.

ԱՐԱՐԱՏ

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Мая 1886 года.
Типог. И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1/2.

1886



16133-58 Q

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Պրիամոս թագաւորի Պարխս որդին յափշտակել էր չելենէին, որ Յունաստանի ամենասիրուն կինն էր, և փախցրել էր իւր հայրենի քաղաքն Տրոյա: Այս ոճիրը պատուհասելու համար յունաց իշխանները միացան և սպառազէն դօրքերով դէպի Տրոյա նաւեցին: Պատերազմը քաղաքի առջև տևեց ամբողջ տասն տարի, և երկուստեք շատ գիւցազներ մահ գտան: Վերջապէս Ոդիսեսի նենգութեամբ յաջողուցաւ քաղաքն առնել: Տրոյացիք սպանուեցան և չելենէն յետ տրուեցաւ իւր մարդուն՝ Մենելաւոս արքալին:



ՀՈՄԵՐԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Ա ՌԱԶԻՆ ԳԻՐՔ

ՏԵԼԵՄԱՔ

1

ԱԹԵՆԱՍ ԵՐԵՒՈՒՄ է ՏԵԼԵՄԱՔԻՆ ՄԵՆՏԵՍ ԹԱԳԱԽՈՐԻ
ՊԱՏԿԵՐՈՎ

Հոյակապ Տրոյա քաղաքից ոչինչ չը մնաց,
բայց թէ մոխիր և աւերակ, և յոյները՝ ճոխ
աւարով բեռնաւորուած, դէպի հայրենիք նա-
ւեցին: Սակայն աստուածները տարբեր վիճակ
էին սահմանել վերադարձող իշխաններին: Ո-
մանք արժանի եղան բերկուլժեամբ ողջունել
հայրենի երկրի ափերը, այլք՝ խոր ծովի մէջ
մահ գտան, որից զերծ էին մնացել ահեղ մար-
տում: Գառն էր մանաւանդ ազգերի իշխանա-
պետ Ագամեմնոնի օրհասը: Նա թէպէտ և ժա-

մանեց իւր անձկալի երկիրը, բայց այն տեղ
չար մատնութեան զոհ գնաց: Նրա կինը թա-
քուն կապուել էր իգիսթ անուն մի դժնդակ
մարդու հետ: Կինը մտերմական հտպտանքով
ողջունեց օրինաւոր ամուսնուն, սակայն երբ մի
օր սա բաղանիք էր ընդունում, յանկարծ ի-
գիսթ՝ կնոջ դրդմամբ՝ լուացուղի վրայ յար-
ձակուեցաւ և սպանեց նրան:

Որչափ այլ էր իթակէի թագուհու՝ Պենելո-
պէի վարմունքը: Այս թագուհու զեղեցկութեան
և ճոխութեան համբաւը շատ հոմանիներ հրա-
պուրեց իւր պալատը, շատ անգամ էլ նա լսեց,
թէ իւր մարդն Ոդիսկուս արդէն վաղուց մեռել
էր. բայց նա այդ խօսքերին միտ չը դրաւ և
մնաց հաւատարիմ իւր բացակայ ամուսնուն:

Ոդիսկուսի մեկնելու օրը մի չքնաղ մանուկ էր
Հանգչում Պենելոպէի գրկի մէջ: Տարիներ անց-
նելուց յետ մանուկը — դրա անունն էր Տելեմաք —
դարձել էր մի առոյգ և քաջասիրտ պատանի:

Ոդիսկուս գեռ կենդանի էր. Կալիփսէ յաւէր-
ժահարսը, կամենալով ամուսնանալ նրա հետ,
բունում էր նրան իւր թովչական կղզու վրայ: Բոլոր
աստուածները կարեկցում էին Ոդիսկուսին,
միայն թէ ոչ Պոսէիդոն, որ շատ տառապանք
էր հասցրել նրան: Մի անգամ պէտք եղաւ
Պոսիդոնին գնալ հեռաբնակ եթովպացւոց եր-

կերը, ուր նրա համար մի մեծ զոհ էր պատ-
րաստուած: Այն ժամանակ միւս աստուածներն
ահեղազօր Արամազդի ապարանքը հաւաքուե-
ցան և Աթենաս, իւր սիրելոյն լիշելով, ասաց
նրան. «Ո՞վ Արամազդ, վեհազոյնդ աստուած-
ներից: Սիրտս ցաւով ալրվում է, ազնուամիտ
Ոդիսկուսի աղէտները լիշելիս: Այժմ նրան շաղա-
շուտ զգուանքով գերի է բռնել Ատլասի գեղա-
նի դուստրն Կալիփսէ և անդուկ գուն է գոր-
ծում, որ նա մոռնայ իւր հալրենի իթակէն:
Բայց Ոդիսկուս միշտ սիրով և հաւատով լիշում
է իւր ամուսնուն և որդուն: Նա յաճախ տըր-
տում տրտում ման է գալիս ծովափի վրայ,
տենչալով գէթ մի անգամ հալրենի տան ծու-
խը տեսնել և մեռնել: Բայց և այնպէս դու նը-
րան մոռացել ես, հալրդ Արամազդ»:

Արամազդ նրան պատասխանեց. «Այդ ի՞նչ
խօսք էր, որ ասացիր, դստրիկ իմ: Միթէ հը-
նար է ինձ մոռանալ Ոդիսկուսին, որ ամէն մահ-
կանացուներից գերիվեր է հանճարով և մեզ էլ
հանապազ առատ զոհ է մատուցել: Ոչ թէ ես,
այլ միայն Պոսէիդոնն է նրա թշնամին: Սա-
կայն վճռենք, որ Ոդիսկուս վերադառնայ: Եթէ
Պոսէիդոն իմանայ էլ այս վճռուր, չի յանդինիլ
վնասել նրան, զիտենալով, որ անզօր է հա-
կառակել մեզ ամենքիս»:

Աթենաս զուարթ սրտով պատասխանեց. «Հը-
քամայիր ուրեմն չերմէսին, աստուածային բան-
քերին, իսկոյն գնալ Կալիփսէի մօտ և ասել,
որ արձակէ բազմաչարչար Ողիսևսին։ Իսկ ես
կ'երթամ իթակէ և սիրտ կը տամ նրա որդուն։
Քաջութեամբ դէմ դնելու իւր գոյքը վատնող
հոմանիներին»։

Թիցուհին այս որ ասաց, ոսկէ մոլկերն ոտ-
քերին կապեց, հաստաբեստ տէզը բռնեց, փո-
թորկաբար վայր սլացաւ երանաւէտ Օլիմպոսի
գագաթից և կանդ առաւ տարակալ Ողիսևսի
տան առջև Մենտէս արքայի կերպարանքով։

Այս տեղ նա գտպւ ամբարտաւան սեղեխնե-
րին, որոնք քէֆ էին անում, ծառերի տակ
նստոտած։ Ժիր քարոզները տանում բերում էին
պէսպէս խորտիկ և ոսկեճոյլ սկահներով մատ-
րուակում անոյշ գինի։

Տելմաք վշտահար նստած էր այդ խմբի մէջ
և հէնց այն էր մտածում, թէ արդեօք երբ
յետ կը գար իւր հայրը, Երբ կ'պատժէր հոմա-
նիներին և նորից կը տիրանար իւր գոյքին։
Յանկարծ նա նշմարեց դիցուհուն, որին սակայն
չկարացաւ ճանաչել, ըստ որում մի այլ մարդու
պատկերով էր։ Նա իսկոյն տեղից ելաւ, եկա-
ւորի աջից բռնեց, նիզակն առաւ և մտցրեց
պալատը։ Հիւրի նիզակը մի բարձր սիւնի յեն-

լուց յետ՝ հրաւկիրեց նրան գալ բազմել արուես-
տակերտ աթոռի վրայ, և պատուանդան դրաւ
ոտքերի տակ։ Ինքն էլ յետոյ մեկուսի նստաւ
և ասաց. «Փալդ բարի, ով աղնիւ հիւր։ Բարե-
համիր մեղ հետ ընթրել և ասել, թէ արդեօք
ինչ գործով ես այս տեղ եկել։

Աղախիններից մին ոսկէ կուժով ջուր բերաւ.
սրսկեց հիւրի ձեռքերը մի արծաթէ կոնքի մէջ
և սպա թէ մի ողորկ երկայնաձև սեղան կանգ-
նեց նրանց առջւ։ Պատկառելի տնտեսուհին
հաց բերաւ կողովներով, սպասաւորը՝ խորտիկ-
ներ, իսկ քարոզը անոյշ գինով մեծարեց։

Նոյն միջոցին հոմանիքն էլ աղմկելով սրահ
մտան և բազմոցների վրայ նստան։ Կերակրով
և գինով յագենալուց յետ՝ նրանք կամեցան մի
երգով էլ զուարճանալ։ Քարոզներից մին քնար
բերաւ, և հոմանիները հարկադրեցին հոչակա-
ւոր Փեմիոս երգչին մի բան նուազել իրենց
առջւ։

Մինչ նրա երգը հնչում էր, Տելմաք, զլուխը
հիւրին մերձ ճկելով, որպէս զի ուրիշները բան
զսէին, իսօսել սկսաւ և ասաց.

«Սիրելի հիւր, տեսնո՞ւմ ես, ինչպէս են վատ-
նում դրանք հօրս գոյքերը, թշուառ հօրս, որի
սպիտակ ոսկորները գուցէ վտում են անձրւի
տակ կամ ծփում են ծովերի մէջ։ Ո՛հ, եթէ

նա վերադառնար: Այս ժամանակ դրանք անշուշտ կ'ուղենալին արագ ոտքեր ունենալ, քան թէ ոսկի և պերճ շորեր: Բայց նա արդէն կորած է մեր չար բախտից, և մենք այլ ևս նըրան տեսնելու յոյս չունինք, թէպէտ և կան ասողներ, թէ վերստին յետ պիտի դայ: Սակայն ասա ինձ ճշմարտապէս, ով ես դու, արդոյ հիւր, և ինչու ես եկել մեղ մօտ: Արդեօք առաջին անգամն ես այս տեղ գալիս, թէ առաջ էլ հիւր ես եղել հօրս յարկի տակ: Նա հանապազ մարդապէր էր և բարեկամ շատ ունէր»:

«Ամէն բան կը պատասխանեմ», ասաց խաժակն Աթենաս: «Ես եմ Մենտէս՝ քաջ նաւազար տափիացւոց թագաւորը: Մտադիր եմ Տեմէս նաւել այս տեղից և տարած պղինձս երկաթի հետ փոխանակել: Ես եկայ նախ Իթակէ, լսած լինելով, թէ հայրդ արդէն տուն էր հասել: Ես նրա հին բարեկամն եմ և ի սրտէ կ'ուզէի տեսնել նրան: Սակայն լսիր ինձ, քանզի ինչ որ ասելու եմ, ազգել են ինձ անմահ դիք: Հայրդ դեռ կենդանի է և էլ երկար չի պիտի մնայ հայրենիքից բացակայ, այլ պիտի դայ և ազատուի, թէկուզ երկաթէ շղթաներով կապուած լինէր: Սակայն դու վաղեան օրն ատեան կազմիր, հոմանիների դէմ խօսիր և վունտիր նրանց այս տեղից: Այս էլ արա. մի նաւ

վերցուր Իթակէի բնակիչներից, հետդ առ քըսան թիւավար և գնա հօրդ որոնելու: Նախ չուփր դէպի Պիւրոս և Նեստոր իմաստնից մի լուր հարցուր: Եթէ նա չկարանայ ասել քեզ մի ստոյդ բան, գնա Սպարտա՝ Մենելաւոս արքայի մօտ, որ Յունաստան վերադարձող դիւցազներից վերջինն է»:

Աթենաս այս ասելով վեր կացաւ: Տելեմաք խնդրում էր նրան մնալ փոքր ինչ և մի հիւրայթ ընդունել ի լիշտակ: Թիցուհին պատասխանեց. «Առաւել երկար մնալ չեմ կարող, իսկ հիւրոյթը յետոյ կը տաս, երբ նորից դամ»:

Ասաց, և արծուի նման վերև սլացաւ: Ճուարած պատանին այն ժամանակ իմացաւ, որ հիւրը մի աստուած էր:

2

ՏԵԼԵՄԱՔ ԱՏԵԱՆ Է ԳՈՒՄԱՐՈՒՄ

Հոմանիներն ականջ էին դնում մեծահամբաւ երգահանին, որ յոյն քաջերի աղէտալի դարձն էր երգում: Այս երգի ձայնը լսեց և ուշիմ Պիենելուպէն, որ նստած էր վերնայարկում: Երկու նաժիշտների հետ միասին նա շտապով սանդուղներից վայր իջաւ, մի քողով գլուխը ծածկեց, սրահի շէմքի վրայ կանգ առաւ և ասաց.

«Փեմիոս, երգիչդ աստուածային։ Դու այնքան գուարճալի բաներ դիմես։ Երգիր ահա դրանց մասին, ինչպէս որ սիրտդ թելադրէ։ Թող միայն այդ տխուր երգը, որ սիրտս դառն ցաւով կեղեքում է։ Երգում ես քաջ դիւցազներին, սակայն ուր է այն մէկը, որի փառքով լի են չելլաս և Արգոս»։

Այս ասաց տիրուհին և վշտաբեկ հեռացաւ իւր սենեակը։

Երգիչն լոեց։ Խսկոյն մի խառնաշփոլժ աղմուկ բրդաւ սրահի մէջ, և հարբած հոմանիներից մին և միւսը սկսան կանչել, թէ կին են ուզում Պենելոպէ տիրուհուն։ Տելեմաք, այս բանի վրայ զայրացած, ոտքի ելաւ և գոչեց։ «Ո՞վ հոմանիք, ինչպէս էք համարձակվում այդ աստիճան լրբանալ հօրս տան մէջ։ Թողէք ձեր լիտի աղաղակը։ Վաղն առաւօտ մենք ամենքս ժողով կ'երթանք։ Սիրտս ուժգնապէս դրդում է ինձ՝ դէժ մի անգամ բազմութեան մէջ խօսել ձեզ հետ։ Եթէ իրաւ աղնիւ մարդիկ լինէք, ձեր սեփական հացն կ'ուտէիք և ձեր տներում քէֆ կ'անէիք։ Այն ինչ ահա դուք սիրում էք մի ուրիշի գուքը վատնել։ Բայց իմացէք—արդարութիւն սիրտի խնդրեմ Արամազդից»։

Սկզբում հոմանիները պատանու ճառից զար-

մացան, քանզի երբէք Տելեմաք ալդպէս համարձակ չէր խօսել նրանց առջեւ։ Սակայն յետոյ ծաղրեցին նրան, և սրահը լիրք քրքիջով լցուեցաւ։ Հոմանիները սկսան նորից երգել և պարել, և միայն ուշ գիշերով հեռացան ապարանքից։

Տելեմաք, տխուր մտքերով պաշարուած, իւր ննջարանը քաշուեցաւ. նրան մի ջահով առաջնորդեց Եւրիկլէն՝ իւր մանկութեան դայեակը։ Եւրիկլէն մի ժամանակ գրկի վրայ էր ման ածել նրան և բոլոր աղախիններից առաւել էր սիրում նրան։ Պատանին, մտքում շատ բան որոճալով, իւր սիրուն շորերը հանեց և հոգատար պառաւին տուաւ։ Պառաւն, հանդերձի ամէն մի կտորը ծալելուց և դարսելուց յետ, ննջարանից գուրս ելաւ, դրան արծաթէ լամբը քաշեց և զգուշութեամբ նիզով փակեց։ Խսկ Տելեմաք մահին մտաւ և մինչեւ քունը տանիլը մտածում էր այն խօսքերի վրայ, որ ասել էր նրան Աթենաս։

Երբ արեւը ծովի միջից բարձրացաւ, պատանին փափուկ մահճից վեր կացաւ, հագաւ սիրուն պատմուճանը, սանդալները ոտքին կապեց, սուրն ուսից կախ արաւ և գուրս ելաւ առագաստից՝ զեղեցկութեամբ մի աստուծոյ նմանակ։ Նա քարոզներ արձակեց և հրամայեց ի ժողով կանչել յոյներին։ Բազմութիւնն որ

խմբուեցաւ, նա բռնեց իւր նիզակն և հետն երկու արագոտն շուն առնելով, արագ արագ ատեան գնաց: Աթենաս նրան մի վեհական շուք էր շնորհել, այնպէս որ բոլորն էլ հիացան, ճանապարհին նրան տեսնելիս: Հէնց որ նա հրապարակի մէջ մտաւ, ոտքի ելաւ Եղիպտիոս ծերունին և ասաց. «Լսեցէք ինձ, ով իժակեցիք: Աստուածանման Ոդիսեսի մեկնելուց յետ՝ մենք դեռ երբէք մի ժողով չէինք կազմել այս կղզու վրալ: Արդ ասացէք, ով հաւաքեց ձեզ այս տեղ: Արդեօք նա կամենում է զգուշացնել մեզ մի սպառնացող վտանգից, թէ բոլորիս վերաբերեալ մի օդտակար բան ասեմ: Մի այդպիսի մարդ արժանի էր Արամազդի օրհնութեան»:

Այն ժամանակ ամպրոպայինն Արամազդ լեռան մի սեպ գաղաթից երկու արձիւ արձակեց: Մի ըուպէ թուչունները թւեատարած սաւառնեցան օդի մէջ. յետոյ յոդնախումբ բազմութեան վրայ նայեցան, պտուտ եկան, թւեերն ուժգին թօթափեցին, իրար կուրծքն եւ վիզը մազելներով ճանկուեցին և ապա թէ անհետացան, ճախր առնելով դեպի աջ:

Ժողովուրդն ապշած մնաց և չղիտէր—արդեօք ինչ էր նշանակում արծիւների երկուիլը: Այն ժամանակ ոտքի ելաւ ալեորն չալիթերս

և զգուշացրեց հոմանիներին Ոդիսեսի վրէժից: «Սուտ գուշակ չեմ», ասաց նա, «և ասելիքս լաւ զիտեմ: Մի օր ես Ոդիսին էլ զուշակեցի, թէ շատ աղէտներ պիտի կրէր դէպի Տրոյա արշաւելիս: Ճատ տառապանք պիտի կրես դու, ասացի նրան. բոլոր ընկերներիդ պիտի կորցնես և միայն քսաններորդ տարին յետ պիտի գաս անծանօթ: Այս էր իմ հմայութիւնն, որ գործեցի երբեմն, և ահա մօտեցել է նրա վերադարձի ժամանակը»:

Այս բանի վրայ Եւրիմաքոս բարկութեամբ և հեգնութեամբ յանդիմանեց չալիթերս դիւցազնին: «Եթէ դու գուշակելու փափագ ունիս», ասաց նա, «քո սեփական տունդ գնա և քովններիդ ազատելու ճարը տես: Իսկ ես կ'ասեմ Տելեմաքին, թէ այս օրից մենք՝ սեղեխներս, և՛ս առաւել պիտի շուայտենք նրա տան մէջ և գոյքերը փացնենք»:

Տելեմաք ինդրեց ժողովից, որ մի նաւ շնորհեն իրեն, որովհետև մտագիր էր գնալ Սպարտա և Պիւլոս՝ բայցակայ հօրը պտրելու: «Ես կը վերադառնամ մի տարիից յետ», ասաց նա: «Երբ համոզուիմ, որ պանծալի հայրս էլ կենդանի մարդկանց թւում չէ, ես մի շիրմ կը կանգնեմ նրան, մօրս էլ կը որդորեմ ընտրել մի նոր ամուսին»:

Փողովին ներկալ էր և Մենտոր, որին Ողիս-
սես մեկնելիս յանձնել էր խնամք տանել իւր
տան վրայ: Այժմ նա վեր կացաւ և ասաց յու-
զուած սրտով. «Ո՞վ իթակեցիք, ես կ'ուզէի, որ
այսուհետեւ մենք երբէք չունենայինք մի բա-
րեսէր, մի ողորմած, մի հեղ արքայ: Վասն զի
մեր թագաւորը մի լաւ հայր էր, և դուք ա-
պերախտ հանդիսացաք: Զեմ ուզում սեղեխնե-
րին վատասել, թէ չարաչար վատնում են մեր
սքանչելի թագաւորի ստացուածքը—այս յան-
ցանքը նրանք գլխով պիտի տուժեն: Սակայն
քեզ եմ ուզում կշտամբանքս, ով ժողովուրդ,
որ մինչև այժմ համբերում ես նրանց չարու-
թեան»:

«Այ դու խելար», գոչեց նրա վրայ Լոկրի-
տոս, «դու ինչպէս ես յանդկնում մեր դէմ զըր-
գուել խուժանը: Ովքեր են դրանք, որ մեզ վնա-
սեն: Զէ որ մենք անգամ Ողիսեխին կըկործա-
նենք, թէ որ նա այժմ վերադառնար»:

Այս ասելով Լոկրիտոս ատեանը լուծեց, և
հոմանիները ծիծաղելով Ողիսեսի ապարանքը
գնացին:


ԱԹԵՆԱՅ ԵՐԵՒՈՒՄ Է ՏԵԼԵՄԱԳԻՆ ՄԵՆՏՈՐԻ
ԿԵՐՊԱՐԱՆՔՈՎ.

Իսկ Տելեմաք տրտում տրտում ծովափ գնաց,
Ճեռքերը չըի մէջ լուաց և Աթենաս դիցուհուն
աղօթք կարդաց:

Նոյն ժաման վերստին երկեցաւ նրան Աթե-
նաս. բայց այս անգամ պատանին չկարացաւ
նրան ճանաչել, ըստ որում դիցուհին ընդունել
էր Մենտորի կերպարանքը,—Մենտորի, որ իբ-
րև Ողիսեսի բարեկամ, տակաւին մի ժամ ա-
ռաջ այնպէս ազդու խօսել էր ժողովի մէջ նրա
օգտին: «Թող այժմ հոմանիներին», ասաց նա,—
«այդ լիմարներին, որոնք ոչ խելք ունին, ոչ
ազնիւ սիրտ, ոչ էլ գիտեն, թէ որքան մօտ է
լրենց կորուստը: Դու սակայն մի հրաժարուիր
հօրդ որոնելու որոշումից և պատրաստուիր խս-
կոյն չուել: Նաւի մասին ես կըհոգամ, ես կը
գտնեմ և ժիրաժիր թիավարներ»:

Համբեալ շտապով տուն շտապեց Տելեմաք և
գտաւ այն տեղ հոմանիներին, որոնք ալծեր և
խոզեր էին մորթոտում խնջուքի համար: Հաս-
տափորն Անտինոս ծիծաղելով Տելեմաքի դէմ
ելաւ, Ճեռքից բռնեց և ասաց. «Այ դու ան-
սանձ պատանի, զգոյշ կաց, որ մեր դէմ միւս
չոմ. Ողիս.

16/33-58



անդամ չըղալրանաս, չըբորբոքուիս: Լաւ է՝ դու
էլ մեզ հետ միասին կեր ու խմիր, մինչև որ
յոյները քեզ համար մի նաւ հոգան և ընտիր
թիավարներ»:

Տեղեմաք ձեռքը յետ քաշեց և դառնապէս
պատասխանեց. «Ոչ ճաշել եմ ուզում ձեզ հետ,
ոչ էլ հանդիստ վայելել: Հերիք է, ինչքան որ
դուք այսքան տարի հօրս ստացուածքը վատ-
նեցիք: Այժմ ես ձեզ մահ պիտի սպառնամ»:

Թիծաղեցան զոռոզամիտ հոմանիներն, և մին
ասաց հեգնելով. «Դա մեզ անշուշտ իրսպանէ.
Դա ընկերներ կըբերէ, կամ մեզ թիւնով կ'ոչըն-
չացնէ»: —«Դուցէ ինքն էլ Որիսի նման ի չըք
դառնայ», դոչեց միւսն ծաղրաբար: «Այնուհե-
տեւ որ մէկիս պիտի բաժնենք դրա դոյքերը»:

Տեղեմաք հեռացաւ և մտաւ տան խոր շտե-
մարանը, ուր շատ ոսկի և պղինձ, շատ հա-
գուստներ և անոյշ զինով լի սափորներ էին
մթերուած: Ֆրազլուխ Եւրիկլէ տնտեսուհին այս
բոլովի վրայ զիշեր ցերեկ հսկում էր: Տեղեմաք
կանչեց նրան և հրամայեց պատրաստել տասն-
երկու սափոր զինի և տասներկու պարկ ալիւր:

Արտասուեցաւ Եւրիկլէն, իմանալով, որ Տե-
ղեմաք պիտի մեկնէր այն զիշեր: Բայց և այն-
պէս խօսք տուաւ՝ մօրը չչայտնել այդ բանը,
մինչև որ նա որդու մասին չհարցնէր: Կոյն

միջոցին Աթենաս, Տեղեմաքի տիպն առած,
ման էր գալիս շուկայում և վարձում էր երի-
տասարդ նաւաստներ և մի նաւ:

Երբ արեւ մայր մտաւ, Աթենաս, դարձեալ
Մենտոր ձևանալով, Որիսեսի պալատը գնաց և
այնպէս թմրեցրեց գինարբու սեղեխներին, որ
բոլորի ձեռքից բաժակները վայր ընկան: Այնու-
հետև նրանք տեղերից վեր կացան, սրահը թո-
ղին և երերուն քաղերով իրենց տները ցրուե-
ցան: Այն ժամանակ դիցուհին Տեղեմաքի առջև
կանգնեց և գրդեց, որ խկոյն գնայ նաւ
նստի: Խոկ նրա հետ եկած նաւաստներն ու-
տելի պաշարը վերցրին և շտապելով ծովեզը
տարան, որ նաւի մէջ տեղաւորեն: Ապա թէ
կայմը կանգնեցին, առագաստի պարանները քա-
շեցին, և նաւն ափից մեկնեցաւ:

Ալեբախ նաւը, թուխ ալիքները ձեղքելով,
արագ սուրաց դէալի յառաջ. խոկ Տեղեմաք և
նաւաստները զինի ձօնեցին աստուածներին, և
մանաւանդ խաժակն Աթենասին, որ Մենտորի
պատկերն առած, նրանց մէջ տեղն էր գտան-
վում, խորհուրդ տալով և օդնելով, մինչդեռ
նրանք չըգիտէին, թէ ով էր նա:

ՏԵՂԵՄԱՔ ԳԱԼԻՒ Է ՆԵՍՏՈՐԻ ՄԹԸ

Արեգակը ծովի միջից որ բարձրացաւ, լոյս շնորհելով առտուածներին և մարդկանց, նաւն էլ Պիւլոս ժամանեց, ուր բնակում էր ծերունի Նեստոր արքան: Ամենքին էլ սիրելի էր այս ալեոր դիւցաղն, որ իւր կեանքում երեք սերունդ էր տեսել և ամէն ուրեք իմաստութեամբ հռչակուել:

Մինչգեռ նաւը մօտենում էր, ժիր ծերունին, իւր շուրջը մի ահազին խումբ հաւաքած, ծովափի վրայ էր գտանվում, որովհետև կամենում էր հանդիսաւոր զոհ նուիրել Պոսիդոնին՝ ծովի գանգրահեր տիրապետին: Ֆողովուրդը կանդնած էր ինն շարքով, ամէն մի շարք լիսուն մարդուց բաղկացած: Եւ շարքերի երկու կողմից՝ ինն ինն զուարակ, որոնք պիտի զինուէին:

Աեղանների վրայից բոցերը պայծառ վեր էին սլանում, երբ ոտք դրին ծովափի վրայ Աթենաս և Տելեմաք: Պիցուհին սիրո տուաւ պատանուն, որ սկզբում վարանած էր իւր խօսելու ճառի մասին, և սա ժիր ժիր նրան հետևեց: Այսպէս ահա հասան նրանք այր մարդկանց ակմբին, որ հզօր աստուծուն աղերսներով և

զոհերով մատչելուց յետ, զուարթ նստած ճաշ էր ուսում:

Ճատերն իսկոյն վեր կացան և մտերմաբար ընդ առաջ ելան հիւրերին: Բոլորից առաջ գնացողն էր Նեստորի որդին Պիսիստրատոս, որ հասակով Տելեմաքին հաւասար էր: Նա երկուսին էլ աջ տուաւ, դէպի բազմոցը հրաւիրեց և խնդրեց փափուկ մորթերի վրայ նստել հօր և եղբօր մէջ տեղում: Յետոյ կերակուր առաջարկեց, ոսկէ բաժակով գինի բերաւ և դառնալով Աթենասին, ասաց.

«Ազօթք արա Պոսիդոնին, ով նորեկ հիւր, զի նրան է նուիրուած այս տօնական խնդրովը: Սովորութեան համեմատ հզօր աստուծուն ձօնելուց յետ, ըմպիր հոգեպարար բաժակից և թող ընկերքդ էլ նոյնը անեն: Զէ՞ որ մենք բոլորս աստուածներին կարօտ ենք: Դու ես մեծը որանց մէջ, ուստի նախ քեզ եմ վերընծայում այս բաժակը»:

Աւրախացաւ Աթենաս ուշիմ պատանու խօսքերից, բաժակն առաւ, անոյշ գինուց մի քանի կաթիլ գետին սրսկեց և ասաց. «Ո՞վ Պոսէյդոն, ծովի զօրեղ աստուածդ, մի համարիր մեզ անարժան մեր աղերսի կատարման: Ճնորհիր փառք և պատիւ ազնուական Նեստորին և որա բոլոր զաւակներին, և պարզեիր առաստօրին:

նէնք ամբողջ ազգին քեզ ընծայուած պերճ գոհերի վոխարիչն: Տուր նա և ինձ և պատանուս յաջողութիւն այն գործի մէջ, որի համար եկել ենք, ծովի ալիքը կտրելով»: Այսպէս խօսեց դիցուհին և ինքն արդէն կատարեց, ինչ բան որ խնդրում էր:

Միայն կերակրից յետ հարցրեց Նեստոր իւր հիւրերի անունն և զալստեան նպատակը:

Տելեմաք ճշմարտութեամբ պատմեց նրան ամէն բան և խնդրեց, եթէ հնար էր, մի ստոյդ լուր տալ իւր հօր մասին: Նեստոր սկսաւ պատմել յոյն քաջերի վերադարձը: Այն ժամանակ՝ նրա ասելով՝ Ոգիսևս գեռ կենդանի էր: Բայց յետոյ յոյների մէջ մի վէճ բրդաւ, թէ ո՞ր ճանապարհով պէտք էր յետ գալ: Ոմանք մի կողմ նաւեցին, այլք՝ ուրիշ կողմ: Այդ միջոցին էր որ Ոգիսևս անջատուեցաւ նրանից, ուստի և նա չգիտէր այժմ—արդեօք գեռ կենդանի էր այդ դիցաղնը: Այնուհետև Նեստոր խորհուրդ տուաւ պատանուն՝ դիմել Սպարտալի Մենելաւոս թագաւորին: «Այս թագաւորն», ասաց Նեստոր, «բոլորից շատ բացակայ մնաց հալբենիքից և միայն նոր վերադարձաւ. հետեաբար նա կարող է միւսներից ճիշտ բան գիտենալ Ոգիսևսի վերաբերմամբ»: Վերջապէս Նեստոր յորդոր կարդաց պատանուն՝ կտրիճ լինել իւր պան-

ծալի հօր նման, որին արդէն շատ նման էր թէ իւր տեսքով, թէ լեզուով:

Տելեմաք պատասխանեց, «Ո՛հ, երանի թէ աստուածներն ոյժ տալին ինձ պատժելու չար հոմանիներին, որոնք նեղում են սկսելի մօրս և գոյքերս վատնեյուց յետ՝ ինձ էլ գեռ այպանում են»:

«Ո՞վ դիտէ», ասաց Նեստոր, «թէ հայրդ գեռ չի վերադառնալ և հոմանիներին չի պատժիլ: Բայց ասա ինձ—ազմտ կամքով նրանց առջև խոնարհեցար: Եթէ Աթենաս քեզ էլ այնպէս սիրելու լինի, ինչպէս որ հօրդ էր սիրում, այն ժամանակ հոմանիք շուտ կրկտեն հարսանիքի յոյսերը»:

Այս ասաց Նեստոր և հրամայեց տալ պատանուն կառք և ձիեր, որպէս զի նա Սպարտագնայ: Յետոյ պատմեց պէսպէս անցքեր տրոյական արշաւանքից: Արեն արդէն մայր էր մտել, երբ Աթենաս վեր կենալու խորհուրդ տուաւ պատանուն: Մի անդամ էլ բաժակները լցուեցան և վերջնական նուէր հանուեցաւ աստուածներին: Հիւրերն ուրքի կանդնելով, մտադիր էին հրաժեշտ առնել Նեստորից, սակայն Նեստոր բռնեց նրանց և ասաց.

«Քաւ լիցի Արամազդից, որ գուք այժմ դէպի նաւը վերադառնաք: Միթէ ես աղքամ ոմն

եմ, որ չկարանամ այս դիշեր ասսպնջական լինել ձեզ: Զէ, բարեկամներ. ոչ զեղեցիկ վերմակների պակասութիւն կայ տաճառ մէջ, ոչ էլ փափուկ մահմաների, որ թոյլ տալի նաւի վրայ դիշեր անցնել Ոդխևսի աղնիւ որդուն»:

«Ո՞վ բարեմոյն ծերունի», պատասխանեց Աթենաս, «արժան է, որ պատանին հնազանդի քեզ, քանի որ այդպէս սիրով ևս հետը վարփում: Սակայն ինձ անհրաժեշտ է նաւի մէջ դիշերել, որովհետև արշալուսին պիտի մեկնիմ գործիս համար»: Այս ասելուն պէս՝ արծուի նման վեր սլացաւ դիցուհին և օդի մէջ անհետացաւ:

Բոլորեքեան ափիբերան մնացին, և վերջապէս Նեստոր ասաց. «Աստուած է քեզ ուղեկից, ով պատանի, զի հօրդ հզօր պաշտպանն էր, որ իսկոյն երկնաճեմ վեր սլացաւ այս տեղից»: Եւ Նեստոր աղօթք արաւ դիցուհուն, ուխտելով զոհել նրան մի տարեւոր լայնաճակատ տրմուղ երինջ:

Այսուհետև նու պատանուն իւր պալատը հրաւիրեց, ուր որդիքն էլ նրա ետևից գնացին: Այն տեղ նրանք քանդակածոյ ալժուների վրայ բազմեցան և տնտեսուհին անուշաբոյր դինի բերաւ ամենքին: Թիցուհուն նուէր ձօնելուց և բաժակը պարպելուց յետ՝ նրանք գնացին հանդչելու, և Պիտիստրատ առաջնորդեց Տելեմաքին

դէպի մի շքեղ անկողին, որ գտանվում էր մի բարձրայարկ սրահի մէջ, ուր որ ինքն էլ նընջեցաւ: Իսկ նեստոր և իւր ամուսնաւոր որդիները զեղեցիկ ապարանքի հեռաւոր սենեակներում քուն եղան:

ԶՈՒ ԵՒ ԶՈՒ

Միւս առաւօտ Նեստոր բոլորից վաղ ելաւ մահձից և դուրս դալով դէպի սիւնազարդ դրանդին, մի սրբատաշ քարից կոփուած նըստարանի վրայ բազմեցաւ: Նրա դիցատիպ հայրն էլ մի օր այդ աթոռի վրայ էր նստում արդար վճիռ հատանելու, երբ աղերսող մարդիկ գալին: Նեստոր, գաւաղանը ձեռին բռնած, որդիներին ձայն տուաւ: Նրանք եկան և քարակոփ աթոռների վրայ նստան:

«Միրելի որդիք», ասաց Նեստոր, «փութացէք սրտիս փափազը կատարել, հաշտ առնելով Աթենասին, որ երեցել էր Պոսիդոնի նուիրական հացկերոյթի ժամանակ: Թող ձեզնից մին դաշտ գնայ՝ պատուիրելու հովիւներին, որ մի երինջ վարեն այս տեղ: Միւսն թող Տելեմաքի սևաթոյր նաւը գնայ և նրա բոլոր ընկերներին իմ պալատը հրաւիրէ: Թող երրորդն արտես-

տագէտ Աերկէոսին հրաման տայ, որ այս տեղ փութայ և երնջի եղիւրներն ոսկեզօծէ: Իսկ միւսներդ պատուիրեցէք սպասարար աղախիններին մի շքեղ սեղան պատրաստել իմ հոյակապ սրահիս մէջ»:

Որդիները շտապով գնացին հօր հրամանները կատարելու: Կանչուածներն իսկոյն եկան, եկաւ և խաժակն Աթենաս, որ ուզում էր անտես կերպով ներկայ լինել իրեն ձօնուելիք նուէրին: Ստրատիոս, և Եքեփրոն մի երինջ բերին, եղիւրներից բունելով. Արետ ջրով լեցուն մի կոնք բերաւ և ձաւարով լի մի կողով. Թրասիւմեդ եկաւ մի սուր տապար կրելով, որով հարուած պիտի տար զենլի երնջին, և վերջապէս Պերսէոս արեան ամանը հասցրեց: Նեստոր աջը թրջեց կոնքում, քաղեց երնջի ճակատից մի փունջ մազ և ձգեց դրան կրակի մէջ: Յետոյ աղօթք ասելով, ցանեց սեղանի և զոհի վրայ մի բուռն ձաւար: Աղօթքից յետ յառաջ եկաւ նրա քաջ սրդին Թրասիւմեդ և այնպէս ուժով հարուած տուաւ երնջի վզին, որ կենդանու նեարդերը մէջէ ի մէջ կտրուեցան և կենսական ոյժը շիջաւ: Ֆանը հեծելով տապալուեցաւ կենդանին, և պալատի կանայքն աղխողորմ լաց եղան: Այն ժամանակ Պիսխտրատ դողդոջ երինջը լայն դաշոյնով փողոտեց, իսկ Պերսէոս

հոսող արիւնը ամանի մէջ ընդունեց: Ապա թէ զոհի մարմինը լոշատեցին: Ամենալաւ կտրոները կրակի վրայ դրուեցան և փայտերը կարմեր գենով սրակուեցան: Մնացեալ միտն էլ շամփուրներով խորովեցին, որ յետոյ ճաշակեն:

Նոյն միջոցին Տելեմաքին լուացին և պարարտ իւղով օծեցին: Անմահների պէս գեղեցիկ դուրս ելաւ նա բաղանիքից և նստաւ Նեստորի մօտ:

Ճաշը պատրաստ էր. բոլորն էլ սրահ մտան և նրբաքանդակ աթոռների վրայ բաղմեցան: Սպասաւորները ամէն մէկին գինի մատրուակեցին ոսկեզօծ բաժակներով: Սեղանակիցները կերակրով և ըմպելիքով որ յագեցան, Նեստոր ասաց. «Հապա որդիք, այժմ շտապեցէք գեղաբաշ երիվարները լծելու, որ Տելեմաք ճանապարհ ընկնի»:

Որդիքն իսկոյն աթոռներից վեր կացան և հօր կամքը կատարեցին: Իսկ տնօրէն կլինը հաց, խորտիկ և զինի դրաւ կառքի մէջ, որ պատանին ուղևորութեան ժամանակ ոչ մի բանի պակասութիւն չունենար: Բոլորեքեան դուրս ելան այժմ, և Տելեմաք ցատկեց նստաւ երինազարդ կառքի մէջ, իսկ նրա կողքից՝ Պիսխտրատ: Սա երասաններն իւր ձեռքն առաւ, պերճ ձիերը մտրակեց, և կառքը գաւթից դուրս սրանանալով, բուրաւէտ դաշտերի մէջ անհե-

տացաւ: Այսպէս նրանք ամբողջ օրն արշաւեցին: Իրիկուայ դէմ, երբ ստուերներն երկարուեցան, նրանք Փերի ժամանեցին և Դիոկլէսի մօտ իջան, որ և սիրով ընդունեց նրանց:

6

ՏԵԼԵՄԱՔ ԳՈԼԻՍ Է ՄԵՆԵԼԱԽՈՍԻ ՄՕՏ

Ուղևորները միւս օրուայ արշալուսին նորից ընկան ճանապարհ և իրիկուայ դէմ մի ցորենաբեր դաշտ հասան, որ վէտ ի վէտ ճօճվում էր իւր սովեփազ հասկերով: Այս սիրուն տեսարանից Պլոխտրատ ուրախացաւ, քանզի լսկոյն իմացաւ, որ արդէն մօտեցել էին իրենց տենչալի նպատակին: Արևը նոր էր մալր մտել, որ նրանք մարդաշատ Սպարտալի մէջ ոտք դըրին և Մենելաւ արքայի պալատի առջև կանգ առին: Դեռ կառքից չէին լջել, և ահա նրանց ականջին խրախճանութեան ձայներ հասան պայտի միջից: Այն օրը Մենելաւ հարսանեաց տօն էր տօնում. նա պսակում էր իւր երկու գաւակներին, յատկապէս չերմիոնէ աղջկան՝ նէսպտոլէմ պատանու հետ, որ Աքիլի որդին էր, և Մեգարէժ որդուն՝ Աեկտորի դստեր հետ: Մի երգիչ կիթառ ածելով քաղցրանուագ եր-

գում էր, հիւրերն էլ զուարձանում էին պարողների վրայ նայելով:

Մի սպասաւոր ներս վաղեց, Մենելաւին մօտեցաւ և ասաց. «Տէր արքայ, մեր դրան մօտ կանգ առին երկու սիրուն պատանիք, որոնք կարծես վեհն Արամազդի որդիները լինէին: Արդեօք լուծենք կառքից նրանց քրտնահար ձիերը, թէ ցոյց տանք մի ուրիշ տուն և իջևան»:

Սրտմտեցաւ Մենելաւոս և ասաց. «Դու երբէք անշնորհ չէիր. ինչու ես ալժմ լիմարի պէս բարեջում: Միթէ մեզ էլ չէ պատահել հիւրասիրուիլ ուրիշներից: Ամօթ չէ մեզ ճանապարհ դնել հիւրերին: Դէ ուրեմն շուտով դնա, լուծիր կառքից ձիերն և ներս կանչիր օտարական հիւրերին»:

Սպասաւորը դուրս վագեց: Փրփրած ձիերն իսկոյն լի մսուրի մօտ կապուեցան, խոկ պատանի հիւրերն ապարանքը բերուեցան: Նրանք սքանչացան այն փառահեղ շքեղութիւնից, որ տեսան իրենց առջև: Կորեկներին բաղանիքում լուանալուց յետ՝ սրահ տարան և խնդիրցին, որ մին բազմի Մենելաւի աջ կողմից, միւր ձախից:

«Վայելեցեք արդ հաց և գինի», ասաց արքան, մտերմաբար նրանց ձեռքից բռնելով: «Վաշ թէ ես հարցմունք կ'անեմ ձեր տոհմերի

վերաբերմամբ, որոնք անշուշտ փառաւոր են,
ինչպէս որ ձեր դէմքից էլ երևում է»:

Արքան ինքն իւր ձեռքով դրաւ նրանց առ-
ջւ խորովածի մի գեր կտոր, որ պատուի բա-
ժին էր, և պատանիքն ուրախ սրտով ճաշեցին:
Կշտապինդ յագենալուց յետ՝ Տելեմաք, Պիսիստ-
րատին հակուելով, կամացուկ ասաց նրան.
«Տես, ինչպէս են շողողում պղինձները, ինչ-
պէս են փայլակում սաթն, արծաթն և ոսկին
այս հոյաշէն սրահի մէջ: Հիանում եմ այս ան-
բաւ ճոխութիւնը տեսնելին: Արդարեւ, Պիսիստ-
րատ, ոլիմպական Արամազդի դաւիթն միայն
կարող է լինել այսպէս պայծառ»:

Մենալաւոս այդ խօսքերն որ լսեց, ասաց.
«Իմ սիրելի որդեակներ, ովք կարող է Արամազդի
հետ մրցիլ, որի պալատն անեղծական ոսկուց
է: Իրաւ է, ես շատ տառապանք կրելուց յետ՝
հարուստ գանձեր բերի այս տեղ նաւերով: Բայց
և այնպէս՝ վիշտ է տիրում իմ սրտին, երբ յի-
շում եմ անցած գնացած օրերը: Ես շատ ըն-
կերներ կորցրի աղէտների հանդիպելով: Տոլորին
էլ այժմ ողբում եմ, բայց ոչ այնքան, որքան
մէկին, որին յիշելիս թէ կերակուրս է դառ-
նանում և թէ քունս: Այդ մէկն էր Ողբնես,
որ այնպէս անխոնջ տքնում էր մեր արդար
գործի համար, թէև ոչինչ չվաստակեց դրա

փոխարէն, բայց թէ չարիք և կուրուստ: Ես մաշ-
վում եմ անկերջ թախծով, քանզի չդիտեմ,
արդեօք նա կենդանի՞ է, թէ մեռած է: Ո՛հ,
ովք դիտէ, թէ որչափ են ողբում նրան իւր
պարկեցտ ամուսինն և Տելեմաք, որ տակաւին
մանուկ էր, երբ հայրը Տրոյա գնաց»:

Այսպէս խօսեց Մենելաւոս և մորմոքեց Տելե-
մաքի աղնիւ սիրտը, որ ալրվում էր կարօտելց: Արտասուքի կայակներ վայր սահեցան նրա աչ-
քերից և ծիրանի լողիկով սքողեց նա իւր դէմ-
քը: Այս որ տեսաւ Մենելաւոս, իսկոյն զգաց
պատանի հիւրի ովք լինելն և սկսաւ կշռել մտքի
մէջ, արդեօք յայտնէր նրան այդ բանը, թէ
սպասէր, որ պատանին ինքն բացուէր: Մինչ նա
այսպէս խօրհում էր, բուրաւէտ առագաստից
դուրս ելաւ իւր չեկենէ ամուսինն և նազելով
սրահ մտաւ՝ գեղեցկութեամբ ոսկեփքին Արտե-
միսին նմանակ: Թագուհուն հետեւում էին ե-
րեք նաժիշտ. մին մի քնաղ աթոռ դրաւ նրա
համար, միւսն բերաւ մի թաւ գորդ, երրորդն
մի սակառ, որի մէջ կային մի աղէկատ և
նըրագոյն ասուկ թելեր:

Պատանիներին ուշի ուշով գննելուց յետ՝ չե-
լենէն մարդուն դարձաւ և ասաց. «Արդեօք
հարցըլիր մեր հիւրերի անունը: Ես չեմ կարող
թաքցնել, որ հիացումն է տիրում ինձ այս

պատահուն զննելիս: Ես օրումս չեմ տեսել մի մահկանացու, որ սրա չափ դիւցաղն Ողիսևսին նման լինէր»:

«Արդարե», պատասխանեց Մենելաւոս, «մեր սիրելի հիւրն սքանչելապէս նմանում է կորովամիտ Ողիսևսին թէ իւր կազմով, թէ աչքերով, թէ մազերով: Փոքր ինչ առաջ, երբ դիւցաղնի վրայ էինք խօսում, դա լոգիկը վերցնելով թաքուն սըբեց արտասուքը, որ բռնաբար կայլակում էին աչքերից»:

«Իրաւ ասացիր, դիցանմանդ վեհապետ», նըկատեց Նեստորեանն Պիսիստրատ: «Այս պատանին պանծալի Ողիսևսի որդին է, որ ամօթից չկամեցաւ ճառիդ թելն ընդհատել: Հայրս Նետոր խորհուրդ տուաւ դրան՝ հետո միասին քեզ մօտ գալու, որպէս զի օգնես իրեն բարի խօսքով կամ զործով: Տեղեմաք բաղմաթիւ աղէտ է կրում իւր հայրենի երկրի մէջ, վասն զի զուրկ է հօրից և ոչ մի հոգի պաշտպան չունի»:

«Ո՞վ աստուածներ», աղաղակեց Մենելաւոս, «ուրեմն իրաւ այն մարդու որդին է հիւրս, այն սիրելի մարդու, որ անթիւ ցաւեր կրեց ինձ համար: Ո՞հ, ինչպէս կ'ուզէի հանդիսաբար պարզւատլել նրան հայրենեաց մէջ»: Այս ասելով նա լաց եղաւ, լաց եղան և չելենէն, և Տեղեմաք և Պիսիստրատ:

Առատ արտասուք հոսելուց լետ՝ Մենելաւոս նորից խօսեց և քաջալերիչ խօսքերով հրաւէր կարդաց հիւրերին, որ ընթրեաց սեղան վայելեն: Հելենէն այդ միջոցին մի գեղ ածեց գինու մէջ, որից ամէնքը զուարթացան: Նորահրաշ գեղն զօրութիւն ունէր փարատելու ամէն մի վիշտ, հալածելու ամէն մի հոգ, ինչքան էլ դրանք մեծ լինէրն: Այնուհետև նա սկսաւ խօսել Ողիսի վրայ. իսկ Մենելաւ պատմեց դրա սխրալի գործերը:

Ապա թէ չելենէն հրամայեց նաժիշտներին բերել գորգեր, ծիրանի կտաւներ, քնքոյշ խլաներ և պատրաստել հիւրերի համար երկու մահիմ սրահի մէջ: Մի քարոզ ջահ բռնած առաջնորդեց հիւրերին, և շուտով նրանք անոյշ անոյշ ննջեցին:

7

ԳՐՈՒԾԱԿԱՆ ԾՈՎԱՅԻՆ ԾԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երբ հիւրերը միւս առաւօտ նախաճաշի բաղմեցան, Մենելաւոս նորից սկսաւ Ողիսևսի արկածները լիշտակել, և Տեղեմաք խնդրեց պատմել իրեն ամէն բան, ինչ որ գիտէր իւր հօր մասին, ասելով, թէ լաւ կըհամարէր անդամ տխուր ճշմարտութիւնն իմանալ, քան թէ անձում. Ողիս.

3

ստորդ կարծիքների մէջ մաշուիլ: Յիշեց նոյնպէս և հոմանիներին, որոնք լրբօրէն փճացնում էին հօր գոյքերը:

Մենելաւոս այդ վատերի դէմ զայրանալով, ասաց. «Արդեօք կրտեսնեմ այն օրն, երբ Ռդիս նոյն զօրութեամբ հոմանիների վրայ յարձակուէր, ինչ զօրութեամբ որ երբեմն տապալել էր Փիլոմելիդ դիւցազնին: Ի՞նչպէս այն ժամանակ կրցնդէին նրանց զլխից հարսանեկան մտքերը: Արդ լսիր, ինչ որ զիտեմ հօրդ մասին: Վերադարձիս ժամանակ ես մղուեցայ Եղիպտոս, ուր սրտմտած աստուածներն ինձ քսան օր պահեցին, քանզի մոռացել էլ արժանաւոր զոհեր զինել նրանց համար: Վերջապէս ինձ աղատեց ծովալին ծեր Պրոտէոսի Իդոթէա աղջիկը: Դա երեւեցաւ ինձ, մինչ վշտահար ման էլ դալիս ծովալի վրայ, և հարցրեց, թէ ինչո՞ւ էլ դեղերում այն ամուլ, անբեր վայրերում: Պատմեցի դիցուհուն իմ աղէտն և խնդրեցի հնար ցոյց տալ՝ աղատուելու այն դառնազին վիճակից»: «Յոց կրտամ այդ հնարը, օտարական», պատասխանեց դիցուհին: «Այս ափերի վրայ լշուում է Պրոտիդոնի հպատակ Պրոտէոս ծերունին: Եթէ դու, դարանամուտ լինելով, յաջողիս բռնել նրան, նա քեզ կ'ասէ, ինչ որ կ'ուզէիր իմանալ»:

«Բայց ի՞նչպէս բռնեմ», հարցրի ես:

Դիցուհին ասաց. «Երբ արեւն երկինք բարձրանալ, ծովի ծերն անդունդներից դուրս կը դայ, եղերքի վրայ ոտք կըդնէ և զով քարալրի մէջ կրպառիկ: Նրա հետ միստին ծովափ կ'ելնեն և շատ փոկեր, որոնք նոյնպէս քարալրի մէջ հանգստանալ կ'ուզենան: Դու էլ առաւոտեան երեք զօրեղ ընկերներով այն տեղ գնա, և ես կ'աշխատեմ թաքցնել ձեզ: Հէնց որ ծերն իւր շուրջ խոնուող փոկերը համրէ պրծնէ և ինքն էլ հօտի մէջ գետնի վրայ տարածուի, դուք իսկոյն նրան բռնեցէք և մի թողնէք: Նա կը փութայ փոխակերպուի հօտր, ջուր, դազան, արօտ և հօդ. բայց դուք բոլոր ճիզերդ թափեցէք, որ նրան ամուր բռնած պահէք: Վերջապէս նա վերստին առաջուայ կերպը կ'առնէ. դուք էլ նրան կ'արձակէք: Այն ժամանակ հարցուր նրան, ինչ որ կ'ուզես խմանալ. և ամէն բան կ'ասէ քեզ ճշմարտութեամբ»: Այսպէս խօսեց դիցուհին և կրկին ծովը սուզաւ:

Միւս առաւօտ ես ընտրեցի երեք հուժկու և ջլապինդ ընկերներ և միասին ծովափ զնացինք: Դիցուհին ծովի խորքից դուրս ելաւ, չորս փոկենի բերելով. այդ մորթերից նա հազցրեց ամէն մէկիս մի մի հատ և թաքչելու տեղեր ցոյց տուաւ աւազի մէջ: Փոկերի հօտն պժդալի էր, բայց և դրա դէմ դարման գտաւ դիցուհին:

Նա ամբոսական անուշաբոյր իւղ քսեց մեր
ոնդերին և բնաջինջ արաւ դարշելի հոտը:
Այսպէս մենք մինչեւ կէս օր համբերութեամբ
սպասեցինք: Կէսօրի դէմ փոկերն երամ երամ
դուրս ելան աղի ջրերից: Ծափի ծերն էլ կոհակ-
ներից բարձրացաւ, դարշահոտ փոկերի շուրջը
ման եկաւ և բոլորին համբելուց յետ՝ նրանց
մէջ տեղում պառկեցաւ: Այն ժամանակ մենք
նրա վրայ յարձակուեցանք և բռնեցինք: Ծերը
սկսաւ իւր խաբուսիկ արուեստը: Նա յանկարծ
մի բաշաւոր առիւծ դարձաւ: Մենք և՛ս առա-
ւել սեղմեցինք նրան: Այժմ նա վիշապ դար-
ձաւ, յետոյ յովազ: Բայց մենք նրան չըթողինք:
Ահա մի վայրենի վարագ դարձաւ, յետոյ ջուր,
յետոյ մի ամբարձուղէշ դալարի ծառ: Տեսնե-
լով, որ իւր արուեստն անօգուտ է, նա վերջա-
պէս նորից դարձաւ մի ծովալին ծերունի: Այն
ժամանակ մենք նրան արձակեցինք, և ապա թէ
նա հարցրեց, թէ ի՞նչ էր ի՞նձ հարկաւոր: Ես
պատմեցի նեղութիւնս, և ծերն ի՞նձ խորհուրդ
տուաւ, որ սրտմտած աստուածներին առատ
զոհով հաշտեցնեմ: Յետոյ ես հարցմունք արի
բարեկամներիս վերաբերմամբ: Այս բանին էլ
նա մտադիւր պատասխանեց: Նախ և առաջ ես
իմացայ քաջն իսակի դառն օրհասը: Նա մի
սեպածայր ժայռի վրայ կանդնելով, վեսարար

պալծենում է, թէ կարող է և առանց առ-
տուածների օգնութեան իւր հայրենի երկիրն
հասնել: Այս գոռող խօսքերի վրայ Պոսէլդոն
բարկանում է և իւր ահեղ երեքարձէնը այն
ժայռի մէջ միելով, պատառում է կեսուակէս:
Ժայռի մի կէսն մնում է կանգուն, լսկ միւս
կէսն շառաչմամբ խորտակվում է ծովի մէջ իսպի
հետ միասին: Այս է լինում ամբարշտի պա-
տիժը: Ազամեմնոն եղբօրս մասին էլ մի սոս-
կալի գոյժ լսեցի: Նա ողջամբ հասած է լինում
հայրենիք. բայց այն տեղ իւր ամուսնի չար
հոմանին անփառունակ սպանում է նրան բա-
ղանիքի մէջ:

«Քիչ էր մնացել, որ այս բօթից սիրտս ճայ-
թէր. ես աւազի վրայ նոտայ արտասուելով և
պատրաստ էի իսկոյն մեռնել: Ծովի ծերն թոյլ
տուաւ ինձ առ ժամանակ թաղուած մնալ
վշտերիս մէջ: Ապա թէ մինիթարեց և սկսաւ
պատմել հօրդ մասին: Ես իսկոյն ալանջներս
լարեցի: «Ողիսես գեռ կենդանի է», ասաց նա.
«վարսագեղ Կալիփսէ հարսն գերել է նրան մի
հեռաւոր կղզու վրայ, ուր նա ոչ ընկեր ունի,
ոչ էլ նաւ: Ես շատ անգամ տեսել եմ, որ նա
վշտահար ման էր գալիս ծովափի վրայ, դառն
արտասուք թափելով»:

Այս խօսքերից յետ ծերունին դարձեալ սու-

զաւ ծովի մէջ, իսկ ես յսւզուած դէպի նաւս
գնացի: Հէնց որ ես զոհ մատուցի աստուածնե-
րին, սկսան փշել յաջող հողմեր. այն ժամանակ
նաւ նստայ և ողջ և առողջ տուն հասայ: Ահա,
ինչ որ գիտէի հօրդ մասին, պատմեցի քեզ,
Տելեմաք: Բայց դու այլ ևս մի քանի օր մնա-
ցիր ինձ մօտ: Յետոյ ես քեզ դէպ՝ Իթակէ¹
կ'արձակեմ արժանաւոր ընծաներով»:

8

ՀՈՄԱՆԻԿԵՐԻ ԽՈՐՃՈՒՐԴԸ

Նոյն միջոցին հոմանիները քաջարի Ռդիսևսի
պալատումն էին հաւաքուած: Ոմանք գաւթում
տէդ էին նետում նշանի դէմ, ոմանք էլ սրա-
հում նստած՝ իրար հետ խօսում էին: Ան տեղ
էին և Անտինոս և Եւրիմաք, որոնք գառն
խօսքերով վշտացըել էին Տելեմաքին ժողովրդի
ատեանում: Նրանց միացաւ և Նեմոն, հարցնե-
լով, թէ արդեօք ե՞րբ կը վերագառնար Տելե-
մաք, որ չուել էր նրա նաւով դէպի Պիւրու:

Տելեմաքի բացակայութիւնը նրանք մինչեւ
այժմ բնաւ բանի տեղ չէին դրել. կարծում
էին, թէ հովիւների մօտ կալուածքում գեղե-
րելիս կը լինէր: Բայց այժմ շատ ապշեցան,
երբ լսեցին, որ գնացել էր Կեստորի մօտ:

Անտինոս ուզեց իմանալ, թէ ե՞րբ չու ըն-
կաւ Տելեմաք, ովքե՞ր գնացին նրա հետ և ար-
դեօք նա ըռնի խլեց հեմոնի նաւն թէ բարու-
թեամբ փոխ առաւ:

Նեմոն ասաց, թէ յօժար կամքով տուաւ
պատանուն խւր նաւը, թէ նա չուեց մի քանի
քաջ տղայոց հետ, թէ Մենտորն էլ նաւ նրս-
տաւ նրանց հետ միասին: «Բայց զարմանք է»,
ասաց Նեմոն, «որ այդ Մենտորին ես դեռ ե-
րեկ այս տեղ տեսաք»:

Այս խօսքերից յետ նա հեռացաւ: Գաւթում
դրօնող հոմանիքն էլ այժմ սրահը մտան և
միւսների մօտ նստան: Բոլորեքեան Տելեմաքի
վրայ էին խօսում: Վերջապէս Անտինոս ոտքի
ելաւ և ասաց.

«Այդ չուն անհրաժեշտ է խափանել: Իմա-
ցած եղէք, որ այդ համբակը մի չար բան է
նիւթում մեր դէմ: Տայ Արամազդ, որ նա կոր-
չի, քանի որ չէ յաջողել փորձանք բերել մեր
գլխին: Սակայն շուտով պատրաստեցէք մի
սրբնթաց նաւ և քսան թիավար: Ես կը դա-
րանեմ նրան Իթակէի և Սամոսի նեղուցում և
այնպէս կ'անեմ, որ նրա չուն չար հետևանք
ունենայ»:

Բոլորեքեան գովեցին Անտինոսին և խկոյն
սկսան մի նաւ կազմել:

Մեղոն քարոզն, որ զրան մօտ էր կանգնած դրսից, հոմանիների խօսքերն լսեց: Երբ նրանք հեռացան, նա խկոյն տանտիկնոջ մօտ գնաց և յայտնեց ինչ որոգայթ որ լարուած էր իւր որդու դէմ: Թագուհու ծունկերն գուճ եկան, նա մի բառ անգամ չասաց և շէմքի վրայ վայր ընկաւ: Փոքր ինչ յետոյ նա դառնապէս լաց եղաւ: Վրայ հասան նաժիշտներն, և լսելով Տելեմաքին սպասող վտանգը, իրենք էլ սկսան լալահառաջ հեծեծել: Վերջ ի վերջոյ թագուհին ասաց: «Ո՛հ, այս ինչքան ցաւ են տալիս ինձ երկնալին աստուածները: Ես կորցրի նախ հոյակապ ամուսնուս, արդ որդիս էլ հեռացել է, և չար մարգիլ մահ են նիւթում նրա տենչալի կեանքի դէմ»:

Եւրիկէն, Տելեմաքի սպառաւ դայեակը, փութաց սփոփել տիրուհուն և խորհուրդ տուաւ աղերս կարդալ Աթենասին, որ անշուշտ կարող էր փրկել մահից նրա որդուն: Պենելոպէն այդ խորհուրդն ընդունեց: Նա վերև սպարզեց ձեռքերն, արտասուելով մաղթանք ուղղեց դէպի երկնք, և խկոյն նրա ցաւակիր սրտի մէջ սփոփանք հոսեց գիցուհին: Երբ նա յետոյ մահին մտաւ, վրան մի անուշակ քուն փշաւ և մրւացութեան քաղցր թմբիր տիրեց նրա յոդնած գլխին: Այսուհետեւ իւր սիրած իմիթիմէ

քրոջ պատկերով մօտեցաւ նրան մի երազ և լացի պատճառն հարցրեց: Պենելոպէն գանգատուելով յայտնեց նրան իւր վիշտը, խկ քոյրն ասաց. «Քաջալերուիր և սրտաթափ մի լինիր, քանզի որդիդ մի այնախսի ուղեկից ունի, որին շատերն կը տենչալին ունենալ վտանգի մէջ: Աթենաս գիցուհին է այդ ուղեկիցն, և նա ինձ պատուիրեց՝ բերել քեզ այս աւետիքը»:

ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔ
ՍՔԵՐԻԱ

1

ԱՐԱՄԱԶԴԻ ԱՊԱՔՈՒՄ Է ՀԵՐՄԵՍԻՆ ԿԱԼԻՓՈՒՔԻ ՄՅՈՑ

Աժենաս դարձեալ խնդրեց Արամազդին՝ գը-
թալ իւր պաշտպանած Ողիսին:

«Պուստը իմ», ասաց աստուածների հայրը.
«Ճիշէ ինքդ չէիր վճռած հոգ տանել այդ-
վշտակրի դարձի մասին։ Գնա այժմ՝ նրա որ-
դուն էլ տէր կանդնիր, որպէս զի հոմանիները
չկարանան վնասել նրան»։

Ապա թէ կանչեց Հերմէսին և ասաց. «Ո՞վ
բանբերդ իմ Հերմէս, դնա շոտպիր գանգրաշեր
յաւէրժահարսն Կալիփսէլ մօտ և յայտնիր նրան
անդառնալի վճիռո՞ արձակելու յոդնատաժան
Ոդիսևսին»:

Հերմէս հրեշտակն այս պատուէրին հնազանդելով, կապեց ոռքին ոսկեճամուկ կօշիկները, վերցրեց լուր թևաւոր ոսկէ գաւազանն, որով

ըստ կամի քնացնում էր արժուններին և քը-
նածներին զարթեցնում, և հողմի արագու-
թեամբ գնաց իջաւ յաւէրժարսի հեռաւոր և
մենաւոր. կղզին:

Նա անցաւ մի թաւուտ անտառի մլչից և
հասաւ այն քարայրին, ուր բնակվում էր գե-
ղավարս Կալիփսէ դիցուհին։ Թրա վառարանի
վրայ այրվում էին մայրի փայտեր և խնկենիք,
որոնց անոյշ բուրմունքով ամբողջ օդը լցուած
էր։ Դիցուհին ոսկէ կլոցով մի սքանչելի շոր էր
բանում քարայրի մէջ, և այն տեղից մի ներ-
դաշնակ երգի ձայն էր դուրս զալիս։ Անձաւի
գորշ քարերի շուրջը կանգնած էին սաղարթալի-
լաստենիներ, բուրաւէտ նոճիներ և սօսեր, ո-
րոնց դալար սոստերի վրայ բոյն էին դբել եր-
գեցիկ թուչունները։ Ատոք ատոք ողկոյզներով
որթատունկն ամէն կողմից բարձրանում էր
ժայռն ի վեր։ Քարայրի մօտ՝ մամւոտ քարերի
տակից դուրս էին սահում չորս կարկաչուն
աղբեւրներ և արծաթափայլ ջուրերն ոլոր մոլոր
անցնում էին մշտադալար մարգի միջով, ուր
հոյլ և հոյլ բուսնում էին բուրազուարթ ծա-
ղիկներ։

Օդաչու հրեշտակը հիացաւ այս զմայ-
լական պատկերից և փութաց մտնել հո-
վասուն անձաւի մէջ։ Այն տեղ նա մէնակ գը-

տաւ յաւէրժհարսին։ Կալիվսէն իսկոյն ճանաչելով աստուածային դեսպանին, զուարթագէմ յառաջ ելաւ և ասաց. «Ինչո՞ւ ես մերձենում բնակարանիս, ով գեղեցիկ եկաւոր։ Յալտնիր սրտիդ ցանկութիւնն, և ես սիրով կը կատարեմ խնդիրը»։ Ասաց, և հարկեց նրան ամբողութառ և նեկտարով, ըստ որում անմաշներն ոչ երկրացին կերակուր են ճաշակում, ոչ երկրացին ըմպելի։

Այնուհետեւ չերմէս ասաց. «Պատրաստ եմ յայտնել, ինչ որ ուզում ես իմանալ։ Ինձ առաքողն է Արամազդ, որ այսպէս ասաց. Յաւէրժահարսն Կալիվսէի բացական կրզու վրայ գեգելում է Ոդիսես, որ արդէն կրել է անրաւ աղէտ։ Թող արձակէ նրան յաւէրժհարսն, քանզի արդէն վճռուած է, որ նա հասնի հայրենիք»։

Այս որ լսեց Կալիվսէն՝ սարսափեցաւ և ասաց տրտնջելով. «Ո՛հ, ինչպէս անդութ էք դուք, ով աստուածներ։ Միթէ քիչ է պատահել, որ դիցուհիներից մին կամ միւսն ամուսնանար մի պարկեշտ մահացուի հետ։ Ինչո՞ւ էք ուզում իւլել ինձնից այս մարդուն, որին ես մահից ազատեցի։ Ամազոպայինն Արամազդ շանթակ ջախջախել էր դրա նաւը, և դա մահուան հետ ոգործելով, այս տեղ էր ձուուել մո-

լեզնոտ ալիքներից։ Ես ընկալաւ դրան քարայրիս մէջ, իսամեցի և ուխտեցի՝ շնորհել դրան անթառամ կեանք, եթէ կամենար ինձ մօտ մնալ։ Սակայն ինչ կարող եմ զօրել ես ամենազօր Արամազդի վճռի դէմ։ Թող ուրեմն գնայ մեկնի այս տեղից»։

Հերմէս, աստուծոյ պատգամը կատարելուց յետ՝ նորից թուաւ դէպի վեր—երանաւէտ Ոլիմպոսի բարձունքը։

2

Իսկ յաւէրժահարսն ծովափ գնաց, ուր նըստած էր Ոդիսես ծանրաթակիծ տրտմութեան մէջ։ «Մի՛ արտասուիր, Ոդիսես, և մի՛ մաշուիր», ասաց նա, «զի ահա կամենում եմ արձակել քեզ այս տեղից։ Վեր կաց ուրեմն, մի տապար առ, ծառեր կտրիր, լաստ կապիր։ Ճամբու համար ես կրտամ քեզ առատ սրաշար, կը պարզեմ սիրուն զգեստոներ, ետևիցդ էլ կ'առաքեմ անոյշ հողմիկ, որ քեզ անշուշտ հայրենիքդ կը հասցէ, միայն թէ աստուածները համէին»։

Ուրախութեան քստումն զգաց Ոդիսես և իսկոյն չհաւատալով յաւէրժահարսին, ասաց նը-

րան. «Երդումն արա, ով դիցուհի, որ դու իմ
դէմ ոչ մի չարիք չես նիւթում»:

Կալիփսէն ժպտելով զգուեց նրա այտն և
ասաց. «Ա՛յ խորամանկ, որ միշտ ամէն բանի
ստոյգն ես ուզում իմանալ: Արդ երդում եմ
քեզ երկրով, երկնով և Ստիւքսով, որ քո դէմ
ոչ մի աղէտ չեմ նիւթում»:

Կալիփսէն յառաջ գնաց և Ոդիսւս՝ ետևից:
Քարայրի մէջ որ մտան, Ոդիսւս այն աթոռի
վրայ նստաւ, ուր բազմել էր փոքր ինչ առաջ
աստուածների բանրերը: Յաւէրժահարսն մահա-
ցուների սնունդ դրաւ նրա առջև, այսինքն՝
հայ, իսկ ինքն ճաշակեց անմահների կերակրուր:
Մինչ նրանք իրար հետ խօսում էին, օրն ան-
ցաւ և արեգակը ծովը սուզաւ: Արդէն զիշե-
րը վրայ էր հասել, երբ Ոդիսւս, տենչալի վե-
րադարձի վրայ խորհելով, միամիտ պառկեց և
քնեց:

Լուսադէմին, երբ նա արդէն վեր էր կայել
անկողնից, շնորհաշուրք դիցուհին նրա մօտ գա-
լով, մի ձիւնափայլ հաղուստ ձգեց նրա ուսե-
րին և մէջքին կապեց մի աննման ոսկէ կա-
մար: Յետոյ տուաւ մի սուր տապար, որի կոթը
ձիթենուց էր, մի սուր կացին և ասաց. «Վեր
կաց գնա, մի լաստ շինիր քեզ համար»:

Ոդիսւս իսկոյն գնաց անտառ, տապալեց

քսան երկնաբերձ եղեին, կացնով տաշեց և
զլեց դէպի ծովափ: Գերաններն իրար աղցնե-
լուց յետ, նա շինեց նաւի յատակը, կողերը,
ծածքը, քեղին և նրա մէջ կանգնեց մի հաստ
կալմ, որին և կապեց առագաստակալը: Առա-
գաստի համար յաւէրժահարսն բերաւ սպիտակ
կտաւներ և լքցրեց նաւն ամէն տեսակ պաշա-
րով, զինու և ջրի տիկերով: Բազմահնարն Ոդի-
սւս նաւի շինութիւնն չորս օրուայ մէջ աւար-
տեց. հինգերորդ օրն դիցուհին նրան բուրա-
զուարթ շորեր հազցրեց և ապա թէ ճանապարհ
ձգեց: Նազելին, ծովափի վրայ մէնակ կանգ-
նած, քաղցրասիւք օդ առաքեց նրա ետևից,
և հողմուռոյց առագաստներն այնպէս յառաջ
տարան նաւը, որ շատ չանցած՝ Կալիփսէի ծա-
ռաշատ կղզին բոլորովին անհետացաւ Ոդիսւսի
աչքերից: Երերուն ալիքներին գիշեր պատեց,
բայց տակաւին նա կանգնած էր զեկի մօտ,
վարելով նաւը հողմար, և մինչեւ լոյս
քուն չը դիպաւ նրա աչքերին:

Անցել էին տասնեօթն օր և զիշեր. ծայ-
րակարմիր առաւօտն արդէն ծովից բարձրացել
էր, շողողուն ալիքները ծիրանեզոյն ներկաւել
էին, երբ Ոդիսւս ուրախ սրտով նշմարեց հե-
ռաւոր Սքերլալի ափերը, որոնք դեռ նոր էին
յերևան գալիս մշուշի միջից:

Հէնց այդ միջոցին, Պոսէլլոն վերադառնում
էր Եթովպիալից: Արդէն հեռուից տեսաւ նա
արծաթափալ ծովի վրայ քաջարի Ողիսևին,
որին կորուստ էր որոճացել իւր մտքում:

«Զարմանք բան», ասաց նա սրտի խորքից:
«Տարակայութեանս միջոյին անշուշտ աստուած-
ները մի նոր խորհուրդ տեսած կ'լինին դրա
մասին: Սակայն դա իմ ձեռքից դեռ շատ
տանջանք պիտի կրէ»:

Ասաց, ամպեր կուտակեց, փոթորիկներ ար-
ձակեց և իւր ահեղ երեքժանին մոլեգնաբար
դէս դէն ճօճեց: Բոլոր երկինքը մի վարկենում
սե ամպերով պատուեցաւ և փրփրադէզ կոհակ-
ների վրայ գիշերալին խաւար իջաւ:

«Եղուկ ինձ թշուառիս», գոչեց Ողիսևս:
«Ահա նորից տեսնում եմ, որ Տրոյալից մեկնե-
լիս դիցուհին ինձ մի ճշմարիտ բան էր գու-
ժել, ասելով, թէ շատ չարչարանք պիտի քա-
շեմ: Ո՛հ, այս ի՞նչ սաստիկ հողմեր են, ի՞նչ
կատաղի ալիքներ, ի՞նչ մռնչիւն: Երանի՛ ձեղ,
տրոյական դաշտերի վրայ նահատակուած գիւ-
ցազներ: Դուք զոնէ հանդիսաւոր յուղարկու-
թիւն և դիահանք ունեցաք. իսկ ես այս տեղ
անփառունակ պիտի մեռնի՛մ»:

Լաստն ամենի յորձանքից բռնուեցաւ, քե-
ղին բեկաւ, կայմն էլ ճարճատելով խորտակուե-

ցաւ: Նոյն բոպէին շառաչմամբ վրայ հասաւ երկնարերձ մի կոհակ, լաստն իսպառ տապալեց և Ոդիսին անդունդը գահսպիթեց: Լայն պատմումանն երկար ժամանակ արդելում էր նրան դուրս լողակ ալիքներից:

Վերջապէս նա դուրս լողաց, ուժգնապէս ճիգ թափելով հասաւ լաստին, մազապուր նրստաւ վրան և ամուր բռնեց ձեռքերով: Սակայն վտանգը դեռ չէր անցնէ, որովհետև հողմերը փոթորկելով որոտում էին, կոհակները բախում էին և բեկուած լաստը մերթ երկինք էր բարձրանում, մերթ անյատակ վիհերի մէջ սուզանում:

Այն ժամանակ նրան տեսաւ անդնդարնակ Աւկոթէա դիցուհին: Դուրս թռչելով ալիքներից, նա նստաւ լաստի վրայ և ասաց Ոդիսւնին. «Բազմացարչարդ Ոդիսւնս, երկրասասանն Պոսէլդոն անշուշտ վրադ զայրացել է, բայց ես քեզ ահա կարեկցում եմ. ահեղ աստուածն չի կարանալ կործանել քեզ, եթէ հետևեմ իմ խորհրդին: Գէն ձգիր լայն պատմումանդ, որ կարանաս աղատ լող տալ դէպի Աքերիալի ափերը: Վեր կաց, կապիր մէջքիդ անմահական այս շաբն և անվեհեր լառաջ լողա: Հէնց որ հասնես ցամաքին, դէմքդ դարձուր դէպի լիստ և շարը ձգիր ծովի մէջ»:

Հոմ. Ոդիս.

4



Աւկոթէան այս որ ասաց, կրկին զուսաւ ջրի տակ: Բայց Ողիսես կասկածելով դիցուհուց, վճռեց մնալ լաստի վրայ, մինչև որ դա տանում էր: Սակայն մըրթիլը սաստկացաւ, և լեռնակարկառ մի կոհակ ջախջախեց և ցնդեց լաստի վերջին գերանները: Ողիսես արագ մի բեկորի վրայ հեծաւ, թրջուած հանդերձը դէն ձըդեց, շարը լանջն ամուր կապեց և մի ոստումով փոթորկայով ծովը ցատկեց:

Պոսէյդոն տեսաւ յոգնատանջ դիւցազնի ոգորումն ալիքների հետ: Նա զարութեամբ շարժեց զլուխն և ասաց. «Այս անդամ դու կը փրկուիս. սակայն չկարծեմ որ այս օրուայ տառապանքդ շուտ մոռանաս»: Ասաց, մտրակեց իւր գեղաբաշ ձիերն և մըրթի արագութեամբ յառաջ ոլացաւ ալէսասան ծովի վրայով:

Հողմերն երկու օր, երկու դիշեր մոլեգնեցան. վերջապէս նրանց կորովը շիջաւ, լքաւ: Ողիսես շարի հրաշալի զօրութեամբ այնպիսի ոյժ էր ստացել, որ առանց թալկանալու լող էր տալիս դէպի ցանկալի ափերը, որոնք զուարթ ժպտում էին հեռուից: Բերկութեամբ լցան նրա աչքերն, երբ տեսաւ, որ վերջապէս մօտեցել էր այն փրկարար եղերքին: Սակայն, եղանկ, յանկարծ որոտընդուստ յորձանքը հափափեց նրան և նորից նետեց լայն ծով... Վերատին նա

ճիգ թափելով ցամաք հասաւ, բայց ափի վրայ ոտք դնելու հնար չկար, ըստ որում դա սեպ ժայռերով պատուած էր: Այն ժամանակ Ողիսես պտտեց կղզին .և վերջի վերջոյ նշմարեց մի անքոյժ վայր, որ կարծես թէ փրկութիւն էր խոստանում: Ափին այն տեղ տափարակ էր, անվէմ էր և հողմերից պատսպարուած. հէնց այն տեղ էլ մի գետ էր թափվում ծովի մէջ: Ողիսես սրտի խորքից հառաչելով ձայն կարդաց գետի աստուծուն և ասաց. «Տէր իմ, լսի՛ր, քեզ եմ դիմում, Պոսիդոնից հալածականս: Աղաջում եմ քեզ, օդնիր ինձ տառապեալիո»:

Գետի աստուածն վշտակրի ձայնը լսելուն պէս՝ խակրն զսպեց ալիքները: Ողիսես հեզասահ ջրերի մէջ լողալով, հուսկ ուրեմն ափին հասաւ, ցամաքի վրայ ծունը դրաւ և ուրը հողը համբուրեց: Եւ ապա թէ պարտասուած՝ անշունչ, անձայն և ուշաթափ վայր ընկաւ:

Աւշքի գալով նա զգաց, որ առատաշնորհ գետնի վրայ էր գտանվում: Նա վեր կացաւ, մտարերեց Լևկոթէին և նրա պատուէրի համեմատ՝ շարը վրայից հանելով, ձգեց գետի մէջ, որ տարաւ դէպի ծով: Այժմ նա սկսաւ իւր դրութեան վրայ մտածել: Աղէտալի էր նրա վիճակը—ոչ հագուստ ունէր, ոչ սնունդ, ոչ օթեան: «Վայ ինձ», ասաց նա, դառնապէս

հառաջելով. «ինչ օրհաս է սպասում ինձ այժմ. Եթէ այսպէս անզօր մնամ գետափի վրայ, զիշերային ցուրտ քամին կամ զիջին օդն ինձ կը սպանեն: Իսկ եթէ այն անտառը բարձրանամ և յոդնած յոդնած քուն լինիմ, զիշատիչ դաղաններն ինձ կ'ուտեն»:

Երկար մտածեց Ողիսւս: Ամէն բան լաւ կըշուեց յետ՝ գնաց անտառ և գտաւ այն տեղ երկու թաւուտ ձիթենի, որոնց պատառուն ոստերը մի պատուական յարկ էին կաղմում: Այս ծառերի տակ կոյտ կոյտ դիզուած տերևներից նա պատրաստեց մի անկողին և թաղուեցաւ դրա մէջ. իսկ Աթենաս նրա խոնջ և վաստակ աչքերի վրայ մի անուշակ քուն իջեցրեց:

3

ՆԱԽՍԻԿԵ

Այս կղզին հաշտասէր փէակեան ազգի բնակավայրն էր: Ողիսւսի ննջած տեղից ոչ հեռու գտանլում էր կղզու արքայանիստ ոստանը, որ ամուր պարսպով շրջապատուած և հոյակապ տաճարներով զարդարուած մի քաղաք էր:

Յոգնատաժան դիւցազնին օդնելու համար մի բան խորհած լինելով, աստուածուհին Աթենաս

նոյն զիշերը գնաց մօտեցաւ թագաւորի պալատին և մտաւ նրա Նաւիկէ դստեր մօտ: Նաւսիկէն քնած էր իւր փառահեղ սրսկապանում, կրղքին էլ հանգչում էին իւր երկու նաժիշտները: Աթենաս, նրա մի սիրուն ընկերուհու տիպն առած, կանգնեցաւ նրա սնարքի մօտ և ասաց. «Այս ինչ տարտամ աղջիկ ես դու: Տես, ինչպէս անխնամ են ընկած հիանալի շորերդ: Այն ինչ արդէն մօտենում է պսակիդ օրը, երբ վայելուչ հագուստով պէտք կըլինի քեզ երեկի: Եկ ուրեմն արեգակը բացուելուն պէս գետափ գնանք և լուացք անենք: Բայց գեռ լոյսը ըլծագած՝ դու շտապով հօրդ մօտ գնա և խնդրիր տալ քեզ կառք և ջորիներ՝ հանդերձներդ, կամարներդ, շղաշներդ գետի եզերքը տանելու»:

Ասաց և անհետացաւ: Իսկ ոսկեգահ այդն որ ծագեց, չքնարատես Նաւիկէն քնից զարթեցաւ, տաք անկողնից վեր կացաւ, շնորհատիպ շորերն հագաւ և երազի վրայ մտածելով, գնաց պատմելու ծնողներին: Հայրն և մայրն իրենց սենեակի մէջ էին. հայրը սքանչելապէս զարդարուած պատրաստվում էր ժողով գնալ. մայրը մի ծիրանի մանելու վրայ էր նաժիշտների հետ միասին:

«Հայրիկ», ասաց արքայադուստրը, «Հրամա-

լիր, որ ինձ համար մի բարձրագահ կառք լծեն,
քանզի այս օր ես ուզում եմ լուսնալ ձորձերս
զետի մէջ: Զէ որ քեզ էլ, ինչպէս և հինգ որ-
դիներիդ, առաւել վայելուչ է մաքրահանդերձ
գտանուիլ աւագների ատեանում»:

Հայրը մտադիւր կատարեց իւր աղջկայ ցան-
կութիւնը: Կառքը լծուեցաւ: «Կաւսիկէն և նա-
ժիշտները նուրբ շորերը դուրս տարան: Իսկ
մայրը բերաւ սակառով լի ուտելիք, մի տիկ
դինի և մի շիշ իւղ: Այս բոլորը կառքի մէջ
դրուելուց յետ, Կաւսիկէն կառք բարձրացաւ,
երասանն բռնեց և ջորիները յառաջ վարեց:
Նաժիշտներն էլ նրա ետևից դնացին:

Գետի գեղանի եզերքը հասան թէ չէ, նա-
ժիշտները ջորիները լուծեցին և թոյլ տուին,
որ անուշահամ սէզ ուտեն: Յետոյ շորերը վճիտ
ջրերով ողողուած փոսերի մէջ ձգեցին, ոտքե-
րով դոփել սկսան և ապա թէ գետավի մաքուր
քարերի վրայ սփուեցին, որ արևել տակ չորա-
նան: Այնուհետև լոդարան մտան: Լուացուե-
լուց, անոյշ իւղով օծուելուց և շորերը հագնե-
լուց յետ, ճաշի նստան: Ճաշն էլ որ վերջա-
ցաւ, գնդակ խաղալ սկսան, և Կաւսիկէն սի-
րուն ձայնով երգ երգեց:

Ջուարթ խաղից և երգից յետ աղջիկներն
արդէն ուզում էին վերադառնալ: Ոմանք ցա-

մաքած շորերը կառքի մէջ դնելու վրայ էին,
ոմանք էլ՝ ջորիները լծելու: Այդ միջոցին նաւ-
սիկէն ծիծաղելով, վերջին անգամ գնդակ ձգեց,
բայց նպատակից վրիպեցաւ, և գնդակն ընկատ
հոսանքի մէջ, որից յետոյ աղջիկները մի խըն-
դագին քրքիջ վերցրին:

Ողիսւս այս աղմուկից զարթեցաւ և գլուխը
տերևների տակից վերցրեց: «Եզնէկ ինձ», ասաց
նա ինքն իրեն: «Արգեօք ինչ մարդիկ են այս
երկի բնակիչները—վնասակար բարբարոսներ,
թէ աստուածապաշտ և հիւրասէր քաղաքա-
ցիք: Ահա իսկոյն մի զուարթագին քրքիջ հա-
սաւ ականջիս և կարծես թէ անտառքնակ
հարսերի ձայն լսեցի: Արի տեսնեմ—ովքե՞ր են»:

Նա վեր կացաւ, ջլուտ ձեռքով մի ոստ կոտ-
րեց ձիթենուց և դուրս ելաւ անտառից, սա-
ղարթուն ոստն իւր առջեկից բռնելով, որպէս
զի մերկութիւնը շատ չերևէր:

Օրիորդները նրան որ տեսան՝ զարհուրեցան
և ճշելով դէս դախան: Միայն Կաւսիկէն,
Աթենասից միլոտ առնելով, իւր տեղն մնաց:
Ողիսւս անվայիլ գտաւ շատ մօտենալ օրիոր-
դին. ուստի հեռուից այս խօսքերն ար-
ձակեց:

«Ողոքաւոր եմ քո առջեւ, ով դիցուհի կամ
մահկանացու օրիմրդ: Եթէ մէկն ես դու երկ-

Նամեմ դիցուհիներից, — ապա անշուշտ Արտեմիսն ես. այդ տեսնում եմ դեղապատշաճ դէմքեցդ և բաձրադիտակ իրանիցդ։ Իսկ եթէ երկրաբնակ մի կոյս ես, ոհ, այն ժամանակ երիցս երանի կըտամ հօրդ, մօրդ, եղբայրներիդ, որոնք միշտ պիտի հրամակն քո վեհ տեսքով։ Բայց առաւել այն երջանկին երանի, ում որ քեզ հարսն առնելու բախտ կըշնորհեն անմահ դիք։ Ձշմարիտ, դեռ երբէք աչքերս չեն տեսել մի այսպիսի վսեմ պատկեր։ Հիացած և զմայլած եմ, չեմ յանդգնում ծնկերիդ փարուիլ։ Իմացիր, որ ես սոսկալի աղէտներով պաշարուած եմ։ Երկար ժամանակ ծովածուի լինելուց յետ, ես ամենի ալիքներից այս ավի վրայ ձգուեցայ։ Բայց դեռ շուտով չի պիտի անցնին տանջանքներս։ Ո՞վ վեհ դշխոյ, դո՞ւ ինձ դժա, քանզի նախ քեզ տեսալ այս երկրում, որ ինձ իսպառ անձանօթ է։ Յոյց տուր ինձ ձեր քաղաքն և տուր դէժ հասարակ մի հագուստ, որ մերկ չերւիմ դռների առջև։ Գրա փոխարէն՝ թող աստուածները սրտիդ տենչը կատարեն և շնորհեն քեզ մի սիրելի ամուսին, մի տուն և դրա մէջ՝ երջանիկ խաղաղութիւն։ Աշխարհումս չկայ մի առաւել սիրուն վիճակ, քան թէ այն, ուր մարդն և կինը միաբան սիրով իրենց տունը տնտեսում են։ Այն ժամանակ չարչարփում է

թշնամին, բարեկամն ուրախանում, իսկ մարդն և կինն ամենամեծ բախտ վայելում»։ Գեղաշուք կոյսն ասաց նրան. «Դու ինձ ոչ վատ ես երեւում, օտարական, ոչ էլ անմիտ։ Ուստի ինչ պէտք էլ որ ունենաս, կը հոգամ»։ Այնուհետև օրիորդն իւր և հօր անունն ասաց, անուանեց և այն ազգն, որ բնակում էր կղզու վրայ։ Յետոյ կանչեց վախստական նաժիշտներին և հրամայեց զգեստ և իւղ տալ անձանօթ եկաւորին։ Նրանք էլ իսկոյն այդ պատուէրը կատարեցին։ Ողիսես այն ժամանակ խնդրեց նրանց, որ փոքր ինչ հեռանան, զի ուզում էր նախ լուացուիլ և օծուիլ, ապա հագուստ։ Աղջիկները հեռացան, իսկ նա ակնավճիտ ջուրը մտաւ։ Ինչ մեծ եղաւ օրիորդների զարմանքը, երբ օտարը լուացուած, օծուած և պերճ զգեստով զարդարուած նրանց դէմ ելաւ։ Նրա հերապանծ գլխի վրայ մի դեղափայլ շուք էր հոսել Աթենաս, և ինքն էլ անմահական աստուածների պէս թիկնաւէտ էր։ «Արդարեւ չէ կարելի, որ բոլոր դիք ոխ գային այս մարդու դէմ», ասաց Նաւսիկէն օրիորդներին։ «Ոկքըում դա ինձ մի հասարակ մարդ երեցաւ, այժմ տեսնում եմ, որ երկնամեմ աստուծոյ է նմանակ։ Երանի թէ անմահ-

ներն ինձ դրա նման վեսալ տային։ Ո՞ւր է թէ ամ տեղ մնար և ինձ իրեն հարս առնել բարեհաճէր։ Սակայն, աղջիկներ, շնոր արէք, հաց ու զինով դրան հարկեցէք»։

Երբ Ողիսես կշտացաւ, Նաւսիկէն նրան ասաց. «Վեր կաց, աղնիւ օտարական, Եկ միամին քաղաք գնանք։ Ես առջեկց այն տեղ կ'երթամ, դու ետևիցս աղջիկների հետ կըդաս։ Սակայն հէնց որ քաղաքին մօտենանք՝ դու կանանչ մալրիի մէջ յետ կը մնաս, որպէս զի միամին չըմտնենք դռներից։ Ժողովրդի մէջ անպակաս են սինլըոր և ստահակ մարդիկ, որոնք դուցէ այս անելով չար կը խօսեն մեր մասին, եթէ մեզ միամին տեսնեն։ Ինձ համար այդ կըլինէր մի դժուհի նախատինք։ Խոլ մալրիի մէջ հանդշելուց յետ, դու վեր կենալով քաղաք կը գաս և թագաւորի ապարանքը կը հարցնես։ Արահի մէջ մտնելուդ պէս՝ նախ և առաջ մօրս օգնութիւնը կը խնդրես։ Նրա սիրու շահելուց յետ՝ հօրս առջև շնորհ գտնելը հեշտ կը լինի»։

Այսպէս խօսեց իշխանուհին և կառքի մէջ թռչելով, ճանապարհ ընկաւ դէպի քաղաք։ Խակ Ողիսես մինչև մալրին ետևից գնաց։ Այս տեղ նա յետ մնաց և բազկատարած մաղթանք կարդաց Աթենասին։ Նրա աղօթքը դիցուհին լսեց և սրտին արիութիւն ներշնչեց։

ՈՐԻՄԵՒԻՍ ԹԱԳԱԽՈՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

Երբ արեգակը մայր մտաւ, Ողիսես գնաց դէպի քաղաք։ Նա նոր էր անցել կամարակապ դռներից, որ Աթենաս նրան մօտեցաւ։ Բայց Ողիսես ըը կարացաւ նրան ճանաչել, զի դիցուհին սափորով չուր կրող մի աղջկայ կ'երպ էր առել։

«Ո՞վ դստրիկ», ասաց նա, «արդեօք կարո՞ղ ես ցոյց տալ ինձ թագաւորի պալատը։ Ես մի խեղա օտարական եմ և չունիմ ծանօթներ այս քաղաքում»։

«Սիրով պատրաստ եմ, հայրիկ, ցոյց տալ քեզ Ակինոս թագաւորի պալատը», պատասխանեց դիցուհին։ «Հետևիր ինձ և ոչ ոքի մին նախը, ոչ ոքից էլ բան մին հարցնիր, որովհետեւ այս քաղաքի բնակիչները շատ չեն սիրում օտարներին»։

Այս ասելուց յետ՝ դիցուհին ամպով պատեց իւր սիրելուն, որ նրան ոչ ոք չը տեսնէր, և յառաջ գնաց։ Ողիսես էլ նրան հետևեց։ Դիցուհին վերջապէս կանդ առաւ և ասաց.

«Ահա հարցրած պալատդ։ Ներս մտիր։ Ալկինոսին ճաշի նստած կը դտնես։ Աներկիւդ մօտեցիր նրան, ի միտ առնելով, որ քաջ մար-

դուն ամէն մի գործ լաջողում է: Սակայն ներս
մտնելուդ պէտք նախ թագուհուն ողջոյն տուր:
Նրա անունն է Արետէ: Բոլորն էլ դիցուհու
նման պաշտում են նրան և իւր իմաստութիւնն
այնքան մեծ է, որ այլ մարդիկը նրան են
ընտրում հաշտարար վէճերի մէջ. վստահ եղիր,
որ եթէ նրան հաճոյ լինիս, թագաւորի սիրտն
էլ դէպի քեզ կը հակուի անշուշտ»:

Դիցուհին այս ասելով բաժանուեցաւ Ողիսե-
սից, իսկ Ողիսես արքունեաց նախագալութի մէջ
մտաւ: Սակայն իսկոյն պալատ չգնաց, այլ կանգ
առաւ, որ իրեն շրջապատող պերճութիւնն աչ-
քէ անցնէր: Որմերն ասես թէ պղնձից էին,
իսկ նրանց պսակը՝ արփիափայլ պողովատից:
Առաւել մօտենալիս՝ նա տեսաւ մի ոսկեղէն
դուռն, որի գրանդիքն և շէմքը արծաթ էին:
Սանդուղների երկու կողմից շար ի շար կանգ-
նած էին ոսկէ շներ, որոնց մասին ասում էին,
թէ բազմարուեստ չեփեստոսի գործերն էին:

Թոները բացուեցան, և Ողիսես տեսաւ շքեղ
լուսաւորուած մի պերճ դահլիճ: Այն տեղ ոս-
կեզօծ և գորգապատ գահոյքի վրայ նստած էին
ժողովրդի մեծերը, թագաւորի հետ ճաշելով:
Պատահիների նման շինուած ոսկեծոյլ անգրի-
ները, ձեռքերի մէջ ջահեր բոնած' լոյս էին
սփռում սրահի մէջ:

Ողիսեսի շուարած աչքերն ալժմ ընկան լրւս-
նի շողով պսպղուն պարուէզի վրայ, որ լի էր ա-
մէն տեսակ ծառերով: Թալարուտ սաղարթների
միջից նշանակում էին թուզ, նուռն, ծիրան,
տանձ և ինձոր: Որթի կանանչ ճիւղերի վրայ
փայլում էին շառագոյն ողկոյզներ: Հէնց որ ա-
րեւ հասցնում էր մի ծառի պտուղ, իսկոյն
միւսի ոստերը բողբոջներ էին արձակում: Ածու-
ների մէջ բուսնում էին պէսպէս ծաղիկ և բան-
ջար: Գետնի միջից բղիսում էին երկու սառնո-
րակ աղբիւրներ, մին ջուր էր հասցնում ապա-
րանքին, միւսն կարկանասահ ընթացքով ոռո-
գում էր պարտէզը:

Այս բոլորը լաւ զննելուց յետ՝ Ողիսես մօտե-
ցաւ ապարանքին, անցաւ շէմքից և արխաբար
սրահ մտաւ: Բազմականները նոր էին բաժակ
վերցրել, որ վերջնական նուշը ձօնեն չերմէսին:
Այդ միջոցին նորեկ հիւրը ծանր քալերով գը-
նաց մօտեցաւ թագուհուն, ծունկ չոքեց նրա
առջեւ և ասաց. «Ո՞վ դշիոյ, տառապեալս վար-
վում եմ ձնկերիդ, պաղտտելով քեզ, ամուսնիդ
և բոլոր աղնուական հիւրերիդ, որոնք նոտած
են յարկիս տակ: Թող աստուածները ձեզ եր-
ջանիկ և երկար կեանք պարզեն. թող տան
ձեզ վայելել և այն շուքը, որ ընծայում են
ձեզ մարդիկ: Իսկ ինձ հիքիս դուք օդնեցէք

վերադառնալ իմ տենչալի հայրենիքը, որից
այսքան տարի անջատուած եմ տարադէմ»:

Այսպէս խօսեց Ոգիսես, և իբրև աղերսաւոր,
կրակարանի առջև նստաւ, պատասխանի սպա-
սելով:

Բոլորեքեան ափիբերան լռեցին: Վերջապէս
ոտքի ելաւ ալեզարդ Եքենոս դիւցաղն, որ ա-
մենից ծերն էր այն տեղ, և այսպէս ստաց.
«Վայել չէ, ով արքայ, որ եկաւորն այսպէս եր-
կար նստած մնայ մոխրի վրայ, պատասխանի
սպասելով: Եթէ հիւրերդ լռեցին, պատճառ
այն էր, որ սպասում էին քո հրամանին: Տող
վերջապէս այդ հրամանն, ով արքայ, և ժող
հիւրդ գայ բազմի աթոռի վրայ: Պատուէր էլ
տուր քարոզներիկ՝ դինի բերել բաժակներով,
որպէս զի Արամազդին էլ նուէր հանենք. իսկ
տնտեսուհին ժող կերակուր տալ նժդե-
հին»:

Թագաւորին հաճոյ ժուեցաւ այս ճառը: Նա
զուարժ դէմքով կրակարանին մօտեցաւ, աջը
պարզեց մտահարուստ Ոգիսեսին և ոտքի վրայ
կանգնեցրեց: Յետոյ տեղից վեր կենալու հրա-
ման տուաւ իւր վիրելի Լաւդամ որդուն և ա-
պա թէ հիւրին առաջարկեց նրա աթոռը: Մի
աղախին մի սափորով ջուր և արծաթէ կոնք
բերաւ և Ոգիսեսի ձեռքերը սրսկեց: Յետոյ մի

մաքուր սեղան դրաւ առջեր. իսկ տնօրէն կինը
բերաւ պէսպէս կերակուր:

Երը Ոգիսես ընթրելու նստաւ, թագաւորը
հրամայեց քարոզին կարմիր գինի մատուռակել:
Գինու առաջին կաթիլներն Արամազդին նսւէր
հանելուց և բաժակը պարպելուց յետ՝ բազմա-
կանները վեր կացան և թագաւորն ասաց.

«Լսեցէք ինձ, ով իշխաններ և ժողովորի
աւագներ: Վազն դարձեալ ինձ մօտ եկէք,
որպէս զի մի տօնական սեղանով հանդիսաբար
պատուենք հիւրին և ապա խորհուրդ տեսնենք,
թէ ինչպէս զրան տուն հասցնենք ողջանդամ
և անվնաս: Մի անդամ տուն ժամանելուց յետ՝
ժող վիճակուի դրան, ինչ որ արդէն սահմա-
նել են երկնային դիք: Իսկ եթէ ինքն մի աս-
տուած է, Ոլիմպոսից մեզ մօտ իջած, այն ժա-
մանակ մեզ պէտք կըլինի անմահների կամքն
իմանալ»:

«Քան լիցի քեզ այդպիսի մտքեր յղանալ
սրտումդ, ով արքայ», պատասխանեց նրան
Ոգիսես: «Ես եմ մի մահկանացու, և եթէ ճա-
նաչում էք որ և է մարդ, որ ամենահէքն է
բոլորից, իմացէք, որ ես նրան եմ նմանում,—
դեռ նրանից էլ թշուառ եմ: Այժմ ժողէք, որ
ես ընթրիք վայելեմ, թէ և սաստիկ տրտմած
եմ: Գիտէք, որ շատ վշտաբեկ մարդն անդամ


անկարող է հակառակել որովայնի բռնութեան:
Իսկ դուք գնացէք հանգստացէք և թող աս-
տուածներն անուշարար քուն իջեցնեն ձեր
աչքերի վրայ: Բայց առաւօտն երբ լուսանայ,
մի մոռանաք, ով իշխաններ, սատար լինել
աղեղսաւոր, տառապաղին նժդեհիս, որ կարօտ
եմ ձեր օգնութեան»:

Դիւցաղն Ողիսկս այս խօսքերով բոլորի սիր-
տը զրաւեց, և ազնուական հիւրելն ուրախ ե-
ղան, որ թագաւորը մտաղիր էր հայրենիք ու-
ղարկել զգօնամիտ նժդեհին: Գարձեալ մի ան-
դամ աստուածներին նուէր ձօնելուց և բաժակ-
ները պարագելուց յետ՝ նրանք հեռացան դէպի
տուն, իսկ Ողիսկս ապարանքի մէջ մնաց:

Թագուհին վաղուց արգէն զարմանալով նը-
կատել էր նորեկ հիւրի զգեստներն և ճանա-
չել, որ զբանք իւր ձեռքի արգասիքն էին:
Այժմ նա խօսել ոկտաւ և ասաց. «Ո՞վ ես դու,
օտարական, ինչ աղջից ես; ո՞ր երկրից: Ասա
նոյնպէս, ով տուաւ քեզ այդ պատմումանը:
Միթէ չասացիր, թէ ծովալին փոթորկով ես
մեր ափերի վրայ ընկել»:

Ողիսկս պատասխանեց. «Վեհ թագուհի, դը-
ժուար է պատմել անմահական աստուածներից
զլիսիս հասած յոդնատաժան աղէտները: Բայց
պատրաստ եմ ասել իսկոյն, ինչ որ կ'ուզես

Խմանալ: Այս տեղերից շատ բացակայ, ովկիանոսի մէջ տեղում, Ոգիւզիտ կոչուած մի մենացեալ կզզի կայ, ուր իշխում է հուժկու Ատլասի գանգրահեր Կալիփսէ դուստրը: Նա մէնակ է, չունի մի կենակից ոչ մահացու մարդիկներից, ոչ էլ անմահ աստուածներից: Այլ միայն ինձ թշուառիս տարաւ իւր մօտ, երբ ամպրոսալինն Արամագդ նաւ շանթով ջախջախեց և բոլոր ընկերներիս կատղած ծովին զոհ մատնեց: Յաւէրժահարսն ինձ շատ սիրով հիւրընկալաւ և խոստացաւ անմահ անել և միշտ անծեր, եթէ կամենայի մօտը մնալ, ամուսինը դառնալով: Մակայն ես չէի կարող իմ անձկալի հայրենիքը մոռանալ: Ամբողջ եօթն ամ սրտահառած մնացի նրա մօտ: Իսկ երբ հասաւ ութներորդը, նա թոյլ տուաւ ինձ մեկնել, մի յաջողակ հողմ շնչելով, մինչեւ որ ես այս կզզեակը նրշմարեցի: Բայց յանկարծակի Պոսէյդոն մի սակալի մըրիկ յարոյց: Ահեղագոչ կոհակները վրաս խուժեցին և լաստս բեկոր բեկոր խորտակեցին: Ես մինչի մահ խոշտանգուած, հազիւ ընկայ այս ափը: Աւելոյր զիշերն վրայ հասաւ և ես չոր տերեներից մի անկողին շինեցի: Առաւօտեան ինձ զարթեցրեց օրիորդների մի զուարթքբիջ: Նրանց հետ էր և քո ազնիւ դստրիկը, որ նման էր մի դիցուհու: Ես պաղատաւոր դիչում, Ողիս.



մեցի նրան, և նա տուաւ ինձ հաց և հանդերձ»:

Թագաւորն ասաց. «Աղջիկս իրաւ իւր պարտքը լաւ կատարած կը լինէր, եթէ իսկոյն նաժիշտների հետ միասին բերէր քեզ մեր պալատը»:

Աղնիւ կոյսին կշտամբանքից ազատելու նպատակով Ողիսևս ուշխմաբար պատասխանեց. «Մի մեղադիր պարկեշտ կոյսին, ով արքայ. Նա ինքն հրամայեց ինձ նաժիշտների հետ քաղաք դալ: Բայց ես նրան ընդդիմացայ, ակնածելով քեզանից, որպէս զի վրաս չը բարկանաս: Զէ որ մահկանացուքս կատկածու ենք»:

«Իմ սիրտն երբէք առանց պատճառի չէ դրդովում կրծքիս մէջ», նկատեց նրան թագաւորը: «Սակայն թւում է ինձ, թէ պատշաճն ու կարգը ամէն ուրեք սիրելի են: Ո՞վ օտարական, երանի թէ աստուածները շնորհէին, որ քեզ նման մի ազնիւ մարդ իմ աղջկան կին ուզէր: Եթէ այս տեղ մնայիր, ես քեզ սիրով կը պսակէի նրա հետ և կրտայի քեզ տուն և կալուած: Բայց չինի թէ երկնչչու: Ոչ ոք բռնի չի պահիլ քեզ: Հենց վաղն առաւօտ նաւը պատրաստ կըլինի՝ քեզ դէսի տուն տանելու, ինչքան էլ հեռու լինէր հայրենիքդ: Դու կը տեսնես իմ քաջարի նաւաստներին: Նրանք ինքեանք կը վարեն թիերն ու զեկը, և դու անհոդ քուն կը լինիս նաւի մէջ»:

Թիցատիպն Ողիսևս ի բոլոր սրտէ բերկրեցաւ այս խօսքերը լսելիս, և աղերս կարդալով Արամազգին, կոչեց.

«Արամազգ հայր, տուր որ ամէն բան վեհն Ակինոսի ասածին պէս կատարուի: Այն ժամանակ նրան կը հասնի փառք և պատիւ, ինձ տենչալի հայրենիքս տեսնելու բախտ»:

Իսկ թագուհին հրամայեց անկողին ձգել սրահի մէջ աղնուական հիւրի համար: Իսկոյն նաժիշտները փափուկ մահին և դորդ բերին, և շատ չանցած՝ Ողիսևս անոյշ անոյշ քուն եղաւ:

5

ՄՐՅՈՒԹԵԱՆ ԽԱՂԵՐ

Վարդամատն առաւօտը ծաղեց թէ չէ, թագաւորն անկողնից վեր կացաւ: Վեր կացաւ և Ողիսևս և զգեստները հագնելով, սրահ մտաւ: Այնուհետև թագաւորը տարաւ նրան հրապարակ, որ ցոյց տայ փէակեցւոց ժողովը: Իսկ Աթենաս, մի քարողի տիալ առնելով, ատեան գալու հրաւէր կարդաց աւագներին: Ատեանի քարէ նոտարանները շուրջանակի բռնուեցան և ժողովուրդը դունդագունդ վութաց տեսնել ազնիւ հիւրին,

որի զլխին և ուսերին գեղեցկութեան շուք էր
կապել Աթենաս:

Թագաւորն ոտքի կանգնեց ատեանի մէջ և
ասաց աւադներին և բազմութեան.

«Լսեցէք ինձ, ով իշխաններ և աւագներ:
Աղերսաւոր եկաւ ինձ մօտ այս հիւրը, որի ոչ
անունն զիտեմ, ոչ երկիրը, և աղաչեց՝ ուղար-
կել իրեն դէպի տուն: Արդ կատարե՞նք դրա
խնդիրը: Գեռ երբէք իմ յարկի տակ չէ մտել
մի աղերսաւոր, որին մերժած լինէի անկարե-
կից: Տանք դրան մի նաւ և լիսուներկու քա-
ջահմուտ նաւաստի: Ո՞վ գուք, առորդ պատա-
նիներ, պատրաստուեցէք: Երբ նաւը կազմէք
սրծնէք, եկէք շուտով իմ պալատը, ուր ամեն-
քիդ մի մեծ հարկինք պիտի տամ: Իսկ դուք,
աւագներ և պետեր, այս րոպէիս հետո եկէք,
որպէս զի հիւրն երկրորդ անգամ հաց վայելէ
մեր շրջանում: Կանչեցէք նաև աստուածային
Դիմուլով երդչին. թող նա նուագէ մեր խրախ-
ճանում, ինչ որ մուսան ներշնչէ»:

Աս որ ասաց թագաւորը, վեհարան տարաւ
իշխաններին և մի քարոզ ուղարկեց աստուա-
ծային երգչի ետևեց: Իսկ լիսուներկու ժիր պա-
տանիները ծովափ դնացին և մի սեաթոյր նաւ
իջեցրին ջրի վրայ: Կայմը հաստատելուց, առա-
գաստները կապելուց և թիերը փոկով պնդե-

լուց յետ՝ նրանք եկան վեհապետի ապարանքը,
որի գաւկիթն և դահլիճներն արդէն լի էին
հիւրերով: Թագաւորը զինել էր տուել տասներ-
կու ոչխար, ութն խոզ և երկու եղ:

Վերջապէս քարոզն էլ եկաւ աստուածային
երգչի հետ, որին թէ քարիք էր շնորհել մու-
սան և թէ չարիք: Նա ունէր երգելու ձիրք,
բայց զուրկ էր աչքի լուսից: Քարոզն առաջ-
նորդեց նրան մինչև սրահի մէջ տեղն մի ար-
ծաթագամ աթոռի մօտ, որ յենուած էր մի
սիւնի: Երբ որ կոյրն աթոռ նստաւ, քարոզն
սիւնից մի քնար կսխեց և կոյրի ձեռքը քնա-
րին տարաւ, որ նա տեղը զիտենայ: Յետոյ մի
բոլորակ սեղան կանգնեց առջեն և բերաւ
առաստ խորտիկ և գիւնի: Ժիր սպասաւորները
գէս ու դէն էին վազվզում և հիւրերին հար-
կելով, անուշաբոյր զինի ածում ուկեծոյլ թա-
սերի մէջ:

Երբ բազմականք կերան, խմեցին և կշտա-
սինդ յագեցան, մուսան վառեց երգչի ողին,
և նա պերճ քնարին մեկնեց աջը: Լոռութիւն
տիրեց սրահի մէջ, և ահա նա ձայն հանելով,
Ողիսւս և Աքիլլես դիւցազների փառքն երգել
սկսաւ: Հիւրերը զմայլած ականջ էին դնում
նրա նուագին. իսկ Ողիսւս իւր ծիրանին վերց-
րեց և փէշի ծալրով դէմքը ծածկեց, որ փէա-

կեցիք արտասուքը չը տեսնէին։ Երգահանը լը-
ռեց թէ չէ, Ողիսւս արագ սրբեց արտասուքը,
մի ոսկէ բաժակ առաւ և նուէր հանեց աս-
տուածներին։ Բայց հէնց որ երգը նորից սկսաւ,
դիւցազն կրկին արտասուեց և նրա կուրծքից
խոր հառաջանք դուրս թռան։

Թագաւորն ասաց. «Լսեցէք ինձ, ով իշխան-
ներ և ժողովրդի ինամատարներ։ Հերիք է,
ինչքան որ վայելեցիք մեր սեղանից և երգա-
հանի անոյշ երգից։ Եկէք այժմ դուրս գնանք,
մեր խաղերն էլ ցոյց տանք հիւրին»։

Բոլորեքեան վեր կացան և արքալին հետե-
ւեցան։ Աստուածալին երգահանն էլ ետևներից
գնաց քարողի հետ։ Հրապարակը արդէն լի էր
ժողովրդով, որ սպասում էր իշխաններին։ Վեր-
ջապէս դրանք էլ հասան և կարդ ըստ կարդի
քարէ նստարանների վրայ բազմեցան, իսկ պա-
տանիներն, որոնք ուզում էին ցոյց տալ իրենց
վարժութիւնը գոտեմարտի, բոնամարտի և վա-
ղի մէջ, հետզհետէ ասպարէդ մտան։

Նախ և առաջ վողի մրցումն պիտի լինէր։
Թագաւորի երեք որդիքն՝ Լաւդամոս, Հալիս
և Կիտոնէս դէպի մի նպատակ վաղ տուին, և
մրցանակն առաւ Կիտոնէս։ Գօտեմարտի մէջ
Եւրիալոս յաղթող ելաւ, իսկ ոստման մէջ՝ Ամ-
փիլոս։ Յետոյ սկսան պղնձէ սկաւառակ արձա-

կել, և վերջապէս բռնամարտի դուրս ելան։
Այս վերջին խաղի մրցանակը թագաւորի Լաւ-
դամ որդին ընդունեց։

Երբ հանդիսականք մրցակլցների զօրութեամք
և կորովով զուարձացան և իղձերն յագեցրին,
Լաւդամ ասաց.

«Ընկերներ, եկէք այժմ մեր հիւրին հրաւէր
կարդանք—տեսնենք, թէ նա ինչ խաղ գիտէ։
Կերպարանքը ճշմարիտ որ ազնիւէ։ Տեսէք,
ինչ կուրծք ունի, ինչ սրունք, ինչ բազուկ-
ներ և ինչպիսի յաղթ պարանոց։ Զասակով էլ
դեռ առոյգ է, միայն թէ փոքր ինչ ջարդուած
է թւում փոթորկից, որ կրել է ծովի վրայ»։

«Լաւ ասացիր», կրկնեց նրան գոտեմարտում
առաջաւոր Եւրիալը։ «Ուրեմն և ինքդ նրան
հրաւէր կարդա»։

Լաւդամ իսկոյն կրկէսի մէջ տեղն կանգնեց
և բարձրաձայն յորդոր կարդաց Ողիսւսին, մըր-
ցութեան հրաւիրելով։

Ողիսւս պատասխանեց. «Ինչու ես ինձնից
մի այդպիսի բան պահանջում, ով Լաւդամոս։
Իմ վշտեն ալնքան դառն են, որ մրցանքի
ախորժակ էլ չէ մնացել սրտիս մէջ»։

Հեգնաբար նայեց նրա վրայ Եւրիալս և ասաց.

«Եւ յիրաւի, հէնց սկզբից երեսում էր, որ
մրցութեան հմուտ մարդ չես, ալ գուցէ նաւով

տարուող ապրանքների տեսուչ ես: Ի՞նչպէս ե-
ղաւ, որ մի մրցանաւոր ախոյեանի տեղ դըին
քեզ»:

Ողիսւես մռալլ դէմքով նրա վրայ նայեց և
ասաց.

«Բարեկամ, խօսքերիդ մէջ շնորհ չեմ տես-
նում. սակայն աստուած էլ ամենքին հաւա-
սար ձիք չէ պարգևում: Այս ինչ մարդուն նա
տալիս է տղեղութիւն, հետն էլ միատին ճա-
ռելու շնորհ, մտքի կորով, այնպէս որ բոլորե-
քեան լուռ են մնում, երբ նա սկսում է բար-
բառել: Մէկ ուրիշին տալիս է նա սիրուն պատ-
կեր, աստուածալին կերպարանք. բայց խօսքերի
մէջ զուր կ'որոնես ձիք և հանճար: Քո վե-
ճակն էլ հէնց այդպէս է: Դէմքիդ տիպով գե-
ղանի ես, բայց բնաւ չունիս ուշիմութիւն և
զօրեղ միտք: Անալի խօսքերովդ դու իմ սիրտը
բոլորովին բորբոքցիր: Ես մրցանքի անփորձ
մարդ չեմ. ես ոչ ոքից յետ չեմ քաշուել, քանի
որ մարմինս գեռ շաւերից չէր տրորուած: Բայց
և այնպէս պատրաստ եմ իսկոյն դուրս գալ
քեզ ընդդէմ, զի հեղնական խօսքերդ ինձ ալէ-
ծուփ վրդովեցին»:

Այս ասելով Ողիսւես վեցըրեց մի պղնձէ մեծ
սկաւառակ, պտուտկեց մի քանի անգամ և ուժ-
դնապէս արձակեց: Ակաւառակն օդի միջից

թռչելով, բոլոր նշաններից հեռու ընկաւ:
Զարհուրեցան փէակեցիք, երբ տեսան, որ ձգե-
լու մէջ Ողիսւեսին ոչ ոք յաղթել չէր կարող:
Իսկ նա ասաց. «Հապա դուք էլ այդ տեղ հասց-
րէք, պատանիք: Այս բանի մէջ էլ հետո մրցիլ
ուզենաք, ես պատրաստ եմ: Ով կամենայ, դուրս
թող գայ, միայն թէ ոչ Ալկինոս, որովհետեւ ես
նրա հիւրն եմ, և անպատշաճ, նաև անարգ
բան կըլինէր՝ հիւրընկալիս դէմ ոգորել: Իսկ
դուք միւսներդ մի թողնէք, որ խօսքերս դուք
կորչեն: Զկայ մի խաղ, որին ես վարժ ըրինէի»:
Ափիբերան եղան մարդիկ, ոչ ոք յանձն չա-
ռաւ ասպարէսի մէջ մտնել: Այն ժամանակ
թագաւորն ասաց. «Հաւատում եմ քեզ, օտարա-
կան, և տեսնում եմ, որ արութեանդ և կորո-
վիդ վրայ խօսելիս դու մնութի վառքից չէիր
դրդուած, այլ քո արդար ցասումից: Բայց որ-
պէս զի միշտ սիրով լիշես մեզ, երբ նստած
կ'լինիս երեխաներիդ և կնոջդ շրջանում,—այս
խօսքիս էլ ականչ զիր: Մենք ոչ անբասիր գո-
տեմարտներ ենք, ոչ էլ վարպետ ըմբիշներ.
բայց պարի մէջ միւս ազգերից գերազանց ենք
և ծովի վրայ՝ առաջին: Դէս ուրեմն, ով կայթա-
հարք, ցոյց տուէք ձեր արուեստը մեր պատուա-
կան հիւրի առջւ: Մէկն էլ թող գնայ՝ երգա-
հանի անոլշ քնարը սրահից բերէ»:

Քարողներից մին պալատ ճեպեց, իսկ պատահիք պարի տեղը հարթեցին: Քարողն եկաւ քնարը բերելով, և ահա երգչի նուազածութեամբ պատահիք պարել սկսան, իսկ քաջն Ոդիսես հոգւով զմայլած նայում էր:

Թագաւորն այժմ մէնակ պարելու հրաման տուաւ Լաւգամոս և Հալիս որդիներին: Մէկն առաւ ծիրանեգոյն մի գնդակ և յետ թեքուելով, ուժնապէս վերև ձգեց, միւսը ցստկեց և դեռ ոտքը գետնին չըդրած՝ բռնեց գնդակն օդի մէջ: Այնուշետև երկուքն էլ սկսան կայթել, տեղերն ստեղ ստեղ փոխելով. իսկ միւսները ծափ էին տալիս և ցնծութեան ձայներ հանում ամէն կողմից:

«Ո՞վ քաջ արքայ», ասաց Ոդիսես, «իրաւամբ էր, որ գովեցիր ձեր պարերը: Աքանչացած եմ պարողներից»:

Այս խօսքերի վրայ թագաւորն ուրախացաւ և դոչեց. «Ականջ դրէք ինձ, ով իշխաններ և ժողովրդի հոգատարներ: Մեր այս հիւրն, ինչպէս որ սկզբից տեսալ, մի քաջուշիմ մարդ է թւում: Եկէք ուրեմն շնորհենք դրան ընտիր ընտիր պարզեներ, իսկ Եւրիալ, որ անպատկառ խօսքեր ասաց, թող գայ հետը հաշտուի»:

Բոլորեքեան հաւան գտան, և իսկոյն լշանները մի մի քարող առաքեցին դէպի տուն,

որ ընծաներն առնեն բերեն: Իսկ Եւրիալ յառաջ ելաւ և ասաց.

«Ո՞վ վեհափառ տէր արքայ, իրաւ որ դժուհի լեզուովս ազնիւ հիւրին վշտացրի, և այժմ ի սրտէ պատրաստ եմ հաշտ առնել նրա սիրտը: Ահա սուսերս նրան եմ տալիս: Սուսերի կոթն արծաթից է և պատեանը փղոսկրից»:

Դառնալով այնուհետև Ոդիսեսին, նա ասաց.

«Ճէն և ուրախ լինին օրերդ, ով ազնիւ օտարական: Թող քամին օդի մէջ ցնդէ իմ բերանից թռած խօսքերն, որ էլ բնաւ չըկիշես: Իսկ քեզ աստուածները թող օրհնեն և յաջողակ դարձ պարզեեն դէպի տուն»:

Ոդիսես իրեն ընծայուած սուրն առնելով, պատասխանեց. «Ես էլ աստուածներից մաղթում եմ քեզ շատ բարիք: Տան նրանք, որ երբէք, չըկարօտիս այս սրին, որ ընծայում ես ինձ հաշտ խօսքերով»:

Քարողները վաղվաղակի վերադարձան. առատ ուկի և հանդերձներ բերելով: Թագաւորն այդ բոլորը պալատ դրկեց, ուր յետոյ ինքն էլ գնաց հիւրերի հետ: Այն տեղ թագուհին հրամայեց մի հրաշակերտ արկղ բերել և Ոդիսեսին ընծայուած պարզեները մէջը դնել: «Արի ինքդ սրա խուփին ամուր կապիր», ասաց նա հիւրին,

«որպէս զի ոչ ոք մէջից բան չգողանալ, երբ
դու նաւում խոր քուն լինիս»:

Ողիսւս արկղի խուփը կապոյտ չուանով պինդ
կապեց և վրան մի արուեստական հանգոյց շի-
նեց: Այսուհետև նրան խնդրեցին, որ ընդունէ
մի կազդուրիչ աւազան:

Հէնց որ նա պերճ պատմուճանով զարդա-
րուած՝ կամենում էր նորից մտնել սրահը, —
Նաւսիկէն դիմաւորեց նրան շէմքի վրայ և ա-
սաց. «Խնդա, ով հիւր, և լիշեր ինձ, երբ հայ-
րենիքդ վերադառնաս»:

Ողիսւս պատախանեց: «Կաւսիկէ, դու վե-
հանձն արքայագուստը: Տայ! Արամազդ, որ ես
ողջամբ տուն հասնեմ: Այն ժամանակ ես ամէն
օր քեզ կըլիշեմ, քեզ, որ կեանքս ազատեցիր»:

Կոյսն հեռացաւ, իսկ Ողիսւս սրահ մտնելով,
ակմբի մէջ աթոռ նստաւ: Խակոյն տնտեսուհին
կերակուր դրաւ նրա առջեւ, բայց նա դեռ ու-
տել չըսկած կանչեց իւր մօտ մի քարոզ և
ասաց. «Այս խորտէկն աստուածալին երգչին
տուր, որ կշտանալ: Թէւ ինքս էլ այժմ աղ-
քատ եմ, բայց քաղցր է ինձ կրցածիս չափ
պատուել նրան»:

Բոլորն էլ որ յագեցան, Ողիսւս գարձաւ եր-
գահանին և ասաց. «Առաւել քան ո՞ր և է
մահկանացուի քեզ կուզէի փառաբանել, ով

կոյր երգիչ, քանզի մուսան՝ ուսուցել է քեզ
հուչակել վսեմ խօսքերով ինչ որ կրեցին և գոր-
ծեցին քաջ յոյները Տրոյալի առջև: Դէ ուրեմն
երգի՛ր մեզ և փայտակերտ ձիլ դէպքը, որ
Տրոյա մտաւ Ողիսւսի հնարքով»:

Ճնորհալի երգիչն սիւնին մեկնեց իւր ձեռը,
քաղցրահնչիւն քնարն առաւ և սկսաւ նուագել
Ողիսւսի խիզախ գործը. նա գուշակում չէր, որ
իւր գոված դիւցազն նոյն խոկ սրահի մէջ էր
նստած: Սակայն Ողիսւս ինչքան էլ որ գուն
գործեց, չըկարացաւ սանձահարել իւր արտա-
սուքն և հեծիւնը:

Թագաւորը վերստին նշմարեց այդ և դիմելով
իշխանսերին, ալսպէս խօսեց: «Ուշ դրէք, ով
վեհափառ իշխաններ: Ինձ թւում է, թէ լաւ
կըլինէր, եթէ աստուածալին երգիչն՝ այժմ երգե-
լուց դատարէր, քանզի տեսնում եմ, որ դրա
երգը չէ զաւարճացնում ամենքին: Հիւրիս սրտում
մի դառն վիշտ կայ, որ ասես թէ նորոգվում է
երգչի նուագից: Ինձ համար հիւր ասածդ մի
եղբայր է, և չէի ցանկալ, որ նա տրտմէր տա-
նըս մէջ»:

Եւ ապա թէ Ողիսւսին դիմելով, ասաց.

«Օտարական, վերջապէս ասա մեզ և մի ծած-
կիր քո անունն և երկիրը, որպէս զի թիավար-
ներս զիտենան և քեզ շիտակ այն տեղ հաս-

ցընեն: Միամիտ կաց. սրտիդ փափագը կը կատարուի, թէ և գուշակը սպառնում է, թէ Պոսէլդոն պիտի խորտակէ մեր նաւերից մին, հէնց որ սա մի օտար մարդ տանելու լինի այս երկրից: Ամէն բան պատմիր մեզ ճշմարտապէս: Ո՞ր տեղերում թափառեցար, ինչ երկիրներ տեսար, անցար: Արդեօք վայրադ էին տեսած մարդիկդ և անարդար, թէ երկիւղած էին և հիւրասէր: Պատմիր նոյնպէս, թէ ինչու աչքերիցդ յորդ արտասուք հոսեցան, երբ երգիչն Տրոյա գնացած քաջերի արկածները նուադել սկսաւ: Մի՛ գուցէ փեսադ ընկած լինի այն սոսկալի կուլներում և կամ մտերիմ ընկերդ: Ազնիւ ընկերն հօ եղբօրից պակաս բան չէ մարդուս համար»:

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

ԹԱՓԱՌՄՈՒՆՔԸ

1

ՈՂԻՄԵԼՎ ԿԻԿՈՆՆԵՐԻ ԵՒ ԼՈՒՏԱՍԱԿԵՐՆԵՐԻ ՄՈՏ

Այսպէս սկսաւ իւր պատմութիւնն Ողիսես. «Վեհափառդ Ալկինոս», ասաց նա, «կամենում ես իմ արկածքն իմանալ: Ահա նորից կը սաստկանան ցաւերս: Ո՞ր բանը պատմեմ քեզ առաջ, ո՞րն յետոյ: Ո՞հ, անմահ գիք շատ աղէտներ տուին ինձ:—Լսիր ուրեմն նախ անունս, որ ինձ լիշես, երբ ես տուն վերադառնամ: Ես եմ Ողիսես՝ Հայերտի որդին, հանճարեղ և քաջարի գործերով հոչակուած: Հայրենիքս է իթակէն, հանրածանօթ այն կղզին, որի վրայ մինչև երկինք է բարձրանում ներկտոն սարր: Բայց լսիր այժմ, թէ ինչ փորձանք հասաւ ինձ, մինչ Տրոյալից լետ էի դալիս:

Քամին մեզ կիկոնների երկիրն մղեց: Մենք քանդեցինք նըանց խոմարոս քաղաքը: Այնու-

հետեւ ես յորդոր տուի ընկերներիս շուտ մեկնելու այն տեղից. բայց յիմարները ըլլեցին և ծովափի վրայ նստան, որ շուալտեն: Գինին առատ էր, գեր զուարակներ և այծեր էլ շատ կային: Բայց մինչ նրանք շուալտում էին, փախըստական կիկոնները դաշնակիցներ հաւաքեցին և ահագին բազմութեամբ մեր վրայ ընկան: Կուր տեսեց արշալուսից մինչեւ արեւի մայր մտնիլը: Մէն մի նաւից ես վեց քաջեր կորցրի. մնացեալներս փախուստ տուինք վըտանդից:

Մեր սիրելի կորածներին երեք անդամ բարձր ձայնով և յանուանէ կանչելուց յետ՝ մենք նաւեցինք, և չուն սկզբում յաջողակ էր: Սակայն Արամագդ յաջորդ օրը մի փոթորիկ դրկեց մեղ դէմ: Սև սև ամպեր պատեցին մեղ և ծովի վրայ զիշեր իջաւ: Մեր նաւերի առագաստները պատառուեցան, և մենք, չար հողմից տատանուելով, յառաջ մզուեցանք: Վէրջապէս հասանք մի ասպահով հանդրուան, ուր ջարդուած և նկուն եղած, երկու օր, երկու զիշեր մնացինք: Երրորդ օրուայ լուսաբացին նորից ընկանք ճանապարհ: Նոր էինք հասել Մալէան Հրուանդանին, երբ հողմը դարձեալ սկսաւ մըրկել և բաց ծովի մէջ ձգեց մեղ:

Ամբողջ ինն օր ալէտանչ ծփծփեցանք մեղ

անծանօթ ջրերի վրայ, տասներորդին՝ Լուտասակերների երկիրն եկանք: Յամաք իջանք, ջուր առինք և ճաշեցինք: Յետոյ ես լրտեսներ արձակեցի, որ իմանան, թէ ովքեր էին այն տեղ ընակում: Նրանք գտան մի բարեմոյն փոքրիկ ազգ, որ ապրում է լուտասի պտուղ ուտելով, որ մեղրից էլ քաղցը է: Ով որ ուտէ այդ պտղից, կըմոռանայ իւր անցեալն և ապառնին և կ'ուզենայ միշտ այն տեղ մնալ: Այսպէս էլ պատահեցաւ ընկերներիս, որոնց ես բոնի ուժով նաւ բերի և պարաններով նստարանին կապեցի, որպէս զի մեր հայրենիքը չմոռանալին:

2

ՈՂԻՍԵՒՄ ԿԻԿՈՊԱՆԵՐԻ ՄՌԾ

Առաջաստները պարզեցինք և այն կղզուց հապճեպ շտապով հեռացանք: Ճուտով հասանք վէս կիկոպների երկիրը, որոնք ոչ արտ են հերկում, ոչ տունկ տնկում: Յորենն և գարին երենք իրենց են դուրս գալիս պարարտ հողից. որ առատ է և ողկուզաբեր այդիներով: Մարդիկ այն տեղ ընկերութեան կապեր չունին և ապրում են խոր անձաւներում. ոչ օրէնք են ճանաչում, ոչ դատաստան:

Մեր զկայ առած ափին հանդէպ մի ծառաչում. Աղիս.

ւէտ կղզի կար, որի ժայռուտ լեռներն անբաւ
այծերով ծածկուած էին; Պենք ծուխ տեսանք
և օդիների մայւն լսեցինք: Առաւօտեան ես
ասացի ընկերներիս. «Թուք այս տեղ մնացէք,
իսկ ես այդ քարքարուտ կղզին կընաւեմ՝ տես-
նելու, թէ ինչ մարդիկ են այն տեղ ապրում»:

Ճուտով հասանք եղերքին և մի մեծ բարձ-
րակամար քարայր տեսանք, որ սարդենիներով
պատուած էր: Եյն տեղ պառկած էին անթիւ
այծեր և ոչխարներ: Քարայրի դրսի կողմը
կանգնած էին բարձր ժայռեր: Ես իմ նաւը մի
հանդրուանում թաքցրի և հետո տասներկու
մարդ առնելով, քարանձաւի մէջ մտալ: Հե-
տերս տարանք ուտելու պաշար և մի տիկ անոյշ
դինի, որ ընծայել էր ինձ Պարոն քուրմը, որին
ես պաշտպանել էի Խոմարեան կոտորածի ժա-
մանակ: Ով մի անդամ այն զինու համն առ-
նէր, էլ ըմպելուց չեր դադարիլ: Ես այդ զինին
հետո առի, քանզի սիրաբ ասում էր, թէ անօ-
րէն մարդկանց պիտի հանդիպէի: Կիկլոպին
անձաւի մէջ ըրդտանք, այն միջոցին նա այծեր
էր արածում: Ամէն բան ուշի ուշով զննելիս՝
մենք զարմացանք նրա անչափ հարստութեան
վրայ: Ընդարձակ վարախներն ուկերով և զառ-
ներով լի էին՝ ամենքն էլ ըստ հասակի և տե-
սակի ջոկ զատուած: Ճորջ դրուած էին պան-

բով տաշտեր, կաթնով լեցուն մեծ մեծ դոլեր
և կթոցներ:

Ընկերներս ուզում էին այդ գառներից և
պարէնից կողոպտել, բայց ես թողլ ըրտուի, ըստ
որում կամենում էի քարանձաւի ընակչին տես-
նել, յուսալով, թէ նա մեզ հեւրոյթ կրտար:
Պենք կրակ վառեցինք, աստուածներին նուէր
հանցինք, պանիր կերանք և սպասեցինք, որ
Կիկլոպը վերադառնար: Վերջապէս իրիկուայ
դէմ մերադարձաւ այդ վիթխարին, որի լոկ
երեսոյթն ահ ու սարսափ ազդեց մեզ: Նա կրում
էր մի բեռն փայտ, և երբ այդ բեռն անձաւի
առջև վայր ձգեց, մի այնպիսի բոմբիւն թըն-
դաց, որ մենք ահից ներսի կողմը պահո-
տուեցանք, որպէս զի մեզ ըրտեսնէր: Յե-
տոյ նա ոչխարներն և այծերը ներս քշեց և
մուտքը փակեց մի բրդաձև յաղթ վէմով, որ
անդամ քսան լոյծ եղներ չէին կարող տեղից
շարժել: Քանի շատ էինք Կիկլոպի վրայ նա-
յում, այնքան էլ մեր սարսափը սաստկանում
էր: Նրա անդամներն հոկայտկան էին. ճակա-
տի վրայ միայն մի հատ մեծ աչք ունէր: Նա
նստաւ զետնի վրայ և սկսաւ կթել ոչխարներն
և այծերը: Կաթի կէսը մակարդեց և կթոցի
մէջ քամեց, միտ կէսն մի մեծ տաշտի մէջ
ածեց, ընթրիքին խմելու համար: Յետոյ կրակ

վառեց, և դրա բորբոքուած լոյսն էր ահա, որ մատնեց մեղ վայրագ հրէշին:

«Յտարականներ», զոռաց նա խուժկուժ ձայնով. «՞վ էք դուք, ո՞րն է ձեր հայրենիքը: Արդեօք վաճառական մարդիկ էք, թէ ծովաշրջիկ աւազակներ»:

Սրտերս գող ընկաւ, սակայն ես նրան ասացի. «Մենք փոթորկից այս կողմ ձգուած յուներ ենք: Գալիս ենք Տրոյակից և արդէն վաղուց որոնում ենք մեր հայրենիքը: Այժմ ոտքերդ ընկած աղաչում ենք՝ տալ մեղ հիւրոյթ, ինչպէս որ պահանջում է սուրբ օրէնքը: Երկընչիր աստուածներից և ի միտ առ, որ Արամազդ վրէժինդիր է հովանու կարօտ հիւրերի համար»:

Ես այդպէս աղաղակեցի, իսկ նա վայրագաբար պատասխանեց. «Յիմար ես դու, ով օտարական, և թուլ թէ շատ հեռուից ես, որ աստուածներից երկնչելու խրատ ես տալիս. այլապէս՝ քեզ քաջ յախտնի կը լինէր, որ մենք ոչ Արամազդին ենք բանի տեղ դնում, ոչ էլ միւս աստուածներին: Ուրեմն եթէ սիրոս չարգելէ ինձ, ես ոչ քեզ կը լինայիմ, ոչ էլ քո ընկերներին: Բայց ասա ինձ, ո՞ւր է այն նաւն, որ բերաւ քեզ այս կղզին»:

Նկատեցի Կիկլոպի չարութիւնն և պատասխանեցի խարէական խօսքերով. «Նաւս Պասէլ-

դոն կործանեց, բախելով ձեր կղզու ժայռին, և միայն այս ընկերներիս հետ հազիւ պրծալ օրհասից»:

Ասացի թէ չէ, վիրագը տեղից թռաւ, ընկերներից երկուսին բռնեց և շան լակոտների նման քարէ տափին խփելով, ուղեղներն և արիւնը դուրս վիժեց. նրանք էլ խկոյն հոգիները փչեցին: Այնուհետև հրէշը յօշատեց նրանց մաս առ մաս և մսից ընժրիք պատրաստեց իրիկուայ համար: Լեռնասուն սովատանջ առիւծի պէս լափեց նա իւր կերակուրն, ոչ փորտիք թողնելով և ոչ սոկոր: Իսկ մենք լաց էինք լինում այդ գործերը տեսնելով և բազկստարած աղօթք կարդում Արամազդին:

Հրէշն իւր ահագին փորը մարդկալին մտով և ոչխարի կաթնով լցնելուց յետ՝ պառկեց ըընելու: Այն ժամանակ ես մտքումս կշռեցի՝ արդեօք յարձակութմ վրան քաջօրէն և կուրծքը սրովս պատառեմ: Սակայն մի բան ինձ յետ բռնեց: Եթէ յաղթող էլ դուրս գալի այս վրտանդաւոր մենամարտից, դարձեալ մենք աղիողորմ պիտի կորչէինք անձաւի մէջ, քանզի անզօր պիտի լինէինք թաւալել վէմը դրան մօտից:

Սոսկալի էր այն գիշերը: Կիկլոպն առաօտեան վեր կացաւ, կրակ վառեց և տլծերը կը-

թեց: Յետոյ վերստին ընկերներիցս երկուսին
բռնեց և լափեց: Նախաճաշն աւարտելուց յետ՝
քարը դռնից մեկուսի հրեց և հօտը դուրս քշե-
լուն պէս՝ մուտքը նորից ամուր փակեց, և
այնպիսի հեշտութեամբ, որ ասես թէ փակածը
մի կապարձի խուփի լինէր:

3

ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Կիկոպը սուր սուլումով սարը քշեց իւր իւա-
շինքը, իսկ ես քարայրի մէջ գերի մնացի, մըտ-
քումս չարիք որո՞մալով վիրազի դէմ: Քարայրի
մէջ ընկած տեսայ Կիկոպի լախտը — ձիթենու
բունից կտրուած՝ կայմի նման երկայն և հաստ
մի գերան: Դրանից կտրեցի վեց ոտնաչափ մի
կտոր և ասացի ընկերներիս, որ յղկեն: Ես սը-
րեցի վայրի ծալըն և կրակի մէջ խանձելուց
յետ, թաքցրի այդ գէնքն աղբի տակ, որ դի-
զադէղ ամբարուած էր քարայրում: Այնուհետեւ
մեր մէջ վիճակ ձգեցինք, թէ ո՞վ կը վարակը
այդ սուխնը Կիկոպի աչքի մէջ, երբ նա քնէր:
Չորս մարդու վիճակ ընկաւ, ես եղայ հինգե-
րորդը:

Իրիկուայ դէմ Կիկոպը քարայր եկաւ լսա-
շինքի հետ: Ոչսարներն և այծերը կժեց, կրակ

վառեց և դարձեալ լսակեց ընկերներիցս եր-
կուսին:

Ապա թէ ես մօտեցալ նրան, առջեն բռնեցի
կարմիր զինով լի մի բաժակ և ասացի. «Առ
և խմիր, Կիկոպ, որ լմանաս, թէ ինչ ազնիւ
ըմպելիք կար մեր նաւի մէջ: Ես նուէր էի բե-
րել քեզ այս զինին, յուսալով, թէ խնդիրս
կըլսէիր: Սակայն դու, վայրագասուն, ամեհա-
բար մոլեգնեցար: Ո՞վ կ'ուզենալ այսուհետեւ քեզ
մօտենալ, քանի որ այսպէս վատ ես վարփում
հիւրերի հետ»:

Բաժակն առաւ և զմայելով քամեց մինչեւ
վերջին կաթիլը: Յետոյ ասաց. «Լքցնուր նորից
և անունդ ասա, որովհետեւ կամենում եմ մե-
ծարել քեզ հիւրոյթով»:

Երեք անգամ բաժակն լքցրի, և երեք ան-
գամն էլ յիմարը պարպեց: Երբ ուշքը գնալ
սկսաւ, ես ասացի. «Ուզում ես անունս իմա-
նալ, ով Կիկոպ: Իմացիր ուրեմն — իմ անունն
Ոչոք է: Ոչոք են անուանում ինձ հայրս, մայրս
և բարեկամներս: Սակայն տեսնենք, ինչ հիւ-
րոյթ ես տալիս ինձ»:

Կիկոպը պատասխանեց. «Ոչոքին յետոյ կ'ու-
տեմ, միւսներին առաջուց — այս կըլինը իմ
հիւրոյթը»:

Ասաց, ծիծաղեց և հաստ շլինքը մի կողմ

թեքած՝ երեսն ի վեր գետին ընկաւ։ Փոքր ինչ
յետոյ բոլոր զինին և մարդկալին մսի կտորնե-
րը զգայուելով դուրս ժայթքեց իւր կոկորդից։
Այն ժամանակ ես սուխնը կրակի մէջ դրի և
երբ սայրը կարմրեցաւ և սկսաւ կացեր արձա-
կել, ընկերներիս կանչեցի։ Մի վայրկենում հրա-
վառ սուխնը կիկլոպի միակ աչքի մէջ վարսե-
ցինք և ես մի լաւ պտուտիեցի։ Սուխնի ծալրից
արիւն վիժեց, և կիկլոպի յօնքն և բիբը միան-
դամայն խանձուեցան։ Ինչպէս որ շաշում է
հրաշէլ երկաթը ցուրտ ջրի մէջ մխուելիս, այն-
պէս էլ աչքը շաչեց, ջեռեալ սուխնից ալրուե-
լով։ Փայտերը բոմբիւն տուխն հրէշի ահեղ դո-
ռումից, իսկ մենք ահ ու դողով անձաւի մէջ
թաք կացանք։ Կիկլոպն աչքից կորզեց արիւ-
նաշաղախ սուխնն և դէն ձգեց, մոլեգնարար
դոփելով։ Յետոյ հզօր ձայնով օգնութեան կան-
չեց շրջաբնակ կիկլոպներին, որոնք էլ իսկոյն
դէսից դէնից վրայ հասան և անձաւի հանդէպ
կանդնեցան։

«Ի՞նչ է պատահել քեղ, ով Պոլիւփեմ, որ այդ-
պէս սաստիկ գոռում ես», հալցրին նրանք։
«Արդեօք քեղ վիշտ պատճառեցին կամ թէ
բռնի և նենդութեամբ սպանել է ուզում քեղ
մի ոք»։

«Ո՞վ բարեկամներ, Ոչոքն է սպանում ինձ

բռնութեամբ և նենդութեամբ», պատասխանեց
Պոլիւփեմ։

Նրանք էլ ասացին. «Եթէ ոչ ոք, ուրեմն աս-
տուած է քեղ վիշտ դրկել։ Դրա դէմ մենք
դարձան չունինք։ Մաղթիր հօրդ՝ Պոսիդոնին»։

Այսպէս ասացին նրանք և հեռացան։ Իսկ
ես հոգւով սրտով հրճուեցայ, որ հնարած ա-
նունս նրանց խաբեց։ Այն ինչ անտանելի ցա-
ւից հեծող կիկլոպը, չնայելով իւր կուրու-
թեան, մեղ բռնել էր կամենում։ Առաւոտը լուսա-
նալիս նա կիսով չափ յետ հրեց քարայրի
մուտքը փակող վէմը, նստաւ դրան մօտ և
սկսաւ շօշափել դուրս ելնող ոչխարներն և այ-
ծերը։ Նա մեղ յիմարի տեղ էր դրել. սակայն
ես արդէն վազուց մտածել էի, թէ ինչ պիտի
անէի։

Քարայրի մէջ կալին բազմաթիւ թաւաղէս
ոչխարներ։ Ես վեցըրի այն ուռենու ոստերից,
որոնց վրայ հրէշը պառկում էր, մի քանի նուրբ
ողորներ և դրանցով իրար կապեցի երեք երեք
ոչխար և այց։ Իւրաքանչիւր միջին կենդանու
վրայ ես կապեցի մի մի մարդ։ Կիկլոպը փու-
թաջան դնում էր ձեռքով իւր առջեւից անց-
նող անասունների մէջքը, բայց խորամանկու-
թիւնս չէր նկատում։ Այսպէս ընկերներս դուրս
ելան։ Իսկ ինձ համար ես ջոկեցի մի մեծ խայ

և շնչից ամուր բռնելով, բրդոտ պորտի տակ պառկեցայ: Նա տնքալով դէսի մուտքը տարաւ. ինձ: Կիկոպը նրա թիկունքն և գլուխը շօշափեց, կանգնեցրեց և ասաց.

«Ե՞ս խոյ, ինչիցն է, որ դու այս օր քարայրեց վերջինն ես դուրս գալիս: Սովորաբար չէիր սիրում, որ ուրիշները քեզնից առաջ ելնէին: Դու միշտ ուրիշներեց շուտ էիր դէպի մարդը շտապում՝ փափուկ արօտ ճարակելու կամ ծարաւդ անցնելու կարկաջասսահ վտակից. միշտ էլ դու էիր բոլորից առաջ դէպի գոմը յետ գալիս: Գուցէ քեզ վշտացնում է հովուիդ աչքը, որ չար Ոչոքն խլեց ինձնից: Բայց նա անշուշտ չի պրծնիլ իւր մահից: Ո՛հ, եթէ կարանալիք խօսել ինձ հետ և ասել, արդեօք ուր է թաք կացել նա իմ յաղթական բազուկից: Ես նրա դուխը կը ջարդէի, ուզեղն դէս դէն ցնդելով, և մի անդամ սիրոս կը հովանար այն վատթարի, այն Ոչոքի հասցրած ցաւից»:

Կիկոպն այս ասելով ձեռքը վերցրեց, և խոյն խկոյն դուրս տարաւ ինձ:

Անձաւից փոքր ինչ որ հեռացանք, ես խոյի տակից դուրս ելայ, ընկերներիս էլ արձակեցի: Անուհետեւ մենք շտապով յառաջ քշեցինք ամենագեր ոչխարներն և մինչեւ նաւերը հասցըինք:

Մեր ընկերներն ուրախութեամբ ողջունեցին ծեղ և ողբացին մնացեալներին, որոնց հրէշը լափել էր: Սակայն մենք շուտով ողի առինք, ոչխարներն նաւ տարանք և ճեղ տալով ավից ի բաց նաւեցինք:

Երբ այնքան հեռացել էինք՝ որ տեղից գեռ կարող էր այր մարդու ձայնն ափ հասնել, ես հետևեալ խայթիչ խօսքերն արձակեցի հրէշի դէմ.

«Ե՞ս Կիկոպէ, անփառունակ չէ յիրաւի այն մարդը, որի ընկերներին անձաւիդ մէջ լափեցիր: Ահա չար գործերիդ պատուհասն ընդունեցիր»:

Նա ևս առաւել չարացաւ, ահագին ուժով մի անարի վէտ պլոկեց բարձր ժայռից և սեագող նաւիս ետևից շպրտեց: Քիչ էր մնացել, որ վէմը նաւիս գեկը խորտակէր: Վէմից ալիքն վեր դիպուեցան և դէպի ցամաք մղեցին մեզ: Ընկերներս միայն ինձնից սիրտ առնելով, կարայան եղերախոյս ընթացք բռնել:

Երբ մենք ափից երկրորդ անգամ հեռացանք, ես նորից ոտքի ելալ՝ Կիկոպին դարձեալ մի խօսք ասելու, բայց ընկերներս պաղատելով լինդրեցին լուռ կենալ, քանզի սաստիկ վախենում էին, թէ հրէշն այն տեղ էլ քար կը հասցնէր և մեղ չարիք կը պատճառէր:

Բայց և այնպէս ես բարձր ձայնով կանչեցի.

«Կիկլոպէ, եթէ մի ոք քեզ հարցնէ — ով կուրացընց քեզ, պատասխանիր. Ինձ կուրացընց քաղաքաւեր Ոդիսևսը, Լայերտի որդին Իթակէից»:

Այս որ լսեց Կիկլոպը, հառաջելով հոգւոց հանեց և գոչեց. «Այսպէս ուրեմն կատարուեցաւ դուշակութիւնը: Տելամոս դուշակն ասել էր ինձ, թէ ես Ոդիսևսից պիտի կուրանսալի: Ես կարծում էի, թէ ինձ մօտ մի առողդ և հրակալազօր մարդ կը գար: Բայց աւաղ, գալիս է մի վաստշուէր, չնչին էակ, թուցնում է խելքս անոյշ զինով և ապա աչքս կուրացնում: Վակայն, վերադարձիր, Ոդիսևս, ես լիաձեռն հիւրոյթ կը տամ քեզ, Պոսիդոնին էլ կ'աղաչեմ, որ շնորհէ քեզ յաջողակ գարձ դէպի տուն: Զէ՞ որ ես նրա որդին եմ, և նա միայն առտուածներից կարող է վեցադարձնել աչքիս լոյսը»:

Իսկ ես այս խօսքելն ուղղեցի նրան հեղնաբար. «Ա՛հ, երանի թէ ես քեզ մեռած զիտենալի, ինչպէս զիտեմ որ նա աչքդ չի բուժիլ»: Նա լսեց և ձեռքելն երկինք ամբառնալով ձայն կարդաց. «Լսիր ինձ, ով երկրասասանդ Պոսիդոն: Եթէ իրաւ դու իմ հայրն ես, ուրեմն խափանիր Ոդիսևսի վերադարձը դէպի տուն: Իսկ եթէ նրան սահմանուած է ճակա-

տագրից՝ կրկին տեսնել իւր Իթակէն, գէթ այնպէս արա, որ նա անվերջ չարիք կրէ ճանապարհին և տառապանք ու վիշտ գտնէ իւր տան մէջ»:

Վերստին վերցընց նա մի ահազին ապառաժ և արձակեց մեր ետևից: Վէմը թռաւ և սոսկալի ուժնութեամբ մեր առջեւը ծովն ընկաւ: Ծովը ծփաց դէպի վեր և ցամաքից հեռու մըդեց մեր նաւը:

Ճուտով հասանք այն կղզին, ուր միւս ընկերներս անհամբեր սպասում էին մեզ նաւերում: Ուրախ ուրախ ցամաք իջանք և Կիկլոպից յափշտակուած ոչխարներն մեր մէջ հաւասար բաժնեցինք: Իսկ խոյն ինձ տրուեցաւ, իբրև վերագիր: Ես էլ իսկոյն զոհեցի նրան ամենազօր Արամազդին: Այնուհետև մի լաւ ընթրիք պատրաստեցինք և կշտացանք թէ կերակրով, թէ իսմիչքով: Արդէն օրն լուսանում էր, երբ բազմամունք ծովի ափին պառկեցանք և քուն եղանք»:

4

ՀԱՐՄԵՒԹԻ ՏԵՐՆ ԿՈԼՈՍ

Ոդիսևս շարունակելով իւր պատմութիւնն Ալկինոս թագաւորի և թէակեան մեծերի առջև, ասաց.

«Միւս առաւտօտ մենք դուրս ելանք ծովախորշից, յաջող քամին առագաստներն ուռեցրեց, և մենք արագ յառաջ նաւեցինք: Այսպէս հասանք մի կղզի, որ մի պղնձեալ, անթափանցիկ պարիսպ ունէր. այն տեղ իշխում էր իոլ կոչուած թագաւորը: Իւր պալատում նա տասներկու զաւակ ունէր — վեց սիրասուն աղջիկներ, վեց քաջագեղ որդիներ: Ճքեղ սրակը միշտ լի էր անուշաւէտ բուրմունքով և միշտ սրնդի ձայն էր հնչում դաւթի մէջ: Այն տեղ մենք սիրելապէս ընդունուեցանք և ամբողջ ամիս մեր ուղին շարունակել մոռացանք: Իոլոս հարցնում էր ինձ ամէն բան՝ Տրոյացի մասին, յոյն քաջերի դարձի վրայ, և ես սիրով պատմում էի ամէն բան: Երբ վերջապէս ես կամեցալ հեռանալ, նա ինձ տուաւ վստահելի ուղեկիցներ: Տուաւ նոյնպէս, իրեւ հիւրոյթ, իննամեայ եղի մորթից շինուած մի տիկ, որի մէջ մըրկաշունչ հողմեր փչեց, քանզի նա հողմերի տէր էր կարդուած Արամաղմից: Մենք վեր կացանք չու ընկնելու: Ես արծաթեայ լարերով տիկն ամուր կապեցի, և նաւիս մէջ դրի: Այնուհետև իոլոս արևմտեան սիւք շնչեց, և մենք յառաջ նաւեցինք:

Ինն օր և ինն գիշեր մի ուղղութեամբ նաւեցինք դէպի մեր հայրենիքը: Արդէն տասնե-

ըորդ օրը տարաժամելու վրայ էր, երբ Իթակէի գիշերապահ կրակները նշամարեցինք: Ես շարունակ գիշեր ցերեկ կանգնած լինելով զեկի մօտ, արդէն սաստիկ յոգնած էի. ուստի վրաս քուն եկաւ, և պառկեցայ, որ փոքր ինչ հանգստանամ:

Հէնց որ քնի գնացի, ընկերներս սկսան խօսել իրար հետ, և մին ասաց միւսներին. «Զարմանք բան չէ, որ ուր էլ գնայ այս մարդը, ամենայն տեղ սիրվում է: Այն ինչքան ոսկի և արծաթ էր, որ հանեց Տրոյացից, մինչզեռ մենք ձեռնցւնայն ենք վերադառնում: Այժմս էլ իոլ ընծայեց դրան մի մեծ տիկ, որի մէջ ով գիտէ — որքան ոսկի կայ պահուած: Եկէք բանանք այդ տիկն և տեսնենք, ինչ կայ մէջը»:

Այսպէս խօսեց լիմարը. բայց հէնց որ արծաթալար կապերն բացին, ահա տիկի միջից հողմերը շառաչելով դուրս խուժեցին և փոթորկալի արագութեամբ մեր նաւը յետ մղեցին: Քնիցս արագ սթափելով ես տեսայ, որ մեր բանը շատ վատ էր: Ես զարհուրած մտածեցի, թէ ինչ անեմ. արդեօք ծովին ընկնեմ և մեռնեմ, թէ չար աղէտիւ համբերեմ և կենդանի մնամ: Վերջապէս համբերելը լաւ գտայ և մեկնոցիս մէջ փաթաթուելով, յատակի վրայ պառկեցայ: Ճատ չանցած՝ քամիները վերստին մեղ

Էսլեան կղզին բերին: Մենք յամաք իշանք,
ջուր առինք և ճաշ կերանք: Այնուհետև ես
հետև առի մի ընկեր և մի քարոզ, և արքայի
պալատը գնացի: Գտայ նրան ընտանեաց հետ
ճաշի նստած: Ինձ որ տեսան, բոլորեքեան
զարմացան, և խոլոս հարցմունք արաւ, թէ
ինչ բան էր պատահել ինձ: Ճշմարտութեամբ
պատմեցի: Նա սարսափած վեր թռաւ և գոչեց.
«Գնա կորի՞ր այս տեղից, թշուառութեան
որդի դու: Անհնարին է ինձ ընդունել մի էակ,
որին հալածում են անմահ դի՞ք»:

Ասաց, և հառաջելով դուրս վարեց ինձ պա-
լատից:


5

ՈՂԻՍԵԽՍ ԼԵՍՏՐԻԳՈՆՆԵՐԻ ՄԾՏ

Յախճահար հեռացանք այն տեղից: Երրորդ
օրն Լեստրիգոնների ավն հասանք: Ուղեկից-
ներս նաւերը մի խորշ մտցրին, որ սեպ ժայ-
ռերով պատուած էր, և մէկը միւսի մօտ կա-
պեցին: Իսկ ես խորշից դուրս դադար առի
և նաւս մի հաստ պարանով վերջին վէմին
կապեցի: Յետոյ մի զառիվեր ժայռի վրայ
ըարձրացայ և չորս կողմս ուշի ուշով դիտեցի:
Ոչ արտ տեսայ ես այն տեղ. ոչ էլ մարդեկ,

միայն մի ծուխ նշմարեցի, որ բարձրանում էր
հեռություն: Այն ժամանակ մեր միջից ես ընտրեցի
երեք մարդ և զրկեցի լմանալ, թէ ովքե՞ր էին
այն տեղ բնակում: Նրանք մի սայլի արահետ
գտան և անտառից անցնելով, մի անծանօթ-
քաղաք հասան: Քաղաքի առջև նրանք տեսան
Լեստրիգոնեան Անտիփատէս թագաւորի աղ-
ջկան, որ եկել էր ջուր հանելու Արտակեան
արծաթափայլ աղբիւրից: Հարցրին նրան, թէ
ով էր կղզու տէրն, և աղջիկն իւր հօր տունը
ցոյց տուաւ: Նրանք միամիտ ներս մտան:
Բայց սարսափեցան, երբ տեսան հսկայատիպ
թագուհուն: Թագուհին ահեղ ահեղ ձայն հա-
նեց, որից յետոյ թագաւորն էլ վրայ հասաւ:
Դա բռնեց երեքից մէկին և ուզում էր իսկոյն
լավին: Միւս երկուքը փախուստ տուին և շըն-
չասպառ յետ եկան: Իսկ թագաւորը հզօր ձայ-
նով կանչեց քաղաքի բնակիչներին, որոնք նոյն-
պէս հսկաներ էին, և բոլորը միասին դէպի ծո-
վեզը խուժեցին: Փայտերից վէմեր պլոկելով,
մկսան մեր նաւերը հարուածել: Կոտրատուող
նաւերի ճարճատմունք, մեռնողների ճիչ ու ողբ,
խօշիւն, գոչիւն էր, որ բարձրացաւ: Հսկաները
մեզնից շատ մարդ բռնեցին և թէ սպանուած-
ներին, թէ ողջերին ձկների պէս կարթելով,
քաղաք տարան, որ ուտեն:

Հոմ. Ողիս.



Ես սուրովս նաւիս պարանը կտրեցի, նաւաստոներիս թի զարնելու հրաման տուի, և այս կերպով մենք կորուստից ճողովքեցանք: Լաւ էր, որ մենք խորշի մէջ չէինք մտել: Սակայն տիսուր էինք թանգաղին ընկերների պատճառով, որոնք այնպէս զոհ գնացին վիրագներին:

6

ՈԴԻՍԵԻՍ ԿԻՐԱԿ ՎՃՈՒԿԻ ՄՅՈՏ

Լսիր, վեհափառդ Ալկինոս, թէ ինչե՞ր պատահեցան ինձ յետոյ:

Մենք դարձեալ հասանք մի կղզի, որի անունն է Խյա: Դա պատկանում է դեղավարս Կիրկէ դիցուհուն, որ ինչպէս յետոյ իմացանք, Արեգակի և Պերսէի դուստրն է: Լոյկ մտանք մի նաւակայք և ցամաք իջանք, բայց նաւից շատ հեռանալ չյանդնեցանք, զի սրտերս դեռ երկիւդով լի էին: Երկու օր, երկու գիշեր խոնջ և նօթի նստած կեցանք ափի վրայ: Երբորդ օրը, հէնց որ արեւ ծագեցաւ, ես սուրս վրաս կախեցի, տէգս առի և բարձրացաւ մի ժայռի գլուխ, որ շրջակալքն աչքէ անցնեմ: Տեսալ հեռուից ամպի նման վեր սլացող կապուտ ծուխ: Փակոյն կամեցալ այն կողմ գնալ և իմանալ, թէ ով էր արդեօք այն տեղ բնակում, բայց

յետոյ միտքս ուրիշ բան ընկաւ: Առաւել լաւ կըլինի, ասացի ես ինքս ինձ, նախ կերակրել ընկերներիս և ապա լրտես արձակել: Եւ մինչ այսպէս մտածելով յետ էի զալիս անտառից, աստուածներն ինձ դժացին և մեծ եղջիւրներով մի եղջերու առաքեցին: Կենդանին, իմ աշտէից շամփրուած, տապաստ ընկաւ և շունչը փչեց: Ոտս նրա ուսին դէմ տալով, աշտէս մարմնից հանեցի: Յետոյ մի լար ոլորեցի փափուկ կնիւնից և եղջիւրի չորս ոտքերն նրանով ամուր պրկեցի: Վերջապէս, թէւ երէն յաղթանդամ էր, ես նրան շալակեցի և դէպի մեր նաւը տարայ: Այն տեղ նրան վար ձգելով, վշտահար ընկերներիս այս խօսքերն առացի.

«Ո՛վ ընկերներ, մինչև օրհասը չըհրամալէ, մենք դեռ դժոխք չենք իջնիլ: Եկէք ուրեմն լաւ ճաշ ուտենք, քանի որ հաց էլ ունենք, դինի էլ»:

Նրանք դուրս ելան և հիացմամբ սկսան դիտել պերճ երէն: Այնուհետեւ մի ճոխ ընթրիք պատրաստեցինք և մինչև գիշեր կեր ու խումով խրախնացանք: Յետոյ մեկնոցներիս մէջ փաթաթուեցանք և բազմագույն ծովի ափին պառկեցանք, որ գիշերուայ քուն վայելենք:

Լուսը բացուելուն պէս՝ վեր կացանք և խորհուրդ արինք: Ընկերներս զարհուրեցան և տըրտ-

մեցան, երբ յայտնեցի, թէ ուզում էի մի քանի լրտես արձակել: Վայրագ Կիկոպի և Լեստրիդոնների լիշտակը արտասուք քամեց նրանց աչքից: Բայց լալուց և արտասուելուց ինչ շահ պիտի ստանալինք: Ընկերներիս ես երկու խումբ բաժանեցի. մէկի պետն ես ինքս եղայ, իսկ միւսին՝ Եւրիլոք: Իւրաքանչիւր խմբի մէջ քսաներկու մարդ կար: Եւրիլոք և ես սաղաւարտի մէջ վիճակ ձգեցինք, մի ընկեր սաղաւարտը լաւ թօթուեց, և Եւրիլոքի վիճակն առաջինը դուրս ընկաւ: Նա իսկոյն յառաջ խաղաց, ընկերներն էլ ետևից, թէև լալով: Երբոր անցան անտառից, մտան մի հովիտ, ուր կանգնած էր Կիրկէի քարաշէն ապարանքը: Այն տեղ յանկարծ մերոնց գէմ անթիւ գալլեր և առիւծներ վաղեցին: Դրանց տեսնելով Եւրիլոք և իւր մարդիկն սկզբում սաստիկ վախեցան, բայց որքան մեծ եղաւ նրանց զարմանքը, երբ գազանները քծնելով իլենց մօտեցան, և ձետերը տատանելով քսուիլ սկսան, ասես թէ ընտանեսուն շներ լինէին:

Պալատի գաւիթն որ հասան, նրանց ական-ջին մի ներդաշնակ մեղեդիի ձայն դիպաւ. երգողն էր ինքն դիցուհին, որ մի շնորհաշուք ոստացն էր մանում իւր հոյակապ սրահի մէջ: Այն ժամանակ նրանք ձայն տուին: Իսկոյն լու-

սակայլ գոները բացուեցան, և վարսագեղ դիցուհին նրանց ընդ առաջ դուրս ելաւ: Դիցուհին գուարթ դէմքով հրատէր կարդաց, և խելացնոր լիմարները ներս մտան: Միայն Եւրիլոք, կարծես չարիք գուշակելով, ներս չը մտաւ: Դիցուհին ազնիւ ազնիւ ուտեստներով և գինով իւր հիւրերին մեծարեց, և որպէս զի նրանք հայրենիքը մոռանան, գինու մէջ խառնեց մի դժնի դեղ: Այնուհետև դիպաւ նրանց մի ցպով, և նրանք իսկոյն խոզ գարձան: Խոզ գարձան նրանք ամէն բանով, միայն թէ մտքերն անեղծ մնացին: Կիրկէն նրանց խոզանոց քշեց և առջևները ձգեց կաղին, սղոցի և եղջիւր, որ լափեն:

Եւրիլոք հապճեպ շտապով յետ դարձաւ: Դառն ցաւից սիրտն այնպէս ճնշուած էր, որ չէր կարանում ոչինչ ասել: Վերջապէս աչքից բրդան ջերմ արտասուք, ողի առաւ և պատմեց, թէ ընկերները մտել էին մի վարսագեղ կնոջ տուն: «Յետոյ», ասաց Եւրիլոք, «նրանք բոլորն էլ յանկարծ կրօան և ոչ մին յերւան չեկաւ, թէև երկար սպասեցի»:

Մի այսպիսի գոյժ որ բերաւ Եւրիլոք, ես խոկոյն առւրս, աղեղս ուսերիցս կախեցի և պատուէր տուի, որ նա ինձ կարապետէ: Նա ծընկերիս փարուեցաւ և պաղատելով ասաց. «Թոյլ

տուր, որ ես նաւում մնամ, ով դիցատիպդ
Ոգիսես: Ո՞հ, ես լաւ զիտեմ, որ ոչ մերոնց
կ'ազատես դու, ոչ էլ ինքդ յետ կը դաս»:

Ես մէնակս ճանապարհ ընկայ: Մեծալարկ
ապարանքին ես տակափին չէի հասել, որ լու-
սափայլ աստուածն չերմէս, ձեռքում բռնած
մի ոսկեկուռ գաւաղան, առջևս ելաւ: Նա մօ-
տեցաւ ինձ պատանեկան տիպարով, աջս բռնեց
և ասաց.

«Ո՞ւր ես գնում, այլ թշուառ: Կարծում ես
թէ ընկերներիդ կ'ազատես: Վհուկ կիրկէն նր-
րանց խոզ է դարձրել: Դու էլ նրանց երամը
կը մտնես: Սակայն արի, ես քեզ փրկեմ: Առ
այս դեղն և համարձակ գնա դիցուհու մօտ,
զի այժմ դու նրա թովչութիւնից պաշտպա-
նուած ես: Բայց լսիր ինձ: Հէնց որ վհուկն
ուզենայ շօշափել քեզ իւր ցպով, դու սուրդ
հանած վրան յարձակուիր, իբրև թէ կամենում
ես նրա մէջ մխել: Նա կը սարսափի և կ'ու-
զենայ սիրտդ շահել գգուական ողոքանքով:
Դու սակայն մի զիջանիր, մինչեւ որ նա երգում
չանէ աստուծով, թէ քեզ վնաս չի պիտի
տայ»:

Փրկարար դեղն ինձ տալուն պէս՝ չերմէս
աստուածն անհետայաւ: Իսկ ես քաջ քաջ յա-
ռաջ գնացի դէպի վհուկի ապարանքը: Նա իմ

ձայնը լսեց թէ չէ, լուսափայլ դուռն բաց ա-
րաւ և ժպիտն երեսին հրաւիրեց ինձ ներս
մտնել: Նա տարաւ ինձ մի հրաշակերտ գա-
հոյքի մօտ, ոտքիս տակ էլ դրաւ մի սիրուն
պատուանդան: Յետոյ ոսկէ բաժակի մէջ զինի
լցեց, կախարդական թոյնն էլ խառնեց և տուաւ
ինձ, որ խմեմ: Երբ բաժակը պարպեցի, նա շօ-
շափեց ինձ իւր ցպով և ասաց.

«Այժմ գնա խոզաբոյն և հանգստացիր ըն-
կերներիդ մօտ»:

Հէնց որ ասաց, սուրս պատեանից հանեցի
և վհուկի վրայ ընկայ: Նա միչ հանելով ծունը
իջաւ և ոտքերս դրկեց:

«Ո՞վ ես դու», գոչեց նա լալահառաչ: «Ուս-
տի ես, ով է հալրդ: Հիացած եմ, որ պալա-
տիս մէջ ոտք դնող մարդիկներից դնւ ես միայն
հրապոյներիս դիմանում: Տեսնում եմ, որ շատ
անվկանդ սիրտ ես կրում կրծքիդ մէջ: Գուցէ
դու ես այն բազմահնար Ոգիսեսը, որ չերմէսի
ասելով, ինձ մօտ պիտի գար, Տրոյակից յետ
չուելիս: Եթէ այդպէս է, սուրդ վայր դիր ու-
րեմն, զի ես չլպիտի վնասեմ այն մարդուն,
որ ինձ առաւել յարդելի է, քան թէ բոլոր
մահկանացուք»:

Ես ասացի. «Ի՞նչպէս հաւատամ քեզ, քանի
որ դու կընճըթաւոր խոզ ես դարձրել ընկեր-

ներիս: Երդումք ուրեմն, որ մի չար դաւ չես
նիւթելու անձիս դէմ»:

Նա երդուեցաւ և ապա փաղաքշաբար զրկեց
ինձ: Նրա հոյակապ պալատի մէջ ծառալում
էին չորս ժիրաժիր անտառածին, աղջիւրա-
ծին յաւէրժ հարսունք: Մին ծիրանի գորգեր
փռեց գահոյքի վրայ, միւսն արծաթէ սեղան
կանգնեց զրա հանդէպ, ոսկէ խաներ շարելով
վրան. երրորդն արծաթէ խառնարանից զինի
լցեց թասերի մէջ, և չորրորդը կրակ վառեց
մեծ սանի տակ, որ ինձ համար լուացման ջուր
պատրաստէ:

Խոնջ անդամներս լոդարանում կազդուրելուց
և անոյշ խւզով օճառելուց յետ՝ ես նորից շորերս
հագայ: Կիրկէն այն ժամանակ ինձ մօտեցաւ
և ուսերիս մի պերճ մեկնոց արկանելով, ինդ-
րեց որ դնամ արծաթազամ գահը բազմեմ: Սպա-
սաւոր նաժիշտները տեսակ տեսակ խորտիկ
բերին, բայց ես ոչ կերակրի համը տեսայ, ոչ
էլ զինու, քանզի սիրտս մորմոքվում էր ընկեր-
ներիս աղէտով: Վհուկն այդ նշմարեց և զգուա-
կան խօսքերով իմ կոլիծը փարատելու փոյթ
տարաւ: Իսկ ես նրան ասացի.

«Ի՞նչ սրտով ճաշ վայելեմ, մինչ դու զերի
ես բռնել ընկերներիս քո սեփական տանդ մէջ:
Եթէ քեզ ցանկալի է, որ ես ուտեմ սեղանիցդ,

նախ արձակիր ընկերներիս և թոյլ տուր, որ
աչքերովս տեսնեմ նրանց և խնդամ»:

Կիրկէն, ցուպը ձեռին, գաւիթ գնաց, խո-
զաբունի դուռը բացեց և դուրս թողաւ ընկեր-
ներիս, որոնք ինսամեայ խոզերի էին նմանում:
Ամէն մէկին մի հիւթ քսեց: Նրանք խկոն
երկու ոտքի կանգնեցան, ստևները թօթափե-
ցին և յանկարծ առաւել սիրուն կերպ ստացան,
քան որ ունէին իյտ չեկած: Նոյն ըոպէին բո-
լորն էլ ինձ ճանաչեցին և ձեռքերս սեղմելով,
այնպէս ուրախ լաց եղան, որ վհուկն էլ գո-
րովեցաւ:

«Այժմ դու նաւդ գնա, բազմահնարդ Ոդի-
սես», ասաց նա ինձ, «և այն տեղ սպասող
ընկերներիդ պալատս բեր, որպէս զի ամենքդ
էլ, այսքան վշտեր կրելուց յետ, իմ յարկի տակ
հանդստանաք շատ օրեր: Նաւն էլ ցամաք քա-
շեցէք և գոյքերդ անձաւի մէջ պահեցէք»:

Հնազանդեցայ և դնացի: Ընկերներս լալա-
հառաչ նստած էին ծովափի մօտ, կարծելով
թէ ինձ էլ չարիք էր պատահել: Ինձ որ տե-
սան վազիվազ վրաս ընկան պառակածին հոր-
թերի պէս, որոնք խալտալով թռչուտում են,
երբ մայրերը զոմ են դալիս: «Այնքան ուրախ
ենք վերադարձիդ, ովք քաջարիդ Ոդիսես», ա-
սացին նրանք, «որ կարծես թէ հասած լինէ-

ինք մեր սիրելի հայրենիքը»: Հրաման տուի, որ
նաւը ցամաք հանեն, մեր գոյքերն անձաւի
մէջ պահոտեն, իրենք էլ շտապով հետո դան:
Պատուէրս իսկոյն կատարեցին: Միայն Եւրի-
լոք ընդդիմացաւ: «Հէք թշուառներ», ո դո-
չեց նա, «ինչու էք ձեր կորստեան զիրկը դի-
մում: Վհուկը ձեզ բոլորիդ կամ խող կամ դալ
և կամ առիւծ կրդարձնէ: Միթէ արդէն մոռա-
ցաք—որքան մարդիկ կորցրիք Ոդիսեսի պատ-
ճառով, որ անմտաբար տարաւ նրանց Կիլոպի
մօտ»: Զայրովթ բրդաւ սրտիս մէջ, և ես ար-
դէն ուզում էի սրովս կտրել նրա զլուխն և
իրանից թուցնել: Բայց մէջ մտան ընկերներս
աղու, անոլշ խօսքերէվ: «Թող մնայ այս տեղ,
եթէ կամենայ», ասացին նրանք. «Իսկ մեզ
տար սիրուն կիրկէի բնակարանը»:

Բոլորն էլ ինձ հետեւեցան, նոյնպէս և Եւրի-
լոք, վասն զի զարհուրել էր իմ սպառնական
շարժումից:

Կիրկէն այդ միջոցին լուացել էր միւս ըն-
կերներիս և տուել էր ընտիր շորեր: Երբ մենք
շքեղազարդ սրահը մտանք, նրանք շուայտե-
լով նստած էին սեղանի շուրջը: Մեզ տեսնելիս
վեր կացան և իրենց չար պատահարն ընկեր
ընկերի պատմելով, ամենքն էլ լաց եղան իսրան-
դութիւնից և ցաւից: Իսկ վարսագեղ դիցու-

հին ժպիտն երեսին մօտեցաւ մեղ և ասաց.
«Հերիք է լալ. ի՞նչ վիշտ էլ կրած լինիք
ծովի և ցամաքի վրայ, բոլորն էլ կըմոռանաք
իմ յարկի տակ»:

Մենք նստանք սեղանի շուրջն և լագեցանք
կեր ու խումով:

Գիցուհու գեղապալծառ պալատում մենք մնա-
ցինք ամբողջ տարի և երբ տարին լրացաւ,
ընկերներս պազատագին խնդրեցին, որ լիշեմ
հայրենիքս և դէպի տուն վերադառնամ:

7

ՈԴԻՍԵԻՍ ՍԱՆԴԱՐՄԱՄԵՏՈՒՄ

Այս, իմ հոգին էլ փափագում էր հայրենեաց:
Ուստի ասացի վարսագեղ դիցուհուն.

«Ո՛վ կիրկէ, կատարիր այժմ խոստումդ և
առաքիր ինձ դէպի տուն: Աիրու դրդում է
այս խնդիրն անելու, ընկերներս էլ, հէնց որ
մնում ենք առանձին, լալով հառաչելով ողո-
քում են այս մասին»:

«Մտահարուստ Ոդիսեւս», պատասխանեց դի-
ցուհին. «չեմ ուզում քեզ մօտս պահել բռնու-
թեամբ: Բայց նախ քան ինձնից հեռանալիր,
քեզ պէտք է իջնել սանդարամետ, ուր իշխում
է հարկու՝ Պերսեփոնէ կնոջ հետ: Այն տեղ գու-

Հայրենիքիդ վերաբերմամբ խորհուրդ կըհարցնես
Թեքայեցի կոյր գուշակից՝ Տիրեսիաս ալևորից:
Պերսեփոնէն միայն նրան է շնորհ տուել նաև
դժոխքում արթուն մտքով թափառելու, մինչ-
դեռ միւս հոգիները խարիսխում են անրջական
ստուերի պէս»:

Սիրտս գրեթէ ճաքեց ահից, և ես ինձ մահ,
կամեցայ: «Վայ ինձ», հառաչեցի ես, «և ով
կըլինի առաջնորդս դէպի դժոխքի խաւարչտին
բնակարանը, ուր և ոչ մի կենդանի մարդ դեռ
չէ մտել»:

Դիցուհին պատասխանեց. «Զուր տագնապով
սիրտդ մի մաշիր, այլ համարձակ նաւ մտիր,
կայմը կանգնիր և առագաստը պարզիր: Հիւ-
սիսի շունչն երկրապարփակ Ովկիանոս գետի
եղերքը կըփարէ քեզ. այն տեղ կընշմարես Պեր-
սեփոնէի անտառն և մի վիհ, որ տանում է
ստուերային աշխարհը: Հուալ կըմօտենաս այն
ժայռին, որի տակ միանում են կըլին գետեր,
այն տեղ մի քառակուսի փոս կըփորես կան-
գունաչափ շուրթերով, և մէջը կ'ածես մեղրա-
կաթ, գինի և ջուր: Այս բոլորի վրայ ալիւր
կըցանես և ապա չոքած ուխտ կ'անես մեռել-
ներին՝ հայրենիք հասնելուդ պէս զոհելու նրանց
մի գեր կով, իսկ Տիրեսիասին՝ մի ուշ խոյ: Այս
ուխտից յետ երկու ոչխար կըմորթես և երեսդ

դարձնելով թոյլ կըտաս, որ զոհերի արիւնն
ուղիղ փոսի մէջ թափուի: Այս ժամանակ մե-
ռեների հոգիները վեր կըալանան: Հէնց որ
նրանք յերեան դան, դու հրաման տուր ըն-
կերներիդ ոչխարներն ալրելու, իսկ ինքդ ա-
ղօթք արա դժոխքի ահեղ աստուածներին և
սուսերդ մերկացնելով աշխատիր, որ ուրուները
հեռու կենան արխնից, մինչև տեսնես Տիրե-
սիաս կոյր գուշակին և բան հարցնես վերա-
դարձիդ նկատմանք»:

Միւս առաւօտ տխուր սրտով անկողնիցս վեր
կացայ և ընկերներիս կանչեցի: Նրանց հետ
եկաւ և կիրկին: Նա հագել էր ձիւնի պէս փայ-
լուն կրկնոց, մէջքին ունէր ոսկի գօտի: Նա
հրաժեշտ տուաւ մեզ, և թախծահար դուրս
ելանք մենք նրա սիրուն պալատից: Սակայն
դեռ ծովափին չէինք հասել, որ սեզ դարձեալ
փորձանք դիպաւ: Ելսլինոր, մեր ընկերներից
ամենափքը, գինուց հարբած լինելով, տան
կտուրի վրայ էր քննել: Մեր ոտքերի տրոփիւնից
նա յանկարծ զարթեց, տեղից թռաւ և քնա-
թաթախս վերից ի վայր գլորուեցաւ: Նա ընկ-
նելիս կտորեց վզի ոսկորն, և այսպէս մեզնից
առաջ չադէս իջաւ:

Այժմ միայն յայտնեցի ես ընկերներիս, թէ
ուր էր տանում մեր ուղին: Նրանք սրտով լքան,

վայեցին և մազերը փետել սկսան։ Սակայն այս
բանը նրանց չօգնեց։

Նաւի մէջ դտանք գոհի երկու ոչխարներ և
ուրիշ ձօներ, որ պիտի նույիրէինք ուրուներին։

Նաւը ջուր իջեցրինք, մեր գոյքերը քարան-
ձաւից հանեցինք, կայմն ամուր կանգնեցինք,
առագաստները պարզեցինք։ Դիցուհին այնու-
հետեւ մի յաջող սիւք փչեց մեղ, և նաւն, ա-
ռանց թիով վարուելու, ինքն իրեն յառաջ
ոլացաւ։ Մենք նաւեցինք մինչև դիշեր և եկանք
կիմմերեան մարդկանց երկիրը։ Աշխարհիս ամե-
նավերջին ծալրն է գտանվում այդ երկիրն՝ միշտ
մշուշով և ամպերով շըջապատուած, և երբէք
արևի լոյս չէ թափանցում նրա վրայ դիզուած
մռայլ խաւարից։

Այն տեղ ցամաք հանեցինք մեր նաւն և ահե-
ղամռունչ Ովկիանոսի եղերքով յառաջ գնացինք
ուղիղ մինչև այն վայրը, որ նշանակել էր դի-
ցուհին։ Եւրիլոք և Պերիմեդէս յագելի ոչխար-
ներն յառաջ բերին, և ես սուսերս պատեանից
հանելով, փոսը փորել սկսայ։ Այս գործն որ
վերջացաւ, մեռելներին նույիրական գոհ բերի՝
մեղրակաժ, դինի և ջուր, և վրավից սպիտակ
ալիւր ցանեցի։ Յետոյ մաղթանք առաքեցի
սուսերներին և ուխտ արի՝ հալրենիք հասնելուս
պէս գոհել նրանց մի ամուլ կով, իսկ Տիրե-

սիասին՝ մի սև խոյ։ Ոչխարները բերուեցան։
Ես, երեսս յետ արած, դրանց վզերը կտրեցի, և սև
արիւնը խոխոջալով գնաց թափուեցաւ փոսի մէջ։

Սանդարամետի ուրուները յանկարծ սկսան
վերև թռչել. դրանք էին հարսեր, և փեսաներ
և բազմավիշտ ծերունիներ։ Տեսայ և արիւնա-
ներկ զէնքով մարդիկ, որոնք ընկած էին մարտի
մէջ։ Ուրուների բազմութիւնը խառնակ գոչիւն,
ահեղ վայլւն հանելով, փոսի շուրջը բակ բըռ-
նեց, և ես ահլից գեղնեցայ։ Ընկերներիս հրա-
մայեցի ոչխարները գոհ ալրել դժոխվի հզօր
աստուածներին, և ինքս սուսերս մերկացըրի,
որ արլսնից հեռու վանեմ ոգիներին, մինչև
խորհուրդ հարցնէի Տիրեսիաս գուշակից։

Նախ և առաջ Ելպենորի հոգին եկաւ՝ մեր
ընկեր Ելպենորի, որ ընկել էր տան կտուրից։
Նա լալով մեղ աղաչեց, որ երբ Կիրկէի մօտ
վերադառնանք, նրա մարմինը պատուով թա-
ղենք և մի շիրիմ կանգնենք վրան ծովափին։ Ես
խօսք տուի, և նա թռաւ, անհետացաւ։ Յետոյ
եկաւ և ալևոր Տիրեսիաս գուշակը, ձեռին բըռ-
նած մի ոսկեձոյլ գաւաղան, և ասաց. «Հեռա-
ցուր փոսից սուր սուսերդ, որ կարանամ արիւն
խմել և ապառնիդ գուշակել»։ Պատեան դրի
սուսերս, իսկ նա արեան համն առնելով, այս-
պէս խօսեց։

«Անդորրիկ վերադարձ եմ կամենում քեզ,
քաջդ Ոդիսես: Սակայն մին աստուածներից, և
յատկապէս Պոսէիդոն, ճանապարհդ պիտ՝ ար-
գելէ, որովհետեւ կուրացրել ես Կիլոպին, որ
նրա հուժկու որդին է: Բայց և այնպէս, թէ-
պէտ և մեծ չարչարանքով, կըտեսնես քո Իթա-
կէն, եթէ միայն Թրլինակիա հասնելիս՝ չանի-
րաւես սուրբ նախրի դէմ, որ նուիրուած է
Արեգական աստուծուն: Իսկ եթէ անիրաւես,
կամ եթէ ձեզնից մէկը նրանց զրկանք հասցնէ,—
իմացիր, չէք խուսափիլ վտանգից: Թէև դու
ողջ կըմնաս, բայց անազան և թշուառ կըժա-
մանես Իթակէ: Քո սեփական յարկիդ տակ գո-
ռոզ մարդիկ կըդտնես, որոնք գուքերդ վատ-
նում են և հարսանեկան օժիտներով կնոջդ ա-
ջին թեկնածում: Կամ խաբանքով կամ բոնու-
թեամբ կըսպանես այդ սեղեխներին և կ'երժան
երկրիդ ներսը, ուր կըդտնես ծովի, նաւի ան-
գէտ մարդիկ: Ահա քեզ մի նշան, որով կ'ի-
մանաս, թէ որ տեղ պէտք կըլինի քեզ կանգ
առնել: Երբ դու ուսիդ մի թի կըելով յառաջ
երթաս և քեզ մի մարդ հանդիպի և հարցնէ—
Այ մարդ, այդ ինչ հեծանոց է, որ տանում
ես,—կանգնիր և թիդ գետին վարսիր, զի հա-
սած կըլինիս այն տեղին, որ շնորհած են քեզ
անմահ դիք անդորրաւէտ բնակութեան համար:

Այն տեղ, գոհ մարդիկներով շրջապատուած,
կ'ապրես գու մինչև լսոր ծերութիւն և հան-
գիստ կըմեռնես տանդ մէջ: Այս է ահա ճա-
կատագիրդ»:

Ես նրան ասացի. «Այդ է ուրեմն աստուած-
ների վճիռը: Արդ, մի ուրիշ բան էլ ասա ինձ:
Ահա նշանաբում եմ մեռած մօրս ստուերը: Լուռ
նստած է արեան մօտ, ոչ նայում է վրաս, ոչ
էլ խօսում: Ի՞նչ անեմ, որ ճանաչէ ինձ»:

«Այդ էլ կարող եմ ասել քեզ», պատասխա-
նեց Տիրեսիաս: «Ո՞ր ուրուին որ թոյլ տաս արիւն
խմել, նա էլ խկոյն հետդ խօսելու շնորհ կը
ստանայ»:

Ասաց, և անհետացաւ դժոխքի մէջ Թերա-
յեցի ծեր գուշակը: Այնուհետեւ փոսից փոքր ինչ
հեռացայ և թոյլ տուի մօրս ուրուին արիւն
խմել: Խմելուն պէս՝ նա խկոյն ճանաչեց
և հեծելով ճակատագրիս վերաբերմամբ հարց-
մունք արաւ: Այէն բան պատմեցի և հարցի,
թէ արդեօք ինչ էին անում մերայինք հայրե-
նական տանս մէջ:

Արգոյ մայրս պատասխանեց. «Ո՞վ որդեակ,
ամուսինդ դեռ ապրում է Իթակէյում թախծա-
հար. նա զեշեր ցերեկ արտասլում է, վելա-
դարձիդ տենչալով: Պատաղ որդիդ Տելեմաք
նրա մօտ է. իսկ ծերունի հայրդ Լայերտէս:
Հոմ. Ողիս.

քաղաքը թողած, դաշտի մէջ է բնակում ծառաների հետ միասին։ Այն տեղ նա, գորգ, վերմակ և մահիճ ասածդ մերժելով, հնոտիք հագած, մերկ գետնի վրայ է պառկում ձմեռուալ ցրտին, իսկ ամառը դալարներից վրան է շինում այզու մէջ, ուր և ամբողջ գիշերներ անքուն հեծում քո վրայ։ Այս բոլորը նա անում է քեզ ողբալով։ Նա էլ շուտով վշտից կըմեռնի, ինչպէս որ ես էլ մեռայ։ Քանզի քո անձուկն էր, սիրելի որդեակ, որ զրկեց ինձ քաղցր կեանքիս արևից, այլ ոչ թէ հիւանդութիւնս կամ ծերութիւնս։

Ես պարզեցի ձեռքերս դէպի արգոյ մօրս հոգին։ Երեք անգամ կամեցայ զրկել նրան և վզին փարուիլ, և երեք անգամ նա ստուերի պէս ձեռքերիցս դուրս պըճաւ։ Դիմոգակ ցաւ տիրեց սրտիս։ Ես կաթողին մօրս հոգուն հարցրի, թէ ինչո՞ւ թոյլ չէր տալիս, որ իրեն զրկեմ։ Նա լոիկ թօթուեց զլուխն և վհի մէջ անհետացաւ։ Յետոյ ուրիշ հռչակաւոր բամբիշներ էլ վերև ելան, արեան շուրջը խռնուելով։ Ես տեսայ Ալկմենային, որ ծնել էր առիւծասիրտ չերակէսին։ տեսայ Լեդային, որ ձիախրոխտ կատորի և ըմբշամարտիկ Պոլլուքսի արգոյ մայրն էր։ տեսայ և ուրիշ կանանց, բայց անունները չեն տալիս, քանզի եթէ կամքնալի ամէն մէ-

կին լիշտակել, գիշերս անգամ չէր բաւիլ։ Արդ, քնելու ժամանակ է»։ 8
Այսպէս խօսեց Ոգիսեւս Ալկինոսին և փէակեցւոց իշխաններին։
Լուռ և զմայլած նստած էին նրանք սրահի մէջ։ Վերջապէս ուշիմ թագուհին ասաց մարդուն և աւագներին, որ չինի թէ ալլապէս ճանապարհ ձգէին ազնիւ հիւրին, բայց թէ պատուով և շքով։
Բոլորն էլ այս խօսքերին հաւան դտան, և Ալկինոս պատասխանեց Արէտալին. «Ինչ որ արդէն խոստացել ենք, այն էլ անշուշտ պիտի համնի գերահռչակ Ոգիսեսին։ Այս մասին երաշխաւոր են փէակեան իշխանները, մանաւանդ ես, որ այս երկրի հոգատարն եմ։ Սակայն թող բարեհանի ազնիւ հիւրը դարձեալ փոքր ինչ մեզ մօտ մնալ, որպէս զի ես կարանամ լաւ ընծաներ պատրաստել և գեռ ուրիշ մի քանի բան լսել իւր կեանքի վէպից։ Շշմարիտ՝ մինչևլ լոյս պատրաստ եմ նրան լսել»։
«Ո՞վ արքայի իմ զերապանձ», ասաց Ոգի-

սես, «իբաւ են ասում, թէ խօսելուն էլ ժամը կայ, քնելուն էլ: Այլ քանզի դու ինձ լսել ես ցանկանում, արդ իմացիր, թէ ինչ տեսայ դը- ժոխքում և ինչ անցքեր պատահեցան ինձ յետոյ:

Անդունդից վերև ելան փառահեղ դիւցաղ- ների հոգիները, նախ նրանց, որոնք ընկեր էին ինձ կենդանութեան ժամանակ: Վստանդական ստուերների թւում ես զարմացմամբ նշմարեցի Ազամեմնոն արքային: Ճանաչեց ինձ, և արեան համն առնելով, կամենում էր փարուիլ ինձ: Բայց չկարացաւ ինձ բռնել, քանզի չունէր այն կորովն և ոյժը, որոնք մի օր եռ էին զալիս նրա ճապուկ և յաղթ մարմնում: Արտասուե- լով հարցրի նրան, թէ ինչ մահով էր մեռել, և ահագնալուր բան լսեցի: Մինչ նա Տրոյակի առջեւ մարտնչում էր, նրա ժանտ կինը մի ու- րիշ մարդ է դժնում: Եւ երբ Ազամեմնոն տուն է դալիս, լիրը կինն և սեղեխը նրան չարաչար սպանում են: «Այսպիսի վտանգ քեզ չէ սպա- նում տանդ մէջ», ասաց նա ինձ, «վտան զի ուշիմ կինդ զիշեր ցերեկ լիշում է քեզ մաքուր սիրով: Մի օր դու նրան սգաւոր թողիր: Նրա գրկի գեռաբուսիկ մանուկը դարձել է այժմ մի հոյակապ պատանի և նստում է աւագների խորհրդում: Երանի քեզ. քեզ շնորհուած է՝ կրկին նրանց տեսնելու բախտ վայելել»:

Ապա թէ հարցրեց ինձ իւր Ովրեստէս որդու մասին, բայց չկարացայ ոչինչ ասել:

Մինչ տակաւին իրար հետ խօսում էինք, եկան Աքիլլես, Պատրոկլէս և Անտիլոք դիւ- ցաղների հոգիները: Աքիլ ասաց. «Մտահարուստով Ողիսւս, ինչպէս իջար դու այս խաւար դժոխքի տունը»:

Պատասխան տուի. «Ո՞վ Աքիլլես, ամենա- քաջդ յոյներից, ես եկայ դարձիս վրայ բան հարցնելու Տիրեսիաս ծեր գուշակից, ըստ որում դեռ մինչեւ այս օր չեմ տեսել իմ Իժակին և շատ ու շատ վիշտ եմ կրել: Բայց քեզ նման երջանիկ մարդ ոչ եղել է, ոչ էլ կը լինի. զի մինչ կենդանի էիր, քեզ աստուծոյ պէս պաշ- տում էինք. իսկ այժմ մեռելների հրամանա- տար ես և իշխան: Ուստի մահուան մէջ էլ, ով հրաշալիթ, ժախիծ չունիս դու բնաւ»:

Աքիլ կրկնեց. «Մահուան գովեստ մի տար ինձ, քաջդ Ողիսւս: Ես կ'ուզէի վերջին ճորտի գերին լինել երկրի վրայ, քան թէ իշ- խան մեռելների աշխարհում»: Այս ասաց, և աչքից անհետացաւ խաւարի մէջ:

Տեսայ նաև շատ նախավախճան դիւցաղների հոգիներ: Մինոս, ոսկէ դաւազանը ձեռին ըրու- նած և գահ բազմած, դատում էր մեռելներին: Որիոն մի ահազին պղնձէ լախտով զազաններ

քշում մարգից: Առաւել խոր նայելով դժոխքի
մէջ, տեսալ վիթխարի Տիտիոսին՝ երկրի որ-
դուն, որ շղթայուած էր ապառաժուտ տափի
վրայ: Նա եղեռնական արխութեամբ յանդինել
էր անպատուել աստուածալին Լետոյին, ուստի
և երկու կողմից մի մի անդղ զիշատում են
նրա լերդը, որ միշտ նորից անում է. այնպէս
որ իւր տանջանքն անվերջ են: Տեսալ և Տան-
տալոսին, որ դառնազին ցաւ է կրում: Երբեմն
մի զօրաւոր արքայ էր, և Արամազդ թոյլ էր
տուել նրան մասնակցելու աստուածալինսեղա-
նին: Բայց յետոյ նա լիմարաբար պատմել էր
անմահների գաղտնիքը, և այս պատճառով շա-
րունական պատիժ է կրում դժոխքի մէջ: Նա
մինչեւ ծնօտը կանդնած է զով ջրի մէջ. ծա-
րաւի է, բայց չէ կարող կաթիլ անդամ կու
տալ ջրից: Հէնց որ կրանում է, ջուրն իսկոյն
իջնելով ցամաքում է փոշիսցող ուև գետնի մէջ:
Նրա գլխից վեր կախուած են անուշահամ, ա-
տոք ատոք պտուղներ: Սակայն հէնց որ բար-
ձրացնում է դողդոջ և վտիտ ձեռքերը, որ
քաղէ,—ճիւղերն յանկարծ վեր են թուզում, և
չէ հասնում պտուղներին: Անչափ սոսկալի է և
Սիսիփոսի տուայտանքը, Սիսիփոսի, որ իւր
կեանքում շատ չարիք էր կատարել: Նա տըն-
քալով մի ահազին վէմ է գլում սարն ի վեր.

բայց հէնց որ հասցնէ գագաթին, վէմն, աս-
տուածներից հրուելով, սպրդում է իւր ձեռքից
և որոտընդուստ դղրդմամբ գլորվում է սարն ի
վար: Սիսիփոս՝ յոգնած, ջարդուած և քրտնա-
թոր, նորից է սկսում իւր գործը, բայց և դար-
ձեալ կրկնվում է նոյն բանը, և նրա տանջանքն
անվերջ է:

Նրանից յետոյ նշմարեցի հսկայազօր չերակ-
էսի ուրուականը, իսկ նա ինքն բնակում է
Ոլիմպի վրայ, երանաւէտ աստուածների ակմ-
բում: Նրա ստուերն անցաւ խաւարագէմ զիշե-
րուայ պէս: Մի լարուած աղեղ բռնած, նա
զալազին շուրջ էր նայում, ասես թէ կամե-
նում էր մի որս գտնել: Սաստիկ շողում էր
նրա սուսերի ոսկէ զօտին, որի վրայ քանդա-
կուած էին արջեր, կինճեր, սօս առիւճներ և
մարտնչող այր մարդիկ:

Ուրիշ գիւցազներ էլ ուզում էի տեսնել. սա-
կայն երբ անասելի միշ հանելով ուրուների նոր
նոր խմբեր վեր խուժեցին, ես այնպէս խուճա-
պեցայ, որ շտապ տագնապով դէպի նաւս վազ
տուի: Ընկերներս արագ արագ թի գարկին, և
մենք այն տեղից հեռացանք:

Կիրկէն ՑՈՅՑ է ՏԱԼԻՍ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՎՃԱՆԳՆԵՐԸ

ՎԵԿԱՓԱՌԴ ԱԼԿԻՆՈՍ, լսի՞ր այժմ, թէ ի՞նչ
անցք պատահեցաւ ինձ յետով:

Մի յաջողակ հողմ դարձեալ վարեց մեզ Կիրկէի կղղին: Գոհ սրտով ցամաք իջանք և իսկոյն յիշեցինք մեր այն մեռած ընկերին, որ խնդրել էր թաղման մասին: Մինք ալրեցինք նրա մարմինը ծովափի վրայ, գետին իջեցրինք նրա փոշին, դամբան կուտեցինք գերեզմանի վրայ և տնկեցինք մի բարձր սիւն, որին մի թի աղուցինք: Վարսագեղ դիցուհին այն ժամանակ մեզ մօտ եկաւ, հետն էլ սիրուն նաժիշտները, անուշահամ կերակուրներ և բերկրարար գինի բերելով: Կիրկէն արձանացաւ մեր խմբի մէջ և ասաց. «Ո՞վ քաջ մարդիկ, որ չվախեցաք դեռ կենդանեօք խաւար դժոխքն իջնել, եկէք այժմ մինչև յիշեր հացով գինով կաղդուրուցէք և դարձեալ մի անդամ կղղուս վրայ հանդիստ առէք»:

Առատ ճաշից երբ յագեցանք, Կիրկէն տարաւ ինձ սենեակն և իւր հանդէպ նստեցրեց: Պիցուհին խօսել սկսաւ և ասաց. «Այժմ ես կը նկարագրեմ քո ուղին, բայց դու լաւ ականջ դիր ինձ, որ կորսից ազատ մնաս: Կախ և

առաջ կը ժամանես Սիրէնների մօտ, որոնք բոլոր անցորդներին դիւժում են: Գալարագեղ ավերի վրայ նստուած՝ անոյշ երգերով հրապուրում են նաւորդներին: Սակայն ով որ ոտք է դնում նրանց կղղին, էլ երբէք յետ չէ գալիս. նա վտում է, միանալով այն կմախներին, որանցով շուրջանակի պարփակուած է Սիրէնների ապարանքը: Գու սակայն հետդ մոմ առ և հէնց որ կղզուն մօտենաս, այդ մոմով ընկերներիդ ականջները լաւ լսցիր, որպէս զի հեշտալուր և թովչական երգերի ձայնը ըլ լսեն: Առաջուց էլ հրամայիր, որ կապեն քո ձեռքերն և ոտքերն և պարանով պարաւանդեն քեզ կայմին: Հրամայիր նոյնպէս, որ երբ դու կախարդական ձայներից զմալլած՝ նշան տաս, թէ կ'ուգէիր արձակուիլ, նրանք և՛ս առաւել կապերդ պրկեն և ամրացնեն:

«Այնուհետև կը հասնես Թափառք կոչուած կղղիները: Այն տեղ շատ զգոյշ եղիր, քանզի, արդէն անժիւ նաւեր նրանց սեպ ժայռերին բախուելով խորտակուել են: Սոսկալի վտանդներով լի են նոյնպէս Սկիլլայի և Քարիբդայի բնակած մթին խոռոչները: Սւագոդ անձաւի մէջ նստած է դժիկմ Սկիլլան. մարդ չկայ, որ մահատիպ սարսափ չը զգայ նրա քստմնաձայն հաշիւնից: Աստուածներից անդամ ոչ ոք չէ կա-

բանում անվախ անցնել նրա առջևից: Տասներկու հաստ ոտքեր ունի, վեց էլ երկայն երկայն զգեր, ամէն մէկը չոկ գլխով, որոնց տեսքեց կը զարկութես: Դրաքանչւր բերանի մէջ երեք կարգ խիտ և հոծ ժանիներ կան: Պարմինը կիսով չափ նստած է վիրապի մէջ, բայց դուրս ցցուած գլուխներով դիտում է ամէն կողմ և լափում ծովաշներ, գլխիններ, մինչեւ անդամ և կետեր: Երբէք չէ պատահել, որ այն տեղից նաւորդ մարդիկ անցնէին և հրէշն իւր վեց գլխով մի մի նաւորդ կուլ չը տար:

«Մի նետաձիդ դրանից հեռու՝ կայ և ուրիշ մի քարաժայու, որի վրայ մի բարձրուղէշ ժանտ թղենի կը տեսնես: Դրա ներքեւ դարանում է Քարիբդիս կոչուած Հրէշը: Դա օրն երեք անդամ կլանում է ծովի կապոյտ ջրերն և աշեղագոյն որոտմամբ երեք անդամ դուրս ժայթքում: Զգուշացիր մերձենալ դրան և Ակիլայի մօտից քերուիր, զի լաւ է մի քանի ընկեր կորցնես, քան թէ նաւով բոլորի հետ կուլ դնաս միւս վիրապի երախի մէջ»:

Ես ասացի. «Աեհ դիցուհի, այժմ այս էլ յալտնիր ինձ – արդեօք չէ կարելի, որ ես կը ռուիմ ճիւաղի դէմ, երբ նա երկայնավիզ գլուխներով լափել ուղենալ ընկերներիս»:

«Ա քաջարի Ոդիսես», կրկնեց Ալրկէն, «Հի-

մի էլ դու ռազմական գործերի վրայ ես մտածում: Բայց իմացիր – Ակիլան անմահ, ամեհի, անընկանելի և ժանտաժուտ մի զաղանէ, որին չէ կարող դէմ դնել և ոչ մի ոյժ: Նա վեց ընկեր կը խէ քեզնից, բայց եթէ կռուիլ ուղենաս, մի մարդ անգամ չի թողնիլ նաւիդ վրայ: Ռւստի փախիր նրանից, աղօթելով Կրաթէին, որ այն հրէշը ծնողն է:

«Փոքը ինչ յետոյ կը հասնես Թրինակիա կոչուած կղզին, ուր դիցանոյշ հարսներից հովուելով, ճարակում են Արև աստուծոյ արջառուն և խաշները: Եթէ այդ նսւիրական հօտերից գէթ մի դլուխ վիրաւորես, ամենավատ չարիք կը հասնի ձեզ ամենքիդ: Սակայն Տիրեսիաս ծերունին էլ դժոխքում ասել էր քեզայս բանը»:

Այսպէս խօսեց զանդրահեր դիցուհին, և ես վճռեցի նրա խորհրդիկին հետևել:

Լսեցէք այժմ աղէտաբեր նաւարկութեանս պատմութիւնը, ով մեծափառ Ալկինոս, և դուք վէակեցւոց ազգի պետեր և իշխաններ:

Երբ գիշերն անցաւ և վարդագոյն արեգակն երկնքի վրայ բարձրացաւ, մենք նաւ մտանք, առազաստները պարզեցինք, և նաւաստներս ողորլ թիերը շարժեցին: Նաւը փալուն ալիքները ճեղքելով յառաջ սահեց. բայց ես տրում կանգնած էի դեկի մօտ, մեղ հասնելիք չարեց վրայ մտածելով: Ահա հեռուից երևեցաւ Սիրէնների կանանչ կղղին: Միայն այն ժամանակ յայտնեցի ես ընկերներիս դիցուհու դուշակած վտանգներն և հրաման տուի, որ ինձ կապեն: Բայց տակաւին չկապուած՝ ես վերցրի մի գունտ մոմ, դանակով մանրեցի, կտորները լմեցի, և կարդ բատ կարգէ ընկերներիս ականջները խցեցի: Յետոյ նրանք կապեցին ինձ կայմին և թի զարկին: Կիրկէի առաքած յաջող սիւքը դադարել էր փչելուց և մենք այժմ շատ հանգարտ էինք յառաջ նաւում: Կարմրախտ Սիրէններն ահա նստան դալարագեղ ափի վրայ և դաշն ձախով երգել սկսան.

«Մօտեցիր մեր եղերքին, քաջդ Ողիսես, փառքդ յունաց: Կանգնիր, կանգնիր մեր ափի մօտ: Վարիր նաւդ դէպի մեզ և դիւրալուր ականջ դիր մեր ներդաշնակ երգերին: Այս տեղերով մահկանացու դեռ չէ անցել, որ մեր նուազից չը զմալէր: Մեղ յայտնի է, ինչ որ կրեցին Տրոյալի մօտ ճեր փառահեղ քաջերը,

մեղ յայտնի է ամէն դէպք, որ անցնում է բազմասնոյց երկրի վրայ»:

Մի տապագին տենչանք տիրեց իմ հոգուն՝ անդուլ անվերջ ականջ դնելու այդ զմալական երգերին, և ես յօնքով նշան տուի ընկերնեցիս, որ կապերս արձակեն: Բայց նրանք ևս առաւել բախել սկսան թիերն, իսկ Պերեմիտ և Եւրիլոք, վրաս ընկնելով, կապերս կրկին պըկեցին, որ չլինի թէ կտրատեն: Երգերի ձայնը, մարդու ուշքը միտքը յափշտակող այն ձայնը տակաւ տակաւ նուազեցաւ և վերջապէս խսպառ հատաւ: Այն ժամանակ ընկերներս խցաններն ականջներից հանեցին և կապերս բաց արին:

11

ՍԿԻԼԱ ԵՒ ՔԱՐԻՔԴԻՍ

Նորից փչեց մի մեղմիկ սիւք և մղեց մեղ դէպի այն հրէշները, որոնց միջից պիտի անցնէինք: Ժայռերի անձաւներից լսեցինք ահեղագոյս մի բոմբիւն, որ հետզհետէ սաստկանում էր: Նաւազներիս սիրտը լքաւ, ձեռքն ու ոտքը թուլացան, և մեր նաւը կանգ առաւ: Ես նաւիս մէջ պատէպատ ընկայ, որ վախկոտներին սրտապնդեմ և Կիրկէի պատուերները գործ դը-

նեմ: Բայց ուշ չըդրի նրա զգուշաբար հրամանին՝ զէնք չվերցնել ճիւաղի դէմ: Հագայ պայծառ զէնքերս, վերցրի երկու սրածալը տէգեր և կանգնեցալ նաւի գլխին, կարծելով թէ այն կողմից կ'երևէր ինձ վայրագ Ակիլան: Նա մեզ ինչ վնաս կարող է տալ, ասում էի ինքս ինձ, քանի որ նաւաստիներս թիւրը թողած՝ նաւի մէջ են թաք կացել:

Ահա այսպէս սրտաբեկ մտանք նեղուցը: Մի կողմից Ակիլան էր մեզ սպառնում, միւսից՝ Քարեզին: Որոտագին գորգոռալով Քարեզին կուլ էր տալիս ծովի աղի կոհակներն և երբ որ դուրս էր ժայթքում, նրա անդունդը նմանում էր ու կաթսալի, որ եռացող ջրով լի էր: Ալիքների մոռնչիւնը սոսկալի էր. մինչեւ ժայռերի սուր կատարն էր վեր թռչում նրանց սպիտակ փրփուրը:

Կենդանութեան դոյնը հատաւ ընկերներիս երեսից, երբ ունացող յորձանքի մէջ նայեցան—անյատակ էր, խաւարին էր դրա խորքը: Ակիլան այն տադնապիչ բոպէին վեց քաջ մարդիկ յափշտակեց ինձանից: Նրանք յանկարծ ոտքերն և ձեռքերն օդի մէջ տատանելով, վայրագ վեշապի երախների մէջ ընկան: Թշուառներն ինձ էին կանչում աղիողորմ. բայց եղկելիս անգոր էի օդնել նրանց: Ճիւաղն յետ քաշեց իւր վը-

զերն անդունդի մէջ, և շատ քիչ տևեց ընկերներիս յուսակտուր աղազակը:

Վերջապէս մաղապուր աղատուեցանք վտանգից և փոքր ինչ յետոյ մի մարգաւէտ, դալար կղզի հշամարեցինք: Դրան առաւել որ մօտեցանք, եղների բառաչ և ոչխարների մայլւն հասաւ մեր ականջին: Այն ժամանակ ես յիշեցի ալեւոր Տիրեսիասի զուշակութիւնն և պատուէրը, որ տուել էր ինձ զգուշաբար դիցուհին:

12

ՀԵԼԻՌՍԻ ԶՈՒԱՐՈՒԿՆԵՐԸ

«Ընկերներ», ասացի ես, «այս է ահա Թրինակիան, որի վրայ յաւէրժ հարսներից հովուելով ճարակում են Արևի պերճ նախիրներն և գեղմնաւոր հօտերը: Մենք կորստեան կը մատնուինք, եթէ այս նուիրական կղզին ելնենք»:

Ընկերներս տհաճութիւն ցոյց տուին, և Եւրիլոք պատասխանեց. «Անգութ ես դու, Ողիսես, և երբէք հոգ չես տանում մեր վրայ: Փո անդամները բնաւ երբէք չեն պարտասվում. թէ ներքուստ, թէ արտաքուստ դու շինուած ես երկաթից: Բայց մենք խպառ ջարգուած ենք, և կ'ուզէինք փոքր ինչ հանդչիլ այս դալարուտ կղզու ափին: Տես, արևն արդէն մայր է մըտ-

նում, և դու պահանջնում ես, որ մուժ գիշերով նաւելինք մեղ անձանօթ ջրերի վրայ: ԶԵ, թոյլ տուր՝ այժմ ցամաք իջնենք և առաւօտեան յառաջ գնանք»:

Բոլորեքեան այս կարծիքին հաւան գտան, և ես տեսայ, որ մեր զլսին չարիք էր նիւթում մի աստուած: Այն ժամանակ ես ասացի. «Ամենքդ միաբանած հարկաւ կըյաղթէք մէնակիս: Սակայն գոնէ երդումն արէք, որ չէք դիպդիլ չէլիոսի երինջներին կամ դառներին»:

Նրանք երդումն արին և ուխտեցին՝ միայն նաւի մէջ եղած պաշարից բան ուտել:


Ապա թէ մտանք մի անքոյթ նաւահանգիստ, ցամաքի վրայ ոտք զրինք և ընթրիք պատրաստեցինք: Յետոյ յիշեցինք մեր վեց թշուառ ընկերներին, որոնց հափափել էր հոգեհան Սկիլլա գաղանը, և նրանց պատճառով ջերմ արտասուք թափեցինք: Այսպէս նստանք մինչև գիշեր, յետոյ անոլշ քուն եղանք:

Բայց չար եղաւ մեր զարթումն վրայ հասնող արշալուսին: Ամպրոպայինն Արամաղդ մի սոսկալի հողմ արձակեց, ծովն ուժգին ծածանուեցաւ, կոհակները մոլեգնաբար մեր եղերքին բախուեցան և երկինք, գետին մուժ գիշերով պատուեցան: Մենք մեր նաւը մի քարայր մըտցրինք, որ գեղեցիկ յաւերժհարսանց պարի տեղն

էր: Այն ժամանակ ասացի ընկերներիս. «Բարեկամներ, առանց կատակի ասում եմ ձեզ—երդումներդ չմոռանաք: Նաւում եղած պաշարից կերէք, ինչքան կամենաք, բայց Արևի արջառներին կամ խաշներին մի՛ դիպէք: Դրանք ամենազօր աստուծուն են պատկանում, որ լսում և տեսնում է ամէն բան»:

Այս անդամ էլ ընկերներս հնագանդուելու երդումն արին: Բայց հարաւալին և արևելեան քամիներն ամբողջ ամիս յաջորդաբար վչելով, թոյլ չէին տալիս, որ եղերքից հեռանալինք: Երբ վերջապէս մեր պարէնը սպառուեցաւ, ընկերներս սկսան շրջել ձուկ կամ թռչուն որսալու, զի սովը նրանց տանջում էր: Այս աղէտի ժամանակ ես քաշուեցայ փոքր ինչ հեռու, որ աստուածներին աղօթք անեմ: Այն տեղ ձեռքերս ալիքներում լուացի և բազկատարած աղերս կարդացի ոլիմպական անմահներին: Այնուհետև պատկեցայ, որ փոքր ինչ նիրհեմ, և աստուածները մի անուշակ քուն կաթեցրին աչքերիս վրայ:

Մինչ տակաւին ննջում էի, Եւրիլոք կորստաբեր խորհուրդ տուաւ ընկերներիս: «Դաւն են մահուան տեսակներն», ասաց նա. «բայց բոլորից դառնագոյնը սովատանջ մահ կրելն է: Եկէք ուրեմն, ընկերներ, Արեգակի եղներն այս չոմ. Ողիս.



կողմ քշենք և աստուածներին զոհ մորթենք։
Երբ Իթակէ վերադառնանք, մենք նրա համար
մի շքեղ տաճար կըկանգնենք և սիրտն առատ
նուէրներով հաշտ կ'առնենք։ Իսկ եթէ նա
մեզ ծովի վրայ կործանելու վճիռ դնէ, լաւ է
—մի անգամից մահ ստանանք, քան թէ յամր
յամր ծիւրուելով՝ սովալլուկ այս տեղ մեռնենք։

Ընկերներս այս խորհուրդին հաւանեցան։
Նրանք դնացին նախրի մօտ, ընտրեցին մի քա-
նի լախնաճակատ գեր զուարակ, քշեցին դէպի
քարայրը, քաղեցին վափուկ ոստեր հաստ կաղ-
նուց, աղօթք արին և դինեցին զուարակները։
Ամենալաւ կտորները սեղանի վրայ ալրելուց
յետ՝ մնացած միսը վերցրին և մի առատ ճաշ
սարքեցին։

Թմրեցուցիչ քունը փախաւ աչքերիցս. ես
վեր կացայ և դէպ՝ քարայրը շտապեցի։ Խորո-
վածի բուրմունքն արդէն հեռուից քթիս դի-
պաւ, և ես զգացի, թէ ինչ չարիք էր պատա-
հել։ Զեռքերս վերև ամբառնալով, դոչեցի.
«Հայր Արամազդ և դուք յաւէրժ աստուածներ,
դուք ի կորուստ ինձ անուշարար քուն իշեց-
րիք աչքերիս, քանզի ահա ընկերներս այս մի-
ջոցին մի վատ եղեռն դորձեցին»։

Հօտերն արածեցնող մի յաւէրժհարսն նոյն
ըոսէին ձեսպով փութաց Արևի մօտ և կատա-

րուած ոճրի մասին գոյժ տուաւ։ Ուժգնապէս
սրտմտեցաւ Արեգակն և բողոք կարդաց աս-
տուածներին։ «Հայր Արամազդ և դուք երջան-
կափառ աստուածներ, կործանեցէք այս ամբա-
րիշտ և չար մարդկանց, որոնք սիրուն զուա-
րակներս մորթեցին։ Թէ երկինք ի վեր բարձ-
րանալիս և թէ երկիր իշնելիս՝ ես միշտ զուարթ-
նայում էի զրանց վրայ։ Բայց եթէ դուք այն
չարերին չըպատժէք, դժոխք կ'երթամ և այս
օրից՝ միայն մեռելներին լոյս կըտամ»։

Արամազդ պատասխանեց. «Ո՛վ լուսակիր չէ-
լիսս, շարունակիր լոյս պարզեել աստուածներին
և կենսատու երկրի բոլոր բնակիչներին։ Իսկ
ես թխողահոծ մութ ամպերից շանթ կ'արձա-
կեմ և այդ եղեռնագործ չարերի նաւը ցիր և
ցան կըխորտակեմ»։

Այս բոլորն ես լսեցի կանգրահեր Կալիփոէի
շրթունքից։

Ընկերներիս մօտ գալով, ես նրանց սաստիկ
պարսաւեցի, բայց արդէն ուշ էր. Էլ խօսքերս
չէին կարող ոչ գործի առաջն առնել, ոչ էլ
գալիք աղէտներն ի բայց վանել։ Զարհուրեկի
նշաններ առաքեցին աստուածները։ Սկրթուած
մորթերը գետնի վրայ սկսան սողալ, և շամ-
փուր անցուած մոի կտորներն եղների պէս ա-
հեղ ահեղ բառաչել։

Յանցաւորները վեց օր կերան այն մսից, որ
չարաչար ձեռք էին ձգել: Եօթներորդ օրն՝ հող-
մը զիշաւ և փոքր ինչ յետոյ ջրի երեսը հայե-
լի պէս հարթ դարձաւ: Մենք մեր նաւը ծով
իջեցրինք, առաջաստները պարզեցինք և մեկ-
նեցանք եղերքից:

13

ՈՐԻՍԵԼՍ ՅԵՏ Է ՄԱՎՈՒՄ ԴԵՊԻ ՔԱՐԻՔԻ

Կղզուց դեռ շատ հեռու մեկնած չէինք, երբ
Արամազդ, Արեգակին տուած խոստումը լիշելով,
սեակուտակ ամպերով շրջապատեց մեր նաւը:
Նոյն հետայն առաքեց մի սաստկաշունչ փո-
թորիկ, որից ծովը մինչեւ խորքը տատանուե-
ցաւ: Պարանները կտրտուեցան, առաջաստները
բղքտեցան, կայմն էլ ճարճատելով տապալուե-
ցաւ և ջախջախեց զեկավարին, որ թաւալ գլոր
ծովն ընկաւ և կորաւ: Մութ ամպերից հրա-
փալ շանթեր պսպլացին և մեր գլխին բարկա-
ճայիթ որոտումներ գոռացին: Յանկարծակի Ա-
րամազդ մի այնպիսի հրաշունչ կայծակ արձա-
կեց մեր նաւի դէմ, որ սա բոլորովին սասանե-
ցաւ և խր ամէն յօդուածներով ճըռճռաց:
Նոյն բռպէին ողջ նաւի մէջ ծծումը հոտ վր-
ռուեցաւ, և ընկերներս տմեկի յորձանքի մէջ

թօլժափեցան: Ֆովալին ճայերի պէս մեր երե-
րուն նաւի շուրջը ծածանուելով, նրանք
բոլորն էլ ալիքների մէջ սուզան: Ես նաւի
վրայ մնացի, մինչև որ կոհակների բուռն
ոյժը նրա կողերը տաշտից պլոկեց և կայմը շա-
ռաջմամբ մերկացած ողնափալով վրայ ձգեց:
Կայմի վրայ գեռ մնաւմ էր արջառենուց պրկած
մի փոկ: Ես բռնեցի դրան և ողն ու կայմն
իրար ամուր կապեցի: Այս նոր լաստին ապա-
ւինած, ես թողի որ փոթորիկն ուր էլ ուգեր՝
տանէր ինձ:

Արևմտեան հողմը սկսաւ մեղմանալ: Սակայն
այժմ իմ չար բախտից հարաւալինը դուրս բրր-
դաւ, մղելով ինձ Սկիլլայի և Քարիբդի սուր
ժայռերի դէմ: Վրայ հասաւ մի մուժ գիշեր,
բայց ինձ վարող ուժգին քամին չըդադարեց:
Լուսու դէմ նշմարեցի այն ժայռերը: Յորձանքը
մօտեցնում էր ինձ Քարիբդին, որ կատաղի զօ-
րութեամբ կուլ էր տալիս ծովի աղի ալիքը:
Լաստս նետի պէս դէպի վիրապը մղուեցաւ:
Այդ ահռելի բռպէին աչքս ընկաւ ժայռի մօտ
բարձրացող յաղթ թղենին, որի ճիւղերն ալիք-
ների վրայ էին կախուած: Վեր ցատկելով բրո-
նեցի ճիւղերից մին, այն ինչ լաստս անդնդա-
խոր, բերանաբաց ձագարի մէջ նետուեցաւ:
Այսպէս ես կախուած մնացի, վեր ու վայր տա-

տանուելով, իբրև չղջիկ, որ գիտէ ամբողջ օրով
մի ոստի կպած կենալ: Ինձ յայտնի էր, որ ա-
նագորոյն Քարիբդը լաստս կրկին դուրս կը
ժայթքէր. այս պատճառով անհամբեր վայր էի
նայում իորքի մէջ: Արդէն անցաւ շատ ժամա-
նակ. ձեռքերս բոլորովին վայտ կտրեցան: Վեր-
ջապէս յորձանքը լաստս վիժեց: Երբ դա տակովս
պիտի անցնէր, ես վայր թռալ, բայց վրիպեցաւ,
և ալիքների տակ դնացի: Սակայն նորից վեր
ելայ և ալիքներն առոյգ առոյգ ճեղքելով,
դարձեալ հասալ իմ լաստին, որի վրայ և հե-
ծալ: Այսպէս պլծայ ես կորստից:

Ինն օր թափառեցայ ալէսսասան ծովի վրայ:
Տասներորդի գիշերն՝ աստուածները հասցրին ինձ
վարսագեղ կալիխսէի բնակած կղզին՝ Ովզիգէ,
ուր ինձ սիրով հերընկալաւ և խնամեց ինն
տարի: — Բայց այս դէպքը, ովք գերապանծդ Ալ-
կինոս, արդէն երեկ պատմեցի քեզ և շնորհա-
շուք դշխոյին: Ուրեմն լաւ է լռեմ, քանզի
ինձ դժուկի է կրկնել մի բան, որ մի անդամ
արդէն ճշտիւ պատմել եմ»:

14

ՈՒԽՍԵԼՍ ԹԱՂՆՈՒՄ Է ՄՔԻՐԻԱՆ

Երբ Ողիսես իւր պատմութիւնն աւարտեց,
լուռթիւն իջաւ սրահի մէջ, ասես թէ մի թով-

չութիւն տիրած լինէր ամենքին: Վերջապէս
Ալկինոս խօսել սկսաւ և ասաց.

«Երդարեւ դու շատ ես տանջուել, Ողիսես.
սակայն այժմ, հաւատա ինձ, էլ չես շեղուիլ
ճանապարհից և տենչալի հայրենիքդ կը ժա-
մանես այն կազմ նաւով, որ քեզ համար պատ-
րաստուած է: Իսկ ձեզ, ովք փէտակեցի իշխաններ և
աւագներ, հրաւիրում եմ մի մի եռոտանի և մի
մի սան ընծայ շնորհել այս հոյակապ վշտակրին»:

Իշխաններն և պետերը հաւանութեան աջ
տուին թագաւորին և հեռացան սրահից: Վար-
դամատն առաւօտը որ ծագեցաւ, նրանք վեր
կացան և ընծաները տանելով, ծովափ գնացին:
Ալկինոս ման էր գալիս նաւի մէջ և ինքն ան-
ձամբ հրամայում էր լաւ զետեղել ամէն բան,
որպէս զի ոչինչ չաւերէին թիավարները: Յետոյ
նորից պալատ տարաւ Ողիսեսին, կամենալով
հրաժեշտի ճաշ տալ նրան: Այն տեղ նա մի եղ
զոհեց Արամազդին, և ապա թէ բոլորն էլ սե-
ղան նատան և կշտապինդ յագեցան, մինչ Պէ-
մոզոլ երգահանը երգում էր: Ողիսեսո ստեղ
նայում էր արվիափայլ արեին, փափազելով որ
դա շուտով վայր իջնէր, քանզի անչափ մաշ-
վում էր վիրալարձի կարօտով: Վերջապէս ը-
կարացաւ երկար նստել սրահում, և դիմելով
թագաւորին ասաց.

«Մեծափառ դիւցազնդ Ալկինոս, և դուք, աղդի պետեր և իշխաններ, այժմ որ աստուածներին պատշաճաւոր նուէր ձօնեցինք, թողէք ինձ յուղի ընկնել: Ի՞նչ բանի որ կարօտ էր սիրոս, ահա ձեզմով կատարուեցաւ—պատրաստի նաւն և շքեղազարդ պարզեները նշան են ձեր յարդութեան դէպի ինձ: Տայ Արամազդ, որ ամունուս և անձկալի ընկերներիս ողջամբ գտնեմ տանս մէջ: Իսկ դուք այս տեղ մնացողներդ ձեր կիներով և կաթոզին զաւակներով եղէք երջանիկ երկար և շատ տարիներ: Թող անմահ դիք ձեզ ի վերուստ բարիք շնորհն և աղէտից զերծ պահե՞ն»:

Ազնիւ հիւրի ճառից բերկրած, բոլորեքեան վեր կացան, նրան բարի երթ մաղթելով: Ալկինոս պատուէր տուաւ քարոզչին՝ դարձեալ մի անգամ բաժակները լքցնելու: Աստուածներին նուէր հանելուց յետ՝ Ոդխսկս իւր բաժակը թագուհուն տուաւ և ասաց. «Զուարթ ապրիր, ով վեհ դշուոյ, մինչեւի խոր ալեւոյթ և թող յուշիկ մօտենայ քեզ մահուան ժամը, որ բոլորիս բաժինն է: Ես մի յաջող բախտի բերմամբ հայրենիք եմ վերադառնում: Իսկ դու մնացիր զաւակներիդ սիրով բերկրած, ազգից պաշտուած և մարդովդ երջանիկ»:

Ասաց, և պալատի շէմքից անցնելով, դէպի

նաւը քայլել սկսաւ: Թագուհին կանչեց երեք նամիշտ և հրամակեց ճամբու պաշար, կարմիր զինի և շքեղ շորեր տանել հիւրի ետևից: Նաւազները այս բոլորն ընդունեցին և նաւի մէջ շարեցին: Յետոյ նաւի խելքի վրայ թաւ թաւ մորթեր, փափուկ գորգեր փուեցին, որպէս զի Ոդխսկս հանդիստ պառկի նաւորդութեան ժամանակ:

Այս բոլորից յետ՝ Ոդխսկս լոիկ մնջիկ նաւ մտաւ և փափուկ անկրղնի վրայ պառկեցաւ: Ճուտով նրան մի անուշակ քուն տիրեց. իսկ նաւազներն առոյդ առոյդ թի շարժեցին, և նաւը նետի պէս յառաջ սլացաւ, փայլուն ծովն ակօսելով:

Դիշերն արդէն անցել էր և պայծառ արուսեակը, որ վարդագոյն առաւատի հրեշտակն է, երեցել էր երկնքում, երբ սկաթոյր նաւն ըսկսաւ թակելին մօտենալ, և նաւաստները նրան դէպի անքոյթ նաւակալքն ուղղեցին: Ֆովափի վրայ գտանվում էր յաւէրթ հարսներին նուլրուած մի գեղեցիկ քարանձաւ: Գրա մէջ շար ի շար դրուած էին մեղրով լի քարէ տաշտեր, սափորներ և ոստախնանկի մարմարաշէն գործիներ, որոնց վրայ հարսները հիւսում էին ծիրանեղոյն կերպասներ: Անձաւն ունէր երկու մուտք. մին նայում էր դէպ՝ հիւսիս, որով

մարդիկ էին ներս մտնում, երկրորդը՝ դէպի
հարաւ— դա սուրբ էր և անմատչելի մահկա-
նացու ոտքերին:

Սրբնթաց նաւը, ալիքները ճեղքելով, այդ
քարայրի դէմ վագեց, և այնպէս սաստիկ, որ
ողն կիսով չափ ափի վրայ բարձրացաւ: Նա-
ւաստները հանդիստ առին և ապա թէ գորդի
չորս ծալրերից բռնելով, յուշիկ վերցրին խոր
քնած Ողիսւսին և ծովափ դրին: Ընծաներն էլ
նրա կողքին աւազի վրայ շարելուց յետ՝ նաւը
դարձրին և հայրենիք չուցին:

Պոսէյդոն իսկոյն տեսաւ քնածին և վերև
ճախրեց դէպ՝ Ոլիմպօս: Այն տեղ նա, ամպրո-
պային Արամազդին դիմելով, այսպէս ասաց.
«Հայր Արամազդ, ալսուհետեւ ես ինչ յարգանք
պիտի ստանամ աստուածներից, քանի որ մար-
դիկ անգամ ինձ չեն յարգում: Ես չէի ուզում
բոլորովին խափանել Ողիսւսի վերադարձը, ո-
րովհետեւ դու ինքդ խօսք էիր տուել նրան
դէպի տուն հասցնել. բայց կըցանկալի, որ նա
շատ առաւել տառապէր: Այն ինչ ահա փէա-
կեցիք նրան ծովով անց են կացրել և դրել
իժակէի եզերքի վրայ՝ անոլշ քնի մէջ ընկըդ-
մած: Այնքան էլ պղնձի, ոսկու և բեհեղի պար-
զեներ են տուել նրան, ինչքան որ Տրոյալից
անգամ չէր բերել. այնպէս որ այժմ նա շատ

առաւել հարուստ է, քան թէ բոլոր այն քա-
ջերը, որոնց հետ մարտնչել էր նուիրական
Տրոյալի դէմ»:

Արամազդ պատասխանեց. «Ի՞նչպէս կարող են
աստուածները ըընծայել քեզ արթանաւոր պատիւ-
աւ շուք, քեզ, որ մի զօրեղ աստուած ես: Բայց
ահա քեզ իմ խորհուրդը. երբ փէակեցիք իրենց
նաւը Աքէրիսից նշմարեն, դու այդ նաւը մի
ժայռ դարձուր, իսկ նրանց քաղաքը մի ահա-
գին սարով պատիւր»:

Պոսէյդոն շանթի պէս վայր սլացաւ Ոլիմ-
պոսից և իջաւ Աքէրիա: Սպասեց այն տեղ,
մինչեւ որ փէակեան նաւը յերեան գար: Յետոյ
յանկարծ ալիքների վրայ թռաւ, տափակ աջով
խփեց նաւին, և նաւն իսկոյն մի սեագոյն
ժայռ դարձաւ, որ արմատով խոր նստած էր
ծովի մէջ:

Այսպէս ահա լրումն ստացաւ մի վաղեմի
գուշակութիւն, որ արել էին հին մարդիկ:

ՇՈՐՌՈՐԴ ԳԻՐՔ

ԵՒՄԷՈՍ

1

ՈՒԽԵՒՍ ԶԱՐԹՆՈՒՄ է

Ողիսես քնից արթնացաւ։ Նա վեր կացաւ,
բայց չընանաչեց հայրենիքն, զի Ալթենաս պա-
տել էր նրան մուժ մէդով։ Դիցուհին կամեցել
էր, որ Ողիսես իւր ամուսնուն և բարեկամնե-
րին անձանօթ մնար, մինչև որ հոմանիներն
իրենց յանցանքը չըտուժէին։ Դիցազն վշտա-
կրին նորահրաշ էր թւում ամէն բան և օձա-
պտոյտ շաւիդներն, և նաւակալքն, և գալա-
րազարդ բլուրներն և բարձրաբերձ ժայռերը։
Երկար ժամանակ զննեց նա այս բոլորն և ապա
ձեռքն ազդրին խփելով, աղազակեց։

«Եղնակ ինձ, այս ինչ երկիր եմ ընկել։ Ար-
դեօք անօրէն սրիկաների աշխարհ է սա, թէ
հիւրընկալ և աստուածակալս ժողովրդի հայ-
րենիք։ Գանձերս այժմ ո՞ր տեղ թաքցնեմ և
ուր ուղղեմ քայլերս։ Ո՞հ, երանի Աքէրիս մնա-

ցած լինէի, կամ թէ մի այլ երկրի իշխան
ճամբած լինէր ինձ դէպի տուն։ Եթէ գանձերս
այս տեղ մնան, հէնց առաջին անցաւորին աւար
կըդառնան։ Ո՞վ աստուածներ, նոր եմ տես-
նում, որ փէակեցի իշխաններն առաքինի և
իմաստուն մարդիկ չէին, եթէ ոչ չէին առա-
քիլ ինձ այսպիսի օտար աշխարհ։ Թող Արա-
մազդ վրէժ հանէ նրանցից, Արամազդ, որ ա-
նոքների պաշտպանն է և չարերի պատժողը։
Բայց մի գուցէ նաւազները գանձերս խորած
լինին և ամենալաւ ընծաններս նաւով փախցրած։

Նա համբեց բոլոր ընծաններն և տեսաւ, որ ոչ
մի բան չէր պակսում։ Այժմ սկսաւ նորից մտածել
հայրենեաց վրայ, և ման գալով բազմազոչ ծովի
ափին, սրտառուչ հառաչանքներ վեր առաքեց։

Եւ ահա մի պատանի հովիտ եկաւ նրա հան-
դէպ։ Նա սիրուն էր և արքայազնի նմանակ։
Նա ձգած էր ուսերին մի փառահեղ պատմուճան,
ոտքելին հագած ունէր կարմրազարդ սանդալներ
և ձեռքում բռնած մի սոկեծով փայլուն տէզ։

Ալթենասն էր դա, որ այդ կերպով երևեցաւ
իւր սիրելոյն։

Ողիսես դիմաւորեց աստուածուհուն և ասաց.
«Ողջոյն քեզ և գալդ բարի, ով բարեկամ, որ ա-
ռաջինդ ես ինձ հանդիպում այս երկրի մէջ։
Մաղթում եմ քեզ, իբրև աստուծոյ—ապրեցուր

ինձ և փրկվը: Սակայն նախ ասա ինձ—արդեօք
սա ի՞նչ երկիր է և ի՞նչ աղջ է այս տեղ բնակում:
Արդեօք սա մի կղզի է, թէ ցամաքի հրուանդան»:

Ալթենաս պատասխանեց. «Անմիտ ես դու, ով
անծանօթ, կամ տար աշխարհից եկած մարդ
ես, որ այդպիսի հարց ես տալիս երկրիս մա-
սին, որ արևելքից մինչև հեռու արևմուտքը
հռչակուած է: Թէպէտ սա մի առապար և
լեռնալին երկիր է, բայց անբեր չէ, և տալիս
է առատ գինի և ցորեն. անձրեն և ցօղն էլ
անպակաս են, ուստի և շատ հարուստ է ար-
ջառներով և հօտերով: Իթակէ է անունն, և
այս անուան հնչիւնը ֆրոլա անդամ հասած է,
որ, ասում են, շատ հեռու չէ այս ափերից»:

Վշտաչարչար դիւցաղն մի անպատում բերկ-
րանք զգաց այդ խօսքերից: Բայց հնարագէտ
մարդ լինելով, ծածկեց սրտի զգացմունքն և մի
օտար ձեւանալով, այսպէս ասաց. «Ես էլ մի
անդամ լսել եմ այս երկրի անունը կրետէի լալ-
նատարը սահմաններում: Այն տեղ քաջարի
Գիոմէդի Օրսիլոք որդին կամենում էր կողով-
տել Տրոյակից ըերած գանձերս: Բայց կռուի մէջ
ես յաղթեցի Օրսիլոքին և գանձերիս կէսը զա-
ւակներիս թողնելով, միւս կէսով մի փիւնիկեան
նաւ մտայ, որ ինձ Պիւլոս պիտի տանէր: Սակայն
քամին նպատակից շեղեց մեղ, և ի վերջոց

մենք այս երկիրը նշմարեցինք: Զգուշաբար նա-
ւակայք մտանք, ցամաք իջանք և որովհետեւ
գիշեր էր, ափի վրայ պառկեցանք: Արշալուսին,
մինչ տակաւին ես խոր քնով քնած էի, փիւ-
նիկեցիք վեր կացան, գանձերս մօտս դրին և
մեկնեցան: Այսպէս ահա ընկայ ես այս երկիրը»:
Խաժակն Ալթենաս ժպտեցաւ, Աղիսեսին աջով
թօլթուեց և յանկարծ մի չքնաղ օրիորդի կեր-
պարանքով երկեցաւ: «Անշուշտ շատ հնարագէտ
պիտի լինի այն մարդը», ասաց նա, «որ կարա-
նար քեզ խարել, դու նրբամիտ խորամանկի:
Սակայն ինձնից զգուշանալու հարկ չունիս:
Մենք երկուքս էլ մեր գործերին վարպետ ենք,
դու խորհրդով և լեզուով մարդկանց մէջ ես
պանծալի. ես՝ իմաստութեամբ և հանճարով—
աստուածների կաճառում: Քեզ պէս երկար թա-
փառելուց յետ՝ որ մարդն յանկարծ տուն հաս-
նելիս չէր շտապիլ խկոյն խը կնոջ և զաւալ-
ների մօտ գնալ: Բայց դու զգուշամիտ խոհե-
մութեամբ նախ ուզում ես փորձել կնոջդ և
տպա թէ բացուիլ նրան: Սակայն լսիր ինձ,
որպէս զի շատ ըմաշուկա երկբայանքով: Տես,
ահա Փորկիս ծերունու հանգրուանը, ահա բաղ-
մաճիւղ թղենին, որ անշուշտ չես մոռացել.
ահա գէնը՝ յաւէրժ հարսների գեղատեսիլ,
նուիրական և մթին քարանձաւը, որ դու յա-

ճախ զոհ ես բերել. վերջապէս ահա և ներկտոնի անտառախիտ բլուրը—չես ճանաչում»:

Դիցուհին այս որ ասաց, յանկարծ մէզը փարատուեցաւ և հիացած Ողիսեսի աչքերին ծովն ու երկիր պայծառ լուսով բացուեցան։ Նա բաղկատարած ծունը իջաւ և ուրախութեան արտասուքով հայրենեաց հողն համբուրեց։ Յետոյ դարձաւ գէպի քարալըն և գոչեց։ «Յաւէրժ հարսներ, բարձրագահ Արամադիի վեհ աղջիկներ, ողջոյն ձեզ։ Թարձեալ բուրաւէտ նուէրներով պիտ՝ մեծարեմ ամենքիդ, միայն թէ յաղթականն Աթենաս պաշտպանէր ինձ և օրհնէր սիրուն որդուս»։

Աթենաս ասաց. «Պիամիտ եղիր այդ մասին։ Այժմ եկ գանձերդ պահենք, որ չկորչին»։

Այսպէս ասաց դիցուհին և մտաւ հովանաւոր քարալը, իսկ Ողիսես գանձերը նրա ետևից կրելով, քանիցս անգամ դնաց եկաւ և ամէն ինչ լաւ տեղաւորեց։ Պուտքի դիմաց Աթենաս մի ահագին վէմ դրաւ։ Այնուհետեւ երկուքն էլ հաստ ձիթենու տակ նստան և իրար հետ խորհուրդ տեսան։

«Աւշիմդ Ողիսես», սկսաւ դիցուհին, «մտածիր այժմ, թէ ինչպէս պիտի մարտնչես այն լրբերի գէմ, որոնք ահա երեք տարի է՝ կամայօրէն տիրացել են պալատիդ և նեղում են աղ-

նիւ կնոջդ իրենց յանդուգն տարփութեամբ»։ Ողիսես պատասխանեց. «Առանց քո աջակցութեան ես կորած եմ, վեհ դիցուհի։ Սակայն եթէ օդնես ինձ, ոչ մի վտանգից չեմ վախենալ»։

Աթենաս դիպաւ նրան իւր ցպով և ասաց. «Ահա ես քեզ կ'այլակերպեմ, որպէս զի ոչ ոք չկարանայ քեզ ճանաչել»։

Եւ իսկոյն Ողիսեսի առոյգ մարմինը գոսացաւ, փափուկ կաշին խռուացաւ, թուխ մազերը թօթափեցան, խրոխտ իրանը ծուռեցաւ և նա մի ծերունու կերպ առաւ։ Ճորերն անդամ բոլորովին փոխուեցան։ Այժմ նա հագած էր մի բրդգած հնոտի ձորձ և ուսին կրում մի կեղտուտ և ցեցակեր պայտուսակ։

Այնուհետեւ Աթենաս ասաց. «Այժմ գնա Եւմէոս խողարածիդ մօտ, որ մնացել է քեզ անձնուէր, և հարցուր, ինչ որ ուզում ես իմանալ կնոջդ մասին։ Իսկ ես կ'երթամ յետ կըըերեմ Տելեմաքին, որ մեկնած է այս տեղից քեզ գըտնելու նպատակով»։

«Ինչու, ով դիցուհի, թոյլ տուիր նրան մեկնելու, քանի որ զիտակ էիր վերագարձիս», հարցրեց Ողիսես։

Աթենաս պատասխանեց. «Որովհետեւ յանկութիւնս էր, որ պատանին վառք վաստակէր չոմ. Ողիս.

տար աշխարհում. այս պատճառով ես ինքս նրան այն տեղ տարայ: Միտմիտ եղիր նրա մասին. նա վտանգից ազատ է: Այժմ անվիշտ ապրում է վեհանձն Պենելաւի պալատում, ուր մեծ սիրով ընդունուած է: Մի քանի հոմանիներ նրա ետևից դնացին, որ բռնեն վերադարձի ժամանակ. բայց ես ի չիք կըդարձնեմ նրանց նենդամիտ խորհուրդը»:

Դիցուհին այս որ ասաց, անհետացաւ:

2

Եթէոս

Իթակէի թաղաւորն Աղիսես, չքաւորի հնոտիք հագած, եղերքը թողաւ և ոտք դրաւ մի քարքարուտ շաւզի վրայ, որ անտառից անցնելով, տանում էր Եւմէոս խոզարածի բնակարանը: Արդէն հեռուից նա նշանարեց տան շէմքի առջև նստած հաւատարիմ ծառալին: Եւմէոս շինել էր խոզերի համար մի ընդարձակ քարէ դաւիթ և պատել մի ամուր փշի ցանկով: Գաւթի մէջ զտանկում էին տասերկու խոզարոյներ, և ամէն մէկում պառկում էին լիսունական մատակ խոզեր: Խոկ արուները դիշերն անդամ մնում էին անտառում. բայց դրանց թշուն պակաս էր, քանդի երեք տարի է, որ

Եւմէոս ստիպուած էր ամէն օր քաղաք ուղարկել մի պարարտ արու խոզ:

Պատուական խոզապանի մօտ պառկած էին չորս ահազին, բրդստ շներ և նայում էին տիրոջ վրայ, որ զբաղուած էր եզի կաշուց կօշկի ներբան կտրելով:

Ճները տեսան Ողիսեսին և կատաղի հաչիւնով խոկոյն վրան վաղեցին: Ողիսես զգուշաբար մի քարի վրայ նստաւ և ցուպը ձեռից վայր դրաւ: Բայց և այնպէս նա չէր պլծնիլ չար աղէտից իւր կալուածքում, եթէ մեծականչ սաստ կարդալով վրայ չհասնէր խոզապանը: Նա քարերով հեռու քշեց գամփռերն և ասաց իթակէի թաղաւորին. «Քիչ էր մնացել, ով ծերունի, որ շներից պատառտուէիր: Թրանով և՛ս առաւել կըսաստիկանար սրտիս վիշտը, որ արդէն առանց այն էլ սաստիկ է: Ես այս տեղ զիշեր ցերեկ ողբալով դիցանման տիրոջս, ստիպուած եմ այս խոզերը պարարել, որպէս զի ուրիշները ուտեն, լավին: Այս. լաւ են զուարձանում այդ հոմանիներն և տիրոջս գոյքից լոփանում, մինչդեռ նա, տարաշխարհում թափառական, ով զիտէ, գուցէ շատ հասարակ պարէնի էլ կարօտ է, եթէ արդէն չէ իջել մահուան խաւար բնակարանը:—Սակայն եկ, ծերունի, իրմիթս մտիր. այն տեղ հաց և զինի

կընդունես և կըպատմես՝ ուստի ես և ի՞նչ ցաւեր ես կըել»:

Կա յառաջ զնաց և Ոգիսես հետեւց: Խըրճիթը մտնելով, Եւմէսս ոստեր ձգեց զետնի վրայ, վրայից փուեց մի թաւամաղ այծի մորթ և խնդրեց Ոգիսեսին, որ պառկէ:

Ողիսես ուրախացաւ և ասաց. «Թաղ Արամազդ և միւս անմահ աստուածները որտիդ տենքը կատարեն, ասպնջական, որ ինձ սիրով հիւրընկալար»:

Եւմէսս պատասխանեց. «Քեզնից էլ հէք օտարին սովոր չեմ արհամարհէլ տանս մէջ: Պատճառ՝ ամէն օտարական և աղքատ Արամազդից է զալս: Իմ հիւրոյթը հարկաւ չնչին կըլինի, բայց հաւատա՝ անկեղծ սրտից: Դու ինքդ էլ կը զիտենաս, որ ամբարտաւան տէրեր ունեցող մի ծառայ չէ կարող շատ բարիք առաջարկել իւր հիւրին: Այս, եթէ յատուկ տէրս ողջ լինէր և իթակէյում թագ կըէր, այն ժամանակ չէիր մեկնիլ տանիցս առանց ընտիր ընծաների: Հաւատարիմ ծառայութեանս փոխարէն նա ինձ վագաց տուած կըլինէր տուն և գոյք: Այս, երանի թէ չելենէի զարմն իսպառ չքանար: Գրա պատճառով էր, որ մահ գտան այնքան աղնիւ դիւցազներ»:

Ասաց, գոտին կագեց և գուրս գնաց, որ եր-

կու հատ խոճկոր բերէ ճաշի համար: Նա ինքն մորթեց, խանձեց, յօշեց գրանց և միսն շամփըրով խորովեց, վրան ալիւր ցանելով: Այնուհետեւ հիւրի առջև բերաւ տաք տաք խորովածն, մի բաղեղեալ բաժակ հանեց և զինի ածեց: «Կէր և խմի՛ր, օտարական, ինչ որ ունիմ», ասաց նա: «Քեզ համար միայն խոճկոր մորթեցի, որովհետեւ պարարտ խոզերը պարտական եմ սեղեխներին առաքել, որոնք ոչ արածների վրայ են մտածում, ոչ էլ տիրոջս ամուսնու և որդու վրայ ցաւ քաշում: Ոհ, որչափ են մեղանչում երանաւէտ աստուածների դէմ, որոնց աչքին ատելի է բռնի գործը և սիրելի՝ արդարը: Երևի թէ այդ մարդիկը հաստատ գիտեն, որ իմ տէրը մեռել է, եթէ ոչ՝ չէին յանդգնիլ նրա պալատում այնքան չարիք գործելու: Ահա՝ երեք տարի է, որ լրբօրէն շուալտելով, վատնում են նրա բարիքը: Տիրոջս չափ հարստութիւն ոչ մի իշխան չէր ունեցել կըդգուս վրայ. այս, նա մէնակը քսան իշխանից հարուստ էր: Այժմս էլ նրա նոխութիւնը սակաւ չէ: Նա տասներկու արջառների նախիր ունի ցամաքի վրայ, նոյնչափ էլ ոչխարի, այծի խաշներ և խոզի երամակներ: Այս բոլորը պահպանվում է առանձին հովիւներով, որոնց վրայ կարգուած են չորս փորձառու վերակացու: Ես

Էլ ահա դրանցից մէկն եմ: Տասներկու այծի հօրան էլ Խթակէի վրայ ունի: Խրաքանչեւր հօրանից հոմանիների համար տարվում է ամէն օր մի ժի նոխաղ: Ես էլ պարտաւոր եմ ամէն օր մի պարարտ խոզ հասցնել: Տես, այսպէս ահա տարէ ցտարի լավում են նրանք տիրոջ գոչքը, որ վերջապէս անշուշտ պիտի ոչնչանայ, ինչքան էլ առատ լինէր»:

Մինչ Եւմէոս խօսում էր, Ողիսես լոիկ մնջիկ ուտում և խնդում էր, և մտքի մէջ չարիք նիւթում սեղեխներին: Երբ նա լիովին կշտացաւ, Եւմէոս մի բաժակ էլ լքցրեց և հիւրին առաջարկեց: Սա ուրախ սրտով բաժակն առաւ և ասաց. «Կ'ուզէի իմանալ, բարեկամ, — ով էր այդ բազմահարուստ և մեծազօր իշխանդ: Ես շատ տեղեր թափառական շրջած մարդ եմ, և ով զիտէ, գուցէ մի օր աչքերս նրան տեսած լինին»:

Խողապանը պատասխանեց. «Ո՞վ ծերունի, ոչ տիրուհիս կրհաւատայ, ոչ էլ որդին, եթէ ասես, թէ տեսել ես իշխանիս: Քանզի արդէն շատ շրջմոլիկ պանդուխտներ, մեր յարկին կարուելով, գալիս են թագուհու մօտ և պատմում, թէ այս ինչ տեղում տեսել էին տիրոջ նրա իետ գալու միջոցին: Տիրուհիս էլ, նրանց լոելս, ինդութիւնից լաց է լինում, և խաքե-

բաները հեռանում են առատ առատ ընծաներով: Բայց գեռ երբէք չէ պատահել, որ նրանց ասածը ճշմարտուէր: Դու էլ անշուշտ մտադիր ես մի հնալովի առակ պատմել, որ նոր շորեր ստանաս: Սակայն, ծերուկ, միթէ տէրս կըվերադառնայ այլպիսով: Ո՞հ, արդէն վազուց գիշատիչ թուշուններն և շները նրա միսն ուկրից պլոկած կըլինին ռազմի դաշտում, կամ թէ ծովի ձկները լափած կըլինին նրա մարմինը, խել ուկրներն աւազի տակ ծածկուած՝ ով գլուտէ որ ավիր մօտ: Աւաղ, մեր չար բախտից կորաւ նա, մանաւանդ իմ չար բախտից: Պատճառ՝ ամբողջ աշխարհն էլ որ ման գամ, նրա պէս տէր չեմ գտնիլ: Արդ իմացիր — Ո՞դ իսես նէ այն մարդն, որի կարօտը քաշում եմ օր ու գիշեր: Երկիւղած սրտով եմ լիշատակում աղնիւ տիրոջս, որ սերտ սիրով սիրում էր ինձ և հայրաբար ինամում»:

«Բարեկամ», պատասխանեց Ողիսես, «որովհետեւ գու պնդում ես, թէ տէրդ երբէք յետ գալու չէ, և սիրով բոլորվին յուսահատ է, ուստի չէ թէ միայն լոկ խօսքերով, այլ և երդմամբ հաստատում եմ, որ նա պիտի վերադառնայ: Երբ ասած կատարուի, դու նոր շորեր կընծայես ինձ աւետչեալ: Եւ ինչքան էլ մերկ լինէի, ես ոչ մի բան չեմ ընդունիլ, մինչև որ

խօսքս չարդարանալ։ Մահու չափ ատելի է ինձ այն մարդն որ կարիքից ստիպուելով սուտ է հնարում։ Ուրեմն թռղ Արամազդ և այս հիւրասէր սեղանն, ինչպէս և անըստղիւտ Ռդիւմւսի շքեղ յարկը, որին որ մօտեցել եմ, վկայ լինին, թէ ամէն բան ասածիս պէս լրումն կը ստանալ։ Հէնց որ անցնի այս ամիսը, Ռդիսւմւաս տեղ կըլինի և կըպատժէ ամենքին, որոնք որ չէին յարգել ըստ արժանւոյն նրա ամուսնուն և որդուն»։

Եւմէոս նրան անդրադարձ տուաւ. «Ոչ ես քեզ աւետչեայ կրտամ, ով ծերունի, ոչ էլ Ռդիսւմ կըլիրադառնալ։ Զէ, հանդիսատ խմիր այս դինին և եկ մեր խօսքն ուրիշ բանի վրայ դարձնենք։ Ել մի լիշեցնիր տիրոջս, քանզի սիրտս ցաւով, վշտով լցուել է։ Թողնենք երդումդ։ Երանի թէ նա վերադառնար, ինչպէս որ ի սրուէ փափադում ենք։ Սակայն ով կարող է գեռ այդպիսի բան յուսալ։ Բայց պատանի Տելեմաքն էլ շատ է մաշում իմ սիրտը։ Աստուածները նրան գեղեցիկ աճեցրին, և ամէն մարդ հիանում էր նրան տեսնելիս։ Բայց ահա արգեօք մի մարդ թէ մի աստուած մոլորեցրեց նրա միտքը, ըստ որում մի նաւ նստաւ և այժմ թափառական շրջում է անձկալի հօրն որոնելով, որ վաղուց փչել է հողին։ Մի քանի դեղին

հոմանիք արագ նաւով դարանում են նրան, որպէս զի սպանեն վերադարձի ժամանակ։ Այսպէս ուրեմն դիցանման Արկեսեան դարմը պիտի չքանալ Իթակէից։ Բայց, ով ծերուեկ, այս մասին էլ լաւ է լունք։ Գուցէ Արամազդ իւր աջովն հովանի լինի իմ պատուական տիրոջս որդուն։ Այժմ քո աղէտն պատմիր ինձ, ով ծերունի. ասա ով ես, ուստի՞ ես և ինչ բերմանք մեր Իթակէն ժամանեցիր»։

Ռդիսւմ այսպէս պատասխանեց. «Եթէ ունենալինք հացի և զինու պաշար և մնալինք նըստած այս տնակում, մինչ ուրիշները գործի գընալին, — ամբողջ տարին չէր բաւիլ՝ պատմելու քեզ աղէտներս, որ կրում եմ աստուածներից»։

Ռդիսւմ մի երկար և զարմանահրաշ վէպ հնարեց, ըստ որում գեռ չէր ուզում բացուիլ խոզապանին, չէր էլ կարող լուռ կենալ։ Այս վէպի մէջ ի միջի այլոց նա պատմեց, որ իբր թէ տեսել էր Ռդիսւմին Տրոյալի մօտ և նորերս էլ հանդիպել էր Թեսպրոտեան թագաւորի պալատում։ «Այն տեղ տեսալ», շարունակեց նա, «և այն ընտիր գանձերը, որ բերել էր պատերազմից — ոսկի, պղնձ և երկաթ։ Այնքան շատ էին այդ գանձերն, որ անգամ իւր թոռներին կըբաւէին մինչև տասներորդ սերունդը։ Նա արգէն պատրաստուել էր գէպ՝ հայրենիք

չուելու: Սակայն դեռ նաև չըմտած, կամեցաւ գնալ Դոդոնայի բագինը՝ իմանալու ամբարձուղէշ սուրբ կաղնուց, թէ Արամազդ ինչպէս կը պատուիրէր նրան վերադառնալ – արդեօք ծածնուկ, թէ բացայալու: Նա դեռ Դոդոնայից յետ չէր եկել, որ մի նաև մտաւ նաւակայքն և նաւաստիքը ցամաք իջան: Ես իմացայ, որ նըրանք Դուլիք պիտի նաւէին, և ինդրեցի Թեսպրոտերին, որ ինձ էլ թոյլ տայ Դուլիք գնալ: Թագաւորը ընծաներ տուաւ նաւաստներին, և նրանք խոստացան ինձ էլ տանել իրենց հետ: Բայց ճանապարհին ապիրատներն ինձ գերի վաճառելու չար միտք յղացան: Հէնց որ ափից հեռացանք, վրաս յարձակուեցան, սիրուն շորերս հանեցին և այս բրդգուած լաթերը տուին, որ ահա տեմնում եօ: Իրիկուայ դէմ այս կզզու մօտ դադար առինք: Նաւաստները կապեցին ինձ նաւի մէջ և ինքեանք ցամաք ելան, որ ընթրիք պատրաստեն: Ես կապերս կտրտեցի և ինձ ազատ զգալուս սլէս՝ ձորձս գլխիս փաթաթեցի և դեկի կողմից ջուրն ընկնելով, դէպի ցամաք լող տուի, ուր և հասայ յաջողապէս: Մի մութ քարայր պատսպարեց ինձ այդ չարերի հալածանքից. նրանք ինձ երկար պտրտեցին, բայց չգտան: Ցետոյ նորից նաւ մտան և մեկնեցան: Այսպէս ահա եկայ այս

տեղ, և աստուածներն ինձ բերին մի ուշիմ և հիւրընկալ մարդու մօտ»:

«Խեղճ նժդեհ», գոչեց Եւմէսս, «աղէտներդ պատմելով, լիրաւի սիրտս յուզեցիր: Սակայն լաւ չէր, որ դարձեալ Ողիսւսի վրայ խօսք բացիր: Դու ուզում ես ինձ հաւատացնել, թէ տեսել ես նրան փոքր ինչ առաջ: Այդ բանում չես կարանալ համոզել ինձ, պէտք էլ չունիս շահելու ինձ, սուտ սուտ բաներ հիւսելով: Նա մեռել է, և էլ երբէք տեսնելու չեն նրան աչքերս: Երանի թէ Տրոյալի առջև ընկած լինէր, ուր մահ գտան այնքան քաջեր. այն ժամանակ յոյները նրան դամբան կըկանգնէին, որ իրեն էլ փառք կըբերէր ապագայում, որդուն էլ: Սակայն, աւազ, նա ծովի մէջ անփառունակ մահ գտաւ չարպեան ապուռ գաղաններից: Նրա աղնիւ ամուսինը տակաւին մինչև այս օր թոյլ է տալիս, որ ստայօդ լուրերով պատիր յոյսեր արծարծէին իւր սրտում: Բայց ես՝ սկսեալ այն օրից, որ խաբուեցայ մի ստախօս էտոլացուց, էլ չեմ ուզում հարցափորձել ոչ մի նժդեհ, ոչ էլ մի բան հարցնել դիցատիպ Ողիսւսիս վերաբերմամբ: Կտոլացին մարդ էր սպանել և թշուառական թափառում էր լախատարր երկրի վրայ: Ես նրան սիրով հիւրընկալայ այս փարախում: Նա պատմեց, թէ Ողիսւս, որին

իբր թէ իդոմէնի մօտ էր տեսել կրետայում, այս ամառ կամ թէ աշնան պիտի յետ գալ իժակէ, առատ գանձեր և քաջարի ուղեկիցներ ըերելով։ Այդ ժամանակն արդէն անցաւ, բայց իմ տէրը գեռ չեկաւ։ Ուստի մի ջանար, ով ծերունի, քմազարդ պատումներով սրտիս սփոփանք աղդելու։ Դրանով չես կարանալ առաւել սէր որսալ ինձնից։ Ես հիւրընկալայ քեզ նրան համար, որ երկիւղած եմ վանատուր Արամագդից և գութ եմ զգում դէպի քեզ։

«Արդարե», պատասխանեց Ողիսես, «գուանհաւատ սիրու ես կրում կրծքիդ մէջ, որ երդումն անգամ վրադ չէ աղդում։ Թէ ուրեմն եկ պայման կապենք և անմահ աստուածներին վկայ կանչենք։ Եթէ Ողիսես վերադառնալ, ինչպէս որ ես ասացի, գու նոր զգեստներ կ'ընծայես ինձ և դէպի Գուլիք կրճամբես, ուր ուզում էի ուղևորիլ այն նաւով։ Խոկ եթէ նա չվերադառնայ մինչեւ նոր լուսինը, — այն ժամանակ ծառաներիդ կը հրամայես, որ գահավէժ վայր զլորեն ինձ բարձր ժայռից, որպէս զի այսուհետեւ ոչ մի մուրիկ չհամարձակուի սուտ ասել քեզ չար խորհրդով։»

Եւմէոս կրկնեց նրան. «Այ ծերունի, լաւ համբաւ կըստանայի կենդանեօքս և առյապա, եթէ այդ կերպ ուղենայի սովանել մի հիւր, որին

ինքս եմ ընդունել և մեծարել յարկիս տակ։ Այնուհետեւ ինչ երեսով կ'աղօթէի Արամազդին»։ Այսպէս երկուսն իրար հետ դեռ շատ բաներ խօսեցին։

3

ԵԿՄԷՍ ԱՆԿՈՐԻՒՄ Է ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Երբ արեւը մայր մտաւ, ծառաներն անտառից փարախ քշեցին խողերը։ Այն ժամանակ Եւմէոս, որ շատ էր հաւանել իւր հիւրին, կամենալով և՛ս առաւել պատուել նրան, ձախն կարկաց։

«Այ պատանիք, զնացէք մի պարսրտ խոդ ընտրեցէք, որ խոկոյն մորթեմ հիւրիս համար։ Հերիք է, ինչքան որ հոմանիները տիրսջո գուքը վատնեցին. եկէք մենք էլ, որ տարիներով տանջուել ենք, դէթ մի անդամ խրախաննեք։»

Այս ասելուց յետ՝ սուր տապարտվ վայտ կըտրեց և մի մեծ կրակ վառեց։ Ծառաները մի հինգամեայ խող բերին և կրակարանի մօտ դրին։ Եւմէոս չմուռացաւ աստուածներին, այլ ժանեւոր խողի զլխից սպիտակ ստեւը քաղելով, կրակը ձղեց և խողը աստուածներից՝ վերադարձնել Ողիսեսին, եթէ նա դեռ ապրում էր։ Յետոյ վերցրեց մի ահազին կաղնու շերտ և այնպէս խփեց խողի զլխին, որ դա անշունչ

վայր ընկաւ։ Ֆառաները փողոտեցին, խանձեցին և յօշեցին կենդանին։ Ամենալաւ կտորները Եւմէոս աստուածներին նուիրեց, իսկ մնացեալ միաը շամփուր անցրած, կրակի վրայ խորովեց։

Հէնց որ խորովածն պատրաստուեցաւ, Եւմէոս, որ ամէն բանում արդար էր, վեր կացաւ և բուրաւէտ միսն եօթն կտոր բաժանեց։ Մի մասը չերմէսին և յաւէրժական հարսերին նուէր հանեց, միւսն տուաւ Ողիսւսին, իսկ մնացեալը ծառաների և իւր մէջ բաժանեց։

Պատուի կտոր՝ ողի թամբը Ողիսւսին բաժին ընկաւ։ Այս բանի վրայ ուրախացած՝ նա գուցեց. «Երանի թէ, Եւմէոս, Արամազդ էլ քեզ այնչափ սիրէր, որչափ ես քեզ սիրեցի՝ այսքան լաւութիւնով ինձ թշուառիս սկսիելուդ համար»։

Եւմէոս պատասխանեց. «Քերկրի՞ և կեր աստուծոյ տուրքից, որ երբ կամենայ՝ տալիս է, երբ կամենայ՝ զլանում, ըստ որում ամէն բանի կարող է»։

Այս ասելով, նա զինուց աստուածներին ձօն նուիրեց և բաժակը Ողիսւսին առաջարկեց։ Երբ որ նրանք լաւ յաղեցան խորտիկներով և գինով, ծառաները սեղանի սպասը վերցրին, և ապա բոլորեքեան քնելու պատրաստուեցան։

Բայց որովհետեւ յորդ անձրև էր գալիս գրրում և հիւսիսային պաղ քամին էլ տնակի մէջ

թափանցում էր, Ողիսւս, որի հազուստը բնաւ մարմինը չէր պաշտպանում, երկիւղ կրեց, թէ գիշերը վատ կ'անցկացնէր։ Եւ սկսաւ մտածել — արդեօք ինչ պատմութեամբ կըսաջողէր հասկացնել Եւմէոսին՝ տալ իրեն մի վերարկու։ Հնարագէտը մի քանի վարլեան մտածեց և ապա թէ ալսպէս ասաց. «Լսեցէք ինձ, Եւմէոս և դուք միւս հովիւներգ. մի բան եմ ուզում պատմել, որ թելագրեց ինձ շամբուշ զինին։ Ա՛խ, երնել թէ այս օր էլ այնպէս զօրեղ լինէի, ինչպէս էլ այն ժամանակ, երբ մարտ էլնք մղում Տրոյավի գէմ։ Մի անգամ մեր քաջերը վճռեցին դարանամուտ լինելու։ Մեր պետերն էին Ողիսւս, Մենելաոս, երրորդն էլ ես էի։ Իրիկուայ գէմ թաքուն մօտեցանք քաղաքի պարսպին և գումար գալով, պահոտուեցանք ճահճալին պրտուներում։ Դժուար գիշեր վրայ հասաւ։ Հիւսիսային քամի փչեց, պաղ ձիւն եկաւ, և շատ չանցած վահաններս եղեամով և սառուցով պատուեցան։ Բոլորեքեան վերարկուներ ունէին, ուստի և վահաններով պաշտպանուած՝ հանգիստ պառկեցան զետնի վրայ, առանց նեղուելու սուր հողմից։ Միայն ես էի սաստիկ տանջվում, որովհետեւ վերարկուս բանակումն էի մոռացել։ Արդ՝ մինչ միւսները հանգիստ հանգիստ քնած էին, ես աչքս անգում չէի կարա-

նում փակել, և ժանտ ցրտից ոսկորներս սարար-
ռում էին: Վերջապէս երբ զիշերուայ երրորդ
պահն մօտեցաւ, և աստղերը խոնարհ իջնել
սկսան, ես մշտեցի Ողիսւսի արմուկից, և երբ
որ նա զարթեցաւ, ասացի. Դիւցազնդ Ողիսւս,
ահա մահս մօտեցել է, ես մեռնում եմ ժանտ
ցրտից: Զարակամ ողին դրդեց ինձ մոռնալ վե-
րարկուս վրանիս մէջ: Տես, ահա ես զոփում եմ,
և մահս մօտեցել է:—Այսպէս խօսեցի, խոկ նա,
որ թէ ռազմում, թէ ծովի վրայ միշտ վար-
պետ էր պէտքին գարման գտնելու, կամացուկ
առաց ինձ. Կ'օգնեմ քեզ, միայն լուիր, որ ոչ
ոք չկմանայ, թէ ինչդէ պակաս:—Ես խկոյն
պառկեցայ և աչքերս փակեցի, որպէս թէ
քնած էի: Իսկ նա, զլուխն արմկին կոթնելով,
այսպէս զոչեց բարձրաձայն. Ո՛վ ընկերներ, մի
զարմանահրաշ երազ տեսայ այս բոպէիս: Իմա-
ցէք, որ նաւերից շատ ու շատ ենք հեռացել:
Ուրեմն թող ձեզնից մին շտապով գնայ Ագա-
մեմնոն արքալի մօտ և ասէ, որ գորաւիզն ա-
ռաքէ մեզ:—Ողիսւս այս որ ասաց, Անդրէմո-
նեան Թոռասն տեղից թռաւ, վերարկուն դէն
ձգեց և հապճեպ վազեց դէպի բանակ՝ լուր
տանելու Ագամեմնոն արքալին: Ես էլ խկոյն
այդ վերարկուն վերցրի և վրաս ամուր առնե-
լով, բազմահնար Ողիսւսի մօտ պառկեցալ,

մինչեւ որ առաւօտեան արշալուսը երկուսիս վրայ
վիալեցաւ: Ո՞հ, ուր էր թէ հիմի էլ այնպէս
հուժկու և կորովի լինէի, ինչպէս էլ երբեմն:
Այն ժամանակ հովիւներից մին, թէ սիրուց
յորդորուելով և թէ ուժիցս ակնածելով, ան-
շուշտ կրտար ինձ իւր վերարկուն: Իսկ այժմ,
քանի որ մուրկի ձորձ եմ կրում, հարկաւ ինձ
կ'արհամարհէ ամէն մարդ»:

Եւմէսս պատասխանեց. «Դու յիրաւի մի ար-
դար բան պատմեցիր, ով ծերունի, և քանի որ
իմ հիւրն ես, մի անմիտ խօսք դուրս չըթռաւ
քո շրթունքից: Ուստի դու կ'ունենաս և' հան-
գերձներ և' ամէն բան, ինչ որ հարկ է բաժին
հանել ողոքաւոր աղքատին: Թէպէտ վազը
վերստին հին ձորձերդ կըհագնես, որովհետեւ
մենք հարուստ չենք հագուստներով և ամէն
մէկս միայն մի ձեռք շոր ունինք, բայց երբ
աստուածների օգնութեամբ տիրոջս որդին վե-
րադառնայ, —նա քեզ անշուշտ լողիկ էլ կը
տայ, պաճկոն էլ, և կ'առաքէ քեզ, ուր էլ
սիրուդ կամենայ»:

Եւմէսս հիւրի համար մի անկողին պատրաս-
տեց այծի և ոչխարի մորթերից, և երբ ծերու-
նին պառկեցաւ, ծածկեց նրան մի թաւամազ
լայն վերարկուով, որ սովոր էր ինքն հագնել,
եթէ զրսում ձմերալին հողմ փչէր:

Հոմ. Ողիս.

Թառաներն Ողիսևսի շուրջը տեղ բռնեցին,
իսկ Եւմէոս ոտքի ելաւ, որ խոզերի երամակի
մօտ գնայ: Այս երամակն քշվում էր ամէն զի-
շեր մի քարայր, որ նրանց անքոյթ ապաստանն էր
սառն հողմից: Եւմէոս ուսից կախեց սուսերը,
վրան ձգեց հաստ վերարկուն, առաւ նոյնպէս
և իւր տէդն, որ շներից պաշտպանուի, — և
այսպէս դուրս դնաց մույթ զիշերով հաւատա-
րիմ պահապանը:

4
ՏԵԼԵՄԱՔԻ ՎԵՐՍԴԱՐՁԸ

Խաժակն Աթենաս այժմ դնաց Սպարտա՝
դարձի յորդոր տալու վեհանձն Ողիսևսի քաջ
որդուն: Նա զարթուն գտաւ անկողնում Տելե-
մաքին, մինչ սա անքուն մտածում էր հօր
մասին: Դիցուհին նրան հուպ մօտեցաւ և ասաց.

«Ո՞վ Տելեմաք, լաւ չես անում որ ամիսներով
հեռու ես մնում հայրենիքից և տանից. զի հեշտ
կարող է պատահել, որ ժանտաժուտ սեղեխները
բոլոր ստացուածքդ լափեն կամ իրենց մէջ բա-
ժանեն: Վեր կաց, խնդրիր Մենելաւս արքայից
սուաքել քեզ դէպի տուն, որպէս զի պարկեշտ
մօրդ տաշտպան կանդնես: Մօրդ հայրն և եղ-
բայները նրան անդուլ հարկադրում են Եւրի-

մաքին մարդու դնալ, որ հօմանիներից ամենա-
լիրըն է: Դա երկրի ամենապերճ իշխաններից
մէկն է և ամենաճանաչ օժիտներ է առաջարկում
մօրդ հօրը: Արդ՝ որովհետեւ տիրուհին արդպէս
սաստիկ նեղուած է, աճապարիր և փութա-
օգնել նրան թէ խորհրդով, թէ զէնքով»:

«Ո՞վ Տելեմաք, այլ ևս մի բան կ'ասեմ քեզ:
Մի քանի ժպիրհ հօմանիք դարանամուտ սպա-
սում են քեզ իթակէի և ժայռաւոր Սամէի նե-
ղուցում, ուր ուզում են բռնել քեզ և սպանել:
Բայց յոյս ունիմ, որ շատերն այդ չարերից տա-
պաստ կ'ընկնին, յառաջ քան թէ կեանքիդ ա-
րևը շիջանէր: Լսիր ուրեմն, թէ ինչպէս պիտի
զգուշանաս նրանցից: Դու գիշերով միայն նա-
ւարկիր և սովորական ճանապարհից նաւդ հե-
ռու բռնելով, իթակէի հիւսիսային կողմն իջիր:
Անուհետեւ նաւաստները նաւդ քաղաք թող
վարեն, իսկ ինքդ Եւմէոս խոզապանի մօտ զը-
նա, որ քեզ սրտանց անձնուէր է: Ֆիշերը նրա
մօտ անցուր և նրան քաղաք առաքիր՝ ողջան-
դամ դարձիդ մասին լուր տանելու թագուհուն»:

Այսպէս խօսեց Տելեմաքին Աթենաս և վերա-
պացաւ Ոլիմպոս: Իսկ Տելեմաք յուզուած սրտով
տեղից ելաւ և զարթեցրեց իւր ուղեկցին՝ ծեր
նեստորի ազնիւ որդուն:

«Զարթիր, ու Պիտիստրատ», ասաց նա, «Եկ

շուտ լծենք արագաճեալ նժոյդներն և հեռանանք այս տեղից»:

Պիսիստրատ պատասխանեց. «Մտածիր, սիրելիս, որ այս խաւար զիշերով մենք կարող ենք հեշտ մոլորուիլ ճանապարհից: Ուստի սպասենք, մինչև արել ծագի: Այն ժամանակ հրաժեշտ կ'առնենք մեծափառ Մենելաւից, որ անշուշտ մեղ լաւ հիւրովի՛ կ'ընծայէ, որպէս զի իրեն սիրով լիշենք»:

Տելեմաք լրեց և անհամբեր սպասում էր ոսկեզակ արեղակի բացուելուն: Մենելաւն էլ նոյն միջոցին իւր անկողնից վեր կացաւ և սիւնապատ դաւիթը դնաց: Տելեմաք նրան որ տեսաւ, տեղից թռաւ, շտապով հագաւ իւր պանկոնն և կրկնոցը, և սենեակից դուրս դալով, այսպէս ասաց արքային.

«Թիւցադն արքայ, ով ռազմական ազգերի քաջ վեհապետ. թոյլ տուր ինձ հայրենիքըս տեսնելու, որին սիրու աձկայրեաց կարօտել է»:

Մենելաւոս նրան այսպիսի պատասխան տուաւ. «Ես չեմ կարող արգելք լինել վերադարձիդ, Տելեմաք, եթէ սիրով դէպի տուն է մղում քեզ: Արդարեւ ինձ ատելի է այն մարդը, որ չափազանց սիրելութեամբ ձանձրացնում է իւր հիւրին: Միջին սահմանն է ամէն բանի մէջ

լաւը: Միթէ հաւասար յանցաւոր չէ, ով որ բոնի դուրս է վարում իւր հիւրին և կամ բոնի մնալ է ստիպում վերադառնալ փափագողին: Իմ կարծիքով լաւն այս է՝ խնամել հիւրին սիրով, պատուով և թոյլ տալ, որ երբ կամենայ՝ հեռանայ: Սակայն, Տելեմաք, դու գեռ փոքր ինչ մնացիր այս տեղ, մինչև կանայք ճաշ պատրաստեն: Այնուհետեւ, եթէ կամենաս և՛ ուրիշ տեղ որոնել հօրդ, ես էլ սիրով հետդ կ'երթամ»:

«Ո՛չ, վեհանձն Մենելաւոս», պատասխանեց պատանին, «ես չեմ ուզում այլ ևս շրջել, և շտապում եմ դէպի տուն, ուր հայրենատուր գոյքերս անպաշտպան են մնացել»:

Մենելաւոս այս որ լրեց, նախաճաշիկ պատրաստելու հրաման տուաւ աղախիններին: Աշնուհետեւ գանդրահեր չելենէի և որդու հետ իջաւ բուրաւէտ գետնայարկը, որ զեղուն էր անբաւ գանձով: Նա ինքն ընտրեց մի երկունկանի սոկէ բաժակ, որդին ջոկեց մի արձաթէ խառնարան: Իսկ չելենէն մի զեղազարդ արկդ բաց արաւ: Երկողի մէջ ծալ ի ծալ դրուած էին թագուհու ձեռքով բանուած պէսպէս սիրուն հանդերձներ: Նա վերցրեց շատից մէկը, որ աստղի պէս փալլուն էր, և գանձարանից դուրս գալով, նորից մտաւ սրահը իւր ամուսնի և որ-

գու հետ միասին։ Այն տեղ նրանք Տելեմաքին մօտեցան, և դիւցաղն Մենելաոս նրան ասաց.

«Ո՞վ Տելեմաք, թող չերայի երկնադղորդ ամուսինն Արամաղդ յաջող դարձ պարզեցէ քեզ դէպի տուն։ Քեզ համար մենք ընտրեցինք այս հրաշակերտ համակ արծաթ և ոսկեշուրթ խառնարանն և այս ոսկէ բաժակը։ Խառնարանը չեփեստոսի ճարտար գործն է, որ մի օր նուիրել էր ինձ սիդոնացւոց Փեղիմ արքան»։

Եթ սաելով, նա երկուոն էլ տուաւ ոքանչացած պատանուն։ Կարմրայտ չելենէն էլ մօտեցաւ նրան, ոսկեփայլ դգեստը ձեռքում, և ասաց.

«Առ այս նուէրն իբրև յիշատակ իմ ձեռքից։ Երբ անձկալի հարսանիքիդ օրն որ գայ, թող քո հարսը դրան հաղնէ։ Սակայն այժմ նազելի մօրդ պահարանում թող կենայ։ Դէ ուրեմն բարով գնաս և ողջամբ համնես հայրենիք»։

Տելեմաք ուրախ սրտով ընծաներն ընդունեց։ Պիսիստրատ նրանց դուրս տարաւ և կառքի մէջ զետեղեց։

Այնուհետև Մենելաոս հիւրերին դէպի սրահ առաջնորդեց, և բոլորն էլ սպիտակափայլ սեղանի առջև բազմեցան։ Նաժիշտներից մին մի արծաթէ կոնք բերաւ և ոսկէ չքնաղ անօթից հիւրերի ձեռքին ջուր ածեց։ Յետոյ տեսակ

տեսակ կերակուրներ բերուեցան և մի սպասաւոր անոյշ գինի մատուռակեց։

Մեղանից յետ պատանիները վեր կացան և գուրս գնացին նժոյգները լծելու։ Ապա թէ երփնազարդ կառքը հեծան և յառաջ վարելով, հնչալան դաւթի միջից ծանր ծանր դուրս ելան։ Նրանց կողքից, անապական զինով լեցուն բաժակը բռնած, յառաջ էր գնում Մենելաոս՝ չուից առաջ նուէր ձօնելու աստուածներին։ Նա երիւարների հանդէպ կանգնեց, և երբ դըրանք դադար առին, ալսպէս ասաց Տելեմաքին և Պիսիստրատին։

«Ո՞ղջ եղէք, պատանիներ, և մեծ ողջոյն տարէք ինձնից աղգերի իշխան Նեստորին։ Նա ինձ արգարե իւր որդու պէս սիրում էր, երբ միասին փառաւոր մարտ էինք մղում Տրոյակի դէմ»։

«Այս, դիւցաղն Մենելաոս, ամէն բան ասածիդ պէս կըպատմենք նրան», պատասխանեց Տելեմաք։ «Ո՞հ, եթէ սիրելի հօրս էլ իժակէյսմ գանէի և կարանալի նրան սաել, թէ որքան սէր և հիւրամեծար գութ ընկալայ քեզանից։ Սակայն չէ տրուած ինձ արժանանալ այդ բախտին»։

Մինչ նրանք ալսպէս խօսում էին, յանկարծ տան մարդիկն և կանայքը բարձր կանչիւն հա-

Նեցին, և մի արծիւ վերև ճախրեց, թոցնելով
մի հատ սագ, որ բռնել էր բակի մէջ: Եւ որով-
հետև նժոյգների աջ կողմէց վերև ոլացաւ,
պատանիներն ուրախացան, կարծելով թէ բա-
րեգուշակ նշան էր: Կեստորի որդին Պիտիստ-
րատ իսկոյն ասաց.

«Ասա մեզ, ով մեծափառ դիւցազն արքայ,
մեզ համար, թէ քեզ համար ցոյց տուաւ աս-
տուած այս նշանը»:

Մինչ թագաւորը խոկալով իւր մտքի մէջ,
կշռում էր, թէ ինչ ասէր ըստ պատշաճի,
վրայ հասաւ չելենէն և այսպէս խօսեց.

«Լսեցէք ինձ, ով պատանիք, ահա կ'ասեմ,
ինչ որ ազգում են ինձ անմահ դիք: Ինչպէս
որ այդ արծիւն, լեռներից վայր սաւառնելով,
ճանկեց տարաւ մեր սագը, որ բակի մէջ ճա-
րակում էր,—այսպէս և Ողիսւս կըվերադառ-
նայ վրէժ խնդրելու իւր ստացուածքը լափող-
ներից, կամ թէ արդէն ժամանել է իթակէ,
մահ նիւթելով չարերին»:

«Ճայ Արամագդ, որ աւետիքը ճշմարտուէր»,
կրկնեց դէնից Տելեմաք: «Այն ժամանակ յաւի-
տեան աստուծոյ պէս կըպաշտէի քեզ»:

Ասաց, մտրակ տուաւ ձիերին, և կառքը սու-
րաց դէպի դաշտ: Երբ արևն վայր իջաւ և ճա-
նապարհը ստուերացաւ, պատանիները հասան

Փերա՝ Դիոկլէսի դղեակը, ուր արդէն հանդիպել
էին մի անգամ: Այն տեղ նրանք գիշերեցին և
միւս առաւօտ լուղի ընկնելով, կէս օրից առաջ
Պիւլոսի վերնաբերդը ժամանեցին, ուր իշխում
էր Պիտիստրատի նեստոր հայրը:

Այն ժամանակ Տելեմաք ասաց. «Մի խնդիր
պիտի յայտնեմ, ով սիրելի Պիտիստրատ. աղա-
ջում եմ, կատարիր: Ահա տես, ափի մօտ է իմ
նաւն, որի վրայ նաւաստներն ինձ անհամբեր
սպասում են: Դրան որ տեսայ, իսկոյն սրտիս
տուն չուելու անսանելի փափագ տիրեց: Ուստի
խնդրում եմ, կառքդ այս տեղ կանդնեցուր.
քանզի գիտեմ, արգոյ հօրդ ապարանքն եթէ
գնամ, նա ինձ շուտով չի արձակիլ իւր մօտից»:

Պիտիստրատ փոքր ինչ մտածեց, թէ ինչ
ասէր, և դէպի ծովակի մտրակեց նժոյգները:
Կառքը նաւին հասաւ թէ չէ, Տելեմաքի ըն-
կերներն ուրախ ուրախ ընդ առաջ ելան: Պի-
տիստրատ Տելեմաքի ընծաներն կառքից հանեց
և նրան յանձնելով, այսպէս ասաց.

«Աճապարիր նաւդ մտնել և հրաման տալ
նաւաստիներիդ՝ շտապով ափից հեռանալու,
մինչև որ ես տուն չեմ հասել: Քանզի գիտեմ,
եթէ հայր ինձ նշմարէ, քանի որ դուք ափի
մօտ էք, անշուշտ այս տեղ կըգայ թեթև քայ-
լով և այնպէս ուժզին կըստիպէ քեզ իւր

մօտ գնալսւ, որ չետեկիլ չես կարանալ»:
 Այս ասելով նա ձիելը քաղաք քշեց, իսկ
 Տելեմաք փութալու յորդոր կարդաց ընկերնե-
 րին: Նրանք ստիպմունքի կարօտ չէին, զի ին-
 քեանք էլ ջերմածերմ ձդտում էին հայրենիք,
 ուստի և մեծ շտապով կատարեցին, ինչ որ
 պէտք էր վաղվաղակի չուելու համար: Այդ մի-
 ջոցին Տելեմաք, նաւի խելի մօտ կանդնած,
 նուէր ձօնեց Աթենասին, աղերսելով մի յաջո-
 ղակ նաւարկութիւն շնորհել իրեն: Մինչ նա
 այսպէս աղօթում էր, վաղիվազ նրա մօտ եկաւ
 մի անծանօթ, որ Արգոսում մի մարդ սպանած
 լինելով, այն տեղից փութանակի փախել էր:
 Փախստականն մի գուշակ էր և անունն էր
 Թէոլիլիմէն: Սա պատանուն ձօնի վրայ որ տե-
 սաւ, ասաց նրան.

«Աղաջում եմ քեզ Աստուծոյ սիրուն, որին
 նուիրում ես այդ ձօնը, — ասա ինձ, ուստի ես
 և որն է ճանապարհիդ նպատակը»:

Տելեմաք պատասխանեց. «Պատրաստ եմ ա-
 սել, օտարական: Ես ծագում եմ Իթակէից, և
 եկել եմ այս կողմերն՝ Ոդխուս Հօրս որոնելու:
 Այս, նա սկ օրհասին զոհ է գնացել: Իսկ այժմ
 հայրենիք եմ վերադառնում»:

«Ես էլ եմ տարադէմ իմ հայրենի դաւառից»,
 աղաղակեց Թէոլիլիմէն: «Ես Արգոսում մարդ

սպանեցի կռուի մէջ. նա ունի բազմաթիւ աղ-
 գականներ և եղբայրներ, որոնք շատ գօրաւոր
 են. այս պատճառով ահա փախչել ստիպուեցայ:

Այժմ քեզ եծ պաղատում — տար և փրկիր ինձ
 նաւովդ, քանզի ինձ հալածում են, և եթէ
 դու չողորմիս, անշուշտ նրանք կըսպանեն ինձ»:
 «Խնդիրդ սիրով կըսպատարեմ, հաց էլ կըտամ
 ուտելու», պատասխանեց Տելեմաք:

Վերջապէս երբ ամէն պատրաստութիւնք լրա-
 ցան, Աթենաս մի յաջողակ սիւք վչեց, և սե-
 ւագող նաւի ողն, փայլուն ալիքը կտրելով, յա-
 ռաջ սահեց: Բայց Տելեմաք մտալոյզ վարանում
 էր, արդեօք ինչպէս պիտի սղթնէր ոսոխների
 դարանից:

5

ԵԽՄԷՌՍԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նոյն օրուայ երեկոյին Ոդխուս իւր պատուա-
 կան հւտըլնկալի մօտ էր նստած: Նա փորձել
 էր կամենում, թէ արդեօք մինչև երբ մտադիր
 էր հիւրընկալել իրեն Եւմէոս: Այս խորհրդով
 նա ասաց.

«Եւմէոս, ուզում եմ առաւօտեան քաղաք
 գնալ, որ այլ ես վրադ ըլծանրանամ: Ուստի
 տուր ինձ մի լաւ խորհուրդ և առաջնորդ, որ

տանէր ինձ դէպի քաղաք: Հարկաւ այն տեղ
ինձ պէտք կըլինի գունէ դուռ թափառելով,
մէկից մուրալ մի կտօր հաց, միւսից խնդրել մի
կաթիլ ջուր: Բայց վերջապէս բազմահնար Ողի-
սւսի պալատը կ'երթամ և նրա մասին գիտե-
ցածս ուշիմ կնոջը կըպատմեմ: Յետոյ հոմանի-
ների մէջ կըմտնեմ, և գուցէ ստանամ խմիչք
և մնունդ, որով այնքան հարուստ են: Դրա
փոխարէն ինչ էլ ինձնից պահանջեն, սիրով
յանձն կ'առնեմ կատարել: Ես քեզ կ'առեմ, և
լիովին կարող ես ինձ հաւատալ, որ հազիւ թէ
մի մարդ գտնես, որ ինձ նման վարժ լինէր
ծառայութեան գործերում: Ես լաւ գիտեմ կրակ
վառել, փայտ ջարդել, միս կտրատել, խորովել,
մատուռակել և կատարել ամէն բան, ինչ որ
անում են ծառաները հարուստ և շէն տներում»:

Եւմէոս լսեց նրան և դժկամակ պատաս-
խանեց.

«Այդպիսի լիմար մտքեր ո՛ր տեղից մտան գըլ-
իսիդ մէջ: Միթէ կամաւ մահ ես խնդրում, որ
ուզում ես այդ խայտառակ հոմանիների մօտ
գնալ: Զկարծես, թէ նրանց սպասառները քեզ
պէս մարդիկ լինէին: Զէ, դրանք բողբոջ դէմ-
քով և բուրաւէտ գանգուրներով պատանիք են
և միշտ զարդարուն շորերով են ման դալիս:
Ահա այդպէս են հոմանիների սեղանը հացով,

գինով բեռնաւորող ծառաները: Բայց ինչու ես
ուզում թողնել մեզ: Այս տան մէջ դու ոչ ոքի
ծանրութիւն չես՝ ոչ ինձ, ոչ էլ իմ ընկերնե-
րին: Ուրեմն մնացիր, մինչև որ վերադառնայ
իշխանիս սիրելի որդին ֆելեմաք: Նա քեզ ան-
շուշտ նոր նոր շորեր կ'ընծայէ և ուր էլ սիրադ
փափաղի, կ'առաքէ»:

Սրտանց ուրախացաւ այդ բանի վրայ Ողի-
սւս, և ասաց.

«Երնեկ թէ Արամազդ էլ քեզ այնպէս սի-
րէր, Եւմէոս, ինչպէս որ ես եմ սիրում: Աս-
տանդական թափառմունքիս միջոցին դու գթա-
բար հիւրընկալար թշուառիս, որ այնքան աղէտ
եմ քաշել: Ճշմարիտ՝ մարդուս համար մի ա-
ռաւել վատ բան չկայ, քան թէ չարքաշ թա-
փառանքը: Ի՞նչքան տանջանք միայն մի փորի
պատճառով: Բայց ըստ որում կամենում ես
դարձեալ խնամել ինձ քեզ մօտ, դէ ուրեմն եկ
պատմիր ինձ քաջ Ողիսւսի մօր մասին, նոյն-
պէս և նրա հօր մասին, որ արդէն ծերութեան
շէմքի վրայ էր, երբոր որդին ի չու ընկաւ:
Արգեօք այդ երկուսը դեռ ապրում են արե-
գակի աչքի տակ, թէ իջել են դժոխքի խա-
ւարչտին անդունդը»:

«Պատրաստ եմ սիրով պատմել, ինչ որ ու-
զում ես իմանալ», պատասխանեց Եւմէոս: «Այս,

գեռ Հայերտէս՝ դիցատիպ Աղիսևսի արդոյ հայրը
կենդանի է. բայց վայ նրա վարած կեանքին:
Նա հանապազ աղերսում է, որ Արամազդ նրա
հէք հոգին մի ժամ առաջ մարմնից լուծէ, ո-
րովհետև անմխիթար վշտացած է իւր դիցա-
տիպ որդու առթիւ, որ այլ ևս չփերագարձաւ
նրա մօտ: Նա ողբում է և ամուսնին, որ ար-
դէն վաղուց վախճանել է որդու համար քաշած
վշտից: Ո՞հ, այդպիսի մահ չէի ցանկալ գէթ-
մի օր ինձ գութ շնորհողին: Քանի որ նա կեն-
դանի էր, սիրում էի մօտը դնալ, թէպէտ և
տրտում էր: Ես նրան սրտանց անձնուէր էի,
ըստ որում սնուցել էր ինձ իւր Կվիմենէ դստեր
հետ և սիրում էր իւր հարազատ զաւակի պէս:
Երբ երկուսս հասակ առինք, աղջիկը Սամէ
մարդու գնաց անբաւ օժտով: Իսկ ես ստացայ
շքեղ շորեր և կօշիկներ և այս տեղ առաքուե-
ցայ, որ աղարակը կառավարեմ: Ալս, ինչպէս
թանգ էր ինձ նրա մէրը: Ես այն օրից այս
տեղ եմ, և աստուածները գործու օրհնում են,
քանզի ահա փորս կուշտ է, մի կտոր հաց էլ
միշտ կայ մօտս արժանաւոր հիւրի համար:
Այժմեայ տիրուհիս, իմ տիրոջ աղնիւ կինը,
հնար չունի ոչ խօսքով, ոչ էլ գործով օգնելու
ինձ այն ժամից ի վեր, երբ իւր տան վրայ ու
օր իջաւ լիրը հոմանիների չարութեամբ»:

Աղիսև ասաց. «Ա՛յ խեղճուկ, դու ուրեմն
գեռ մանմուկ անջատուեցար քո հայրենի աշ-
խարհից: Սակայն պատմիր—արդեօք ծննդեան
քաղաքդ պատերազմով քանդուեցաւ և դու
գերի վարուեցար, թէ արդեօք նաւով շըջող
չար մարդիկը հափափեցին քեզ յանկարծ, մինչ
հովում էիր հօրդ խաշլինքը»:

«Սիրելի հիւր», կրկնեց նրան Եւմէսս, «որով-
հետև ուզում ես այդ մասին էլ բան իմանալ,
ուրեմն լրիկ մնջիկ ականջ դիր և բաժակիցդ
անոյշ արա: Այժմ գիշերները ծալը չունին, և
շատ ժամանակ կըմնայ մեզ թէ ննջելու և թէ
իրար պէսպէս բաներ պատմելու: Սովորական
ժամից առաջ դու անկողին մի մտնիր, երկար
քունը վնասակար է: Իսկ եթէ ձեզնից մէկը,
ով ծառաներ, այժմ հանդչիլ կամենալ, թող
գուրս գնայ. բայց առաւօտը բացուելուն պէս
էլ՝ վեր կենայ, նախաճաշէ և երամակն ան-
տառ քշէ: Մենք երկուսս գեռ փոքր ինչ գինի
կըխմենք, բան կ'ուտենք և մեր ցաւերը պատ-
մելով, հոգիներս կըսփոփենք: Անցած գնայած
աղեաները մարդ սիրով է յիշատակում:—Սիւրէ
անուն մի կղզի կայ, որ դու գուցէ ճանաչում
ես: Ճատ մարդաբնակ չէ այդ կղզին, բայց ար-
ջառներով հարուստ է, արդաւանդ է և գինեկտ:
Մարդիկ այնտեղ սով ասածդ չղիտեն, ոչ էլ

դաժան ցաւեր ունին, հապա անհող ապրում են և հէնց որ ծերութիւնը գալիս է, հանդիստ մահավ հեռանում են այս աշխարհից: Եւ այդ երկրի թագաւորն էր իմ զիցանման Կտեսիոսը: Մի անդամ մեղ մօտ եկան փիւնիկեցի վաճառականներ, այն խաբեքայ աւազակներն, որոնք նաւերով պէսպէս սնոտիք են տարուբերում: Խոկ մեր տան մէջ այս ժամանակ դտանվում էր փիւնիկեցի մի աղախին: Նա հասակով և դէմքով մի գեղեցիկ կինարմատ էր: Երբ նա մի օր նաւի մօտ լուացք էր անում, նրան մօտեցաւ իրեն ազգակից մի անցորդ և հարցրեց, ով էր նա և ուստի: Նա էլ ասաց. Ես ծագում եմ պղնձաւէտ Սիդոնից և հարուստ Արիւբասի աղջիկն եմ: Ֆովային յելուզակներն ինձ գողացան, այս տեղ բերին և այս կղզու թագաւորին վաճառեցին: — Պարդն ասաց. Զէիր կամենալ հայրենիքդ վերադառնալ, ուր հայրդ և մայրդ դեռ ապրում են, և զիտեմ: շատ հարուստ են: — Աղջիկն ասաց, թէ պատրաստ էր վերադառնալ, եթէ իրեն երդում տային՝ ողջամբ տուն հասցնելու: Երբ նրանք խկոյն երդում տուին, աղջիկն ասաց. Այժմ լսեցէք, թէ ինչ ունիք անելու: Թող ոչ ոք ձեզնից ինձ հետ չը խօսէ, ուր էլ հանդիպէր՝ փողոցի վրայ կամ աղբիւրի մօտ, որ տեղից չուր եմ բերում: Պատճառ հեշտ

կարող է պատահել, որ մէկն ու մէկը լուր տանէ իմ իշխանին, և ես չարակասկած երևնամ նրան: Այն ժամանակ նա ինձ չուանով կը պրկէ, ձեր գլխին էլ, ով զիտէ, ինչ վատ փորձանք կըբերէ: Ուստի մեր այս դաւը սրտերիդ մէջ թաքցրէք և նաւը ճամբու պաշարով լքցնելու փութացէք: Այդ որ անէք, թող ձեղնից մին պալատ գալ և ինձ նշանով իմաց տայ: Ես ինչքան ոսկի ձեռքս ընկնի՛ հետո կ'առնեմ և իբրև նաւարկութեանս վարձի գին մի ուրիշ բան էլ հետո կըբերեմ — թագաւորի սիրուն որդուն: Նա յանձնուած է իմ խնամքին, և ուր էլ գնամ հետո սիրով գալիս է: Ճատ ուշիմ է և բարեմոյն, և ձեզ մի լաւ գումար շահել կըտայ, եթէ ուրիշ տեղ վաճառէք նրան: — Այդ չարանենգ մարդիկն երկար ժամանակ մեղ մօտ մընացին և ձեռք բերուած ապրանքով նաւը լքցրըն: Վերադարձի ժամանակն որ հասաւ, մի աղդարար առաքեցին հօրո մօտ: Այդ խորամանկ աղդարարը հետն բերաւ մի ոսկեհուռ պերճ մանեակ, որ սաթով էր ընդելուզուած: Մինչ գեռ մայրս և նաժիշտները զարդն զննելու վրայ էին, մարդը թագուն նշան տուաւ աղախին և ինքն վագեց գէպի նաւ: Խոկ աղախինը ձեռիցս բռնեց և դուրս տարաւ: Գուրսը, զաւթում, ոսկէ թասեր կային դրուած սեղանի չոմ. Ողիս.

վրայ: Այդ թասերը հանուած էին աղնուական հիւրերի համար, որոնք նոր էին ժողով գնացել հօրս հետ: Թասերից երեքն աղջիկը թաքուն ծոցը դրաւ, յետոյ շտապով դուրս գնաց, լիմարաբար ես էլ հետը գնացի: Արևն որ մայր մըտաւ, նաւ բարձրացանք, և դա խսկոյն յաջող հողմով ի բաց չուեց: Նաւարկութեան եօթներորդ օրն յանկարծ աղջկան մահ դիպաւ, և նրա դիմակն ալիքների մէջ դլորեցին՝ ծովալին հրէշներին և ձկներին կերակուր: Ճատ չանցած քամին այս ամիս մօտ բերաւ մեզ, և այս տեղ ես Լայերտէսին վաճառուեցայ: Ահա այսպէս ընկայ իմժակէ»:

«Ճշմարիտ, պատմութեամբ խոր յուզեցիր կրծքիս մէջ իմ սիրտը», ասաց դիւցազն Ոդիսես: «Արդէն մանուկ հասակիցդ շատ տառապանք ես քաշած եղել: Բայց Արամազդ չարիքի հետ՝ բարիք էլ է շնորհել քեզ: Քանզի ահա եկել ես մի այնպիսի տիրոջ մօտ, որ գթութեամբ խընամել է քեզ և հոգ տարել, որ անկարոտ կեանք վարէիր: Սակայն եղուկ ինձ թշուառիս: Քանի քանի մարդաբնակ քաղաքներ թափառեցայ, մինչեւ որ այս տեղ հասայ, և դարձեալ ինձ անյատ է, թէ ինչ կըլինի վիճակս»:

Այժմ երկուսն էլ քնելու պառկեցան: Բայց

քունն երկար չտևեց, որովհետեւ ոսկեգահիկ առաւոտն արդէն մօտ էր:

6

ՏԵԼԵՄԱՔ ԺԱՄԱՆՈՒՄ Է ԻԹԱԿԻ

Տելեմաք յաջողութեամբ կատարեց վտանգաւոր նաւարկութիւնն, և երբ լուսափայլ արեգակն երկնքի վրայ բարձրացաւ, նա էլ ընկերներով իթակէի ծովեգերքին մօտեցաւ: Նրանք մտան մի նաւակայք, խարիսխ ձգեցին, ցամաք իջան և նախաճաշ պատրաստեցին: Բոլորն էլ հացով, գինով որ յագեցան, Տելեմաք ասաց. «Այժմ դուք նաւը դէպի քաղաք վարեցէք, խոկ ես կ'երթամ ազարակ՝ հովիւներին տեսնելու: Երեկոյեան ես էլ քաղաք կըմտնեմ և վաղն իմ տան մէջ լաւ ճաշ կըտամ ամենքիդ:

Թէսկլիւմէն գուշակը, որ Տելեմաքի հետ էր եկել Պիւլոսից, ասաց նրան. «Իսկ ես հապանուր գնամ, սիրելի որդեակ: Ո՛վ կ'ընդունէ ինձ իւր տան մէջ: Արդեօք արգոյ մօրդ մօտ գնամ»:

Տելեմաք պատասխանեց. «Եթէ հանգամանքներդ ուրիշ լինէին, քան որ են, ես քեզ անշուշտ կըստիպէի ինձ մօտ իշնել, և դու սիրալիր ինամք կըստանալիր տանս մէջ: Սակայն այժմ այն տեղ գնալը լաւ չի լինուի քեզ հա-

մար: Ես միայն երեկոյեան տուն կըհասնեմ, և դու մօրս տեսնել չես կարանալ: Նա սակաւ է հոմանիների մօտ վայր իջնում և զրեթէ միշտ վերի յարկումն է նստած, արուեստական պատմուճաններ հիւսելով: Բայց ես քեզ մի ուրիշ մեծասուն մարդ կ'անուանեմ: Դա է Եւրիմաքոս, որ բոլորից շատ հետամուռ է՝ մօրս իրեն կին առնելու: Եթէ այս գործը նրան յաջողի, նա կըդառնալ Իթակէի թագաւոր: Ատկայն եթերաբնակն Արամազդ միայն գիտէ, թէ արդեօք հարսանիք է սպասում նրան, թէ չար օրհան»:

Տելեմաքի խօսքը դեռ բերանումն էր, որ աջ կողմից մի բազէ վերև թռաւ: Բազէն ճանկում բռնած ունէր մի աղաւնի և փետում էր փետուրներն, որոնք ընկնում էին գետնի վրայ Տելեմաքի և նաւի միջև:

Թէովիլիմէն այս որ տեսաւ, պատանու ձեռքից բռնեց և մեկուսի տանելով, ասաց նրան. «Առանց աստուծոյ կամքի չէր, որ աջ կողմից թռաւ բազէն: Երբէք Իթակէյում չխպիտի իշխէ մի ուրիշ զարժ, քան թէ ձերը. դուք միշտ կը մնաք գերիշխան»:

«Ճայ աստուած, որ ասածդ կատարուի, օտարական», պատասխանեց Տելեմաք: Յետոյ ընկերներից մէկին կանչեց և ասաց. «Մտերիմդ իմ, Պէլրէոս, որ բոլոր ընկերներից

առաւել շնորհարար ես, եկ այս հիւրին քեզ հետ տար և տանդ մէջ մեծարիր, մինչև որ ես վերադառնամ»:

Պէլրէոս սիրով յանձն առաւ:

Իսկ Տելեմաք իւր պղնձակուռ նիզակը նաւից վերցրեց և ողորապտոյտ ճանապարհով ափից շուտ շուտ հեռացաւ: Այսուհետեւ նուաստներն էլ դէպի քաղաք նաւեցին:

7

ՏԵԼԵՄԱՔ ԵՒ ԵՒՄԷՈՍ

Եւմէոս հովիւներին արձակեց, որ խոզերամակն անտառ քշեն. յետոյ կրակ վառեց և ճաշ պատրաստեց հիւրի համար: Մինչ նրանք միասին ճաշում էին, Տելեմաք Եւմէոսի տնակին հասաւ: Ճները նրան տեսնելիս չըհաջեցին, այլ ընդ առաջ վագեցին և ուրախ ուրախ սկսան քծնիլ նրա շուրջը: Ողիսես դրան առջև ոտքերի ձայն որ լսեց, ասաց. «Երեկի թէ, Եւմէոս, մի բարեկամ է գալիս քեզ մօտ կամ մի ուրիշ ծանօթ մարդ, որովհետեւ ոտքերի տրոփիւն եմ լսում, մինչ շները լուսում են»:

Ճինց որ նա այս խօսքն ասաց, Տելեմաք շէմքի վրայ ոտք դրաւ: Եւմէոս ցնծութեան ձայն հանելով, վերև ցատկեց, և ձեռքում բռ-

Նած անօթը յանկարծակի վայր ընկաւ: Կա
տիրոջ հանդէպ վազեց, նրան փարուեցաւ, ճա-
կատը, սիրուն աչքերն և ձեռքերը համբուրեց,
և այնպէս սաստիկ լաց եղաւ, որ արտասուքն
հեղեղի պէս ուռոգեցին այտերը: Կա բերկրում
էր, որպէս սովոր է բերկրի մի հայր, երբ եր-
կար և վտանգաւոր ճանապարհից անակընկալ
յետ է գալիս իւր որդին: «Դու ես այս, Տելե-
մաք, դու աչքիս լոյս», դոչում էր նա: «Ո՞հ, ես
յոյսս արդէն կորցրել էի՞ քեզ միւս անգամ տես-
նելու: Բայց եկ, սիրելի, բոլորովին ներս մտիր,
որ աչքերս սիրուն տեսքովդ պարարուին: Ա-
ռանց այն էլ սակաւ էիր մեղ մօտ գալիս և
մնում էիր քաղաքում հոմանիների պատճառով,
որոնց զաղիր արարքը քաջ դիտէիր»:

«Հայրիկ, այդպէս մի խօսիր», պատասխանեց
Տելեմաք: «Ահա քեզ համար եմ այս տեղ եկել,
որ աչքովս տեսնեմ քեզ և իմանամ - մարս
արդեօք դեռ մեր տանն է, թէ արդէն տեղի
է տուել հոմանիներից մէկի ճնշման, և մեր
տունն ամայի է մնացել»:

Եւմէոս ասաց. «Միամիտ կաց. ուշիմ Պենե-
լոպէն տակաւին տանդ մէջ է, իւր ամուսնուն
սպասելով, և վշտամբեր լաց է լինում զիշեր
ցերեկ»:

Այս ասելով, Տելեմաքի ձեռքից առաւ պղըն-

ձակուռ նիզակը, և Տելեմաք շէմքի վրայից
ներս մտաւ: Ողիսես, որ սրտամբովի հրճուանքից
պատրաստ էր իսկոյն զրկել և կրծքին սեղմել
իւր նազելի որդեկին, զսպեց իրեն և վեր կա-
ցաւ, որպէս թէ պատիւ տալու աղնուական
պատանուն: Բայց Տելեմաք նրան բռնեց և ա-
սաց. «Նստիր, նստիր, օտարական: Ի՞նձ համար
էլ Եւմէոս անշուշտ կրճարէ նստելու տեղ մեր
զիւղական տնակում»:

Իսկոյն գետնի վրայ դալար ոստեր ձգեց Եւ-
մէոս և վրայից մի ոչխարի մորթ փռեց: Այդ
տեղ նստաւ Տելեմաք:

Այժմ Եւմէոս կերակուր բերաւ հիւրի համար,
անոյշ զինի մատուակեց և ինքն էլ նստաւ
Ողիսեսի դէմուղէմ:

Երբ երեքն էլ կշտացան, Տելեմաք այսպէս
ասաց խոզապանին. «Հայրիկ, ասա ինձ այժմ —
ուստի է մեր այս հիւրն և ինչպէս է այս տեղ
եկել»:

«Սիրով կ'ասեմ», պատասխանեց Եւմէոս: «Դա
ինձ ասաց, թէ գալիս է Կրէտէից և շատ տե-
ղեր աստանգական թափառել է: Վերջապէս
փախչելով թեսպրոտական մի նաւից, որ մօտե-
ցել էր մեր կղզուն, հիւր է գալիս իմ փարախը:
Այժմ քեզ եմ յանձնում այս մարդուն. ի՞նչպէս կ'ու-
գես, այնպէս արա, պատճառ քեզ է ապաւինել»:

«Ո՞հ, ո՞րչափ սիրտս կեղեքում ես խօսքերովդր, ով Եւմէսս», կրկնեց նրան Տելեմաք: «Ինքդ ասա — այժմ ինպէս պատոպարեմ պալատումս այս հիւրին: Ինքդ գիտես, որ անզօր եմ դէմ դնելու այն լրբերին, որոնք անշուշտ պիտի նեղեն օտարական ծերունուն: Նաև մայրս այժմ ծըփծըփում է վարանքի մէջ, թէ արդեօք իւր ամուսնուն լիշերով տանը մնայ և լաւ անունը մեր ազգի մէջ պահպանէ, թէ սեղեխների չար ստիպմունքին զիջաներով, ամենաճռին թեկնածուին տայ իւր աջը: Միթէ կարող եմ այս դրութեան մէջ մի օտար մարդ հիւրասիրել: Այսու հանգերձ պատրաստ եմ ընծափել դրան պերճ գգեստներ, սիրուն սուսեր և կօշիկներ, և առաքել՝ ուր էլ սիրտը կամենայ: Եթէ ուզենաս — պահիր դրան հիւղիդ մէջ: Իսկ ես կուզարկեմ պէսպէս շորեր և ամէն տեսալ կերակուր, որ դա քեզ բեռն չլինի: Խորհուրդ չէի տալ ծերունուն՝ հոմանիների աչքին երկնալ, որոնք անզուսպ լրբութեամբ շուայտում են տանս մէջ: Զի եթէ այն ժամերհները ծերին զրկանք հասցնեն, ես կարեվէր կըփշտանամ: Բայց ինչ կարող եմ զօրել նրանց դէմ: Նրանք այնքան բաղմաթիւ են, որ ամենահուժկու մարդն անզամ չէր կարանալ նրանց ընկճել»:

Այժմ համբերատարն Ոգիսկս սկսաւ խօսել և

ասաց. «Ո՞վ սիրելի, եթէ ինձ էլ իրաւունք տաս բան խօսել, ապա կ'ասեմ. լիրաւի սիրտս ալրկում, տապակվում է, երբ լսում եմ այն ժանտերի գործերն, որ գործում են տանդ մէջ, ուր դու ես բուն իշխանը: Սակայն, որդեակ, ասա ինձ, — կամա՞ւ ես տեղի տալիս այդ բըռնութեան, թէ ազդդ քեզ թշնամի՞ է աստուածների պատգամով և չէ ուզում քեզ օդնել, թէ ունիս եղբայրներ, որոնց աջակցութեան չես վստահում, եթէ զէնքի դիմէիր: Ահ, եթէ այս ուազմական եռանդիս հետ առոյդ հասակ էլ ունենալի, կամ անպարսաւ Ոգիսկսի որդին լինէի, ես սուր սուսերով գլուխս կտրել կրտափ, եթէ բռնի չըմխուէի պալատի մէջ և այն լըրբերին չարդ ու կոտոր չանէի: Եւ եթէ ես, մէնակ մարդս, պարտուէի էլ բազմութիւնից, գոնէ լաւ կըլինէր ինձ մարտնչելով տանս մէջ մեռնել, քան թէ տեսնել նրանց խալտառակ գործերն և հանդուրժել, որ վշտացնէին օտար հիւրերին և յարկիս տակ հարբած հարբած քաշկըտէին աղախիններին, սպառէին գոլքելս»:

Տելեմաք պատասխանեց. «Այժմ ամէն բան կըմերկանամ քեզ ճշմարտապէս: Ոչ ազգս է ինձ թշնամի, ոչ էլ տրտունջ ունիմ եղբայրներից, որոնք զօրավիզն են մեղ կրուի մէջ, քանզի Արամազդ մեր հետը պահպանում է միշտ միա-

ծին որդիներով։ Լայերտէս Արկէյսլոսի միակ որդին էր, Ողիսևս էլ Լայերտէսի միակ որդին էր, ինչպէս և ես հօրս միածին զաւակն եմ։ Արդ մէնակս ինչպէս կռուիմ այս բազմաթիւ սեղեխների հակառակ, որոնք ցեցի պէս ըոյն են դրել տանս մէջ։ Ինձ թշնամի են իթակէի իշխանները, նաև շրջակայ Թուլիքոս, Սամէ և Զակինթէ կղզիների մեծերը. դրանք ըոլորն էլ մօրս աջին թեկնածու են և իմ տունը քանդում են։ Բայց մայս, գժոխըմբեր վարանքի մէջ տատանուելով, ոչ մերժել է կարանում նրանց ատելի նշանտուքը, ոչ ընդունել։ Իսկ նրանք ցած կերպով գոյքերս ուտում են և անշուշտ մի օր գլուխս էլ կ'ուտեն, եթէ աստուածների կաճառում ուրիշ վճիռ դրուած ըլլինի իմ մասին»։

Տելեմաք, Եւմէոսին դառնալով շարունակեց. «Հայրիկ, ծածուկ գնա մօրս մօտ և աւետիս տուր, որ ես ողջամբ լետ եմ եկել Պիւլոսից։ Բայց զգոյշ եղիր, որ հոմանիներից և ոչ մին այդ չիմանայ, պատճառ նրանք ծարաւի են արեանս։ Հէնց որ այս լուրն մօրս յայտնես, ինքդ իսկոյն վերադարձիր. ես այս տեղ կըմնամ և տնակդ կըստահպաննեմ»։

«Բարի է», պատասխանեց Եւմէոս։ «Բայց ասա ինձ, արդեօք Լայերտին էլ դալուդ մասին լուր

տանեմ։ Առանց այն էլ նա չափազանց վիշտ կրեց Ողիսևսի պատճառով. բայց երբ որ դու էլ նրանից հեռացար, խեղճն իսպառ վհատեցաւ։ Այժմ նա գիշեր ցերեկ հառաջելով և հեծելով նստած է, մարմինը ըոլորովին ծիւրուել է, ոսկորները ցամաքել են»։

«Ի՞նչքան էլ ցաւէի այդ բանի վրայ», յարեց Տելեմաք, «այսու հանդերձ այս օր էլ անկարող եմ միսիթարել ծերունուն։ Բայց դու գնա մօրս ասա, որ նախշի բերանով իմացնէ նորան վերադարձս»։

Եւմէոս իսկոյն ներբաններ կապեց ոտքերին, զաւազանն առաւ և դուրս ելաւ տնակից։

8

ՈՐԻՍԵԼՍ ԲԱՅՎՈՒՄ Է ՈՐԴՈՒՆ

Մինչ Եւմէոս թեթև քայլով հեռանում էր, Աթենաս դիցուհին մի շնորհաշուք կոյսի դէմքով մօտենում էր տնակին։ Տելեմաք, մէջքը մուտքին դարձած լինելով, ընկատեց, որ լուսագեղ դիցուհին բակից հեղիկ անցնում էր, բայց Ողիսևս տեսաւ նրան։ Ճները չըհաշեցին, այլ փախան և ատամները կցըելով, պահուեցան։

Աթենաս աչքով արաւ Ողիսևսին։ Սա իս-

կոյն ոտքի կանգնեց և դուրս ելաւ: Այն ժամանակ դիցուհին ասաց նրան. «Պտահարուսադ Ողիսես, յայտնուիր այժմ ազնիւ որդուդ և խորհուրդ տեսէք, թէ ինչպէս պիտի քաղաք դնաք՝ սեղեխներին կործանելու: Այն տեղ ես ձեզ նիշակակից կըլինիմ, քանզի սիրտս դէպի ռազմ է մզում ինձ»:

Այսպէս խօսեց Աթենաս և ոսկէ գաւազանով Ողիսեւին շօշափեց: Մի վայրկենում դրա մարմինն ուղղուեցաւ, դէմքն աշխոյժ ստացաւ: Աչքերն հրով վառուեցան, ծնօտները կապուտ հերքով պճնեցան և գլխի վրայ թուխ դանդուրներ փայլեցան: Ամբողջ իրանն էլ նոյն պերճ զգեստով զարդարուեցաւ, որ հաղած էր իթակէ ժամանելիս:

Դիցուհին անյալտացաւ, իսկ Ողիսես ներս մտաւ: Նրան տեսնելիս շուարած մնաց պատանին և իսկոյն աչքերն ուրիշ կողմ դարձեց, վարանելով, թէ երեցողն աստուած էր: Բայց և այնպէս ձայն հանեց և ասաց. «Օտարական, այս ինչպէս յանկարծակի փոխուեցար: Ճորերդ բոլորովին ուրիշ են, մարմինդ էլ իսպառ ուրիշ: Անշուշտ Ոլիմպաբնակ աստուածներից մէկն ես դու: Եթէ այդպէս է, ողորմիր մեզ, խնալիր մեզ և հաճիր ընդունել մեր զոհերն, որ պատրաստ ենք ընծալել քեզ»:

Ողիսես պատասխանեց. «Ես աստուած չեմ,

և ինչու ես ինձ աստուածների նմանեցնում:

Ոչ, Տելեմաք, իմայիր—հայրդ եմ ես, որի համար այնքան ցաւ և տառապանք կըեցիր»:

Ողիսես այս որ ասայ՝ աչքերից հեղեղի պէս հոսեցին արտասուքը, որ մինչև այժմ արիաբար զսպել էր, նա գրկեց որդուն և համբուրել սկսաւ:

Տելեմաք ապշած նայում էր լայողի վրայ և չը կարանում հաւատալ, որ դա իւր հայրը լինէր: Ուստի ասաց. «Անհարին է, որ դու հայրս լինէիր. այլ անշուշտ տեսնում եմ մի չար ողի, որ եկել է ինձ տանջելու: Մահկանացու մի արարած միթէ կարող է յանկարծ այդպէս այլակերպուիլ: Այս ըովէիս դու մի թշուառ ծերուկ էիր, իսկ այժմ երանաւէտ աստուծոյ ես նմանում»:

Ողիսես նրան պատասխանեց. «Սիրուն որդեակ, մի ապշիր, մի էլ անչափ զարմանար:

Էլ ուրիշ Ողիսես չկայ, որ քեզ մօտ վերադառնար, ինչքան էլ սպասէիր: Քանզի ես եմ քեզ աշխարհ բերել, ես եմ հայրդ, որ քսան տարի չարքաշութեամբ թափառած՝ ահաւասիկ յետ եմ գալիս: Եթե աչքիդ ուրիշ պատկերով երեցալ, —այդ մեծազօր Աթենասի հրաշքն էր, որի համար ոչինչ բան է ըստ հաճովից տգե-

դացնել կամ փառազարդել մահկանացուին»:

Այսպէս խօսելով նրանք նստան: Այլ ևս չհամբերեց Տելեմաք, փարուեցաւ հօր զգին և ջերմաջերմ լաց եղաւ: Ողիսես համբուրում էր սիրուն որդուն, սեղմում էր նրան իւր կրծքին, և երկուքն էլ բարձրաձայն կոծում էին: Ո՛հ, նրանք առաւել թունդ ճիշ էին հանում, քան թէ բազէն և սրամագիլ արծիւր, որոնց բնից դողացել էին նորափետուր ձագուկները:

Երբ երկուքն էլ ողբով լացով յագեցան, Տելեմաք ասաց: «Ալիքի հայր, ասա այժմ, ի՞նչ նաւով այս տեղ հասար»:

«Թովագնաց վիշակեցւոց նաւով հասալ», պատասխանեց Ողիսես: «Նրանք փառաւոր ընծաներ էլ տուին ինձ—առատ պղինձ, աղնիւ ոսկի և զգեստներ. այս բոլորը յաւէրք հարսանց քարայրի մէջ պահեցի: Իսկ Եւմէոսի մօտ քայլերս ուղեց աստուածուհին Աթենաս, որպէս զի հոմանիներին սպանելու համար քեզ հետ միասին խորհուրդ տեսնեմ: Արդ Տելեմաք, ասա իսկոյն, ովքեր են այդ հոմանիներն և քանի են թուով: Եւ արի կշռենք, թէ արդեօք մենք երկուսս կարող կըլինինք նրանց դէմ կոռւել, թէ պէտք կըլինի օգնականներ որոնել»:

«Հայրիկ», պատասխանեց քաջուշիմն Տելեմաք, «ամէն ժամանակ լսել եմ, որ դու հզօր

մարտնչող ես և խորհրդով իմաստուն, բայց այժմ մի այնպիսի բան ասացիր, որ ինձ խսպառ զարմացրեց: Մենք երկուսս միթէ կարմղ ենք այն սպառագէն բազմութեան դէմ մարտնչել: Նրանք տասն հողի, քսան հոդի չեն, այլ շատ առաւել բազմաթիւ: Բայց եկ հաշուեմ քեզ նրանց թիւլ. Դուլոքիոնից կան լիսուներկու այրընտիր քաջ պատանիք, որոնք վեց էլ ծառայ ունին. Սամէից եկած են քսանչորս առողդ պատանի, վերջապէս նրանց հետ են և տասներկու իթալիեցի աւագներ: Նրանց մօտ են և մի քանի ուրիշ մարդիկ—Աթեոն քարոզն, աստուածալին Փեմիս երդիչն և երկու սպասաւորներ: Տես, այսքան զօրաւոր են սոսիներն, և եթէ մենք մարտ սկսենք, վախճանը մեզ համար վատ կըլինի: Ուստի արի մտածենք, թէ ով կըլինի մեզ նիզակակից»:

«Լոիր, ուրեմն, ով Տելեմաք», ասաց այժմ Ողիսես: «Արդեօք վեհն Արամազդ և Աթենաս հերիք չեն մեզ կոռւի մէջ, թէ պէտք է մեզ ուրիշ թիւկունք էլ որոնել»:

«Յիշատակած պաշտպաններդ ամենազօր են», պատասխանեց Տելեմաք: «Բարձրագահ նստած են դրանք ամպերի մէջ, իշխելով թէ աստուածների, թէ երկրածին մարդկանց վրայ»:

Այժմ Ողիսես այսպէս խօսեց. «Հաւատա ինձ,

որդեակ իմ, որ դրանք զօրավիգն կըլինին մեղ սեղեիների հակառակ: Սակայն արշալոյսը բացուելուն պէս՝ քաղաք շտափիր և մեր պալատը դնալով, այդ դոռոգների մէջ մտիր: Իսկ ինձ Եւմէոս դէպի քաղաք կ'առաջնորդէ, և ես նորից մի մուրկի տիպ կըստանամ: Այնուհետեւ երբ դու տեսնես, որ հոմանիներն ինձ նախատում են, մի մատնիր քեզ ոչ խօսքերով, ոչ շարժմունքով, այլ սրտապինդ համբերիր, մինչև որ հատուցման ժամը հասնի: Այս, եթէ անդամ ոտքերից քարշելով՝ կամենան ինձ դուրս ձգել, դարձեալ դու մի խռովիր և հանդարտ կաց: Այնպէս խօսիր նրանց անիրաւ գործի դէմ, ինչպէս որ կըխօսէիր, եթէ տանդ մէջ մի ուրիշ պանդուխտ անարգուէր: Գլտեմ, նրանք չեն լսիլ քեզ, որովհետև նրանց օրհասը մօտեցել է: Այլ ես մի բան կ'ասեմ—չը մոռանամ: Հէնց որ Աթենաս պատուիրէ ինձ, ես քեզ դլխով նշան կ'անեմ: Դու էլ իսկոյն կը վերցնես սրահում եղած դէնքերն և վերնատանը կըթաքցնես: Հոմանիներն այդ որ նկատեն և քեզ հարցնեն, անոյշ խօսքով նրանց կըխաբես և կ'ասես. Զէնքերը ծխից հանեցի, որովհետև բոլորովին մընառուել էին և էլ չէին նմանում այն զէնքերին, որ թողել էր Ողիսես չու ընկնելիս: Ֆխի մուրից նրանց փայլը միանգայն

շիջել էր և անշուք բան էին դարձել: Հեռացնելում մի պատճառն էլ այս էր, որ դուք հարբած վիճելիս իրար դէմ զէնք չվերցնէք—երկաթը հօ քաշում է այր մարդուն:—Այս խօսքերը կ'ասես նրանց, Տելեմաք: Իսկ մեղ համար սրահում կըթողնես երկու սուսեր, երկու նիզակ և երկու կաշիպատ հաստ վահան: Եթէ իրաւ իմ որդին ես, և երակներիդ մէջ մեր քաջ զարմի արխւնն է հոսում, ասկա ուրեմն ինձ կը լսես և ոչ ոքի չես մատնիլ վերադարձ: Ոչ ոք թող չիմանայ, որ Ողիսես այս տեղ է,—ոչ Եւմէոս, ոչ Լայերտէս, ոչ էլ անգամ արգոյ մայրդ: Նախ և առաջ ես ուղում եմ փորձել մեր տան նաժիշտներին, ծառաներին և սոուգել՝ արդեօք մվ է ինձ անձնուէր մնացել և արդեօք մվ—կնոջս և քեզ ընծալելի յարդն ուրացել»:

Տելեմաք ուիսեց հօր ուղածի պէս վարուել:

9

Մինչ հայրն և որդին այսպէս խօսում էին, Տելեմաքին բերող նաւը քաղաք հասաւ: Նաւաստներն լսկոյն նրան ցամաք քաշեցին և միշից Տելեմաքի պարզեները հանելով, Կլիւտիոսի Հոմ. Ողիս.

տունը տարան։ Մի քարող էլ տրտմազգեաց Պե-նելոպէին դրկեցին՝ աւետելու, որ Տելեմաք ար-դէն ողջամբ յետ էր եկել և մնում էր ազարա-կում։ Նաւաստները մտածում էին, թէ մայրը շատ կը քաշարուէր, եթէ ուրիշ մարդ յայտնէր նրան որդու գալն՝ առանց մի ստոյդ բան ա-սելու դրա մասին։

Բայց այնպէս պատահեցաւ, որ քարողն և Եւմէոս, իրար հանդիպելով, միասին մտան դի-ցատիպ Ոդիսեսի պալատը։

Քարողն այսպէս ասաց բարձր ձայնով վեհ թագուհու և նաժիշտների դէմ յանդիման։ «Ո՞վ դշխոյ, որդիդ ողջամբ վերադարձել է»։ Բայց Եւմէոս ջոկ մօտեցաւ թագուհուն և զաղտարար յայտնեց նրան Տելեմաքի պատուէրը։ Այնուհետև դուրս ելաւ ապարանքից և աճապարեց ազարակ։

Սակայն ոմանք նաժիշտներից իսկոյն հոմա-նիների մօտ գնացին և քարոզի բերած լուրը հաղորդեցին։ Հոմանիները շուարած և զայրացած դաւիթ իջան և պարսպի վրայ ելնելով, քարա-կերտ նստարանների վրայ բազմեցան։ Բոլորից առաջ Եւրիմաքոս խօսել սկսաւ։ «Ո՞վ կը կար-ձէր, թէ Տելեմաք կենդանի կը վերադառնար։ Եկէք շուտով մի քաջամուր նաւ պատրաստենք և նեղուցում դարանած ընկերներիս լուր առա-քենք, որ իսկոյն վերադառնան»։

Հէնց որ նա այս խօսքն ասաց, Ամփինոմ նստած տեղից դարանողների նաւը նշմարեց։ Թիերն արագ շարժելով, նաւը ծովափին մօտե-ցաւ և առագաստներն ամփոփեց։

Ծիծաղեց Ամփինոմ և ասաց. «Է՛լ հարկ չկայ բանքեր յղելու մեր ընկերների ետևից, պատ-ճառ ահա գալիս են։ Անշուշտ անմահներից մին նրանց ազդած կը լինի, որ Տելեմաք ժա-մանել է Իթակէ, կամ գուցէ հեռուից տեսած լինին նրա նաւը»։

Այս խօսքի վրայ բոլորեքեան նստարաններից վեր կացան և ծովափի իջան։ Նրանք օգնեցին նաւը ցամաք հանելու և յետով ընկերների հետ միասին գնացին ժողով կազմելու, որ խորհուրդ-տեսնեն Տելեմաքի վերաբերմամբ։ Այն տեղ քա-րաշէն աթուների վրայ բազմեցան և թոյլ չտուին, որ ժողովրդից գէթ մի մարդ ներկայ լինէր։

Նախ և առաջ ոտքի ելաւ Անտինոոս՝ նոյն իսկ մարդն, որ առաջնորդ էր եղել նաւին, և ասաց. «Ճշմարիտ, ինձ թւում է թէ պատանին աստուածներից պաշտպանուած էր, եթէ ոչ՝ անհնարին էր, որ մեր ձեռքից ճողոպրէր։ Հէնց որ օրը լուսանում էր, մեր ժիր մարդիկն նըս-տում էին բարձրագագաթ ժայռի վրայ և շուր-ջանակի ծովը դիտում։ Իսկ գիշերու թափա-

ոռում էինք նեղուցի մէջ և միայն արշալուսին դէպի ծովափի վերադառնում: Միթէ կարո՞ղ էր ձեռքերս ըընկնել, եթէ չօգնէր նրան սոտուած: Այսու հանդերձ անհրաժեշտ է սպանել նրան. ուստի եկէք խորհուրդ տեսնենք, թէ որն է նրան կործանելու ամենահեշտ միջոցը: Պինչև Տելեմաք չմեռնի, ոչ մի հոմանի նպատակին չի հասնիլ: Ի միտ առէք, թէ նա ո՞րչափի փոխուել է կարճ միջոցում: Այժմ նա թէ խորհրդով և թէ դործով դօրեղ է, և ժողովուրդն էլ առաջուայ պէս մեղ հլու չէ: Ուրեմն շտապե՞նք գործի անցնել, քանի որ ժողով չէ դումարել: Յիշեցէք, թէ ո՞րպիսի կորսվով խօսեց մեր դէմ, երբ նաւ էր պահանջում: Եթէ առաջ այդպէս էր, հապա այժմ ի՞նչ շանթեր պիտի արձակէ մեր գլխին: Անշուշտ նա հրապարակաւ ժողովրդին կըլայտնէ, թէ մենք դաւ էինք նիւթում իւր կեանքին: Ի՞նչ պիտի անենք, եթէ ժողովուրդը մեր դէմ կանդնի: Ի՞նչ կըմնայ մեղ անել այն ժամանակ, բայց թէ փախչել և տարաշխարհում վտարանդի գեղերիլ: Ուստի սպանենք նրան ադարակում, ուր որ այժմ նըստած է, կամ մորթե՞նք ճանապարհին: Գոյքերն էլ, ինչքան որ կան, մեր մէջ բաժնենք: Իսկ պալատը մօրը թողնենք և փեսալին, ում էլ ընտրէր մեղանից: Եթէ խորհուրդս ըընդունէք

և կամենաք, որ Տելեմաք ողջ մնայ, — ուրեմն էլ ինչու ենք նրա ստացուածքը սպառում: Լաւ չ' լինիլ, որ բոլորս էլ հեռանանք, ամէն մարդ իւր տանից օժիտ զրկէ թագուհուն և թեկնածէ նրա աջին»:

Ատինոսի գէմ Ամփինոմոս վեր կացաւ: Դա մի իշխանի որդի էր՝ խելքով, բարքով հոմանիներից գերադաս և Պինելոպէին ոչ անհանոյ: Դա ասաց. «Բարեկամներ, ես չէի ուզիլ հանդիսանալ այդ պատանու սպանիչ, որովհետև արքայի զարմն անձետելը մի սոսկալի ոճիր է: Ուստի լաւ է՝ աստուածների կամքը հարցնե՞նք: Եթէ Արամազդ յօժարութեան պատգամ յախտնէ, ես ինքս պատանու դէմ զէնք կըվերցնեմ, ուրիշներին էլ ինձ օգնելու յորդոր կըտամ. իսկ եթէ արփիխաբնակ վեհ աստուածն մեղ հակառակ վճիռ տալ, — այն ժամանակ լաւ կըլինի, որ յետ կենաք ձեր չար մտքի՞ց»:

Բոլոր ատեանն այս խորհրդին հաճեցաւ: Ակնուհետև վեր կացան, Ոգիսեսի ապարանքը գնացին և աթոռների վրայ բազմեցան:

Այն ինչ Պեղոն արդէն մատնել էր թագուհուն հոմանիների չար խորհուրդը: Թագուհին այս բանը լսեց թէ չէ, երեսը քողով ծածկեց, նաժիշտների հետ սրահ իջաւ և ազնիւ որտմտութեամբ այս խօսքերն առաց Անտինոսին:

«Զարարուեստ, ամբարտաւան Անտինոս: Ընկերներիդ մէջ իմաստուն ես համբաւուած, բայց իրօք արժանի չես այդ փառքին: Այ շամբուշ, ինչու ես մահ որոճում որդեկիս դէմ: Վայ քեզ, եթէ արհամարհես մեր աղերսը, որին ինքն Արամագդ ունկնդիր է: Դու ինքդ էլ քաջ գիտես, որ անմեղի դէմ չարիք նիւթելն յանցանք է: Գիտես նոյնպէս, որ հայրդ մի օր փախստական այս տեղ եկաւ և ապաստան ինդրելով այս շէմքն անցաւ: Նա տափեան հէների հետ էր միացել. այս պատճառով ժողովուրդը կամենում էր նրան կործանել: Բայց դիցատիպ ամուսինս նրան պաշտպանեց և իւր կեանքը վտանգելով, ժողովրդին սանձահարեց: Եւ դու այժմ անարդում ես նրա տունը, վատնում ես նրա բարիքը, ցանկանում նրա կնոջը, մահ ես նիւթում նրա որդուն և մօրս աղէտ պատրաստում: Այ ժանտաժուտ ապերախտ, այդ ոճից դու հեռու կաց, միւսներին էլ խելքի բեր»:

Պապանձուեցաւ Անտինոս: Խոկ Եւրիմաք ուղում էր թագուհու երկիւղն քծնի խօսքով փարատել: «Դուստրդ Իկարիստի, ուշիմդ Պիենելոպէ», ասաց նա, «մի խոռվիր, մի վհատիր: Դեռ չէ ծնուել, չի էլ ծնուիլ այն մարդն, որ յանդրդնէր, քանի որ ես լոյս եմ տեսնում, աջ բարձրացնել որդուդ դէմ: Բա, իմ տէղն խկոյն դի-

տապաստ կ'անէր այն լրբին, որ այդպիսի չար խորհրդով մատչէր որդուդ: Զէ որ ինձ էլ երբեմն շատ բարիք է մատուցել քաջն Ոդիսես: Ջատ անգամ ես իբրև մանուկ նստել եմ նրա ծնկի վրայ, և նա ինձ միս է տուել և բաժակով անոյշ գինի արբուցել: Թրա համար է, որ ես էլ Տելեմաքին շատ եմ սիրում, և կարող ես վստահ վնել, տիրուհի, որ մեր շըջանում նրա կեանքի դէմ չարիք նիւթող չի լինիլ: Խոկ ինչ որ սահմանել են նրա համար աստուածներն, — այդ չէ կախուած մեր կամքից»:

Այսպէս խօսեց նենդամիտն, որ սակայն բոլորից շատ էր Տելեմաքի կորստեան վրայ մտածում: — Բայց նրա խօսքերն էլ անզօր եղան սփոփելու թագուհու վիշտը: Թագուհին վերնատուն ելաւ, և ողբում էր որդեկին և ամուսնուն: Վերջապէս Աթենաս, կարեկցելով լոգնատանջին, շնորհեց նրան մի քաղցր նինջ:

Երեկոյեան Եւմէոս իւր տնակը վերադարձաւ և զտաւ Ոդիսեսին և Տելեմաքին, որոնք ընթրիք պատրաստելու վրայ էին: Աթենաս իւր ոսկէ ցպի շօշավմամբ դարձեալ մի թշուառ մուրիկ էր փոխակերպել Ոդիսեսին: Տելեմաք նաև մօր մասին բան հարցրեց խոզապանից, և ապա՝ արդեօք հոմանիները շարունակում էին նեղուցի մէջ դարանել:

Եւմէսս պատասխանեց. «Երբ ուզում էլ վերադարձի ծածուկ յայտնել ուշիմ մօրդ, յանկարծ եկաւ մի քարոզ և բոլոր նաժիշտների ներկայութեամբ ժամանելի աւետեց: Ես իտկայն պալատից ելայ, առանց երկար յամելու: Այս տեղ գալիս, չերմէսեան ըլլի մօտ, մի նաւ տեսալ հեռուից, որի վրայ վահաններով և դէնքերով սպառազինուած մարդիկ կային: Թրանք անշուշտ քեզ դարանող հոմանիքն էին»:

Տելեմաք յետ դարձաւ և հօրն ակնարկելով ժպտեցաւ:

Ընթրիքից յետ՝ երեքն էլ հանգիստ պառկեցան և քնի պարզե ընդունեցին աստուածներից:

10

ՏԵԼԵՄԱՔ ՔՈՂԱՔ Է ԳՆՈՒՄ

Երբ նորից լոյս ծագեց վարդամատն առաւոտը, Տելեմաք տեղից վեր կացաւ, կօշիկներն ոտքին կապեց, նիզակն առաւ և ասաց Եւմէսսին. «Հայլիկ, ահա դնում եմ մօրս մօտ, որ հարկաւ չիպիտի դադարի ինձ ողբարոց, մինչեւ որ աչքով չտեսնէ ինձ: Իսկ դու այս հէք ծերուկին քաղաք տար, որ սնունդ մուրայ իւր համար: Մին կամ միւսն անշուշտ կրտայ մի

կտոր հաց և մի ումագ ջուր: Բոլոր պանդուխտ հիւրերին ես չեմ կարող խնամել, քանի որ ինքս տառապած եմ»:

«Բարեկամ, ես ինքս էլ չեմ կամենում երկար մնալ այս հիւղում», նկատեց Ռդիսես: «Աղքատ մարդուն առաւել հէշտ է քաղաքի մէջ հաց մուրալ, քան թէ դաշտում: Եթէ ես ծեր չլինէի, հարկաւ դաշտի վրայ էլ աշխատանքով ինձ մի պարէն կրճարէի: Բայց այժմ աշխատելու էլ ոյժ չունիմ: Ուստի դու յառաջ գնա, Տելեմաք. իսկ ես դեռ այս կրակի մօտ կընստեմ, մինչեւ օրը տաքանայ, զի ձորձերս անպիտան են, և ճանապարհը հեռաւոր»:

Տելեմաք թողաւ աղարակն և հոմանիներին կորուստ որոճալով, ճանապարհ ընկաւ դէպի քաղաք: Նա վաղ հասաւ իւր բարեշէն ապարանքին և նվզակը մեծ սեանը յենլուց յետ՝ դրան մարմարեայ շէմքից անցաւ:

Նրան տեսաւ նախ հաւատարիմ Եւրիկլէա դայեակն, որ նոյն միջոցին արուեստագործ գորգ էր սփռում սրահի մէջ: Տելեմաքին տեսնելուն պէս նա լաց եղաւ և վագեց ողջունելու. միւս նաժիշտներն էլ իսկոյն եկան և նորեկի դլուխն և ուսերը համբուրեցին:

Պենելոպէն սենեակից լսեց կանանց հրճուանքն և իսկոյն փութաց սրահ իջնել՝ Արտեմիսին և

սիրամայր Աստղկան նմանելով։ Հէնց որ տեսաւ իւր որդուն, զգին փարուեցաւ, աչքն ու ճակատը համբուրեց և ասաց. «Պու ես, որդեակ, աչքիս լոյս։ Ո՞հ, քեզ տեսնելու լոյսս արդէն հատել էր։ Դէ պատմիր, լսեմ, ինչ իմացար հօրդ մասին»։

«Մայրիկ», պատասխանեց զգօնամիտ պատանին, «մի նորոգիր սրտիս ցաւն, զի հազիւ եմ ճողովրել իմ դէմ նիւթուած կորուստից։ Այլ գնա, սենեակդ մտիր և նուէր ուխտիր Արամազդին, որ վերջացնէ մեր ընտանեաց տառապանքն և պատուհասէ չարերին։ Իսկ ես կ'երժամ հրապարակ և կը հրաւիրեմ այն օտարին, որ միացել էր ինձ նաւի վրայ։ Երբ ցամաք իջայ, Պէլքիս նրան իւր մօտ տարաւ։»

Պէնելոպէն որդու խնդիրը կատարեց։ Նա լողացաւ, նոր զգեստ հազաւ և նուէր ուխտեց Արամազդին, ազերսելով իւր տան հասած նախատինքի վրէժը հանել չարերից։

Տելեմաք, նիզակը ձեռին, յառաջ գնաց. նրան հետեւում էին արագոտն շները։ Աթենաս մի այնպիսի շուք էր հոսել նրա վրայ, որ անցորդները նրան տեսնելիս զմալում էին։

Փողովուրդն արդէն հաւաքուած էր հրապարակում։ Հոմանիները, նրան տեսնելով, քաղաքավար ողջոյն տուին, բայց սրտերն ոխով լի էր։

Բայց Տելեմաք արագ անցաւ նրանց առջևեց և գնաց տեսնելու Մենտորին, Անտիվոսին և Հալլթերսին, որոնք իւր հօր սիրելիքն էին։ Ուստի մօտեցաւ և նրանց կողքին տեղ բռնեց։

Պէլքիսն էլ եկաւ այն տեղ, հետն բերելով Թէովիլիմէն գուշակին։ Տելեմաք իսկոյն ոտքի ելաւ և հիւրին ընդ առաջ գնաց։ Իսկ Պէլքիսն նրան ասաց. «Հրամայիր նաժիշտներին, որ տունս գնան և Մենելաւից քեզ ընծախուած պարգևները պալատ տանեն»։

«Բարեկամ», կրկնեց նրան Տելեմաք, «կրերի ելքը դեռ չէ յայտնի։ Դուցէ սպանեն ինձ հոմանիներն, և գովքերս իրենց մէջը բաժանեն։ ուստի լաւ չէ, որ ընծաները քո մօտ մնան։ Իսկ եթէ ես կարանամ նրանց կործանել, այն ժամանակ, երբ ուզենամ, յետ կրտաս ինձ ընծաներս»։

Այս խօսքից յետ Տելեմաք տուն տարաւ նորեկ հիւրին։ Այն տեղ նրանք լուացուեցան, օծուեցան, շքեղ ու պերճ զգեստ հազան և բազմեցան։ Կաժիշտները նրանց կերակուր մատուցին։ Ուշիմ Պէնելոպէն նստած էր ի հանդիպէ, ձեռքում ուկէ իլիկ բւնած։ Երբ այն երկուսն առատ սեղանից յագեցան, Պէնելոպէն այսպէս խօսեց. «Տելեմաք, հոմանիները շուտով կըզան, և ես դարձեալ արտասուաթոր վերև կ'երթամ,

որովհետև գալուցդ ի վեր ինձ մի ոփոփիչ բան
չասացիր հօրդ մասին»:

«Մայրիկ, ամէն բան կըպատմեմ քեզ», պա-
տասխանեց Տելեմաք: «Նախ և առաջ Պիւլոս
հասայ և Կեստորի մօտ իջայ, որ հարազատ
որդու պէս ընդունեց ինձ: Սակայն ծերունին
ոչինչ չգիտէր սիրելի հօրս մասին: Նա ինձ
կառք և ձիեր տուաւ և առաքեց Մենելաոս
արքայի մօտ: Մենելաոս էլ սիրով հիւրընկա-
լաւ, և երբ ես գալուս խորհուրդը լայտնեցի և
հոմանիների չար արարքը պատմեցի, սփովեց
ինձ և ասաց. Այն օրն անշուշտ մօտեցել է,
երբ քաջարին Ողիսևս լեռնական գոռ առիւծի
զօրութեսումք սեղեխների վրայ կըրարձակուի և
գլուխներից ամուսնութեան ցնորքները կըփա-
րատէ: Եւ ուրիշ բան կ'ասեմ քեզ, որ լսել եմ
ծովի գուշակ ծերունուց: Դա ինձ ասաց. Ողի-
սևս Ողիգէ կղզու վրայ է Կալվաէի քարայ-
րում, ուր բռնի պահել է նրան դիցուհին:—
Մայրիկ, ահա բռլորն, ինչ որ իմացայ հօրս մա-
սին: Այնուհետև ես թողի Մենելաոսին և նա-
ւեցի դէպի տուն»:

Այսպէս խօսեց Տելեմաք, և կրկին բորբոքեց
հաւատարիմ կնոջ սրտում մարդուն տեսնելու
շերմ կարօտը:

Ոտքի ելաւ այն ժամանակ Թէոկլիւմէն գու-

շակն, որին հիւր էր բերել Տելեմաք, և ասաց.
«Ո՞վ Ողիսևսի բազմագով կին, ականչ դիր գու-
շակութեանս: Նաւի միջից թռչունների նշան
տեսայ և իմացայ, որ արդէն ժամանել է դի-
ցատիպն Ողիսևս, և անձանօթ շրջելով, կո-
րուստ է նիւթում սեղեխներին»:

Պինելոպէն պատասխանեց. «Երնեկ խօսքերդ
ճշմարտուէին: Այն ժամանակ այնպէս առատ
վարձարութիւն կըստանալիր, որ բոլոր մար-
դիկ քեզ երանի կըտալին»:

Պինչդեռ այսպէս նրանք իրար հետ խօսում
էին, ականչներին սեղեխների ձայնը հասաւ,
որոնք տէզ ձգելով զբունում էին հարթ գաւ-
թում: Պինելոպէն, Տելեմաք և նորեկ հիւրն
իսկոյն ելան սրակից և ուրիշ սենեակ հեռացան:

Հոմանիները տէզընկէցի խաղից յետ սրահ
մտան և թիկնոցները գահուքների վրայ դրին:
Այնուհետև զեր ոչխարներ, պարարտ այծեր,
մի խող և մի զուարտկ մորթեցին և սկսան
ընթրիք պատրաստել:

ցուրտ և յստակ ջուրը դուրս էր ցայտում մի ժայռից, որի գլխին կանգնած էր ջրահարսերի բազինը:

Այս տեղ նրանք հանդիպեցան այծապան Մելանթէսին, որ եկել էր փարախից ուրիշ շաւզով։ Նա ընտրել էր հօրանից ամենազեր այծերն և երկու հովուի օդնութեամբ քաղաք էր քշում հոմանեաց ընթրիքի համար։

Մելանթէս ուղևորներին տեսաւ թէ չէ, այնպէս կոպիտ պարսաւեց նրանց, որ Ողիսես չարաշար սրտմտեցաւ։ «Արդարեւ», ասաց այն Ժրափիրհը, «սրանց է յարմար գալիս առածը, թէ մի անպիտան՝ առաջնորդ է միւսին։ Պատճառ – աստուած նմանը կցորդում է նմանին։ Ո՞ւր ես տանում այդ պորտաբոյծին, այդ դռնէ դուռ քարշ եկող մուրացկանին, այ դու թշշուառ խողարած։ Եթէ այդ քսոստին ինձ տայիր, որ այծերիս փարախն մաքրէր և ուլիկներիս ջոկքնէր, ես դրան շիճկով կը գերացնէի, և դա կրկնապատիկ կը հաստանար։ Բայց վուճ կենդանին երևի թէ ոչ մի բանի ընդունակ չէ, որ գնում է թափառական քարշ գալու և անգործ բուծանելու իւր անյատակ որովայնը։ Ասում եմ քեզ – եթէ երբ և իցէ այդ շրջմոլիկն իմ տիրուհու տունը գայ, շատ պանտուանդաններ կը տեղան դրա գլխին, ուժեղ բռներից ճօճուելով»։

ՀԻՆԴԵՐՈՐԴԻ ԴԻՐՔ

ՈՂԻՍԵՒՄ ԻՒՐ ՊԱԼԱՏՈՒՄ ԱՆԾԱՆՕԹ

1

ՄԵԼԱՆԹԷՍ ԱՅՆԱՊԱՆ

Եւմէս կամեցաւ այժմ քաղաք տանել իւր հիւրին և ասաց. «Բարեկամ, ես քեզ սիրով կը-պահէի տնակլիս մէջ, բայց որովհետեւ տէրս հրամայեց, որ քեզ քաղաք տանեմ, — պէտք է հնազանդիմ։ Եթէ ոչ վրաս կըբարկանայ։

Ողիսես պատասխանեց. «Խօսքերդ ուղիղ և արդար են, Եւմէսու։ Եւ որովհետեւ ուզում ես ինձ առաջնորդել, ուրեմն տուր ինձ մի հաստաբուն ամուր ցուզ, որ կարանամ վրան յենուիլ»։

Այսպէս նրանք յուղի ընկան և ոլորապտույտ ճանապարհով յառաջ գնացին։ Վերջապէս հասն մի աղքիւրի, որից քաղաքի աղջիկները կուժերով ջուր էին տանում։ Աղքիւրը գտան-փում էր մի հովանաւոր անտառի մէջ և նրա

Այսպէս ասաց Պելանթէս և աքացի տուաւ Ողիսևսին: Բայց մաղի չափ չըզօրեց տեղից շարժել աստուածակին դիւցազնին: Իսկ սա ինքն իրեն մտմտում էր—արդեօք ցպով դիտապատ անէր այն լրբին, թէ ոտքից բռնած գետին խփէր և սատկեցնէր: Սակայն զսպեց իւր զայրոյթը, համբերեց թշնամանքին և լռեց: Իսկ Եւմէսս կշտամբեց Պելանթէսին և աղերս կարդաց արծաթափայլ աղբիւրի յաւէրժական հարսերին. «Ո՞վ սրբազն յաւէրժ հարսեր, Արամազդի սիրուն աղջիկներ, եթէ երբէք Ոդիսես մատուցել է ձեզ առաստ զոհեր, ուրեմն եղէք նրան հովանաւոր և վերադարձրէք հայրենիք, որպէս զի պատուհասէ այս խարդախին, որ իւր պաշտօնը մոռանալով, շարունակ քարշ է զալիս քազաքի մէջ, և այսպէս վնաս է բերում իւր տիրոջ խաշներին»:

Բարկացաւ այծարած Պելանթէսն և ասաց, հովիւներին դառնալով. «Հա, ինչ է հաչում այս չար շունը: Տեսէք, թէ ես դրան իթակէից դուքս չըվունտեմ և լաւ գնով չվաճառեմ օտարներին: Ո՞հ, երանի թէ Տելեմաք հէնց այս օր մի տեղ մեռնէր, կամ սեղեխների տէ-գից սպանուէր, որ էլ երբէք մեղ մօտ չըգար և կորչէր, ինչպէս կորաւ Ողիսևս»:

Այս ասելով Պելանթէս յառաջ անցաւ և ա-

րադ քաղով քաղաք գնաց: Պալատ հասնելուն պէս՝ ներս մտաւ և շուայտող հոմանիների խըմ-բում նստաւ՝ Եւրիմաքին դէմ յանդիման, որի հետ ամենից շատ էր մտերիմ: Աղախիններն խկոյն եկան և միս ու հաց դրին առջելը:

2

ՀԱՒՏԱՐԻՄ ԱՐԳՈՍ ՇՈՒՆԲ

Ճատ չանցած՝ Ողիսևս և Եւմէսս նոյնպէս քաղաք ժամանեցին, և պալատին հասնելով, կանդ առին, զի երգի և կիթառի ձայն լսեցին: Սրահի մէջ նուագում էր Փէմիսս աստուածային երգիչը. բայց նա երբէք չէր շուայտում և երգում էր միայն սեղեխների ստիպ-մունքով:

Ողիսևս, խողապանի աջից բռնեց և ասաց, «Եւմէսս, այս չէ արդեօք Ողիսևսի շքեղ պալատը: Տես, թէ բակն ինչպէս է շրջապատուած սիրուն սիրուն որմերով և բուրգերով: Ամրակոփ դարպաներն երկբացիկ են, և ամէն բան այնպէս է, որ թշնամու յարձակմանը դիմանալ: Հրաշակերտ սրահի մէջ անշուշտ այժմ ինչորք կայ, քանզի քամին կերակուրների հոտ է բուրում այն կողմից, և ես լսում եմ կիթառի ձայն, որ զուարձութեան ընկերն է»:

Հոմ. Ողիս.

«Այդ էլ ուղիղ ճանաչեցիր», պատասխանեց Եւմէոս: «Սակայն արի մի լաւ խորհենք, թէ մեզնից ով առաջինը ներս մտնի»:

«Թու մտիր առաջինը», անդրադարձ տուաւ Ողիսևս:

Այսպէս խօսելով իրար հետ, գաւիթ մտան: Յանկարծ մի շուն, որ այն տեղ էր, գլուխը վերցրեց և ականջները շականջեց: Դա Արգոս կոչուած այն շունն էր, որին սնուցել էր Ողիսևս և տանն էր թողել Տրոյա գնալիս: Այնուհետեւ շունը վարդուած էր այծեամներ, նապատակներ, եղջերուներ որսալու և շատ էլ լաւ էր ծառայում. բայց այժմ անզօր ընկած էր աղբի վրայ, և ոչ ոք չէր խնամում ծեր և թշուառ արարածին: Երբ Ողիսևս շան մօտեցաւ, ոս նրան հոտից ճանաչեց, ձետը շարժեց և ականջները վայր կախեց: Ուզում էր ինքն էլ յառաջ սողալ և տիրոջը մօտենալ, բայց չկարացաւ, ըստ որում ոլժն իսպառ շիջել էր: Ողիսևս մի կողմ գարձաւ և արտասուքը ծածուկ սրբեց, որ Եւմէոս բան չտեսնէ: Յետոյ նրան հարցմունք արաւ. «Ի՞նչպէս է պատահել, ով Եւմէոս, որ այս շունն հիքաբար աղբակոյտի վրայ է ընկած: Միթէ այնքան վատ էր, ծով էր, որ ոչ ոք այժմ գրա ուժաթափ ծերութեանը հոգ տանելու փոլթ չունի»:

«Այս, այժմ թշուառ ընկած է, այն ինչ մի օր դրան սնուցել էր չարաբաստիկ Ողիսևսը», պատասխանեց Եւմէոս: «Ո՛հ, տեսնէիր դրան այն ժամանակ, երբ իմ տիրոջ խնամքի տակն էր: Ոչ մի շուն չէր կարող հաւասարուիլ դրան առողիք մարմնով, արագութեամբ և զօրութեամբ: Երբ Ողիսևս հեռացաւ, միշտ որսի էին դորձ ածում դրան, և Արգոսի արշաւից ոչ մի երէ չէր ճողոպըռում: Այժմ ոյժը սպառել է, և տան ծովը աղասինները թողնում են, որ հիքութեան մէջ տառապի»:

Այսպէս խօսեց Եւմէոս և տան շէմքին ոտք դնելով, ներս մտաւ: Իսկ Ողիսևս մօտեցաւ հաւատարիմ Արգոսին: Սա դարձեալ մի անզամ սիրով նայեց իւր տիրոջը և ապա, գլուխը թաթերի վրայ ձգելով, շունը փչեց:

3

ՈՐԻՄԵԿ ՄՏՆՈՒՄ Է ԻՒԹ ՊԱԼՈՏԲ

Ողիսևսն էլ այժմ պալատ մտաւ և շէմքի մօտ տեղ բռնեց, մէջքը գրան սիւնին տալով, որ արուեստաբար կոփուած էր նոճից: Տելեմաք արդէն տուել էր Եւմէոսին մի աթոռ և կերակուր: Այժմ սիրելի հօր ներս գալը նշմարելով, նա ասաց. «Եւմէոս, տար օտարին այս կերա-

կուրն և ասա, որ մի առ մի հոմանիներին մօտենայ և բան մուրալ»:

Եւմէոս սիրով կատարեց տիրոջ պատուէրը, տարաւ Աղխսեսին հաց և զինի և ասաց, որ վեր կենայ՝ հոմանիներից ողորմութիւն մուրալու։ Աղխսես բռնեց ուտելիքն երկու ձեռքով, բոլորն էլ դրաւ իւր բզքտած մաղախի վրայ և սկսաւ ուտել, մինչ երգիչն երգում էր։

Երգիչն որ լսեց, հոմանիներն աղմուկ հանեցին. իսկ Աղխսես վեր կացաւ բան ասելու, որովհետեւ ուզում էր ամէն մէկի սիրով փորձել և մտքերն իմանալ։ Յետոյ կարկառած ձեռքով սկսաւ ման գալ նրանց շրջանում, և բոլորեքեան կարծեցին, թէ նա ի բնէ մի մուրիկ էր։ Ամէն մէկը տալիս էր նրան մի կտոր հաց, հարցնելով ընկերին, թէ ո՞վ էր այդ աղքատն և ուստի։

Այն ժամանակ այծապան Մելանթէսն ասաց. «Լսեցէք, մեր վեհաւէտ տիրուհու հոմանիներ. խողարածը այս տեղ բերաւ այդ մուրիկն»։

Անտինոս այս որ լսեց, յադիմանեց Եւմէոսին և ասաց. «Այ դու անպիտան խողարած, այդ մարդուն ինչու բերիր։ Միթէ քիչ են տիրոջդ գոյքը լափողները, թափառական մուրիկները, որ դրան էլ այս տեղ բերիր»։

Եւմէոս պատասխանեց. «Անտինոս, թէև ի-

թակէի մեծերիցն ես, բայց և այնպէս լմացիր, որ անպատշաճ բան խօսեցիր։ Ո՞վ է տեսել, որ մարդս մի օտար անձն կանչէ իւր տուն, եթէ այդ օտարը մի զուշակ, կամ թէ բժիշկ, կամ թէ հիւսն, և կամ երգիչ ըլլինի։ Իսկ մուրացիկն ինքն է գալիս՝ առանց կանչուելու։ Բայց դու շատ խիստ ես վարդում մեծահռչակ Աղխսեսի ծառաների, և մանաւանդ նուաստիս հետ։ Սակայն այդ ինձ բնաւ փոյթ չէ, քանի որ Գինեներպէն և Տելեմաքն են այս պալատի տէրերը»։

«Մի վիճիր, հայրիկ, այդ մարդու հետ», մէջ մտաւ Տելեմաք. «զի դիտես, որ չար խօսքերի վարպետ է, ուրիշներին էլ սագրում է»։ Ապա թէ Անտինոսին գառնալով, շարունակեց. «Խօսում ես արդարեւ մի հոգատար հօր նման, որ գոյքերիս պաշտպան է։ Սակայն միամիտ կաց։ Միշտ կարող ես տառապեալին մի բան տալ. դրա համար ոչ մայրս քեզ բան կ'առէ, ոչ էլ ծառաներս վրադ ծուռ կընայեն։ Բայց խօսքերդուղիդ սրտից չեն դուրս գալիս, Անտինոս, որովհետեւ մէնակդ ես ուզում ուտել իմ ստացուածքը»։

Անտինոս պատասխանեց. «Այ դու խրոխտաբառ Տելեմաք, այդ ինչ էր, որ ժտեցար ինձ ասել։ Եթէ ամէն մարդ այնքան բան տար

այդ մուրկին, ինչքան որ ես եմ տալու, անշուշտ դա երեք տմիս հեռու կըմնար այս տեղից»: Այս ասելով, նա վերցրեց ոտքի պատուանդանն և հեղնաբար հասկացրեց, թէ այդ էր տալու: Սակայն միւս հոմանիներն այնքան միս և այնքան հաց տուին Ոգիսեսին, որ մաղիսը լցուեցաւ: Բայց Ոգիսես, կամենալով և՛ս առաւել փորձել Անտինոսին, նորից կանդնեց նրա առջև և ստիպողաբար բան մուրաց:

Անտինոս անդութ մնաց և զայրագին խօսքերով ի բաց վանեց Ոգիսեսին:

Իսկ Ոգիսես նրան ասաց. «Ափսոս, որ հոգիդ քիչ է նման պատկերիդ: Անշուշտ դու սեփական գոյքիցդ աղի հատիկ էլ տուած չես լինիլ կարօտեալին, որ անգամ ուրիշի սեղանից, ուր շուայտում ես, չես կամենում մի մասն հանել հէք աղքատին»:

«Դեռ յանդնում ես նախատել ինձ, այ շաղակատ», գոչեց Անտինոս զայրագին: «Ուրեմն այնպէս չես դուրս դալ այս տնից, ինչպէս որ մտար»: Ասաց, և բոնելով պատուանդանը, բոլոր ուժով Ոգիսեսի ուսին զարկեց: Բայց ժայռի պէս անշարժ մնաց յոգնահամբեր դիւցազնը: Յետոյ զլուխը թօթուելով և մտքում կորուստ որոճալով, դնաց անցաւ սրահի միջից, նորից նստաւ շէմքի վրայ և այսպէս ասաց հոմանի-

ներին. «Լսեցէք ինձ, մեծափառ թագուհու հոմանիներ: Մարդու սրտին բնաւ ցաւ չէ, եթէ նա իւր ստացուածքը պաշտպանելով, կոռուի մէջ մի վէրք ստանայ. իսկ ես Անտինոսից հարուած ստացայ սոված փորիս պատճառով, որ այնքան չարչարում է թշուառական աղքատիս: Սակայն դեռ կան աստուածներ, որոնք պատրաստ են պատուհասել մի հէք մարդու զրկողին: Եւ ահա ես աղերսում եմ վրէժինդիր դիցուհիներին, որ քեզ արագահաս մահով սպանեն, Անտինոս»:

«Լոյն, կամ այս սրահից դուրս կորի՞ր», աղաղակեց Անտինոս: Եթէ ոչ՝ պատանիներն ոտքերիցդ բռնած, քաշքշելով դուրս կըձգեն, և բոլոր անդամներդ կըջարդուեն»:

Բոլորեքեան Անտինոսի վրայ զայրացան, և մի պատանի նրան ասաց. «Անտինոս, վաս ես վարվում մուրկի հետ: Ի՞նչ կ'ասես, եթէ յանկարծ ստուգուի, որ դա մեր մտքերը փորձելու եկած մի երկնաւոր աստուած է»:

Այս խօսքի վրայ Անտինոս ծիծաղեցաւ մտքի մէջ, իսկ Տելեմաք հազիւ էր զսպում իւր բարկութեան արտասուքը: Այսու հանդերձ, վրէժինդրութեան ժամին սպասելով, տիրեց սրտին և համբերեց:

ՊԵՆԵԼՈՊԻՆ ԿԱՄԵՆՈՒՄ Է ԽՕՍԵԼ ՄՈՒՐԿԻ ՀԵՏ

Երբ Պենելոպէն իմացաւ Անտինոսի վատ
վարմունքը մուրկի հետ, ասաց. «Երանի՛ թէ
դիպաղեղն Ապոլոն վէս Անտինոսին այնպէս
նետով հարուածէր, ինչպէս որ դա հարուսծեց
տուրք մուրացող աղքատի՛ն»։ Յետոյ իւր մօտ
կանչել տուաւ հաւատարիմ Եւմէոսին և ասաց.
«Եւմէոս, գնա բեր ինձ մօտ օտարական մու-
րացկանին։ Նրա մասին լսածներիս նայելով,
կարծում եմ, թէ հեռուից եկած բազմաշրջիկ
մարդ պիտ' լինի։ Կամենում եմ հարցնել նրան—
արդեօք ուր և իցէ որ և է լուր լսած չէ մար-
դուս մասին»։

Եւմէոս պատասխանեց. «Ո՛վ տիրուհի, եթէ
լսէիր նրա խօսքերը, կրզարմանալիր։ Արդէն
երեք օր, երեք գիշեր ինձ մօտ է, բայց և
այնպէս իւր վշտերի պատմութիւնը դեռ չէ
սլրծել։ Ինչպէս որ մարդ ականջ է դնում աս-
տուածալին երգչի նուազին, այնպէս էլ ես ան-
յագ սրտով ականջ էի դնում նրա պատմու-
թեան։ Ասում է, թէ կրետէն է իւր հալրե-
նիքը. ասում է ևս,—բայց չեմ կարանում հա-
ւատալ,—թէ Ոդիսւս թեսպրոտացւոց մօտ է

մնում և շուտով էլ յետ պիտի գայ առատ
առատ գանձերով»։

Սաստիկ ուրախացաւ Պենելոպէն և ասաց.
«Իսկոյն սենեակը կանչիր նրան. ուզում եմ նրա-
նից էլ այն լսել, ինչ որ դու ինձ ասացիր։ Ո՛հ,
եթէ մարդո վերագառնար և որդու աջակցու-
թեամբ հոմանիներին պատուհասէր»։

Նոյն վայրկենին Տելեմաք այնպէս փոնդտաց
սրահում, որ ամբողջ պալատը թնդաց։ Ծիծա-
ղեցաւ Պենելոպէն և ասաց. «Լսեցիր, ինչպէս
որդիս խօսքերիս վրայ փոնդտաց։ Ուրեմն ան-
շուշտ սրտիս փափազը կըկատարուի։ Բայց գնա
կանչիր աղքատին։ Եթէ տեսնեմ, որ ճշմարիտ
բան է ասում, կըխնամեմ նրան և նոր շորեր
կ'ընծայեմ»։

Եւմէոս խօսին սրահ իջաւ, Ոդիսւսին մօտե-
ցաւ և ասաց. «Ո՛վ հիւր հալրիկ, մեծ տիրու-
հին կամենում է, որ իւր սենեակը բարձրանաս,
զի մտադիր է Ոդիսւսի վերաբերմամբ բան
հարցնել, և դու կ'ասես, ինչ որ գիտես։ Եթէ
տեսնէ, որ ճշմարիտ բան ես խօսում, կըխնամէ
քեզ և նոր շորեր կ'ընծայէ»։

Ոդիսւս պատասխանեց. «Վիրով պատրաստ եմ
դնալ թագուհու մօտ, բայց պէտք է զգուշա-
նամ հոմանիներից, որոնք ամէն քայլս դիտում
են։ Ուստի ասա արդու տիկնոջ, որ մինչեւ նրանց

Հեռանալը կըսպասեմ: Այնուհետև թող հարցնէ ինձ, ինչ որ կամենալ իմանալ»:

Եւմէս կրկին գնաց թագուհու մօտ՝ այս խօսքերը յայտնելու, և թագուհին նկատեց, որ մուրիկը ուշիմ մարդ էր: Յետ այնորիկ խոզապանը դարձեալ մտաւ սրահը և Տելեմաքին մօտենալով, փսփսաց. «Սիրելիդ իմ, այժմ գնում եմ ադարակ, որ փարախը պահպանեմ: Թող աստուածներն ագատ պահեն քեզ վտանգից: Իմացիր, որ չար մտքեր են տածում քո դէմ այս մարդիկը: Կործանէ դրանց Արամազդ»:

«Ազպէս էլ կրկինի անշուշտ», պատասխանեց Տելեմաք: «Բայց, հայրիկ, իրիկուայ դէմ ճանապարհ ընկիր: Իսկ առաւտօտեան կրկին վերադարձիր և հետդ ընտիր պատրուճակ բեր»:

Երբ երեկոն վրայ հասաւ և երգն ու պարը նորից սկսան սրահում, Եւմէս պալատն թողաւ և գնաց ագարակ:

5

ԻՐՈՍ ՄՈՒՐԻԿԻ

Նոյն միջոցին պալատ եկաւ Իրոս անուն մի մուրիկ: Դա յաղթանդամ և վիթխարի մի մարդ էր, որ իւր անդագ որովայնով ամէն տեղ հըռչակուած էր:

Երբ դա Ողիսևսին շէմքի վրայ նկատեց, կամեցաւ վունտել տնից, և ասաց նրան զայրագին. «Կորիր, ծերուկ, եթէ ոչ ոտքերիցդ բոնելով քարշիքարշ դուրս կըդգեմ: Հապա մի տես, ինչպէս ամենքն ինձ աչքերով նշան են տալիս: Բայց չեմ դիպչել քեզ, միայն թէ շուտով հեռանալով: Եթէ ոչ բանը կուփամարտի կըհասնի»:

Դուռը ծուռ նայեց վրան Ողիսևս և ասաց. «Ա՛յ տխմար, ես հօ ոչ խօսքով եմ վնասում քեզ, ոչ դործավ, ոչ էլ պիտի նախանձեմ, եթէ տուրքեր ընդունես: Զէ՞ որ այս շէմքի վրայ երկուսի էլ հերիք տեղ կայ, և դու էլ ինձ նման մի մուրիկ ես: Բայց կուփամարտի հրաւէր տալուց զդուշացիր: Պատճառ թէպէտ մի ծերուկ եմ, բայց լանջդ և դէմքդ այնպէս արիւնով կը ներկեմ, որ չես կամենալ միւս անդամ այս տեղ գալ»:

Իրոս բորբոքուեցաւ և գոչեց. «Ճեսէ՞ք, տեսէ՞ք այս զառամեալի թրթրակ լեզուն: Մի հարուածս արդէն շատ է, որ դրա ատամներով ծածկեմ ամբողջ յատակը: Սակայն ինչո՞ւ եմ խօսքեր վատնում, թշուառ ծերուկ: Հապա վեր կաց, գոտեռուիր, և կոռու դուրս գանք սրանց առջև»:

Անտինոս բարձրաձայն քրքիչ հանեց և ասաց. «Բարեկամներ, աստուածները մի լաւ զբօ-

սանք են շնորհում մեզ: Տեսէք, օտար մուրիկն և իրաս իրար բռունքով սպառնում են: Եկէք, բորբքենք դրանց մէկ մէկու դէմ»:

Բոլորն էլ տեղերից ծիծաղելով վեր թռան և մուրիկների շուրջը կանգնեցան: Անտինոս ասաց. «Բարեկամներ, լսեցէք ինձ: Վենք դեռ նոր դրինք կրակի վրայ մանրած մսով և արիւնով լի՝ այծի փորեր, որ ընթրիքի համար խորովենք: Արդ, որ մուրիկն որ յաղթէ, նա թող վերցնէ փորերից մին, ամէն օր էլ մեր սեղանին մասնակցի. իսկ միւսն թող այս տեղից հեռանալ»:

Այս խորհրդին ամենքը հաւանեցան, իսկ հրնարագէտն Ոդիսես ասաց, մտատանջ ձևանալով. «Ինձ վայել չէ, որ այս հասակումս մի առողդ պատանու հետ կռուէի: Բայց որովհետև սովալուկ որովայնս ստիպում է, որ յօժար կամքով չհեռանամ այս շէմքից, ուստի յառաջքան թէ ոսոլիս դէմ կանգնէի, երդում արէք, որ ձեզնից ոչ ոք կռուի ժամանակ չի հրիլ ինձ ետևից և այդպիսով չի հեշտացնիլ իրոսի յաղթանակը»:

Վիարերան երդում տուին, և Տելեմաք ասաց. «Եթէ սիրտդ դրդում է, օտարական, ոգորելու իրոսի դէմ,— մի վախենար ոչ ոքից: Եթէ մէկը համարձակուի քեզ դիպչել, ես ինքս նրա դէմ

կռուի կ'ելնեմ և երկու ուրիշ իշխան էլ քեզ կուսակից կըդժնեմ, որովհետև կարծում եմ, թէ այս բանում Անտինոս և Եւրիմաք ինձ համամիտ կըլինին»:

Այժմ Ոդիսես պատառոտուն հանդերձը մէջքին կապեց, և բոլորն ապշած մնացին, երբ նրա զօրեղ լանջն և ջլապինդ բազուկները մերկ տեսան: Իրոս զարհուրեցաւ և ուզում էր իսկոյն փախչել գուպարից, բայց սպասաւորները բռնեցին, և նա բոլոր անդամներով դողալ սկսաւ: «Ա՛յ պոռոտախօս թշուառական», ազագակց Անտինոս, «Էլ ինչո՞ւ ես աշխարհ եկել, եթէ սարսում ես այս ալւոր և զառամեալ ծերուկից: Լսիր, և խօսքերս անշուշտ կըկատարուին—եթէ պարտուխ այս ծերուկից, ես քեզ նաւ կընստեցնեմ և մարդասպան Եքետոսի մօտ կ'առաքեմ: Կա ոնզերդ և ականջներդ կը կտրատէ, ինչպէս շատերին արել է, և չարաշար մահով կըսպանէ»:

Իրոս և՛ս առաւել սարսափեցաւ այս խօսքերից, բայց նրան բռնի ասպարէզի մէջ տեղ բերին:

Ոդիսես նրա դէմ ելաւ և մտքում կշռեց— արդեօք այնպիսի մի հարուած տար, որ իրոս իսկոյն հոգին փչէր, թէ մեզմ հարուածով պատուհասէր: Փոքր ինչ յետոյ նա վերջինս լաւ

գտաւ, ըստ որում վախենում էր, որ եթէ սաստիկ դմբէր, հոմանիներն իւր ովլ լինելը կ'իմանալին: Արդ երկուքն էլ բազուկները ուերցրին: Նախ իրոս հարուած տուաւ և Ողիսի ուսին խփեց. յետոյ սա նրա ծոճրակին այնպէս զարկեց, որ իրոսի ոսկորները ճռնչեցին: Նա դռուալով դետին ընկաւ, ըերնից թուխ արիւն ժայթքեց, և սաստիկ ցաւից աքացում էր:

Հոմանիների մէջ մի անզուսպ քրքիջ բրդաւ: Իսկ Ողիսեւս լիրք մուրկի ոտքից բռնեց և քարշիքարշ թրևեց մինչև գաւթի դարպասը: Այն տեղ նստեցրեց նրան, մէջքը պատին դէմ տօւլով, ձեռքի մէջ մի ցուլ դրաւ և ասաց. «Փուճ կենդանի, ահա նստիր այս տեղ, իբրև շների և խողերի հալածիչ, և էլ մտքովդ թող չանցնի սոնքանալ աղքատի և օտարի վրայ, եթէ չես ուզում առաւել վատ պատիժ կրել»:

Յետոյ գօտին քակեց, կարկատած տոպքակն ուսին կախեց, սրահ մտաւ և նորից նստաւ շէմքի մօտ: Հոմանիները հետեւում էին նրան, ծիծաղելով և գովելով, և մին ասաց. «Ո՞վ հիւր, թող Արամազդ սրտիդ իղձը կատարէ, որ դու խելքի բերիք այդ որկրամոլ և աներես մուրացկանին»:

Անտինոս իսկոյն լիշեց խոստումն և Ողիսեւսի առջև դրաւ ծեծած մտով և արիւնով լի

փորոտին, որ արդէն խորովուած էր և անոյշ հոտ էր բուրում: Մէկ ուրիշն էլ՝ Ամփինոմոս, հաց բերաւ, ոսկէ բաժակով գինի տուաւ և ասաց Ողիսեւտին. «Յտարական, թէ և այժմ չարչարում ես, բայց ապագայում դեռ լաւ օրեր կը տեսնեմ»:

Ողիսեւս արդէն վաղուց նկատել էր, որ ամենազնիւն հոմանիներից Ամփինոմն էր, ուստի և ասաց նրան. «Ամփինոմէ, դու մի խոհուն պատանի ես երևում և պանծալի հօրդ նմանող, որի հռչակն և ճոխութիւնն ինձ էլ քաջ յայտնի են: Ուստի մի բան կ'ասեմ, դու էլ լաւ մըտիկ արա: Երկրիս վրայ շնչող և շրջող էակների մէջ մարդուց թշուառ բան չկայ: Քանի որ աստուածները նրան օֆանդակ են, անհոգ է և չէ մտածում, թէ բախտն իսկոյն կըփոխուի: Եւ երբ յանկարծ դժբախտութեան հանդիպի, ընկճվում է և չէ զօրում դրան քաջօրէն տանելու: Երբեմն ես էլ աստուածներից շատ բարիք էի ընդունել. սակայն բախտիս վրայ գոռոզացայ, և եղբայրներիս ու հօրս ուժին ապաւինած՝ շատերին չասցրի: Թրա համար է աւասիկ, որ այժմ ինձ նուաստացնում են անմահ դիք, որոնց աչքում պատժելի է ամէն մի անիրաւ գործ: Թող մարդս երբէք ապիրատ չինի երջանկութեան ժամանակ և չմոռնայ

ամենազօր աստուածներին։ Բայց ի՞նչ ենք տեսնում մեր առջև։ Հոմանիները չարչարում են պարկեշտասուն տանտիկնոջը և լրբօրէն վասնում են աղնիւ մարդու գոյքերը, — մարդու, որ անշուշտ պիտի վերադառնայ, և զուցէ արդէն մօտեցել է իւր յարկին։ Մաղթում եմ, որ հովանի աստուածդ հեռացնէ քեզ պալատից, մինչև որ յետ չէ եկել Ողիսես, քանզի անարիւն չի վերջանալ այն օրն, երբ նա իւր պալատի շէմքի վրայ ոտք դնէ»։

Այս զգուշարար խօսքերն առելուց յետ՝ Ողիսես աստուածներին նուէր հանեց, անուշաբոյր գինին խմեց և բաժակն արքայազնին յետ տուաւ։ Սա մի չար բանից տագնապելով, որահում ճեմել սկսաւ։ Բայց և այնպէս չհեռացաւ պալատից, այլ միւսների հետ միասին ու օրհասի հանդէպ դնաց։

6

ՊԵՆԵԼՈՊՈՅՆ ԵՐԵՒՈՒՄ Ե ՀՈՄԱՆԻՆԵՐԻՆ

Այժմ Աթենաս սաղբեց ուշիմ Պենելոպէին սրահ գնալ, որպէս զի մի բան ասէ սիրուն որդուն։ Հետն առնելով երկու նաժիշտ, թաղուհին սրահ մտաւ։ Հիացան հոմանիներն, երբ տեսան դշխովին, որին Աթենաս զարդարել էր

երկնային գեղեցկութեամբ, և առաւել փափագեցան փեսայ ընտրուիլ նրանից։ Գերափառ կինն խօսել սկսաւ և ասաց. «Ո՛վ Տելեմաք, լսեցի, որ մի աղքատ և հէք հիւր է բռնահարուել այս տան մէջ։ Ասա որդեակ, ինչո՞ւ թոյլ տուիր ալդպիսի բան, որ աստուածներին դժպհի է և մեր տանը ամօթ բերող»։

Տելեմաք պատասխանեց. «Ո՛վ մայր իմ, այս տեղ ես հարկաւ անզօր եմ խափանելու ամէն չարիք, որովհետեւ մէնակ եմ շատերի դէմ։ Սակայն զործի էութիւնը չեն պատմել քեզ ստուգապէս։ Ընդգալրայած իրոսը չար խօսքերով վերաւորեց նորեկ հիւրին և կռփամարտի զրգուեց։ Բայց կրիւը հոմանիների սպասած ելքը չունեցաւ, զի անմեղն, որին չար էլն կամենում, ահա նստած է շէմքի վրայ, և բոլորովին անվնան»։

«Դուստրդ Իկարիսի, քաջուշիմդ Պենելոպէ», ձայն կարդաց Եւրիմաքոս. «եթէ երկրիս բոլոր մարդիկն քեզ ալդպէս շքեղ և գեղեցիկ տեսնէլն, ինչպէս որ կանգնած ես արդ մեր առջև, ճշմարիս՝ այնքան հոմանիք կրխունուէին յարկիս տակ, որ պալատի ամենքին ամփոփելու չէր բաւիլ»։

«Գեղեցկութեանս վրայ մի խօսիր», պատասխանեց Պենելոպէն, «քանզի զրան առաւ տարաւ թախիծս, որ միշտ զգում եմ մարդուս չոմ, ողիս.

Համար: Այս ի՞նչքան ժամանակ է, որ սպասում եմ նրան կարօտակէղ և վշտահար: Նա այս տեղից մեկնելիս ասել էր ինձ, աջնաշխ մէջ դնելով. Միրելի կին, դժուար թէ ամէն մի յոյն ողջ և առողջ վերադառնայ արշաւանքից: Գուցէ ես էլ օրհասիս կըհանդիպիմ Տրոյակի մօտ: Ուստի ահա քեզ եմ յանձնում գոյքերս, դու եղիր ծերունի հօրս և մեր որդուն խնամատար: Սպասիր վերադարձիս, մինչեւ որ Տելեմաքի ծնօտների վրայ մրադարդ մօրուք ընձիւզի: Այնուհետև հարսնացիր ուրիշ մարդու և թող այս տունն, որպէս զի Տելեմաք դառնայ ստացուածքիս միակ տէրը: — Այսպէս խօսեց մեծասքանչն Ոդիսես, և ահա մօտեցել է այն օրն, երբ ես դժբախտաբար ուրիշ մարդու պիտի դնամ: Սակայն ցաւս սաստկանում է, մինչ մտածում եմ, թէ ի՞նչպէս էք ամուսնութեան թեկնածում: Մեր աշխարհի օրէնքով հոմանիները պարտական են շքեղ ընծաներ բերել այն տան, որից որ հարս են խնդրում. իսկ դուք ոչ թէ չէք բերում, այլ դեռ որդուս գոյքն էլ վատնում էք»:

Անտինոս նրան կրկնեց. «Մենք էլ շքեղ պարզեներ կ'ընծայենք քեզ, մեծաշուքդ գիենելովէ, բայց չենք թողնիլ այս պալատը, մինչեւ որ մեզնից մէկին փեսայ ընտրես»:

Իսկոյն հոմանիները քարոզներ արձակեցին գէպի տուն և շքեղ ընծաներ բերել տուին: Մին բերել տուաւ մի երփինազարդ զգեստ տասներկու համակ ոսկի ճարմանդներով, միւսն՝ մի ականակուու ոսկէ ձիտակ, երրորդն՝ եռակնեայ ոսկէ օղեր, չորրորդն՝ մի հրաշակելոտ պերճ մանեակ: Միւսներն էլ տեսակ տեսակ չքնաղ զարդեր:

7

ԵկրիՄԱՔՈՍ ՈՂԻՄԵԿՈՒ ՀԱԿԱՌԱԿ

Երեկոյ էր: Վաղուց արդէն Պենելոպէն քաշուել էր իւր սենեակը. բայց հոմանիներն զեռ զուարճանում էին երդ ու պարով: Կրակարանի վրայ հրատ էր վառվում, և նաժիշտները փայտ էին ձգում կրակի մէջ:

Եւ Ոդիսես նրանց ասաց. «Ո՛վ նաժիշտներ, դնացէք տիրուհու սենեակն և զրօսեցրէք նրան սփոփական զրոյցներով: Իսկ ես այս տեղ կը նստեմ և կըհոգամ, որ կրակը վառուի, թէ կուզ հոմանիները մինչեւի լոյս մնալու լինին պալատում»:

Սղիկներն այս որ լսեցին, Ոդիսեսին ծազր արին, և գեղեցկայտն Մելանթօն ասաց. «Ա՛յ թշուառ, որ անշուշտ խելազուրկ ես. լաւ չէ, որ գնաս, մի լջեանում շնդրկես, քան թէ այս

տեղ մնաս և մեծերի վրայ լրբօրէն բարբաջես: Միթէ արդէն հպարտացար, որ իրոս մուրկին պարտեցիր: Տես, որ այժմ մէկ ուրիշն քո՛ գլուխը ըջարդէ և քեզ պալատից դուրս չըձգէ»:

Ոդիսես վեր կացաւ, խոժոռ խոժոռ նայելով, և ասաց. «Այ դու շուն, իսկոյն կ'երթամ, լուտանքդ Տելեմաքին կըյալտնեմ, որ բոլոր ատամներդ փշրատէ»:

Այս սաստը լսելուն պէս՝ նաժիշտները դուրս փախան. որտերը դող ընկաւ, որովհետև կարծեցին, թէ Ոդիսես ստորդ սպառնացաւ: Իսկ Ոդիսես նորից նստաւ կրակի մօտ և հոգ էր տանում վառ պահելու, ինքն իրեն խոկալով, թէ ինչ անէր, որ յաղթող դուրս դար հոմանեաց դէմ սկսելու կրուից:

Սակայն այս լոիկ խոկմունքն երկար չտեսեց: «Լսեցէք ինձ, հոմանիներ», գոչեց Եւրիմաքոս ծաղրաբանող շրթունքով: «Անշուշտ մի աստուած առաքած կըլինի այս օտարին: Պատճառ տեսէք՝ ճաղատ դուխն ինչպիսի փալ է արձակում»:

Յետոյ դարձաւ Ոդիսեսին և ասաց. «Ո՛վ հիւր, արդեօք կուզէիր մշակ լինել այգուս մէջ, ծառեր տնկել և փուշ քաղել: Բայց տեսնում եմ, որ սովոր ես դատարկ շրջել և մուրալով բուժանել անյագ փորդ»:

Ոդիսես պատասխանեց. «Ո՛հ, երանի թէ ես և գու, մի մի գերանդի բռնած, ի վէդ դայինք արտ հնձելու: Կամ երկուսս էլ առջևներս ունենալինք արօրագիր և համազօր յաղթ եղներ, և տեսնէինք՝ մվ մեղնից առաւել շատ ակօս կըբանար և կոշտ հողը կըպատռէր: Կ'ուզէի, որ ռազմի մէջ էլ տեսնէիր ինձ: Գուցէ այն ժամանակ ուրիշ աչքով վրաս նայէիր և փորս ալպանելուց դադարէիր: Սակայն լսէր. դու անագործն և անբարենէր սիրտ ունիս, և կարծում ես թէ հզօր ես, որովհետև ընկերներդ տկար են: Հապա թող Ոդիսեսը վերդառնայ: Այս ժամանակ կ'երեւի, թէ որ դրնից կըփախէնս»:

Սաստիկ զայրացաւ Եւրիմաքոս այս խօսքերից: «Այ ապիրատ», դուռաց նա, «իսկոյն կը պատժեմ քեզ, որ յանդգնում ես այգպէս լիրք լիրք խօսելու: Հը՝, երեւի զինին խելքդ թուցրեց, կամ շփացար, որ մուրկին յաղթեցիր»: Ասաց, և պատուանդանն Ոդիսեսի դէմ նետեց: Բայց ոա իսկոյն զուճ եկաւ Ամփինոմի ոտքերի տակ, այնպէս որ պատուանդանը դրան դիպաւ և երեսն ի վեր յատակի վրայ տապալեց:

Այս դէպքի վրայ սրահում մի մեծ աղմուկ բարձրացաւ, և հոմանիներից մին ասաց. «Երանի թէ այդ մարդն մեղ մօտ չեկած մի որ

և է տեղ մեռած լինէր: Անպիտանը վէճ ու կրիւ է ձգում մեր մէջ և կոչունքը դառնացնում»:

Բարկացայտ աչքերով ոտքի ելաւ Տելեմաք և ասաց. «Ով խելարներ, ձեր կոչունքը դառնացնողը մուրիկը չէ, այլ զինին: Կարծում եմ, թէ արդէն շատ կերաք, շատ խմեցիք. լաւ կ'անէիք, որ այժմ գնալիք, կորչէիք»:

Ափերեան շուարեցան բոլորեքեան, ալսպիսի համարձակ բան լսելով Տելեմաքից: Բայց Ամփինոմոս, որ զգուշաբար խրատ էր լսել Ողիսևսից, մտերմաբար ձայն կարդաց. «Բարեկամներ, տեսէք հա, որ ոչ ոք ձեզնից Տելեմաքի դէմ մի զրգուիչ բան չխօսէ. լաւ է՝ եկէք նուէր հանենք աստուածներին և հեռանանք այս տեղից»:

Հոմանիներն այս խորհուրդն ընդունելով, նուէր հանեցին, բաժակները քամեցին և պալատից մեկնեցան:

8

ԶԵՆՔԵՐԸ ՓՈՒՄԴՐՎՈՒՄ ԵՆ, ԵՒ ՊԵՆԵԼՈՊԻՆ ՍՐԱՀ Է
ԻՉՆՈՒՄ

Ողիսւս սրահում մնաց և պատուիրեց Տելեմաքին՝ վերնատուն տանել զէնքերը: Տելեմաք

շտապով գնաց Եւրիկլէ դայեակի մօտ և ասաց. «Մալրիկ, արի նաժիշտներին իրենց սենեակի մէջ զոցիր, մինչև որ վելնատուն տեղափոխեմ հօրս զէնքերը, որոնք ծխից մրճութում են սրահի մէջ»:

Եւրիկլէն կրկնեց. «Բարի է, որդեակ, որ ուղում ես հօրդ զուքերը պահպանել: Բաց ով ջահ կըբոնէ առջևիցդ, եթէ նաժիշտները սենեակում փակուած մնան»:

Քաջուշիմն Տելեմաք պատասխանեց. «Այս մուրիկը թող ջահ բոնէ: Տանս մէջ հաց ուտողին վայել չէ բոլորովին անդորք մնալ»:

Դայեակն արաւ, ինչ որ ասաց Տելեմաք. իսկ սա և Ողիսւս խոկոյն գործի սկսելով, սաղաւարտները, սլաքաւոր աշտէներն և կմբաւոր վահանները վերամբարձ սիւներից և որմերից հանեցին և այս բոլորը վերնատան մի սենեակում զետեղեցին: Աթենաս դիցուհին գնում էր նրանց առջևից և լոյս էր սփոռում մթութեան մէջ:

«Հայր իմ, այս ինչ հրաշք է», զոցեց Տելեմաք հիասյմամբ: «Մեր տան որմերն, օդապար սիւներն, մարդակները, նա և պատի խոռոչները կրակի պէս փալլակում են: Անշուշտ երկնաճեմ աստուածներից մին այս տեղ մտած կը լինի»:

«Որդեակ», անդրագարձ տուաւ Ողիսւս, «մի

իսուզարկիր սրտիդ մէջ, ինչ որ անում են աստուածները»:

Զէնքերն վերև որ տարուեցան, Ողիսւս ասաց. «Այժմ գնա ննջիր, Տելեմաք, իսկ ես գեռ սրահում կըմնամ և կըխօսեմ մօրդ հետ»:

Հէնց որ Տելեմաք հեռացաւ, Պինելոպէն ներս մտաւ: Ի՞նչպէս էր ուզում Ողիսւս փարուիլ նրան և իսկոյն յայտնել իւր անձը: Բայց տակաւին զսպեց իրեն, թէպէտ և մեծ դժուարութեամբ: Նաժիշտները կրակի մօտ զետեղեցին թագուհու գահն, որ արծաթով և փղոսկրով զարդարուած էր, և վրան մի փափկաստե մօրթսփուեցին: Կոր էր նստել Պինելոպէն, երբ միւս նաժիշտներն էլ վայր իջան և հոմանիների սեղանները մաքրել սկսան:

Մելանթօն՝ նաժիշտներից ամենալկտին, հէնց որ տեսաւ բազմավիշտ Ողիսւսին, երկրորդ անգամ նախատեց: «Օտարական», ասաց նա, «ուզում ես զիշերով էլ զզուեցնել մեզ: Կորի՛ր շուտով, թշուառական, թէ չէ խանձորով դուրս կըվարեմ քեզ»:

Թագուհին այս խօսքերն որ լսեց, ասաց. «Ա՛յ լիրը կին, այ շուն, այդ յանցանքը պիտի տուժես: Միթէ չլսեցիր իմ շըթունքից, որ խօսել եմ ուզում այս մարդու հետ և ամուսնուսին մասին բան հարցնել»:

Այս ասաց թագուհին և հրամայեց տնտեսուհուն՝ աթոռ բերել հիւրի համար և կրակի մօտ կանգնեցնել»:

9

ՈԴԻՍԵՒՍԻ ԽԹՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԵՆԵԼՈՊԵԻ ՀԵՏ

Երբ Ողիսւս կնոջ հանդէպ տեղ բռնեց, Պինելոպէն հարցմունք արաւ. «Ասա ինձ այժմ, օտարական, ինչ է անունդ, որ երկրից ես»:

Ողիսւս հարկադրուեցաւ կնոջն էլ մի ստայօդ բան պատճել: Պատճելիս աւելացրեց, թէ քսան տարի առաջ տեսած էր Ողիսւսին և իւր մօտ հիւրասիրած:

Քիչ էր մնացել, որ լորդառատ արտասուքից Պինելոպէի սիրտն անցնէր, երբ լսեց սիրելի ամուսնու անունը: Իսկ Ողիսւս ամուր մնաց և թէպէտ իւր սիրտն էլ տոչորվում էր, բայց լաց չեղաւ, ասես թէ աչքերն եղջիւրից կամ երկաթից լինէին:

Կցտապինդ լալուց յետով թագուհին ասաց. «Ո՛վ հիւր, այժմ ուզում եմ փորձել քեզ՝ արդեօք իլամւ ես տեսել ամուսնուս: Հապա ասա ինձ—ինչ հանդերձ ունէր հազին, ինչպէս էր նրա պատկերը, ովքեր կալին նրա հետ»:

Խորլագէտն Ողիսւս պատասխանեց. «Ո՛վ թա-

գուհի, ճշգրտապէս կըպատասխանեմ հարցերիդ, թէև արդէն քսան տարի է, որ չեմ տեսել քաջակորով Ողիսեսին: Նա դեռ կանգնած է աչքիս առջև, ասես թէ հէնց այս օր տեսած լինէի: Այն ժամանակ նա կրում էր մի ծիրանի վերարկու, որ կրկին ճարմանդներով կոճկուած էր: Ճարմանդից վայր գտանվում էր մի հրաշալի ձեռակերտ. դա էր մի որսի շուն, որ նայում էր թաթերի տակ ընկած եղջերուին: Ոչ ոք առանց հիացման չէր կարանում զննել այդ սքանչելի ձեռագործը: Յիշում եմ սիրուն բաճկոնն էլ. դա չոր սոխի մաշկի նման քնքոյշ էր և արևի պէս շողողուն: Արդեօք տանից էր բերել այդ պատմուանը, թէ ճամբու վրայ մէկից պարզել ընդունել չեմ կարող ասել: Նրան ուղեկցում էին շատ մարդիկ, բայց մէկին եմ միայն յիշում—նրա քարոզին, որ թխամորթ, գանդրահեր և ուսերն կոր մի մարդ էր Եւրիբատէս անունով: Ողիսես դրան միւսներից շատ էր յարգում, զի երկուսն էլ իրար համամիտ էին»:

Եւս առաւել լաց եղաւ Պիենելոպէն այս խօսքերը լսելիս, և ասաց. «Ո՞վ հիւր, այժմ տանս մէջ դու շատ յարգուած կըլինիս, քանզի ահա ստուգեցի, որ իրաւ ես տեսել մարդուս: Յիշած պատմուանդ ես ինքս էի տուել նրան և ոսկէ ճարմանդն էլ ինքս էի ծիրանու վրայ ամ-

րացրել: Ո՞հ, էլ երբէք նրան տեսնելու չեմ»: Ողիսես կըկնեց. «Չեմ կամենում խարել մի կին, որ ողբում է ամուսնուն. սակայն, ով թագուհի, ի բաց վանիր դառն վշտերդ և լսիր, ինչ որ գիտեմ դիւցազն Ողիսեսի դարձի մասին: Նա շատ չի մնալ թեսպրոտների հարուստ երկրում, և հէնց որ փոթորկից վնասուած նաւը նորոգէ, իսկոյն ճոխ դանձերով բեռնաւորուած՝ հարենիք կըվերադառնայ: Այս, պիտի տեսնես նրան, ով տիրուհի. երդվում եմ բարձրագահն Արամազդով և այս յարկի սրբութեամբ»:

«Ա՞ս, բարեսիրտ օտարական, երանի թէ աւետիքդ կատարուէր», բայցականչեց Պիենելոպէն: «Այն ժամանակ այնքան պարզել կըստանալիր, որ ամէն մարդ քեզ երջանիկ կ' անուանէր: Սակայն, աւազ, որ դա երբէք չի կատարուիլ»:

Այնուհետև Պիենելոպէն դարձաւ նաժիշտներին և ասաց. «Եկէք, հիւրին մեծարեցէք, ոտքերն լուացէք և ապա թէ մահիճ, վերանկ, գորգեր բերէք, որ հանգստանայ մինչեւ պայծառ առաւօտը: Իսկ յետով օծեցէք դրան և

սիրուն շորեր հազցրէք, որպէս զի նստի մեր սիրելի որդու մօտ, երբ գոռող հոմանիները վերադառնան: Եւ ով էլ համարձակուի նեղել հիւրիս կամ այսանել, կըվոնտեմ պալատից, ինչքան էլ նա դէմ կենար»:

«Ո՞վ բացակայ դիւցազնի մեծափառդ ամուսին», զոչեց Աղիսւս, «կեանքս այնքան չարքաշ է, որ շքեղ զգեստներն և գորգերն աչքից իսպառ ընկել են: Ուրեմն թոյլ տուր, որ յատակի վրայ պառկեմ, ինչպէս որ վաղուց ստվորած եմ: Ոչ ոք էլ նաժիշտներից թող չմերձենայ ոտքերիս, եթէ լուացողն մի պառաւ մալրիկ չըլինի, որ իմ չափ վիշտ քաշած լինէր երկրիս վրայ: Միայն այդպիսուց չեմ դժուարիլ սպաս ընդունել»:

«Յտարական», պատասխանեց թագուհին, «դեռ երբէք այդքան հանճարիմաստ և սիրելի հիւր ոտք չեր դրել տանս մէջ: Ի՞նչ էլ ասես, ամէն խօսքդ վայելուչ է և դիպան: Այս, ունիմ մի յարգելի պառաւ մալրիկ Եւրիկէ անունով, որ պերճ մարդուս դայեակն էր և որդեկիս ինսամածուն: Նա կըլուանայ ոտքերդ»:

Թագուհին դարձաւ և կանչեց բարեհոգի պառաւին. «Աս տեղ արի, արդոյ մալրիկ», ասաց նա. «Ճառայութիւն արա քեզ համատիք

ծերուկին և լուա ոտքերն, որ տեսնէ, թէ նրգան եմ յարդում իրեն: Գուցէ տիրոջդ ոտքերն էլ այժմ հէք աղքատի ոտքերի պէս են, քանզի տառապանքի և ցաւի մէջ մարդիկ շուտ են ծերանում»:

Աղիսւսի լիշտական ի գութ շարժեց պառաւի սիրտը: «Նա երեսը ձեռքով ծածկեց և լաց եղաւ: Յետոյ ասաց ողորմ ձայնով. «Զարմանք է, որ Արամազդ այնքան աղէտ տուաւ նրան, մինչ նա միշտ բարեպաշտ էր: Արգեօք նրա չափ ով երեք նուէր հանեց ամպակուտակ Արամազդին, անդորր ծերոյթ մաղթելով: Բայց Արամազդ ականջ չըդրաւ նրա աղերսին: Արգեօք ինչքան թափառեց նա, մինչև որ իւր օրհասին զոհ գնաց: Գուցէ նրան էլ, ինչպէս և քեզ, խեղճ մուրիկ, վշտացնում էին աղախիններն, երբ մտնում էր մի հարուստ տուն և հաց խնդրում: Սակայն զոհ եմ, որ ոտքերդ լուանալու հրաման տուաւ տիրուհիս: Յօժար սրտով և քեզ սիրելով կըկատարեմ այդ հրամանն, ով ծերուկ: Պատճառ երբէք չեմ տեսել մի օտար մարդ, որ թէ հասակով, թէ քալուածքով և թէ ձայնով այնքան տիրոջս նմանէր, ինչքան որ դու ես նմանում»:

«Աղիսւսին ճանաչողներն, ինձ տեսնելով, վաղուց այդպէս կնքեցին», պատասխանեց Աղիսւսին ճանաչողներն, ինձ տեսնելով,

սես: «Խօսքերիցդ տեսնում եմ, որ տիրասէր պառաւ ես»:

Եւրիկլէն բերաւ մի փայլուն կոնք և մէջն ածեց նախ ցուրտ չուր և ապա տաք:

Այդ միջոցին Ոդիսես յանկարծ մի բան լիշեց, որ նրան շատ տագնապեց: Կա տակաւին չամուսնացած՝ մի օր վարադ որսալիս, դրա ժանիքից վէրք էր ստացել, և վէրքի սպին քաջ յայտնի էր Եւրիկլէին, որ շատ անդամ նրա ոտքերը լուացել էր: Այժմ վախենալով, որ սպին իրեն չմատնէր, Ոդիսես տեղից վեր կացաւ, աթոռը շրջեց և թիկունքը կրակին դարձրած աթոռ նստաւ:

Բայց և այնպէս պառաւը, նրա ոտքերը լուանալիս, սպին ճանաչեց: Ճուրեցաւ կինն ուրախութիւնից և բաց թողաւ հիւրի ոտն, որ կրնքի մէջ ընկնելով, դրան շառաչմամբ թաւալեց և բոլոր ջուրն վայր վոթեց: Պառաւի աչքից յորդ արտասուք թափուեցան, հաղագի մէջ ձայնը հատաւ, և նա ապշած իւր սիրելի տիրոջ վրայ նայեցաւ: Վերջապէս նրա շրթունքից այս խօսքերը դուրս թռան. «Այս, գու ես Ոդիսեսը, այն սիրասուն որդեակս, որին մանկութիւնից ինամել եմ. վերջապէս քեզ ճանաչեցի, ոտիդ սպին շօշափելով»:

Եւրիկլէն զուարթ գէմքով իւր տիրուհու մօտ

գնաց: Բայց տիրուհին ոչինչ չընշմարեց այդ բոլորից, զի Աթենաս ուրիշ բանով էր զբաղեցրել նրա ուշքն ու միտքը:

Իսկ Ոդիսես դայեակի վզից արագ բռնեց, որ չկարանայ բան խօսել, աջ ձեռով իւր մօտ քաշեց և կամացուկ սպառնաց. «Եւրիկլէ, դու որ մի ժամանակ սնուցել ես ինձ գրկիդ մէջ, այժմ ուզում ես կործանել: Եւ անշուշտ կը կործանես, եթէ չըլուես: Ուրեմն վերադարձո ոչ մի մարդու մի յայտնիր: Եթէ յայտնես, քեզ էլ միւս աղախինների պէս կըպատժեմ, երբ աստուծով հոմանիններին կոտորեմ»:

«Որդեակ իմ», պատասխանեց Եւրիկլէն, «այդ ինչ խօսքեր ասացիր: Միթէ չգիտես, որ իմ սիրաը հաստատ է: Գաղտնվագիտ այնպէս պահուած կըմնայ սրա մէջ, ինչպէս որ երկաթի կամ քարի մէջ: Սակայն մի բան կ'ասեմ: Երբ Արամագի ձեռքդ մատնէ հոմանիններին, այն ժամանակ մի առ մի քեզ հաշիւ կըտամ, թէ ո՛ր աղախինները յանցաւոր են և որոնք են բարերարոյ և քո յարկին հաւատարիմ»:

«Այդ աւելորդ է», կրկնեց Ոդիսես, «քանզի, մայրիկ, ես ինքս արդէն նրանց դիտեցի և լաւ տեսայ, թէ ով ինչպէս է տրամադրուած: Միայն սրտումդ թաքուն պահիր, ինչ որ այժմ իմացար, և մնացեալն աստուածներին յանձն արա»:

Եւրիկլէն գնաց ուրիշ ջուր բերաւ, թագաւորի
ոտքերն լուաց և օծեց պարարտ իւզով:

11

ՊԵՆԵԼՈՊԻՒ ԵՐԱԶԲ.


Այնուհետև Ոդխաւս նորից շուր տուաւ ա-
թոռն և գարձեալ նստաւ կրակի առջեւ, որ
ջեռուցիկ լոյս էր սիուում: Թագուհին ալժմ ուշ-
քի եկաւ խոր մտածմունքից, և այսպէս ասաց
Ոդխաւսին.

«Ո՞վ հանճարիմաստ օտարական, մի ուրիշ
հարցմանս էլ պատասխան տուր, քանզի գի-
շերուայ անոյշ հանգստեան ժամն արդէն հա-
սել է, թէպէտ և ոչ ինձ համար: Ա՛խ, ամուս-
նուս մեկնելուց յետ դառն չարիք վիճակուեցան
թշուառիս: Ինչպէս որ Պանդարոսի աղջիկն՝
Սոխակը, երգել է սկսում դարնան ժպտուն ե-
ղանակին և ողբալով իւր սիրելի որդեկին, որին
մի օր լիմարաբար սպանել էր, հնչուն մըմունջ
է արձակում դալար ոստերի միջից,—այնպէս էլ
ես, սրտումս աննիրհ ցաւեր կրելով, աչքաբաց
եմ անցկացնում զիշերները մահճիս մէջ, և մոր-
մոքիչ վիշտը մէկ այս, մէկ այն վճիռն է աղ-
դում տրտում հոգուս: Մերթ թւում է ինձ, որ
լաւ կ'անեմ, եթէ մարդուս միշատակը պատուե-

լով, այս պալատի մէջ մնամ. մերթ էլ թւում
է, որ լաւ կըլինի, եթէ հոմանիներից մէկին
ընտրեմ և այս տեղից հեռանամ, մանաւանդ
որ նրանք որդուս գոյքը վատնում են: Սակայն,
ով հիւր, հապա մեկնիր այս երազս:—Բակում
կանդնած՝ նայում էի քսան սագերիս, որոնք
կուտ էին ուտում ջրի միջից: Յանկարծ լեռնե-
րից մի ծուռ-կտուց արծիւ թուաւ, սագերիս
վրայ նետուեցաւ և բոլորին խեղդուտեց: Սպիտակ
սպիտակ սագերս արիւնաթալթաւ գլորուեցան,
իսկ արծիւն աստուածալին եթերի մէջ սրա-
թեւց: Երբ բարձրածայն ճիշ հանելով, ողբում
էի սագերս, նաժիշտներս վրայ հասան և ինձ
սփոփել սկսան: Բայց մինչդեռ նրանք խօ-
սում էին, արծիւն դարձեալ բարձունքից վայր
սլացաւ, մեր տան կտրի վրայ նստաւ և մարդ-
կալին ձայնով ասաց. Քաջալերուիր, երջանկա-
փառ թագաւորի աղջի՛կդ: Տեսածդ մի երազ
չէ, այլ տանջանքիդ վերջանալուն գուշակու-
թիւն: Սագերը՝ հոմանիքն են, իսկ ես, որ ար-
ծուի նման վայր սլացայ, ամուսինդ եմ, որ ե-
կել եմ դժնդակ մահ բերելու նրանց գլխի՞ն:—
Քունն ինձ թողաւ: Իսկոյն մահճից վեր կացայ,
բակ գնացի և տեսայ, որ սագերս բոլորն էլ ողջ
և առողջ կուտ էին ուտում ջրի միջից: Այս էր,
ով հիւր, երազս, և խնդրում եմ, որ մեկնես»:

Հոմ. Աղիս.

16



«Երազիդ իմաստն ակներեւ է», պատասխանեց Ողիսևս: «Արծուի գուշակութիւնը կըկատարուի, և հոմանիները կըկործանուին»:

Թագուհին ասաց. «Յտարական, աստուածներն երկու տեսակ երազներ են առաքում մեզ: Են որ իսկոյն կատարվում են, և են որ անհմաստ են և խարուսիկ. այսպէս էր անշուշտ և իմս, որ ինձ այնքան վրդովեց: Ուստի չեմ կամենում, որ որդուս դուքն այլ ես երկար սպառուէր, և թող էզուց որոշուի, թէ ո՞ր հոմանին ամուսինս կըդառնայ: Ողիսևս կարացել էր փքին անցկացնել տասներկու իրար ետև դրուած երկաթէ օղակներից: Ես էլ այս մըրդցանքը կ'առաջարկեմ հոմանիներին: Ո՞վ որ յաջողի ամուսնուս աղեղն լարել և փքինը տասներկու օղակներից անցկացնել, նրան մարդու կ'երթամ և կըթողնեմ այս հոյաշէն պալատը, որ երազումս անդամ լիշելու եմ»:

«Վեհ թագուհի», պատասխանեց Ողիսևս, «ասածդ ի գլուխ հանիր, բատ որում ամուսինդ յետ չի գալ, մինչև որ սեղեխներդ լայնալճի զօրութիւնը չփորձեն»:

Թագուհին անդրագարձ տուաւ. «Ո՞վ հիւր, ինչքան էլ երկար մօտս նստելու լինէիր, քունս բնաւ չէր տանիլ, և մինչև ոսկեմատն արեգակի ծագիլն սիրով ականջ կըդնէի քեզ: Սակայն

ամէն բան իւր ժամն ունի, և մահկանացուք չեն կարող միշտ անքուն մնալ, այլ պէտք է, որ փոփոխաբար մերթ հսկեն և մերթ հանդչին, ինչպէս որ սահմանած են անմահ դիք: Ուստի կ'երթամ վերնատունս և կըմտնեմ մահիմս, որ ցաւերի մահիմ է դարձել ինձ համար հէնց այն օրից, երբ Ողիսևս դէպի Տրոյա չու ընկաւ: Իսկ դու սրահում մի անկողին ձգել տուր, ինչպէս և ուր կամենաս»:

Այսպէս ասաց թագուհին և դուրս ելաւ սրահից:

ՎԵՅԵՐՈՐԴԻ ՏԻՐԱ

ՄԱՐՏԸ

1
ԲԱՐԵԳՈՒՇԱԿ ՆՇԱՆՆԵՐ

Ողիսւս յատակի վրայ մի եղի կաշի փռեց,
վրայից էլ մի քանի ոչխարի մորթ: Յետոյ պառ-
կեցաւ, և Եւրինոմէ տնտեսուհին ծածկեց նրան
մի վերմակով: Մինչդեռ Ողիսւս այսպէս պառ-
կած իսրհում էր, թէ միւս օրն ինչ պիտի անէր,
յանկարծ լսեց սեղեխների մօտ դնալու պատ-
րաստուող նաժիշտների լկտի ծիծաղը: Սարսա-
փելի զայրոյթ զգաց Ողիսւս և արդէն կամե-
նում էր վեր ցատկել, որ սպանէ այդ պակշոտ
և վավաշոտ էակներին: Սակայն մտածելով, որ
եթէ այդպէս անէր, իւր գործին կըվնասէր,
բռնահարեց զայրոյթն և անկողնում պառկած
մնաց: Բայց չկարացաւ հանգիստ ննջել, այլ
շարունակ այս կողմ, այն կողմ էր պտուտ գա-
լիս և տքնում, որոճալով այն վտանգաւոր

գուպարն, որ սկսելու էր միւս առաւօտ:

Յանկարծ Աթենաս դիցուհին նրա մօտ իջաւ,
սիրտն յուսով լքցրեց և աչքերին մի կազդու-
րիչ քուն հոսեց, որպէս զի յառաջիկայ կոռի
համար մարմնի ոյժ վերըստանալ:

Խոկ թագուհին միայն լուսու դէմ մի կար-
ճատև նինջ վայելեց: Նա երազեց, որ իրը թէ
իւր կողքին նիրհել էր ամուսինը հէնց այն
զգեստով, որ հագած էր մեկնելիս: Աչքերն որ
բաց արաւ, ստուգեց, որ տեսածը լոկ երազ էր,
ողբալ սկսաւ և հեծելով աղերս կարդաց Արտե-
միս աստուածուհուն. «Ո՞վ դիցանոյշ Արտեմիս,
լաւ է նետովդ սիրտս խկոն շամփրէիր և հո-
գիս առնէիր: Կամ թէ մի մրրկածուփ հողմ
գալով, վերցնէր ինձ և ձգէր Ովկիանոսի ամե-
նահեռու եզերքը, և ես Ողիսւսի մօտ դժոխքի
անդունդն իջնէի, քան թէ ստիպուէի մի ուրիշ
մարդու կին դառնալ»:

Թագուհու դառնակսկիծ հառաչանքի ձայ-
ներն մինչեւի որահը թնդացին արշալուսի լոռ-
թեան մէջ և զարթեցրին Ողիսւսին: Սա ան-
կողնից վեր կացաւ, թաւամազ օգենիքն և վեր-
մակը մի աթոռի վրայ դրաւ, իսկ եղի կաշին
գուրս տանելով բակում փռեց: Յետոյ այսպիսի
աղօթք վերառաքեց Արամազդին. «Արամազդ
հայր և դուք միւս անմահ դիք, որ յետ ան-

բաւ աղէտներից հայրենիքս բերիք ինձ, ոհ, առաքեցէք մի նշան, որ տեսնէի, թէ կամենում էք պաշտպանել ինձ մարտի մէջ»:

Այսպէս մաղթեց Ոդիսես, և Արամազդ նրան լսեց, քանզի ջինջ և անամպ երկնքից որոտումն առաքեց: Այլ և ուրիշ նշան տուաւ: Պալատի մօտ մի տուն կար, մէջը բնակում էին տասներկու կին, որոնք ձեռաց աղօրիով ամէն օր հոմանիների համար ցորեն էին աղում: Ամբողջ գիշեր աղացել էին, և տասնմէկն արդէն իրենց գործն աւարտել ու քնել էին. իսկ տասներկուերորդը դեռ պտտում էր աղօրին: Տաժանելի աշխատանքից վաստակած, դա դուրս ելաւ և, առանց տեսնելու Ոդիսեսին, այսպիսի աղօթք կարդաց. «Արամազդ հայր, որ իշխում ես աստուածների և մեր վրայ, դու իսկոյն որոտացիր պարզ և պայծառ երկնքից: Անշուշտ դրանով բարի նշան կամեցար տալ մի որ և է մահկանացուի: Ո՛հ, իմ աղերսն էլ արդ լսիր: Թող պորտաբոյծ հոմանիներն, որոնց համար մինչեւ այժմ ես մահու չափ տանջուել եմ, վերջին անգամ ընթրեն այս օր Ոդիսեսի պալատում»:

Խնդաց Ոդիսես, այս խօսքերն լսելով, և առաւել ևս յոյս ստացաւ, թէ Արամազդ զօրավիդ կըլինէր իրեն մարտի մէջ:

2
ԵԶՆԱՐԱԾ ՓԻԼԵՏԻՌԱԾ

Այժմ բոլորն էլ պալատի մէջ զարթեցան, և նաժիշտները սրահ մտնելով, կրակարանում հուր վառեցին:

Տելեմաք էլ վեր կացաւ և հրապարակի ժողովն գնաց. հետն էլ երկու շներ: Նոյն միջոցին Եւրիկլէն աղախիններին կանչեց և ասաց. «Ճուտ արէք, ով աղջիկներ: Սրսկեցէք սրահի յատակն, աւեցէք և աթոռների վրայ ծիրանի գորգեր փռեցէք: Իսկ միւսներդ սեղանները սպունգով մաքրեցէք և բաժակներն և թասերը յստակ ջրով լուացէք: Յետոյ վերցրէք սափորներն և ջուր բերէք աղբիւրից: Ճտապով արէք ամէն բան: Այս օր հոմանիները սովորականից վաղ պիտի գան, պատճառ այս օր լուսանորի մեծ տօն է»:

Մինչդեռ քսան աղախին աղբիւրի մօտ գնացին, ուր Ոդիսես այնպէս ծանր նախատուել էր այծապանից, հոմանիների ծառաներն արդէն սկսան պալատ դալ և փայտ ջարդել, որպէս զի վառելու նիւթը չպակախ կերակուրներն եփելիս:

Ճատ չանցած գափիթ մտաւ և քաջարին Եւմէոս, հետն երեք պարարտ խոզ բերելով, ինչպէս պատուիրել էր Տելեմաք: Նա իսկոյն

Ողիսևսին նշմարեց և ասաց մտերմաբար. «Արդեօք այժմ հոմանիներն առաւել լաւ աչքով են վրադ նախում, թէ դարձեալ առաջուայ պէս լրբաբար են վարվում հետդ»:

Ողիսևս պատասխանեց. «Երանի՛ թէ աստուածներից սատակամահ լինէին այն խայտառակ գործերի համար, որ լրբօրէն կատարել են այս տան մէջ»:

Մինչդեռ նրանք խօսում էին իրար հետ, Մելանթէս այծապանն էլ բակ մտաւ իւր հօրանի ամենալաւ այծերով, որ բերել էր սեղեխների ճաշի համար: Տեսաւ թէ չէ Ողիսևսին, մօտեցաւ նրան և ասաց. «Ելի՞ ես ուզում մեզ ամենքիս զզուացնել: Խորհուրդ կըտամ շուտով կորչել այս տեղից, եթէ չես ուզում, որ սպանեմ քեզ բռունցքնվս»:

Ողիսևս պատասխան չըտուաւ, այլ կրծքի մէջ ճնշեց զայրոյթը:

Երբ Մելանթէս սրահ մտաւ, եկաւ Փիլետիսս հովիւն էլ, մի գեր կով բերելով, որ և կապեց դաւթում այծերի մօտ:

«Եւմէոս», ասաց նա, «ով է այս օտարականն և ինչ երկրից: Հասակին և շարժուածքին որ նայես, կ'ասես թէ մի թագաւոր է»:

Այսպէս խօսեց, և Ողիսևսին մօտենալով, բարեկց նրան և ասաց. «Ողջո՞յն քեզ, օտարական:

Ճորերիդ նայելով, շատ տանջանք կրած պիտի լինիս. սրտանց մաղթում եմ, որ կոնէ ապագային երջանիկ օրեր տեսնես: Ո՞վ Արամազդ հայր, ի՞նչպէս խորտակիչ է վճիռդ հէքերի համար, որտնց չարաչար ընկճում ես, մինչդեռ դրանց էլ ինքդ ես ստեղծել: Այս մուրկին որ տեսալ, խորյն տիրոջս լիշեցի. ճակատիս վրայ քրտինք եկաւ և աչքերս թրջուեցան: Մտածեցի, գուցէ տէրս էլ այս ծերունի աղքատի պէս անտուն անտէր թափառում է: Նա կարդել էր ինձ տուարած յայնաճակատ նախրի վրայ: Օրէ օր ճոխանում է տաւարն և անթիւ էլ կրազմանար, եթէ որկրամոլ հոմանիները շարունակ չըշուայտէին պալատում: Դրանք ոչ բարեբարոյ վարք ունին, ոչ էլ երկիւղ աստուածների պատուհասից: Վաղուց սիրտս կեղեքվում է այդ բանից, և շատ անդամ կամեցել եմ մի ուրիշ երկիր քշել արջառս և փախչել: Եւ այդպէս էլ կ'անէի, եթէ դրանից տիրոջս որդուն վնաս չհասնէր: Այսպէս ահա կրում եմ, ինչոր անզօր եմ փոխելու, բայց միշտ էլ յոյս կայ սրտիս խորքում, թէ մի օր յետ կըգայ մեծափառն Ողիսևս և հզօր բաղկով կըվռնտէ իւր տանից սեղեխների այս վոհմակը»:

Ողիսևս նրան պատասխանեց. «Քաջ անդէորդ, տեսնում եմ, որ մի ազնիւ, ուշիմ մարդ

ես, և երդվում եմ Արամազդով և Ողիսի հիւր-
ընկալ տնով, որի շէմքը կոխել եմ, — Ողիսեւս
կրվերադառնայ, դեռ քանի որ այս տեղ ես:
Այս ժամանակ յատուկ աչքովդ կրտեսնես, թէ
ինչ պատիժ կրկրեն նրա ստացուածքն ինքն-
իշխան յափշտակող լրերը»:

«Երանի թէ անմահ դիք խօսքդ ի կատար
հանէին», կրկնեց նրան անդէորդը: «Այս ժա-
մանակ կրտեսնէիր, օտարական, որ այս ձեռ-
քերս էլ պէտք կրգայն կոռուի մէջ»:

3

ԿՏԵՍԻՊՊՈՍ

Նոյն միջոցին հոմանիները վճռել էին սպա-
նել Տելեմաքին, զի ժամէ ժամ վախենում էին
նրա սաստկացող քաջութիւնից: Բայց մինչդեռ
խորհում էին, թէ ինչ կերպով մեռցնեն, մի
արծիւ թռաւ ձախ կողմից, մագիլներում մի
աղաւնի կրելով:

Այս նշանն բոլորից առաջ Ամփինոմոս նկա-
տեց, միակ հոմանին, որ միարան չէր միւսների
հետ, և ասաց. «Բարեկամներ, տեսէք այս նը-
շանը: Զախ կողմից սլանում է մի արծիւ՝ Արա-
մազդի սիրած թռչունը: Եւ ահա գուշակում եմ,
որ ձեզ երբէք չի յաջողուիլ Տելեմաքի սպանու-

թիւնը: Ուստի եկէք, այդ խորհրդից յետ կա-
ցէք»:

Ամփինոմի խօսքերն և արծուի երկիլն այն
արդիւնքն յառաջ բերին, որ հոմանիները չար
գործի վրայ խօսելուց դադարեցան. այնուհետև
վեր կացան և Ողիսեսի ապարանքը դնացին:
Այս տեղ իսկոյն սեղան դրին, և երբ ամէն բան
կարգի բերուեցաւ, իւրաքանչիւրն իւր տեղն բըռ-
նեց, և խնջուքն սկսաւ:

Ողիսես դարձեալ քարէ շէմքի մօտ նստաւ:
Բայց Տելեմաք մի անշուք աթոռ տուաւ նրան,
առջւն մի սեղան կանգնեց, վրան առատ կե-
րակուր դրաւ և զինով լի մի բաժակ:

«Կատիր այստեղ, օտարական», ասաց նա.
«անոյշ արա կերակուրն և զինին և անհոգ ե-
ղիր: Ես թոյլ չեմ տալ, որ քեզ այս տեղ գըձ-
ձէին: Սա հասրակաց պանդոկ չէ, այլ գե-
րապանծ Ողիսեսի պալատն է, իմ գիւցազն հօր,
որի ժառանգն ես ինքս եմ: Ուրեմն զգուշա-
ցէք, հոմանիներ, հիւրիս դէմ որ և է բռնու-
թիւն կամ նախատինք գործելուց, որպէս զի
կոխւ ու շփոթ չտեսնեմ այս յարկի տակ»:

Համբացան, շուարեցան հոմանիներն և ա-
փիբերան նայեցան, քաջարի պատանու վրայ:
Վերջապէս Անտինոսս ասաց. «Աժմ ստիպուած
ենք լոիկ ժուժալ դրա յանդուգն խօսքերին,

որ շանթում է մեր դլիսին։ Սակայն եթէ Արամազդ մեզ հակառակ զլինէր, դեռ ճաշից առաջ կըփակէլինք դրա ճոխապահ բերանը»։

Տելեմաք այս խօսքերը ըըլտողս ձւացաւ։ Բայց Հոմանիների թւում Կտեսիպպոս անուն մի չար մարդ կար, որ եկել էր Սամէ կղզուց։ Դա էլ խառնուել էր նրանց խմբին, զի հարուստ հօր ժառանգ լինելով, յոյս ունէր, թէ Պեննելոպէն իրեն վիեսայ կըջակէր։ Այժմ դա ձայն բարձրացըց Հոմանիների մէջ և այսպէս խօսեց։

«Լսեցէք ինձ, ովք քաջասիրտ Հոմանիներ, վասն զի ուզում եմ մի բան ասել։ Տելեմաք արդէն շատ հոգ տարաւ շէմքի մօտ նստած հիւրի վրայ. այժմ ես էլ ուզում եմ շնորհել նրան մի նուէր։ Եթէ կամենայ՝ թող մօտը պահէ, եթէ ոչ՝ թող իրեն լուացող նաժիշտներին կամ դռնապահին ընծայէ»։

Ասաց թէ չէ, ծիծաղելով մի եղի ոտ վերցրեց և ջլուտ բռունքով Ողիսեի վրայ նետեց։ Սակայն Ողիսես թեքեց գլուխն, և ոտը նրան չըդիպաւ։ Նրա աչքերը բորբոքուեցան, բայց զայրութը ժպտով ծաւծկեց։

Տելեմաք այն ժամանակ թւաւ տեղից և գուցեց. «Կտեսիպպոս, բախտաւոր ես, որ այս հիւրին չըդիպար։ Եթէ ոչ՝ տէզս որտիդ մէջ կըփարսէի, և հայրդ, հարսանիքի փոխանակ, թաղ-

ման հանդէս կըպատրաստէր քեզ համար։ Այս առթիւ նորից եմ ասում — թող ոչ ոք ձեզնից չյանդգնի այսուհետև լավիրշ վարուիլ այս տան մէջ։ Հերիք է, ինչքան համբերեցի. այժմ բոլոր ուժովս դիմագրելու եմ լրբութեան։ Ճատ չէ միթէ, որ գոյքերս յանիրավի վատնեցիք։ Ես ժուժացի. բայց եթէ դուք կեանքիս դէմ էլ չար միտք ունիք, ուրեմն լսեցէք. լաւ կըհամարեմ իսկոյն մեռնել, քան թէ այլ ևս համբերել, որ այս յարկի տակ իմ հիւրերին նախատէք և նաժիշտներին քաշկուտէք»։

4

Թէ՛ովկահամբէն Գոհեանը

Զայրագնած երլիտասարդի այս ճառից Հոմանիները պապանձուեցան։ Վերջապէս վեր կացաւ Ագելայս անուն մէկն և ասաց.

«Ո՞վ սիրելիք, այդ համարձակ ճառի համար թող ոչ ոք չըբարկանայ պատանու վրայ։ Ընդհակառակն՝ եկէք լիրատուինք և այսուհետև ոչ հիւրի վիրատորանք հասցնենք, ոչ էլ ում և իցէ այս տան բնակիչներից։ Իսկ քեզ, ովք Տելեմաք, և արգոյ մօրդ կ'ուզէի մի խորհուրդ տալ և լաւ կըլինէր, եթէ չմերթէիք։ Փանի որ Ողիսեսի դարձը դեռ յուսալի էր, անպատեհ

չէր թագուհուն՝ ի բաց մերժել հոմանիներին։ Սակայն այժմ ինքներդ էլ համողուած էք, որ Ռդիսւս արդէն մի տեղ մեռած կըլինի. հետևաբար, Տելեմաք, լաւ կ'անէիր եթէ յորդորէիր դշխոյ մօրդ, որ մէկ ուրիշի հարսնանար և այս տանից հեռանար։ Այն ժամանակ դու էլ հանգիստ կըվայելէիր հայենի գոյքդ և ոչ մի հոմանի չէր նեղիլ քեզ պալատիդ մէջ»։

«Երդվում եմ Արամազդով և հօրս կրած բոլոր աղէտներով», պատասխանեց Տելեմաք, — «ես երբէք չեմ արդելիլ արդոյ մօրա՝ փեսայ ընտրել իւր համար։ Բայց և երբէք բունի խօսքով չեմ վանիլ նրան այս տանից, ոչ ոք էլ ինձ չի կարանալ առ այդ ստիպել»։

Այս ազնիւ և պարկեշտ խօսքերի վրայ հոմանիներն անչափ քրքիջ բարձրացրին։ Մինչ նրանք այդպէս ծիծաղում էին, դէմքերն այնքան ծումռելով, որ աչքերից արտասուք էր դուրս գալիս, — սարսափահար ոտքի ելաւ Թէոլիլիւմէն գուշակն և բազուկները տարածեց։ Նրանք իսկոյն լռեցին, իսկ գուշակն այսպէս խօսեց որոտընդոստ բարբառով։

«Ո՞վ թշուառներ, այս ինչ աղէտ է սպառնում ձեզ։ Ահա տեսնում եմ — անդամներդ և դլուխներդ պատուել են գիշերալին խաւարով, դուք ողբ էք դուժում ծիծաղելով և դէմքերդ

թրջուած են արտասուքով։ Ո՞վ, ինչպէս կարմիր է յատակը, ինչպէս արիւն են հոսում սըրահի որմերն և սիւները։ Այս ինչ ուրուներ են, որ երերվում, տատանվում են և անմռունչ դըժոխք սահում, մինչ վերևում արեգակը խաւարում է»։

Դարձեալ մի մոլեզին քրքիջ բրդաւ սրահի մէջ, և Եւրիմաքոս այսպէս ասաց ակմբին։ «Ի՞նչ յիմար բաներ է բանդագուշում այս մարդը։ Դէ, պատանիք, հրապարակ տարէք այդ ցնորուածին, որին ամէն բան մութն է թւում սրահիս մէջ»։

Թէոլիլիւմէն նրան կրկնեց, «Ուղեկցի բնաւ կարօտ չեմ, Եւրիմաքոս, քանզի ունիմ աչք, ականջներ և ոտքեր, միտքս էլ բնաւ չէ խանգարուած։ Ես յօժար կամքով կ'ելնեմ սրահից, զի տեսնում եմ մի մօտալուտ արհաւիրք, որին ամենքդ զոհ պիտի գնաք, դուք, որ այնքան չարիք էք դորձել այս տան մէջ»։

Ասաց, և դուրս ելաւ պալատից։

Սակայն հոմանիները ժանտ կուրութեամբ պաշարուած, ծանակում էին Տելեմաքին և այսպանում նրա հիւրերին։ «Ճշմարիտ, Տելեմաք», աղազակեց նրանցից մին, «ես չեմ տեսել մի ուրիշ մարդ, որ իւր տան մէջ այսպիսի յոտի հիւրեր ընդուներ, ինչպէս դու։ Մին գուշակ է

ձեանում և ափեղցփեղ կոկոզում, միւսն մի
պորտաբոյծ մուրիկ է, որ ուզում է, առանց մի
բան շինելու, անյատակ որովայնը լցնել: Եթէ
խորհրդիս լսէիր, այդ երկուսին էլ նաւով Սի-
կիլիս կ'ուղարկէինք, այն տեղ գերի կըվա-
ճառէինք, և գէթ մի բան կըշահուէինք»:

Տելեմաք պատասխան չտուաւ, այլ իւր հօրն
աչքով արաւ, որովհետև տոչորվում էր վճռա-
կան մարտի փափագով: Սակայն Ողիսւս ուրիշ
վայրկեան էր որոշել կոռւի համար:

5


ՊԵՆԵԼՈՊԵՆ ՄՐՅՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԿՅ Է ՏԱԼԻՍ ՀՈՄՍՆԻՆԵՐԻՆ

Հոմանիներն անսանձ բերկութեամբ աւար-
տեցին նախաճաշն և առանց գուշակելու իրենց
գլխին գալիքը, դուրս ելան՝ մինչև ընթրիքը
տէդ ձգելով զբունելու դաւթի մէջ:

Ընթրիքի ժամն որ մօտեցաւ, Աթենաս աղեղ-
նամարտի մրցութեան հրաւէր կարդալու միտք
ներշնչեց թագուհուն: Թագուհին վերցրեց
պղնձէ սիրուն բանալին և իջաւ նաժիշտների
հետ ամենաստորին սենեակը, որ ամուսնու գան-
ձարանն էր: Այս սենեակում ամփոփուած էին
պղինձ, ոսկի և կուռ երկաթ: Այս տեղ էր պա-
հուած և թագաւորի հաստաբուն լայնալիճը,

որպէս և մահառիթ նետերով լի կապարճը: Լայ-
նալիճն իփիտոսի պարգևն էր, և Ողիսւս այն-
չափ նրան խնայում էր, որ մեկնելիս տանն էր
թողել:

Պենելոպէն դրան մօտեցաւ, օղակի լարը լու-
ծեց, բանալին փականքի մէջ դրաւ և նիզը
քարշեց: Երկաթէ դռներն ճռնչելով բացուե-
ցան: Թագուհին մտաւ բարձրայարկ սենեակը,
կանգնեց բեմի վրայ, ուր դրուած էին պատ-
մուճաններով լի սապատճեր, և ոտքերի վրայ
բարձրանալով, հանեց սեպից աղեղն և լուսա-
փալ կապարճը: Աղեղը վայր առնելիս նա դար-
ձեալ լիշեց իւր անձկալի ամուսնուն: Նստաւ,
աղեղը պատեանից հանեց, ծնկերի վրայ դրաւ
և դառնապէս լաց եղաւ: Կոծից յագուրդ առ-
նելով, վեր կացաւ և դուրս ելաւ ներքնատնից,
որ և գոցեց վերստին: Յետոյ սանդղով բարձրա-
ցաւ, մի նաժիշտ էլ ծանր կապարճն ետևից
կրեց: Թագուհին այժմ դէմքը ծածկեց նուրբ
քողով և մօտեցաւ սրահի դրան, ուր հոմանի-
ներն արդէն նորից հաւաքուել էին: Լուսթիւն
տիրեց սրահի մէջ, և բոլորեքեան շքեղաշուք
տիրուհու վրայ նայեցան: Եւ նա ասաց. «Լսե-
ցէք ինձ, հոմանիներ: Արդէն վազուց է, որ
խոնվում էք այս տան մէջ և սպառում ամուս-
նուս գուքը, պատճառելով, թէ միշտ այդպէս
Հոմ. Ողիս.



պիտի անէք, մինչև որ ձեզնից մէկին մարդու չգնամ և հետը միասին այս պալատից չհեռանամ: Թող ուրեմն այս խնդիրը մի մրցութեամբ վճռուի: Ահա ամուսնուս մեծ աղեղն: Ո՞վ որ ձեզնից լարը քարշէ և տասներկու օղերի միջից այս փքինը թափ անցկացնէ, ես նրա կինը կը դառնամ և այս պալատը կը թողնեմ. զի տեսնում եմ, որ եթէ մնամ, որդուս բոլոր գոյքը կ'ոչնչացնէք»:

Պենելոպէն հրամայեց Եւմէոսին՝ տալ հոմանիներին աղեղն և նետերը: Եւմէոսի այտերն արտասուքով թրջուեցան, երբ վերցրեց աղեղն, որ շատ անգամ տեսել էր տիրոջ ձեռքում: Լաց եղաւ և Փիլետիոս հաւատարիմ նախրապանը: Բայց Անտինոս երկուսին էլ յանդիմանեց և գոչեց դաժան ձայնով. «Ա՞յ անշնորհ գեղջուկներ, որ միայն առօրեայ բաներից էք հասկանում: Ա՞յ վատշուէրներ, ինչո՞ւ էք նորից շարժում թագուհու սիրտը ձեր այլանդակ կականով: Կատեցէք սեղանների մօտ և կերէք, կամ դուրս կորէք և այն տեղ լացէք, ինչքան էլ որ կամենաք: Խոկ աղեղը մեղ տուէք, որ մրցութեան փորձի դիմենք: Ինձ թւում է, թէ այս լայնալիճն հեշտ լարուելու մեքենայ չէ, և մեր մէջ հաղիւ թէ մէկը զտնուի, որ ուժով Պղիսւսին հաւասար դար»:

Այսպէս խօսեց Անտինոս, բայց և թաքուն յոյս ունէր, թէ ինքն կը աջողէր լայնալիճը լարելու:

Տելեմաք ասաց. «Արդարեւ արփիաբնակն Արամագդ խելքս թռցրած պիտի լինի, որ մօրս ասածի վրայ ծիծաղում եմ: Զէ՞ որ ասաց, թէ ձեզնից մէկին մարդու կ'երթալ: Եւ ես դեռ ծիծաղում եմ: Թէ ուրեմն թող մրցութիւնը վճիռ դնէ: Զեր տանելու մրցանակն մի այնպիսի տիկին է, որի նմանն ոչ Պլւլոսում կրգտնէք, ոչ Արգոսում, ոչ Միւկենում, ոչ Էլ հէնց մեր իթակէյում: Եկէք ուրեմն խակոյն գործի դիմեցէք, որպէս զի մենք էլ տեսնենք, թէ մայրս ուս է կին վիճակուած: Բայց ինքս էլ կ'ուզէի ոյժս փորձել աղեղի վրայ, և եթէ յաջողէի լարելու և նետն օղերի միջից թռցնելու, մրցանակը իմս կը լինէր և մայրս այս տեղ կը մնար, ազատուելով ձեր ձեռքից»:

Նա վեր կացաւ, հանեց ուսից սուսերն և ծիրանին և աթոռի վրայ դրաւ. յետոյ վերցրեց սեպաւոր օղակներն և գնաց կանգնեցաւ սրահի մէջ: Այն տեղ թելով մի գիծ քաշեց և տասներկու օղակներն այնպէս տնկեց, որ բոլորն էլ իրար ետևից մի շարքի վրայ տողուեցան: Ապա թէ գնաց շէմքի մօտ և աղեղը ձեռքն առաւ: Երեք անգամ փորձեց դրան լարելու, բայց չկա-

բացաւ. ուզում էր չորրորդ անգամ էլ ոյժը
փորձել, բայց Ողիսևս արգելեց:

«Ո՞հ, տեսնում եմ դժբախտաբար», գոչեց
Տելեմաք, «որ տակաւին ապիկար եմ ախոյեան
հանդիսանալու կոռուի մէջ։ Դէ առէք ուրեմն
այս աղեղն, դուք, որ ինձնից գօրեղ էք, և
փորձեցէք լարելու։»

Ասաց, և գեղեցկաշէն դրան յեց արաւ լայ-
նալիճն և փքինը. յիտոյ դարձաւ և սուրն ու-
սից կախելով, նորից նստաւ։

Այժմ Անտինոս ձայն կարդաց. «Ով որ ա-
ռաջինն է ձախ կողմից, նա թող սկսէ մրցու-
մը, մինչև հերթը մեղ հասնի։»

Բոլորեքեան հաւան գտան, և ահա Լատոդէս
առաջինը վեր կացաւ. Նա վերցրեց լայնալիճն
և փորձեց լարել, բայց զօրեց թոյլ ձեռքով, և
ասաց. «Բարեկամներ, ոյժս չէ բաւում այս յաղթ-
աղեղն լարելու։ Ուշիմ Պենելոպէին տենչացող-
ներ շատ են մեր մէջ. բայց տեսնում եմ, որ
այս աղեղն վերցնեն թէ չէ, լուսերն իսկոյն
պիտի կտրեն։»

Այս ասելով, դրան մօտ դրաւ աղեղն ու նետը
և յետ գնաց՝ կրկին իւր տեղը նստելու։

«Մայրդ նետ ձգելու չէ ծնել քեզ», ասաց
Անտինոս։ «Սակայն այս տեղ շատ մարդիկ
կան, որ աղեղն անշուշտ կըլարեն։»

Յետոյ դարձաւ անազնիւ այծապանին և ա-
սաց. «Վեր կաց, Մելանթէս, և վայտ ձգիր
կրակի մէջ. կրակի առջև էլ մի աթոռ դիր և
գնա բեր մեղ մի գնդակ ճարպ։ Ալդ ճարպով
աղեղի լարը լաւ կ'օծենք և կրակի վրայ կը
վափիկացնենք։ Ապա թէ կըտեսնենք՝ կըլարուի
թէ ոչ։»

Այծապանն իսկոյն արաւ, ինչ որ իրեն ասա-
ցին։ Նա մեծ կրակ վառեց, կրակի մօտ աթոռ
դրաւ և գնաց մի մեծ կտոր ճարպ բերաւ շտե-
մարանից։

Հոմանիները լարը ճարպով եղեցին և կրակի
վրայ տաքացրին, բայց և այնպէս չկարացան
լարելու։ Վերջապէս մնացին միայն երկու հուժ-
կուներ, որոնք դեռ չէին փորձել լարելու—Ան-
տինոս և Եւրիմաք։

6

ՈՒԽՍԵՒՄ ՄԵՐԿԱՆՈՒՄ է ԻՒՐ ԱՌՋՆ ՀԱՒՍՏԱՐԻՄ
ՀՈՎ, ԻՒՆԵՐԻ ԱԹՁԵՒ

Մինչդեռ Հոմանիները զուր ջան էին դնում
աղեղի վրայ, երկու հաւատարիմ հովիւները՝ Եւ-
մէսս և Փիլետիս դուրս գնացին. շուտով Ողի-
սւ էլ սրահից ելաւ։ Երբ նրանք բակի խոր-
քում առանձնացան, Ողիսևս ասաց հեղաբար.

«Կուզէի մի բան ասել երկուսիդ. ասեմ արդեօք թէ յուեմ: Բայց սիրտս ուժգին դրդում է. ուստի ականջ դրէք խօսքերիս: Արդէօք ի՞նչ կ'անէիք, եթէ յանկարծ Ողիսևս իւր պալատը վերադառնար: Ասացէք համարձակ—ի՞նչ կ'անէիք»:

Փիլետիս նախրապանն ասաց. «Ո՞վ Արամազդ հայր, եթէ սրտիս իղձն կատարելով յետ բերէիր գերահոչակ Ողիսևսին, այն ժամանակ կըտեսնէիր, թէ ի՞նչպէս յօդուտ նրան գործ կըդնէի այս ձեռքերիս կորոնվո»:

Եւմէսս էլ բազուկները բարձրացրեց և նոյն ուխտն արաւ չերմ սրտով:

Ողիսևս նրանց անվկանդ հաւատարմութեան հաւաստիքն որ ստացաւ, այսպէս խօսեց. «Դէ ուրեմն խմացէք, որ Ողիսևս այս տեղ է—ես ի՞նքս եմ Ողիսևսը: Բոլոր ծառաներից միայն դուք էք ինձ հաւատարիմ մընացել. ուստի ես էլ ձեզ երդվում եմ, որ եթէ կովում հոմանիներին կործանեմ, երկուսիդ էլ մի մի կնիկ կըճարեմ և ճոխ կալուածներ կ'ընծայէմ: Յետոյ պալատիս մօտ տներ կըշինեմ ձեզ համար, և դուք որդուս ընկերները կըդառնաք: Բայց ահա այս նշանից ստուգեցէք. որ ճշմարիտ բան ասացի: Տեսէք այս սպին ոտիս վրայ. դա մնացել է այն վէրքից, որ տուել էր ինձ ժամանտ լարազն, երբ սրտում էի անտառա-

խիտ լեռներում Աւտոլիկոս արքայի քաջ որդու հետ»:

Այս ասելով նա բաց արաւ ոտի սպին, և հովիսները սոուգելով, որ մուրիկն իրենց տենչչալի թագաւորն էր, սաստիկ լացին, ջերմապէս նրան դրկեցին և ուսերն ու ճակատը համբոյներով ծածկեցին: Ողիսևս էլ նրանց համբուրեց, և երեքի լալիքը մինչև զիշեր կըտեէր, եթէ Ողիսևս առաջինը ընդհատէր: «Դադարեցէք կոծելուց, հաւատարիմ ծառաներ», ասաց նա, «որ մեզ այս տեղ չտեսնեն և հոմանիներին լուր չտանեն: Ես նորից սրահ կըմտնեմ, փոքր ի՞նչ յետոյ դուք էլ ինձ հետուեցէք: Մեր նշանը այս թող լինի. երբ ես լայնալիմս պահանջեմ և հոմանիներն այս բանին ընդդիմանան, դու, Եւմէսս, համարձակ սրահ կըմտնես, լայնալիմն կը տոնես և ինձ կըտաս: Յետոյ աղախինների մօտ կ'երթաս և կը հրամայես, որ իրենց սենեակը քաշուին և դռները ներսից գոցեն: Թող այդպէս փակուած մնան, ի՞նչքան էլ սրահի միջեց իրարանցման և ժխորի ձայն լսէին: Իսկ դու, Փիլետիսս, կ'երթաս գաւթի դարպասը կըփակես և նիգը պարանով կ'ամրացնես»:

Պատուէրները տալուց յետ՝ Ողիսևս նորից սրահ գնաց և առաջուայ տեղը նստաւ: Ճուտով հովիսներն էլ նրա ետևից ներս մտան:

ՈՐԻՄԱԿԱՅԻ ԿԱՄԵՆՈՒՄ է ՄԱՍՆԱԿՑԻԼ ՄՐՅՈՒԹԵԱՆ

Այժմ Անտինոս և Եւրիմաք յառաջ ելան աղեղի լարը ձգելու, և երկուսն էլ պարծենում էին, թէ անպատճառ կը ձգէին։ Եւրիմաք ճարապ քսեց աղեղին և ամէն կողմից պտոյտ բերաւ կրակի վրայ, որ փափկանայ։ Յետոյ բոլոր ճիգը թափեց, որ լարէ, բայց այս ճիգը զուր անցաւ։

Վերջապէս, բոլորովին ուժասպառ, դէն ձգեց աղեղն և գոչեց մղձկելով. «Ո՞վ աստուածներ, շատ դաւն ցաւ էք ազգում իմ սրտին։ Միայն թագուհին չէ զարութեանս պատճառը—նրանից զատ էլ հռչակաւոր հարսեր շատ կան իթակէյում և՛ Պիւլոսում, և՛ Արգոսում և՛ Միւլէնում։ Ես այն պատճառով եմ այսպէս սաստիկ բարկանում, որ ոչ ոք մեզնից չկարացաւ այս աղեղը լարելու, որով չէ թէ այժմ, այլ և յետոյ ծաղը և ծանակ պիտի լինինք»։

Անտինոս պատօսսխանեց. «Միամիտ կաց, Եւրիմաքէ. այդ օրին բնաւ չենք հասնիլ։ Տես, մենք իսպառ մոռացել ենք, որ այս օր Ապոլոնի մեծ տօնն է և որ այս նուիրական տօնի օրն աղեղ լարել չէ կարելի։ Թող ուրեմն դա անշարժ կենայ։ Իսկ դու, քաջ մատուռակ, բեր մեղ գինի և բաժակներ, որ Ապոլոնին նուէր

Ճօնենք և իսմենք։ Մրցութիւնը վաղն կ'աւարտենք, երբ նորից գնանք զուարձանալու։ Ուստի և օղակները թող սրահում մնան»։

Բոլորն էլ հաւան գտան այս խորհրդին, և մատուռակն սկսաւ զինի բաշխել ոսկէ թասով։

Այն ժամանակ Ոդիսես տեղից ելաւ և ասաց. «Լսեցէք ինձ, բազմագով թագուհու հոմանիներ, և մանաւանդ երկու աւագներդ՝ Անտինոս և Եւրիմաք։ Լաւ արիք, որ վճռեցիք մինչև վաղն հանդիսատ թողնել լայնալիճ։ Վաղն առաւօտ Արամազդ ում ուզենայ, նրան յաղթանակ կըշնորհէ։ Սակայն այժմ գէթ մի բոպէ թոյլ տուէք ինձ այդ աղեղն փորձելու, որ տեսնեմ, թէ հիմք էլ այն ոյժն ունիմ, ինչ որ ունէի մի ժամանակ, թէ ոյժս արդէն հատել է թափառ կեանքիս ընթացքում»։

Հոմանիներն ամեհի բարկութեամբ բորբոքուեցան երկիւղից, թէ մի՛ գուցէ ծերունին աղեղն լարէր և նրանց բոլորին խալտառակէր։ Անտինոս աղաղակեց և ասաց. «Ո՞յ խենդ և խելար ծերունի։ Հերիք չէ, որ նատած ես մեր հոյակապ և մեծափառ ակմբում, մասնակցում ես մեր ճաշին և լսում ես մեր ճառերը—այսքան շնորհ ոչ մուրիկ դեռ չէ ստացել մեզանից։ Անշուշտ գինուց խելքդ թուցրած կըլինիս. պատճառ շատ էիր քամում բաժակդ։ Տես, որ քեզ

էլ նոյնը չըպատահի, ինչ որ պատահել էր Եւրիստիոնին, որ գինուց հարբած կատաղեցաւ Պելլիթոսի կոչունքում և զանազան չարիք գործեց: Նրան բոնեցին, ականջներն և քիթը սուր դանակով կտրեցին և ծեծելով դուրս վարեցին: Գուցէ ուրիշ փորձանք էլ հասնի դլխիդ, եթէ համարձակուիս այդ աղեղին դիպչելու: Մենք քեզ ևս իսկոյն նաւ կըգենք և կ'ուղարկենք ժանտաժուտ Եքետոսին, ինչպէս արդէն սպառնացել էի: Հրաժարուիր ուրեմն աղեղն լարելու փափագիցդ: Նիստ և կեր, ինչ որ քեզ տալիս են, և թող ազնիւ պատանիները պայքարի գան մրցութեան համար»:

Պենելոպէն, որ մրցանքը տեսնելու համար տրահումն էր մնացել, չհամբերեց և ասաց. «Անտինոս, արդարեւ գովելի չէ, որ վշտացնում ես մեր հիւրին այդպիսի ծանր խօսքերով: Միթէ կարծում ես, թէ նա ինձ ամուսին կ'առնէ, եթէ յաջողի Ողիսեսի հաստ աղեղը լարելու: Այդպիսի անպատեհ միտք հարկաւ չունի վշտաչարչար ծերունին, ուստի և դրա պատճառով ձեզնից ոչ ոք թող չմաշուի»:

«Գուստրդ Իկարիոսի, քաջուշիմդ Պենելոպէ», անդրադարձ արաւ Եւրիմաքոս, «չենք երկնչում, որ մուրիկն այդպիսի անդէպ մտքեր ունենար. այսու հանդերձ անվայել է թոյլ տալ դրան մեր

մրցութեան մասնակցելու: Հապա եթէ աղեղն լարէ: Չե՞ն ծաղրիլ մեղ այն ժամանակ, ասելով. Ահ, ինչքան մարդիկ կամեցան իթակէի պերճ թագուհուն կին առնել, բայց ոչ ոք չգորեց Ողիսեսի հաստ աղեղը լարելու: Բայց ահա դուրս ելաւ մի շըմովիկ օտար մուրիկ, լարը լարեց և բոլորին խալտառակեց: — Ահա այսպիսի բաներ կ'ասեն և ամենքիս կըծաղլեն»:

Թագուհին պատասխանեց. «Թուք էք վախում չար լեզուից, — գո՞ւք, որ այսքան տարի անպատւում էք իթակէի ամենամեծ մարդու տունը: Հապա ինչո՞ւ չէք վախում, որ յատկապէս այդ բանի համար նախատելով կ'այպանեն ձեզ: Այս հիւրն, որ թիկնաւէտ և քաջակազմ մի մարդ է, ազնուական ծագումն ունի: Ուստի թող նա էլ աղեղի վրայ ոյժը փորձէ: Եթէ յաջողի լարելու, սիրուն շորեր կ'ընծալեմ նրան և մի սլաքաւոր աշտէ կըտամ, որ շներից պաշտպանուի: Մի երկսալրի սուր էլ կըտամ, ոտքերին նոր սանդալներ կըկապեմ և կ'առաքեմ, ուր որ սիրտը կամենայ»:

«Մայր իմ», ասաց Տելեմաք, «լաւ խօսեցիր, բայց և այնպէս պիտի ասեմ, որ աղեղի մասին հոգ տանելն միայն ինձ է պատկանում: Ի՞նչ էլ ասէին հոմանիներն — ես միայն իրաւունք ունիմ՝ տալ աղեղն ում և իցէ, կամ ըրտալ:

Այս, անդամ եթէ սիրտս ուզենար պարզեց դրան մեր հիւրին, —դարձեալ ոչ ոք չէր կարանալ հակառակել իմ կամքին: Իսկ դու, մայրիմ, սենեալիք գնա, գործդ տես և նաժիշտներիդ բանի դիր: Այր մարդկանց թող լայնալիճ աղեղի հոգն, մանաւանդ ինձ, որ այս պալատի միակ տէրն եմ»:

Այսպէս խօսեց Տելեմաք, և մայրն ապշած վրան նայեց, կշռելով սրտի մէջ, թէ ինչու որդին այլպիսի խօսքեր ասաց: Որդին գիտէր պատճառը, քանզի տեսնում էր, որ հայրն իսկոյն սկսելու էր կռիւը, և ուզում էր, որ մայրը շուտ հեռանար դահլիճից: Պեսելոպէն՝ առանց մի բան ասելու, վեր կացաւ և նաժիշտների հետ վերև գնաց: Այն տեղ նա, տագնապիչ զգացումներով խուճապած, լաց եղաւ, և մահման վրայ ընկաւ: Աթենաս նրան մի անոյշ քուն առաքեց, որ չլսէ պալատի մէջ շուտով բրդելու աղմուկը:

Վերջապէս Եւմէոս աղեղն վերցրեց և ուզում էր տիրոջ մօտ տանել: Բայց հոմանիներն կատաղի գոռում գոչումով ոտքի ելան և սպառնացին՝ գիշատիչ շների բերանը ձգել նրան, եթէ իսկոյն վայր ըլդնէր աղեղը: Եւմէոս սարսափեցաւ և մի վայրկեան վարանած մնաց:

Այն ժամանակ յառաջ ելաւ Տելեմաք և սպառ-

նական ձայնով գոչեց. «Հայրիկ, տուր հիւրին այդ աղեղն և մի մոռանար, որ ես միայն իրաւունք ունիմ հրամայելու այս տան մէջ: Եթէ հրամանիս չհետևիս, իսկոյն քեզ դուրս կըվարեմ, պատճառ քեզնից ուժով եմ: Ո՞հ, եթէ հոմանիներից էլ ուժովս այնքան վեր լինէի, ինչքան որ քեզնից եմ վեր, — ես շուտ վախճան կըտայի նրանց լրբութեանը տանս մէջ»:

Հոմանիները բարձրածայն քրքիչ վերցրին. բայց Եւմէոս աղեղն Ողիսեսի մօտ տարաւ և նրան տուաւ: Այս գնաց Եւրիկլէ գալեակի մօտ և ասաց, որ շուտով աղախիներին իրենց սենեակում գոցէ և ոչ մէկին դուրս չըթողնէ, ինչքան էլ սրահի միջից կռուի շփոթ և աղաղակ լսէին:

Միւնոյն ժամանակ Փիլետիոսն էլ դուրս վազեց, գաւթից պարան վերցրեց և դարպասի դուռը կապեց:

Ողիսես, աղեղը ձեռքերի մէջ շրջելով, դէսից դէնից զննում էր՝ տեսնելու, թէ արդեօք եղջիւրը վնաս չէր կրել, կամ թէ լարը չէր փչացել այնքան տարիների միջոցում: Այս «Տեսէք», ասաց հոմանիներից մին, «Թէ ինչպէս այդ շրջմոլիկն վեր ու վայր է դարձնում աղեղն և սուր աչքերով հետազօտում: Երկի թէ ինքն էլ մի այդպիսի աղեղն ունի,

կամ ուզում է նորը շինել՝ դրան նման»:
Միւսն ասաց. «Այդ գձում մուրիկն պիտի
կարանալ աղեղ շինել—դա, որ աղեղի բնչ լի-
նիլն անդամ չդիտէ»:

Բայց ինչպէս որ մի երաժիշտ հեշտ լարում
է քնարի լարն, այնպէս էլ խորագէտն Ոդիսես.
թեթև լարեց կուռ աղեղը: Յետոյ քայլորեց աջ
ձեռի բժամատն պինդ ձգուած լարի վրայ, և
լարը հնչեց ծիծեռնակի զիլ ձայնով:

Այն ժամանակ լոռոթիւն տիրեց սրահում, և
բոլորեքեան ապշած, շուարած նալեցան այն
մարդուն, որի աչքերի պէս հրացաւտ աչքեր
դեռ կեանքերում չէին տեսել:

Յանկարծ մի այնպիսի ամպրոպ թնդաց, որ
պալատի որմերը դղրդուեցան: Հոմանիների գոյնը
թռաւ, բայց Ոդիսես հրճուանք զգաց տեսնե-
լով, որ որոտընդուստ գոռումն Արամազդի տուած
նշանն էր: Նա վերցրեց երեքթևեան մի փքին,
արագ հարստեց լարի վրայ, և առանց տեղից
վեր կենալու, շեշտակի թափ արձակեց բոլոր
օղերի միջից:

«Տելեմաք», գոչեց նա այնուհետեւ, «տես,
արդեօք ամօթ է բերում քեզ հիւրդ: Արդ ժամ
է, մինչդեռ լոյս է, ընթրիք տալ հոմանինե-
րին, որ ապաթէ երգ ու քնարով գուարճանան»:
Ասաց, և յօնքերով ակնարկ արաւ իւր որ-

դուն: Որդին իսկոյն սուրը կապեց, առոյդ աջով
աշտէն բռնեց, թունդ քայլերով սրահից ան-
ցաւ և սպառագէն կանգնեց հօր կողքին:

8

ՄԱՐՏԸ

Ոդիսես այն ժամանակ հանեց վրայի հան-
դերձը, և բռնելով աղեղն ու կապարձը, թռաւ
կանգնեց մեծ շէմքի վրայ: Նա ոտքի առջե-
թափեց նետերն և գոչեց. «Ահա վերջացաւ այս
վտանգաւոր մրցումը: Այժմ մի այնպիսի նպա-
տակ կ'ընտրեմ, որի նմանը դեռ ոչ մի մարդ
չէ տեսել»:

Ասաց, և Անտինոսի վրայ նալեց: Անտինոս
նոր էր վերցրել երկունկանի ոսկէ բաժակն և
ուզում էր զինի խմել: Այդ վայրկենին Ոդի-
սեսի մահաբեր նետը դիպաւ նրա կոկորդին և
ծոծրակից թափ անցաւ: Բարձր գահից նա դի-
տապատ վայր ընկաւ, բաժակն ձեռքից թող-
նելով, և ոնզերից արեան հեղեղ դուրս վի-
ժեց: Պահուան տագնապով գոփելիս, նա սե-
ղանը տապալեց, և կերակուրները յատակի վրայ
վոթուեցան:

Մի մոլեգին աղմուկ բրդաւ սրահի մէջ: Ո-
մանք, շուրջ նայելով, կամենում էին զէնք գըտ-

նել. այլք կարծեցին, թէ Ոդխսես Անտինոռախն
անդիտաբար սպանեց, և գոչեցին. «Վայ քեզ, մու-
րիկ. Էլ երբէք դու ուրիշ մրցութիւն չես տես-
նիլ. սպանած մարդդ առաջինն էր Իթակէյում:
Ուրեմն դու կըմեռնիս, և մարմինդ գիշակեր
թուչունները կըլափեն»:

Ցնդածները դեռ չգիտէին, որ իրենց պա-
տուհասի ժամն հասել էր:

Ոդխսես այնպիսի որոտալիր ձայն հանեց, որ
բոլորեքեան մինչեւ ոսկորների ուղեղը սարառու-
զգացին: «Այ դուք շներ», գոչեց նա, «կար-
ծում էիք, թէ ես երբէք յետ դարու չեմ Տրո-
յակաց, և այս պատճառով էիք գոյքերս վատ-
նում, աղախիններիս հետ շնանում և կնոջս
անդամ ձեր լրբութեամբ չարչարում: Գուք ոչ
մարդկանց դատաստանից ակնածեցիք, ոչ էլ
աստուածների պատուհասից երկնչեցիք, — աս-
տուածների, որոնք բազմած են երկնքում, մեր
արարքը կշռելով: Բայց ահա ձեր սե օրհասը
հասել է»:

Մահուան դալկով ծածկուեցան նրանց դէմ-
քերն, և ամէն մէկն տագնապալից շուրջ նա-
յեց, սոսկալի կործանումից ճողովրելու հնար
պտրելով:

Միայն Եւրիմաք բան ասելու սիրտ արաւ և
նկատեց. «Եթէ իրաւ դու ես մեծահռչակ Ո-

դիսեսը, իրաւունք ունիս զարանալու տանդ մէջ
գործուած եղեռների վրայ: Բայց իմացիր, որ
այս բոլոր չարիքների բուն հեղինակն Անտինո-
ռուն էր, որ ահա ընկաւ աղեղիցդ նետահար:
Նա ոչ այնքան կնոջդ էր թեկնածում, ինչ-
քան արքայական իշխանութեանդ, որ յոյս ու-
նէր ձեռք բերել, թագուհուն կին առնելով և
որդուդ սպաններով: Եւ արդ՝ քանդի դու յանցա-
ւորին սպանեցիր, ողորմիր մեզ, որ քեզ տէր
ենք ճանաչում: Մենք պատրաստ ենք փոխա-
րինել քեզ ամէն բան, ինչ որ վատնել ենք
դոյքերիցդ, — պատրաստ ենք քսանապատիկ տու-
զանք տուժել եղներով, ոչխարներով, այծերով
և վճարել քեզ նոյնչափ պղինձ և ոսկի, — մի-
այն թէ դարձնէիր մեղնից քո բոցավառ ցա-
սումը»:

Ոդխսես խոժոռ աչքով նրա վրայ նայեց և
ասաց. «Եւրիմաքոս, եթէ դուք ինձ այն բոլորն
էլ տալու լինիք, ինչ որ ունիք և ինչ որ դեռ
ստանալու էք ժառանգութեամբ կամ բոնու-
թեամբ, — դարձեալ չէք կարանալ քաւել, ջըն-
ջել տանս մէջ գործած ոճիրներդ: Արդ մտա-
ծեցէք, թէ ինչ կերպով պիտի ազատուիք վրէ-
ժիցս — արդեօք նենդնվ, թէ ուժնվ: Հատուց-
ման ժամն արդէն հասել է, և վստահ եմ, որ
ձեղնից ոչ ոք ողջամբ չի հեռանալ այս սրակից»:
Հոմ. Ոդխ.

Եւրիմաքոս դարձաւ իւր զունաթափ ընկերներին և գոչեց. «Բարեկամներ, ուրեմն ի մարտ: Եթէ սպասենք, դա մի առ մի կրջարդէ մեղ իւր մահարար փքիններով: Դէ մերկացրէք սուրերդ, եկէք՝ վահանի տեղ՝ սեղաններ բոնենք նետերի դէմ և բոլորս միասին յառաջ զրոհենք, որ դռներին տիրանանք: Հէնց որ այդ մեղ յաջողի, օղնեցէք կրհնչեցնենք քաղաքի մէջ, և անշուշտ այդ մարդուն սուսերներով կրկոտորենք»:

Ասաց թէ չէ, հանեց պատեանից իւր երկուայի սուսերն և ահագնադոչ զուռումով դէպի դուռը յարձակուեցաւ: Բայց տակաւին չէր հասել, որ Ոդիսես շեշտակի նրա լանջը նետով շամփրեց: Եւրիմաքոս ուժդնապէս մի սեղանի բախուեցաւ, յետոյ դռնչմամբ տապաստ ընկաւ ճակատն ի վայր, և նոյն հետայն աչքերը մահուան ստուերով պատուեցան:

Նոյն բոպէլին Ամփինոմոս սուրը ձեռին մոլեզնաբար դրան կողմը սրացաւ, յուսալով թէ կրյաջողէր դուրս փախչել, յառաջ քան թէ Ոկրյալապէլ դուրս կրլարէր աղեղը: Կրս դէմ վաղեց Տիսես նորից կրլարէր աղեղը: Կրս դէմ վաղեց Տելեմաք և աշտէյովն այնպէս խոցեց, որ նա դիտապաստ գետին ընկաւ: Տելեմաք իսկոյն յետ ցատկեց, թողնելով աշտէն հողեվարի մարմնի մէջ, որովհետև դա ընկերների մօտ էր ընկած:

«Հայր իմ», ասաց Տելեմաք, «Ես կ'երթամ, վերնատանից քեզ մի վահան, մի սաղաւարտ և երկու տէգ կրբերեմ, ինքս էլ կրզրահաւորում, հովիւներին էլ զէնք կըտամ»:

«Ճտապիլ, ոլդեակ», պատասխանեց Ոդիսես, «և շուտով վերադարձիր, քանի որ դեռ կան նետեր կապարճիս մէջ»:

Մինչ Ոդիսես մի առ մի նետ էր տեղում ամբոխի վրայ և զարհուրած հոմանիներին հետզհետէ տապալում, — Տելեմաք և երկու հովիւները վերնատան մէջ զինուեցան և Ոդիսեսի համար զէնք բերելով, փութանակի սրահ իջան:

Ոդիսես, որ արդէն վերջին նետն էլ արձակել էր, աղեղը դրանդիի մօտ դրաւ, գլուխը ծածկեց սաղաւարտով, որի խրոխտ գարգմանակն ահեղաբար ծածանվում էր, վերցրեց քառատակեան մի վահան և բռնեց երկու կուռ նիզակ: Հոմանիների միջից Ագելայոս աղաղակեց. «Բարեկամներ, թող ձեզնից մին կողմի դռնից դուրս վաղէ և քաղաքի մէջ գոյժ ձգէ»:

Այծապանը պատասխանեց. «Զէ կարելի այդ անել, Ագելայոս, զի Եւմէս սպառագինուած կանգնած է կողմնական դրան առջև: Բայց ես թաքուն զինանոցը կըմտնեմ և ձեզ համար զէնք կը բերեմ»:

Կա դէպի դուրս անապարեց և մի քանի

վայրկեանից վերադարձաւ, տասներկու զէնք
բերելով: Յետոյ նորից դուքս սողաց, որ դար-
ձեալ նոյնքան զէնք բերէ:

Ոդիսես՝ հոմանիների ձեռքում վահաններ և
շողշողուն զէնքեր որ տեսաւ, ասաց Տելեմա-
քին. «Տես, որդեակ, որ տեղից են դրանց զէն-
քերը: Անշուշտ վատշուէր աղախիններից մին
կամ այծապանը բերած կըլինի»:

Նոյն բոպէին Տելեմաք սարսափելով մտաբե-
րեց, որ զինանոցի գուռը կիսով չափ բաց էր
թողել, և յայտնեց այդ իւր հօրը: Սա իսկոյն
վերև առաքեց Հովիւներին, հրամայելով՝ գուռը
փակել և չուանով պրկել այն մարդուն, որն որ
կ'երթար զէնք վերցնելու:

Հովիւները շտապով գնացին զինանոց և գտան
այն տեղ այծապանին, որ հէնց նոր էր հանել
որմի վրայից երկու սաղաւարտ: Նրանք յարձա-
կուեցան Մելանթէսի վրայ, գետնի վրայ թա-
ւալեցին, ձեռքերն, ոտքերն յետ մկեցին և մի-
ասին կաշկանդեցին: Յետոյ՝ մարդակեց կա-
պուած չուանը նրա ոտքին փաթաթելով, վեր
քարշեցին և թողին, որ օդի մէջ կախուած
մնայ և ճօճուի: Ապա թէ գուռը փակեցին և ճե-
պելով սրահ իջան:

Այժմ իրար մօտ կանգնած էին չորս սպառա-
զէն քաջ մարդիկ և համարձակ սպասում էին

իրենց վրայ խուժելու պատրաստ զրահավառ
հոմանիներին:

Այդ միջոցին նրանց մօտեցաւ խաժակն Աթե-
նաս՝ իմաստուն Մենտորի պատկերով, որով ու-
ղեկցել էր Տելեմաքին մինչեւ Պիւլոս:

Բերկեցաւ. Ոդիսես, տեսնելով իւր մանկու-
թեան ընկերին և ասաց. «Մենտոր, օգնիր ինձ
կուռի մէջ և յիշիր բարեկամիդ, որ միշտ լա-
ւութիւն էր արած քեզ»:

Հոմանիներն՝ ընդհակառակն՝ գոռացին. «Զգու-
շացիր, Մենտոր, դրա կողմն անցնելու: Եթէ
մեզ չըլսես, քեզ էլ դրա հետ կըսպանենք: Յե-
տոյ գոյքերդ կըբաժանենք, իսկ կնոջդ և աղ-
ջիկներիդ Իթակէից գուրս կըվարենք»:

Զայրացաւ գիցուհին, և Ոդիսեսին նոր ե-
ռանդ ազգելու համար՝ ասաց. «Փ՛նչ. գու չէիր,
որ այնքան դիւցազներ տապալեցիր Տրոյալի մօտ.
քո հանճարով և քաջութեամբ չէր, որ ընկաւ
Պրիամոսի մեծ ոստանը: Եւ արդ վեհերում ես,
հոմանիների ջոլիի մէջ տասներկու զինուած
մարդիկ տեսնելով: Բայց ահա տես իմ քաջու-
թեան գործերն և իմացիր, թէ ինչպէս եմ փո-
խարինում բարեկամիս լաւութիւնը»:

Այս ասելով դիցուհին հոմանիների վրայ սլա-
ցաւ, մի քանի մարդ սպանեց, յետոյ յանկարձ
ծիծեռնակի տիպ առնելով, վերև թռաւ և ա-

ռաստաղի վրայ նստաւ: Ոդիսւես իւր ընկերներով նորից մնաց վտանգի մէջ:

«Բարեկամներ», գոչեց Ազելայոս, «պարծենկոտ Մենտորն արդէն փախաւ: Եկէք, անվախ յառաջ նետուինք: Թող մեղնից վեցն մի անգամից տէդ արձակեն Ոդիսւեսի վրայ: Դրան որ յաղթենք, միւսները չեն կարանալ դէմ դնել մեզ»:

Վեցն էլ բոլոր ուժով տէդ տեղացին: Բայց Աթենաս ի դերև հանեց նրանց ճիգն, և ոչ Ոդիսւես վէրք ստացաւ, ոչ էլ միւս երեքը: Այժմ սրանք հոմանիների վրայ յարձակուեցան և կշռակի տէդ արձակեցին և չորս հոգի սպանեցին: Յետոյ, սուսերը ճօճելով, յառաջ թռան, տէդերը դիակների մարմնից հանեցին և վաղիվազ դէպի շէմքը յետ եկան: Նրանց ետևից դարձեալ տէդեր տեղացին: Տելեմաք բոլիժ մատին վէրք ստացաւ, բայց սլաքը միայն կաշին սկրթեց. Եւմէոսն էլ ուսին թեթև վէրք ընդունեց: Նրանք անվը-կանդ դէմ դրին նոր յարձակման և իւրաքանչիւրն մի մի հոմանի տապալեց: Եւմէոս, Կտեսիպոսին հարկաներով, ալսպէս գոչեց հոգեվարին. «Այ սնապարծուկ վայրահաչ, էլ դու մեծ մեծ չես ջարդել, և աստուածների կամքին հլու հպատակ կըլինիս: Ահա քեզ փոխարէնը եղի ոտին, որ նետեցիր տիրոջ դէմ»:

Հոմանիների կէսից շատն արդէն ընկած էին

յատակի վրայ. շատերն Աթենասի ձեռքով էին սպանուած, շատերն էլ Ոդիսւեսի նետերից:

Դիցուհին յանկարծ առաստաղից վայր ցոլացրեց գորգոնազլուխ վահանն, որի լոկ տեսքըն արդէն քարացնում է մարդուս ահից: Հոմանիները խուճապական տագնապով սրահի անկիւնները փախչել մկան: Սակայն ինչպէս որ արծիւնները յարձակում են թռչունների տարմի վրայ սլանալով,—այնպէս էլ Ոդիսւես և ընկերները հոմանիների ետևից սուրացին և ամէն կողմ հալածական ցնդեցին: Սոսկալի էր նրանց կոտորածն և ջարդը, քստմնելի՝ հեծեծանքն և ողբը՝ արեան ճապաղիքով ներկուեցաւ ամբողջ սրահի յատակը:

Այս արհաւիրքի միջոցին Լէյոդէս դուրս վագեց մի անկիւնից, Ոդիսւեսի ոտքն ընկաւ, ծընկերին փարուեցաւ և սրտառուչ ձայնով գոչեց. «Գթա ինձ, որ երբէք նաժիշտներիդ մի լավիրշ բան չեմ ասել, չեմ էլ գործել, այլ դեռ աշխատել եմ՝ չար խօսքերից գգուշացնել հոմանիներին: Բայց նրանք ինձ չէին լսում, ուստի և արժանի են այն դառն օրհասին, որին որ հանդիպեցան: Ես մի լոկ քուրմ էի, և եթէ սպանես ինձ, վատ փոխարինած կըլինիս այս տան արած լաւութիւնս»:

Ոդիսւես նրան պատասխանեց. «Եթէ դրանց

քուրմն ես, ուրեմն ստեղ աղօթած կը լինիս
աստուածներին, որ ես երբէք յետ չգալի՛: Ար-
դարև, ով որ դրանց քուրմն էր, դրանց հետ
էլ դժոխք իջնելու արժանի է»:

Այս ամելով Ողիսես վայր կռացաւ, վերցրեց
անշունչ Ազելայոսի սուսերն և կտրեց քրմի
պարանոցն, որի կառափն դեռ խօսելիս արեան
մէջ թաւալուեցաւ:

Կողմնական դռնակի մօտ կանգնած էր, ոսկէ
քնարն ձեռքում բռնած, աստուածային երդիչն
Փեմիս և ծփում էր տարակոլսի մէջ—արդեօք
դժւրս դնար և նստէր մեծազօր Արամազդի սե-
ղանի մօտ, թէ Ողիսեսի ոտքն ընկնէր ողոքա-
ւոր: Վերջապէս երկրորդն ընտրեց: Քնարը դրաւ
մի մեծ տաշտի և արծաթագամ աժոռի միջև,
և ասաց. «Ֆնկերիդ փարուելով աղաչում եմ
քեզ, ով Ողիսես, ողորմիր ինձ: Դու ինքդ մի-
օր կ'ափսուաս, եթէ սպանես մի երգիչ, որ
նուագներով փառաբանում էր աստուածներին
և մարդկանց: Ես միշտ այն եմ երգել, ինչ որ
ազգել էր աստուած: Թող սիրասուն որդիդ վը-
կայէ, որ ես ոչ շահու յուսով եմ այս տեղ ե-
կել, ոչ էլ ազատ կամ քովս, այլ միշտ բռնի են
ինձ տունդ բերել»:

Տելեմաք, որ մօտիկ էր կանգնած, այս լսեց
և ասաց հօրը. «Հայր իմ, վնաս մի՛ հասցնիր

այդ անմեղին: Գթա նոյնպէս և Մեդոնին, որ
միշտ խնամել էր մանկութիւնս,—եթէ Եւմէսս
կամ Փիլետիս նրան արդէն սպանած ըլինին»:

Այն ինչ Մեդոն քարոզն, եղի կաշխով փա-
թաթուած, թաք էր կացել գահոյքի տակ: Բայց
այդ խօսքերն լսելուն պէս՝ դուրս սողաց,
Տելեմաքի ոտքերն ընկաւ և ծնկերն գրկելով,
աղաղակեց. «Ես այս տեղ եմ, սիրելինս: Դու ե-
ղեր ինձ հովանի, որ հայրդ ինձ չսպանէ»:

Ողիսես ժապելով ասաց նրան. «Միամիտ
կաց—որդուս խօսքը փրկեց քեզ: Դու և մեծա-
հըռչակ երգիչն գաւիթ գնացէք, մինչև գործս
վերջացնեմ»:

Երկուոն էլ խակոյն սրահից ելան և ահաբեկ
գնացին նստան վեհ Արամազդիս սեղանի մօտ:

Ողիսես վեր վայր զննեց բոլոր սրահը, բայց
այլ ևս ոչ մի սեղեխ կենդանի չգտաւ: Բոլորն
էլ դիտապաստ ընկած էին,—բոլորն էլ, որ
գարշելի գործերով այնքան ժամանակ անարդել
էին Ողիսեսի պալատը՝ աստուածային և մարդ-
կային օրէնքներին հակառակ:

յեց Տելեմաքին՝ իւր մօտ կանչել դայեակին։
Եւրիկէն իսկոյն եկաւ և գտաւ սրահում ա-
րիւնով և փոշով ծածկուած Ողիսւսին։ Այժմ
դա նման էր մի առիւծի, որ դաշտում մի ցուլ
յօշատելուց յետ՝ հպարտ հպարտ վերադառնում է
արիւնաթաթաւ կղակով։

Երբ Եւրիկէն նկատեց, որ իւր տէրն՝ աս-
տուածների օգնութեամբ՝ խսպառ ջարդել էր
Հոմանիներին, բարձրաձայն խնդաց և բերկե-
ցաւ։ Բայց Ողիսւս արգելեց նրան այս ցնծու-
թիւնն և ասաց. «Միայն սրտիկ մէջ ցնծա,
մայրիկ, զի երբէք վայել չէ մեզ սպանուածների
վրայ խնդալ։ Վերջապէս դրանք իրենց պատիժը
ստացան, ըստ որում ոչ մահացու մարդ էին
յարգում՝ աղքատ լինէր թէ մեծատուն, — ոչ էլ
ովմպաբնակ աստուածներին։ Սակայն եկ ասա
ինձ՝ որ աղախիններն էին դրանց հետ միաբան
և իրենց պարտքին անհաւատարիմ»։

«Տան իսուն աղախիններից՝ տասներկուուն են
լիրը և ցոփ», պատասխանեց Եւրիկէն։ «Բայց
ես կ'երթամ լուր տանելու թագուկուն, որ այժմ
խոր քնով հանդում է իւր մահճում»։

«Թող դեռ ննջէ», կրկնեց Ողիսւս. «Գնա
տասներկու աղախիններին ինձ մօտ կանչիր»։

Եւրիկէն հեռացաւ, և Ողիսւս ասաց որդուն
և երկու հովիւներին. «Այս դիակները դուրս

տարէք։ Աղախիններն որ գան, թող ձեզ օգնեն
և ապա թէ սեղաններն և սրահը արիւնից
մաքրեն։ Երբ ամէն բան կարգի բերեն պրծնեն,
դուրս կըտանէք նրանց և բոլորին էլ կըսպա-
նէք բակում, որպէս զի առ միշտ մոռանան
այն անառակ սիրոյ խաղերն, որ վայելում էին
պակոտ և լիրբ հոմանիների հետ»։

Ահա եկան յանցապարտ աղախիններն՝ դող-
դոջուն և գունաթափ, և երբ տեսան, ինչ որ
արդէն կատարուել էր, աղիողորմ արտասուելով
ճիչ հանեցին։ Թշուառները ստիպուեցան իրենց
ձեռքով դուրս տանել Հոմանիններին իրենց յա-
տուկ սեղեխներին, և Ողիսւս արագ արագ ճե-
պում էր նրանց։ Յետոյ արիւնոտ աթոռներն և
սեղանները մաքրեցին։ Տելեմաք և հովիւները
փութացին աւել սրահի յատակը, — իսկ աղա-
խիններն արիւնագանդ աղբիւսը դուրս կրեցին։

Այս բուրը գործն որ վերջացաւ, Տելեմաք
ետևի գաւիթը քշել տուաւ աղախիններին և
ասաց. «Այս անառակ պոռնիկները սրով սպա-
նուելու արժանի չեն»։

Հովիւներն առին մի մեծ պարան, աղախին-
ների վզից կապեցին և բոլորին էլ մի առ մի սիւ-
նի վրայ քաշեցին։ Եւ ապա թէ դրանք, ոտ-
քերը տատանելով, կախ մնացին, և մեռան։

Այնուհետև հովիւները մտան զինանոց, ար-

Ճակեցին Մելանթէսին և մեռցրին դաւթի մէջ:

Ահա այսպէս վերջացաւ արիւնահեղ կոտորածը: Ոդիսւես կանչեց դայեակին և ասաց. «Եւրիկէ, գնա ծծումք բեր, որ ամէն ժահի դեղթափ է, նաև կրակ, և եկ ծխենք այս սրահը»:

Պառաւը բերաւ բուրվառով կրակ և ծծումք, և Ոդիսւես ծուխ տուաւ սրահին, նրբանցներին և դաւթին:

Հաւատարիմ Եւրիկէն նոյն միջոցին գնաց յայտնեց միւս կանանց Ոդիսւեսի վերադարձը, և նրանք շահեր բռնած սրակ իջան: Կանայք իրենց տիրոջը տեսնելուն պէս՝ նրա շուրջը խոնճեցան և ճակատը, ուսերն և ձեռքերը համբուրեցին: Ոդիսւես բոլորին էլ ճանաչեց և այնպիսի գորով զգաց, որ բարձրածայն լաց եղաւ:

10

ԵԽՐԻԿԼԻՆ ԿԱՆՉՈՒՄ Է ԹԾՎՈՒՀՈՒՆ

Ոդիսւես հրաման տուաւ դայեակին՝ իւր ամուսնուն կանչելու: Սրտի սաստիկ խնդութիւնից պառաւն կարծես մանկացաւ և խայտալով վերև վագեց: Թագուհին դեռ ննջում էր իւր հոյակապ առագաստում: Դայեակը նրա սնարքին մօտեցաւ և ասաց դուարթագին.

«Զարթիր, դստրիկ, շուտ զարթիր, քանզի ահա կատարուեցաւ, ինչ որ փափագելով փափագում էիր, որ կատարուէր. Ոդիսւես վերադարձաւ և բոլոր հոմանիներին կոտորեց»:

Պենելոպէն աչքերն բաց արաւ և ասաց. «Ի՞նչեր ես ասում, ով մայրիկ: Վախենում եմ, որ աստուածները խելքդ թուցրած ըլինին: Զէ որ նրանք կարող են, երբ կամենան, ուշիմներին էլ ապուշ դարձնել: Անշուշտ քեզ էլ խելքիցդ հանել են, եթէ ոչ այդպիսի կատակ չէիր անիլ, քանի որ զիտես սրտիս վիշտն, և քաղցր նիրհս չէիր փարատիլ առանց մի հիմնաւոր պատճառի: Ոդիսւեսի Տրոյա չուելու օրից ի վեր դեռ երբէք աչքերիս այսպիսի անուշակ քուն չէր տիրել: Եթէ հանգիստս մի ուրիշ նաժիշտ խանգարէր, բնաւ անպատիժ չէր մնալ: Սակայն քո ալեոյթից ակնածում եմ»:

Եւրիկէն պատասխանեց. «Քաւ լիցի ինձ կատակ անել, դստրիկս, Ոդիսւես իրաւ վերադարձել է և դու էլ նրան տեսել ես: Նա այն սուրիկն է, որին այնքան այպանեցին հոմանիները: Տելեմաք, որ ամէն բանի իրագէկ էր, օգնեց հօրը կռուի մէջ»:

Պենելոպէն այս որ լսեց, մահճից թռաւ, պառաւին զրկեց և գոչեց խնդութեան արտասուքով. «Եթէ ասածդ ճշմարիտ է, ուրեմն ա-

սամական մէնակն ինչպէս կարացաւ այնքան
մարդիկ տապակել»:

«Թստրիկ իմ, այդ բոլորից ես ինքս ոչինչ
չտեսայ», պատասխանեց գայեակը, «որովհետեւ
աղախինների հետ տագնապալից նստած էի ա-
մուր փակուած սենեակում, և միայն աղաղակի
և հեծութեան ձայն էր հասնում մեր ական-
ջին: Ես կոտրածից յետոյ միայն սրահ իջայ,
ուր և տեսայ քո պանծալի ամուսնուն, որ մի
լեռնային առիւծի նման կանդնած էր շեղա-
շեղ գիակների մէջ տեղում: Ողիսես հրամայեց
դուրս հանել դիերն և այժմ բուրփառով ծուխ
է տալիս սրահին: Սակայն եկ, դստրիկ, և աչ-
քովդ տես այն մարդուն, որ այսքան տարի
բացակայ էր քեզանից»:

«Ոչ», կրկնեց Պենելոպէն, «անհնարին է, որ
ասածդ ստորդ լինէր: Անշուշտ աստուածներից
մին կըլինի հոմանիներին սպանողը, այլ ոչ թէ
Ողիսես, զի նա վազուց մեռել է տար աշխար-
հում»:

Եւրիկլէն վերջապէս տաքացաւ և գոչեց. «Ին-
չու ես դարձել անհաւատ, նվ դստրիկ: Ամու-
սինդ նստած է իւր չարկի տակ, և դու ասում
ես, թէ մեռել է: Բայց ահա քեզ և այն նշանը,
որով նրան ճանաչեցի; Գիտես, որ մի ժամա-
նակ նա վերք էր ստացել վայրի կինձից, և

այդ վէրքից սպի էր մնացել: Արդ՝ երբ դու ինձ
հրամայեցիր լուանալ այն մարդու ոտքերը, ո-
րին մենք մի մուրկի տեղ էինք դրել, ես այդ
սպին նրա ոտի վրայ շօշափեցի և տեսայ: Ես
շուարած վեր կացայ, որ կանչեմ քեզ և սպին
ցոյց տամ, բայց նա բռնեց ինձ և մահ սպառ-
նալով հրամայեց, որ լռեմ»:

Պենելոպէն գլուխը թօթուեց և ասաց. «Մայ-
րիկ, թէպէտ և շատ փորձուած կին ես,
այսու հանդերձ քո բանը չէ թափանցել յա-
ւերժական աստուածների խորհուրդը: Սակայն
գնանք, վայր իջնենք, որ տեսնեմ անշնչացած
հոմանիներին և նրանց սպանող քաջ մարդուն»:

11

ՈԴԻՍԵԻՍ ԲԱՅՎՈՒՄ է ԿՆԱԶ ԱՌՁԵՒ

Պենելոպէն հագաւ իւր պերճ հանդերձներն և
վայր իջնելիս մտածում էր, թէ արդեօք համ-
բուրէր գլուխն և ձեռքերն այն մարդու, որ իւր
ամուսինն էր Եւրիկլէի ասելով,—թէ նախ փոր-
ձէր հարցումներով: Վերջինս առաւել լաւ հա-
մարեց, և սրահ մտնելով, մի զահոյքի վրայ
նստաւ: Ողիսեսի դէմ յանդիման: Ողիսես աչ-
քերն խոնարհեց և սպասում էր, որ կինն իրեն
ողջունէր: Բայց կինն երկար ժամանակ լուռ

մնաց և նրան նայելով, կարծես թէ մերթ ճառաշում էր ամուսնուն, մերթ դարձեալ աղքատ մուրիկ համարում:

Վերջապէս Տելեմաք ասաց. «Սիրտի քարացել է, ինչ է, որ այդպէս անզգայ ես երևում սկըբելի հօրս դէմ յանդիման: Ինչու նրա կողքին չես նստում և չես հարցնում, թէ ինչե՞ր է կրել այսքան տարիների ընթացքում: Յիրաւի, ոչ մի կին այդպէս չէր ընդունիլ վերադարձող ամուսնուն»:

«Որդեակ իմ, միտքս իսպառ վարանած է և գեռ բնաւ չգիտեմ, թէ ինչ անել պատշաճ էր», պատասխանեց Պենելոպէն: «Բայց եթէ իրաւ դա իմ մարդն է, իսկոյն տարակոյսներս կըփարատուին: Մենք իսկոյն իրար կըճանաչենք միքանի որոշ նշաններից, որոնք միայն մեզ են յայտնի»:

Փալտեցաւ Ողիսես և ասաց որդուն. «Տելեմաք, մայրդ գեռ չէ հաւատում ինձ, ըստ որում իբրև մուրիկ եկայ այս տեղ: Ուստի ժամանակ տուր, որ հարցերով փորձէ ինձ: Իսկ մենք եկ մտածենք, թէ ինչ կըմնայ մեզ անել, որ նոր ոսոխներից ապահով լինինք: Եթէ մէկը մի մարդ սպանէ, չէ՞ որ սպանուածի ազգականները վրէժ կըսպառնան և նա փախչելու կը ստիպուի: Մենք սպանեցինք Իթակէի ամենա-

ւագ իշխաններին. վասնորոյ պէտք է խորհել, թէ ինչ կերպով պաշտպանուինք»:

Քաջուշիմն Տելեմաք պատասխանեց. «Հայրիկ, դու ինքդ լաւ գիտես այդ, քանզի, ինչպէս լսած եմ, բոլոր մահկանացուներից գերազանց ես հանճարով: Վճռիր, մենք էլ սիրով քեզ կըլսենք և հրամանդ կըկատարենք»:

«Ուրեմն ականջ դրէք», կրկնեց այժմ Ողիսես. «Ինձ թւում է, թէ լաւ կ'անէք, եթէ իսկոյն բաղնիք գնաք և նոր զգեստներով պըճնուիք: Տան ծառաներն էլ թող զարդարուին: Յետոյ աստուածային երգիչն թող քնար ածէ, իսկ դուք ամենքդ կայթելով պար ըռնեցէք: Այն ժամանակ ո՛վ էլ անցնի փողոցով, կը կարծէ, թէ հարսանիք է տօնվում այս տեղ, և այս օր հոմանիների սպանութիւնը ծածուկ կըմնայ: Իսկ վաղն առաւօտ ագարակ կ'երթանք և այն տեղ կըմտածենք մեր ասպագայ ընթացքը»:

Տելեմաք և հովիւները սիրով ընդունեցին ժագաւորի խորհուրդն, և սրահն իսկոյն թըլնդաց քնարի հնչիւնով և պարողների տրոփիւնով: Փողոցի անցաւորներն լսեցին այդ և ասացին. «Անշուշտ Պենելոպէն հարսանիք է կատարում հոմանիներից մէկի հետ: Այ թշուառ կին, որ մոռացաւ իւր մարդուն և էլ չուզեց վերադարձին սպասել»:

Նոյն միջոցին Ողիսւսն էլ բաղնիք գնաց,
լուացուեցաւ, և Եւրիկլէն նրա գլուխն և ձեռ-
քերն անուշաբուր իւղով օծեց: Այնուհետև պատ-
մուճանով զարդարուեցաւ և մտաւ սրահ, ուր
Աթենաս այնպիսի շնորհ հոսեց նրա գլխին և
ուսերին, որ բոլորեքեան նրան տեսնելիս հի-
ացան:

«Տարօրինակ կին», ասաց նա իւր կնոջը,
«աստուածներն իրաւ քեզ ապառում սիրտ են
տուել, որ մինչև այժմ լուռ ես նստած առ-
ջևս, այն ինչ ես քսան տարի կարօտ էի քաղց-
րահնչիւն բարբառիդ»:

Յետու, Եւրիկլէն դառնալով, շարունակեց.
«Վեր կաց, մալրիկ, և անկողին պատրաս-
տիր, որ փոքր ինչ հանդստանամ»:

«Ո՞վ մարդ, հաւատա, որ հպարտութիւնս չէ
ինձ խօսել արգելողը», անդրադարձ տուաւ քաշ-
ուշիմ Պինելոպէն: «Սակայն, Եւրիկլէ, գնա նա-
ժիշտների հետ ամուսնուս շինած սրակապանն և
մի ուրիշ սենեակ տար անկողինը, վրան էլ
փռիր վերմակ, մորթեր և դորդեր, որպէս զի
մարդս մի անդորր քուն փայելէ»:

Այսպէս խօսեց ամուսնուն փորձելու մտքով:
Խոկ սա սրտնած պատասխանեց. «Ո՞հ, Պինե-
լոպէ, ինչպէս կարեվէր խոցում են ինձ այդ
խօսքերդ: Ո՞վ կարող է տեղից շարժել այն ան-

կողինն, որի գաղտնին մենք երկուսս միայն
զիտենք: Երբեմն կանգնած էր պալատիս մօտ
մի սաղարթուն ամբարձուղէշ ձիթենի: Այդ ձի-
թենու տակ շինեցի մեր սրակապանն և գա-
զաթը կտրեցի: Սրակապանի որմերը կանգնելուց
յետ՝ ես վերևից ծածկեցի և ամէն բան այնպէս
լարդարեցի, որ վրան նալելն զուարճութիւն էր:
Այնուհետև սենեակի մէջ կանգուն մնացած ձի-
թենու բունն շուրջանակի յղկեցի, անկողինը
դրան ամուր և անրաժան հարստեցի և ապա
թէ ոսկով, արծաթով և փղոսկրով զարդարեցի:
Ահա տսում եմ քեզ տր բոլորն, որպէս զի վերջ
ի վերջոյ իմանաս, թէ ես քո ամուսինն եմ»:
Թագուհին այս որ լսեց, բերկրութիւնից սիրտը
թնդաց, նա վեր կացաւ, լալով գիմեց ամուս-
նուն, փաթաթուեցաւ նրա վզին և խանդակաթ-
շերմութեամբ արգոյ գլուխը համբուրեց: Հուսկ
ուրեմն նորից լեզուին տիրանալով, խօսել սկսաւ
և ասաց. «Ողիսւս, զու որ միշտ ուրիշներից
բարի էիր և խոհական, մի՛ բարկանար, որ իս-
կոյն չփութացի ողջոյն տալու քեզ սիրով: Այս,
ես միշտ սաստիկ երկնչում էի, որ նենդամիտ
չարերից մին չխարէր ինձ: Բայց ահա ստու-
գեցի, որ դու ես իրաւ իմ սիրատուն ամուսինը,
քանզի ինչ որ ասացիր, մինչև այժմ գաղտնիք
է միւսների համար»:

Երկուսն էլ լալով մէկզմէկու փարուեցան, և
ելիար ժամանակ չէին կարանում մի բառ ա-
սել: Ապա թէ սկսան պատմել կրած վշտերն,
և ժամերն այնպէս սահեցան, որ փաղուց ար-
դէն կէս գիշերն անցել էր, երբ մեկնեցան ա-
նուշակ քնով հանգչելու:

12

ՀՈՄԱՆԻԵՐԻ ՀՈԳԻՆԵՐԸ ԴԺՈԽՔՈՒՄ

Հերմէս աստուածն իւր ոսկեղէն գաւազանով
դժոխք քշեց սպանուած հոմանիների հոգիները:
Այն տեղ երամ երամ նրանց ընդ առաջ վաղե-
ցին անժիւ անհամար ուրուներ, որոնց մէջ
գտանվում էին և տրոյական դաշտում ընկած
դիւցազների հոգիները: Դրանք խմբուած էին
Աքելի շուրջը: Ազամեմնոնի հոգին էլ մօտեցաւ
նրանց, և Աքելլես նրան ասաց. «Ո՞վ Ազամեմ-
նոն, որ որպէս իշխանապետ Տրոյա վարեցիր
յոյներին, լաւ էր, որ դու էլ մարտում ընկած
լինէիր: Այն ժամանակ յոյները մի մեծ դամբան
կըկանգնէին, որ քեզ և տոհմիդ յաւիտեան
փառքի կոթող կըլինէր: Բայց աւաղ, տուն վե-
րադարձար, որպէս զի անփառունակ մահով
մեռնիս յարկիդ տակ»:

Ազամեմնոն անդրադարձ տուաւ և ասաց.

«Երանի՛ քեզ, Աքելլես: Ինչ որ ինձ ես ցանկա-
նում, քեզ բաժին վիճակուեցաւ: Դու մեռար,
մարտոնչելով ուսզմի դաշտում, և մենք մար-
մինդ մեծ հանդէսով յուղարկեցինք և ամիւնդ
սափորի մէջ ամփոփեցինք: Այդ սափորն յետոյ
երկիր իջեցրինք, վրան մի դամբան դիզեցինք
և լիշտակդ պերճ խալերով տօնեցինք: Իսկ
ես, աւաղ, շատ խալտառակ մահով մեռայ:
Փանզի ժանտ կնոջս տարփածուն սրիկայօրէն
մորթեց լինձ լրդարանում, հէնց որ տուն էի
վերադարձել երջանկաւէտ ինդութեամբ»:

Այս խօսքերն արհաւրական ձախով ասելուց
յետ՝ Ազամեմնոն ճանաչեց հոմանիներից մէկի
ուրուն և ասաց. «Ամփիմեդոն, ինչ աղէտ է
պատահել ձեզ, որ այսքան համատի քաջ մար-
դիկ, բոլորդ էլ համախումբ դժոխք էք դալիս:
Արդեօք Պոսիդոնի բռնութիւնը ձեր նաւը ջախ-
ջախեց, թէ թշնամիք սպանեցին ձեզ, մինչ
յափշտակում էիք նրանց հօտերը»:

Ամփիմեդոն ողբական ձախով պատասխանեց.
«Մենք բոլորս Խթակէի թագուհու ամուսնու-
թեան թեկնածու էինք և երեք տարի՝ օր ու
գիշեր շուալտում էինք նրա տան մէջ, կամե-
նալով ստիպել նրան, որ մեզնից մէկին փեսայ
ընտրէր: Իսկ նա մնում էր իւր մարդուն հա-
ւատարիմ և սպասում էր նրան անձկութեամբ»:

Վերջապէս Ոդիսւս մի աղքատի գձուձ շորերով
հայրենիք վերադարձաւ, և ոչ ոք նրան չըճա-
նաչեց: Նա ուշի ուշով քննեց ամէն մէկիս
սիրտն և միտքը, մեր գործած չարիքները, բայց
և ծածկեց իւր զայրոյթը մինչև մի որոշ ժա-
մանակ: Այդ միջոցին Պենելոպէն հանեց մար-
դու աղեղն, որ տանն էր թողել պատերազմի
գնալիս, և ասաց. Ես այն մէկին մարդու կ'եր-
թամ, ով որ լարէ այս աղեղն և տասներկու
օդակներից թափ անցկացնէ փքինը:— Բոլորս
էլ ճիզ թափեցինք, սակայն մեզնից ոչ ոք չը
կարացաւ լարել այն հաստաբեստ աղեղը: Այն
ժամանակ հէք մուրիկն էլ աղեղն ուզեց, և
բանը տես—թեթև լարեց և թռցրեց փքինն
օղերի միջից: Երկրորդ փքնով Անտինոսին տա-
պալեց, որ ամենազօրեղն էր մեր խմբում, և
ապա թէ անունն ասելով, ահեղաձայն յայտա-
րարեց, թէ եկած էր մեզ կործանելու: Անշուշտ
օղնում էր նրան մի աստուած, քանզի կարձ
միջոցում յաղթանակեց, և բոլորս դիտապաստ
ընկանք յատակի վրայ, որ մեր արեան ապա-
ժուժով ողողուած էր: Ահա այսպիսի աղիողորմ
օրհաս գտանք երամովին»:

Ագամեմնոն այս որ լսեց, ասաց. «Երանելի դ
Ոդիսւս, որչափ պարկեշտ է ամուսինդ, ի՞նչպէս
անեղծ պահեց նա իւր սէրն դէպի քեզ: Նրա

փառքն աշխարհումս անջնջելի կըմնայ. մարդիկ
միշտ գովութեամբ կըիշատակեն անունը, իսկ
իմ վատշուէր կնոջ համբաւից պժգալով երես
կըդարձնեն»:

Այսպէս էին զրուցում իրար հետ երերական
ուրուները:

13

ՈԴԻՍԵԻՍ ԳԵՈՒՄ Է ԼԱՅԵՐՏԷՍԻ ՄՈՏ

Երբ վարդամատն արեգակը նորից երկինք
բարձրացաւ, Ոդիսւս թողաւ անդորրաւէտ ան-
կողինն, հագաւ իւր զէնքն ու զարդը, իրա-
խոյս ազգեց Տելեմաքին և զինուելու հրաման
տուաւ հովիւներին: Նրանք դուրս ելան պալա-
տից և Աթենասի պաշտպանութեամբ լուկ ան-
ցան քաղաքից, ուր նրանց ոչ ոք չնշմարեց,
թէև օրն արդէն լուսացել էր: Այսպէս հասան
այն ագարակն, ուր բնակում էր Ոդիսւսի ծե-
րունի հայրն Լայերտէս, որ որդու վրայ քաշած
վշտի պատճառով արդէն վաղուց հեռացել էր
պալատից և այժմ երկրի մշակութեամբ էր պա-
րապում:

Նրա հիւղին մօտենալուն պէս՝ Ոդիսւս ա-
սաց. «Տելեմաք և դուք, ով հովիւներ, իսկոյն
մտէք այս տնակը, մորթեցէք մի պարարտ խոզ

և նախաճաշ պատրաստեցէք: Իսկ ես պարտէգ կ'երթամ և այն տեղ հօրս կըտեսնեմ»:

Այս ասելով, հովիւներին յանձնեց զէնքերն և պարտէգ մտաւ: Պարտէգի մէջ ոչ մի ծառայ չըտեսաւ, որովհետև գնացել էին ցանկի համար փշուտ թուփեր բերելու: Այն տեղ հայրը փոս էր փորում մի ծառի տակ: Նա հագած էր հասարակ շոր, արջառամորթ սոնապաններ և մի այծենի հին դդակ:

Ողիսես հէնց որ տեսաւ տարիներից ընկածուած ալեօրին, որի խորշոմած երեսը ցաւագին վիշտ էր արտայայտում, կանդ առաւ և լաց եղաւ: Յետոյ մտածեց — արդեօք վաղէր իսկոյն հօր ընդ առաջ և համբուրէր նրա ալեղարդ գլուխը, թէ կամացուկ մօտենար և զդուշաւոր հարցումներով տեսակցութեան պատրաստէր: Նա ընտրեց վերջին միջոցն և մօտենալով բահին կըթնած ծերունուն, այսպէս ասաց.

«Այ ծերունի, դու մի հմուտ պարտիզպան ես լիրաւի: Այս տեղ ես ամէն ուրեք մշակութեան հետք եմ տեսնում: Ոչ մի տունի չկայ, որ սիրով խնամուած չլինէր — ոչ թղենի, ոչ որթի տունկ, ոչ ձիթենի, ոչ տանձենի: Սակայն չբարկանաս, եթէ սրտիս թելադրածն ուղիղ ասեմ — միայն ինքդ ես անխնամ թողուած երկում: Դրան ապացոյց են թէ մարմինդ և

թէ հնոտի շորերդ: Զեմ կարծում, որ տէրդ քեղ ծերութեան համար այդպէս աչքէ ձգած լինէր, քանի որ դու ժիր մշակ ես: Դառայական նշան էլ չեմ տեսնում վրադ. ընդհակառակն՝ արքայական դէմք ունիս: Արդ ասա ինձ, ով ծերունի, ով է տէրդ, և արդեօք իրաւ իթակէ է այս երկրի անունը, ինչպէս ասաց մի անցորդ, որին պատահել էի այս տեղ գալիս: Ես այն մարդուն քաղաքավար չեմ անուանիլ, քանզի առանց վրաս նայելու գնաց հեռացաւ, մինչդեռ ես կամենում էի հարցումն անել մէկի մասին — արդեօք դեռ կենդանի էր, թէ իջել էր գժոխքի տունը: Այդ մէկին ես երբեմն հիւրասիրել էի անձկալի հայրենիքումս, և միշտ էլ լիշում եմ նրան, որովհետև շատ յարգելի եկաւոր էր: Նա պատմեց ինձ, թէ իւր հայրենիքն իթակէն էր և պարծանքով աւելացրեց, թէ մեծահռչակ լայերտէս թագաւորի որդին էր»:

Լաց եղաւ լայերտէս այս խօսքերն լսելիս, և ասաց. «Այն, օտարական, իթակէն է այս երկիրը, բայց չար մարդիկ յափշտակեցին այն պալատը, որի տիրոջը պատուել էիր տանդ մէջ: Արդարեւ նա արժանապէս կըփոխարինէր լաւութիւնդ, եթէ այս տեղ գտնէիր նրան: Նրա սըրտի ազնւութիւնն ես քաջ դիտեմ, քանզի նա իմ որդին էր: — Աւաղ, նա սկ օրհասի

Հանդիպեցաւ և էլ չտեսաւ հայրենիքը։ Իւր սիրուն երկրից տարադէմնա կամ ձկներին կամ վայրի գաղաններին կեր եղաւ, դառն սուզի մէջ թողնելով ծնողներին և բարեբարոյ ամուսնուն։ Նրա մալրն վաղուց մեռաւ սրտի վշտից։ Ես էլ շուտով գերեզման կ'իջնիմ անտանելի աղէտից»։

Լայերտէս այս որ ասաց, երկու ափով հող ցանեց ալեզարդ զլիսին և մեծահառած լաց եղաւ։ Այն ժամանակ մի անպատում ցաւ խոցոտեց որդու սիրտը. նա ցատկելով հօր վրայ ընկաւ, գրկեց նրան և նոյնպէս արտասուելով, հեկեկաց. «Հայր իմ, ես եմ Ողիսես, քո որդին, որ ահա քսան տարուայ անջատումից վերադայ և բոլոր շամբուշ հոմանիներին պալատիս մէջ կոտորեցի։ Էլ մի սգար ուրեմն և սանձ դիր արտասուքի՞դ»։

Դերունին չկարացաւ նոյնհետայն հաւատ ընծայել այդ խօսքերին։ Նա շուտարելով Ողիսեսի վրայ նայեց և ասաց. «Եթէ իրաւ որդիս ես, տուր ինձ մի անսուտ նշան, որով կարանայի ճանաչել քեզ»։

«Ուրեմն լսիր, հայրիկ իմ, ինչ որ կ'ասեմ», պատասխանեց Ողիսես։ «Ահա այն սպին, որ ստացել էի Պարնասի վրայ կինձ որսալիս։ Մի ուրիշ նշան էլ կ'ասեմ քեզ։ Ես դեռ մանուկ

դոլով, քեզ հետ միասին այս պարտէզում զբօնելիս, մի քանի ծառ էի խնդրել քեզանից։ Խընդիրս սիրով կատարեցիր և տուիր ինձ տասներեք տանձենի, տասն խնձորենի և քառասուն թղենի։ Բացի այսմանէ՝ լիսուն հատ էլ որթի տունկ ընծայեցիր, որոնք կարմրորակ ողկոյզներով լի էին, և սիրտս անչափ ուրախացրիր»։

Այս խօսքերից Լայերտէս ոյժը կորցրեց, և ոտքերը թուլացան։ Ցնծութեան աղաղակով փարուցաւ նա զաւակին, և եթէ սա ամուր ըլբոնէր պատկառելի ծերունուն, վերջինս անշուշտ վայր կ'ընկնէր։ Լայերտէս, ուշքի գալով, բազուկները տարածեց և գոչեց. «Ո՛վ Աստուածներ, եթէ վերջապէս հոմանիները սպանուած են, հաւատում եմ, որ դուք դեռ կաք երկնքում»։ — Եւ ապա շարունակեց. «Սակայն վախենում եմ, ով որդեսկ, որ հոմանիների բարեկամները խուներամ այս տեղ չգան և քեզնից վրէժ չխնդրեն»։

«Միամիտ կաց, հայրիկ, այդ մասին», պատասխանեց Ողիսես։ «Լաւ է՝ այժմ զուարթ սրտով ներս մտնենք, ուր Տելեմաք և հովիւները ճաշ են պատրաստել մեղ համար»։

Ուրախ ուրախ զրուցելով տնակը մտան։ Լայերտէս իսկոյն լուացուեցաւ և մի գարմանիչ պառաւ կին անուշահոտ իւզով օծեց նրա մարմինը։ Ցետոյ հագաւ պատմումանն և արքա-

յական վսեմութեամբ անմահներին նմանելով,
եկաւ նստաւ որդու մօտ: Երկուսն էլ իրար մօտ
նստած՝ շատ բաներ պատմեցին, մինչև որ Տե-
լեմաք և հովիւները հաց, միս և հոգեպարար
անոյշ գինի ներս բերին: Վերջապէս ծառաներն
էլ դաշտից եկան և երբ տեսան Ողիսեսին,
ցնծութիւնից արտասուեցան և ձեռքերը համ-
բուրելով, բազուկներին փարուեցան: Նրանք էլ
տնակում մնացին և միասին ճաշեցին:

14

ՄԱՐՏ ԵՒ ՀՈՇՏՈՒԹԻՒՆ

Մինչ այս, մինչ այն՝ հոմանիների սպանման
գոյժը քաղաքի մէջ տարածուեցաւ, և նրանց
ազգականներն ողբ հանելով խուժեցին և դիակ-
ները թաղեցին: Այնուհետև խորհուրդ տեսան,
թէ ինչ անէին Ողիսեսի հետ: Բոլորից շատ
զայրացած էր Անտինոսի Հալին Եւփիտէս: Դա
ոտքի ելաւ հրապարակում և ասաց. «Ո՞վ բա-
րեկամներ, լաւ լիշեցէք, որքան չարիք պատ-
ճառեց մեզ Ողիսես: Կախ և առաջ բազմաթիւ
մարդիկ հանեց մեր կղզուց և ոչ մէկին յետ
չբերաւ: Հիմի էլ մեր ամենընտիր զաւակներին
կոտորեց: Եկէք ուրեմն շտապով պնդենք ետե-
ւից և այս ոճի վրէժը հանենք: Եթէ յապա-

ղենք, նա կամ Պիւրոս կրփախչի կամ Էլիս, և
մենք յաւիտեան խայտառակուած կրմնանք: Դէ
ուրեմն վեր կացէք, և տանք նրան իւր գոր-
ծերի հատուցումը: Լաւ է՝ իսկոյն մեռնեմ և
դժոխքի անդունդն իջնեմ, քան թէ կենդանի
մնայ մեր որդիների և եղբայրների այդ սպա-
նիչը»:

Այսպէս խօսեց լաց լինելով Եւփիտէս, և նրա
դէմքից և հառաչանքից բոլորի սիրտը յուզուե-
ցաւ: Նոյն միջոցին հրապարակ մտան Ողիսեսի
խնայած աստուածալին երգիչն Փեմիոս և քա-
րոզն Մեղոն: Մեղոն ձախն կարդաց Եւփիտէսի
խորհրդի դէմ և ասաց. «Ո՞վ մարդիկ, լսեցէք
ինձ: Աստուածների որոշմամբ և օգնութեամբ
էր, որ Ողիսես այդ գործն սկսաւ և գլուխ հա-
նեց: Ես ինքս սրահում աստուածներից մէկին
տեսայ, որ Մենտորի պատկերն առած, մերթ Ո-
դիսին էր կորով ազգում և մերթ յառաջ նե-
տուելով, հոմանիներին ջարդութում»:

Զարկուրեցան և դալկացան ունկնդիրք, երբ
լսեցին այս խօսքերը: Ապա թէ վեր կացաւ Հա-
լիթերսէս ծեր դիւցազն և ասաց. «Ինձ էլ ա-
կանջ դրէք, ով իթակէցիք: Ողիսես այն կա-
տարեց, ինչ որ միայն սահմանել էին անմահ
դիք հոմանիների վերաբերմամբ: Այս աղէտաւոր
գործն հարկաւ չէր պատահիլ, եթէ ինձ և Մեն-

տորին լսէիք և չար արարքից հոմանիներին զգուշացնէիք, ինչպէս որ քանիցս անդամ սաստելով խորհուրդ էինք տուել: Սակայն մեր խրատական ձայնը լսելի չեղաւ, և նրանք չդադարեցան ամենամեծ իշխանի դոյքը վատնելուց: Անպատուցին նրա պարկեշտ ամուսնուն, կամեցան սպանել ազնիւ որդուն: Ուստի հետեւցէք խորհրդիս—մի արշաւէք Ողիսի դէմ, որպէս զի ձեր գլխին էլ մի պատուհաս չհասնի»:

Ունկնդիրներից շատերն չալիթերսէսի ասածն արդար գտան և հանգիստ սրտով տուն գնացին. սակայն միւսներն Եւփիտէսին հետեւեցան, որ այժմ ևս առաւել զայրագնած՝ ջան էր դընում վրէժ խնդրելու Ողիսկսից:

Ողիսկս իւր արկածները հօրն և որդուն պատմելու վրայ էր, երբ մի ծառայ ներս վազեց և գոչեց. «Վեր կացէք, զէնք առէք—լժշնամիները մօտեցել են»: Ողիսկս, Լայերտէս, Տելեմաք և հովիւներն ոտքի ելան, զրահաւորուցան և զէնքերն առին: Յետոյ բացին բակլ դուռը, և Ողիսկս լժշնամական զնդի դէմ վարեց իւր խումբը: Նա տեսաւ, որ Աթենաս դիցուհին իւր հետ էր գնում Մենտորի կերպարանքով: Այս բանից սքանչացած՝ Ողիսկս առաց Տելեմաքին. «Վստահ եմ, որ արիարար կը մարտնչես և ամօլժես բերիլ մեր տոհմին, որի անվկանդ քաջու-

թիւնն արդէն այժմէն բոլոր աշխարհ հռչակուած է»:

«Հայր իմ», պատասխանեց Տելեմաք, «յատուկ աչքովդ կըտեսնես, որ ես անդուլ հետեւում եմ օրինակիդ»:

Դերունին ուրախ սրտով բացականչեց. «Ահա երջանիկ օր, երբ ես որդուս և թոռիս մրցութիւնը պիտի տեսնեմ մարտի մէջ»:

Աթենաս Լայերտէսին մօտեցաւ և ասաց. «Ո՛վ Լայերտէս, զու, որ կեանքումդ այնքան սրխրալի զործ ես արած, աստուածներին աղօթք կարգաւ և առաջինն տէդ արձակիր լժշնամուղէմ»:

Պատանեկան եռանդ զգաց ծերունին: Նա ամենից յառաջ ոլացաւ և դիմագրաւող ոսոխների վրայ տէդ արձակեց: Տէդը դիպաւ Եւփիտէսին, թափ անցաւ սաղաւարտից և այնպէս խոցեց գլուխը, որ նա անշունչ տապալուեցաւ:

Ողիսկս և Տելեմաք փոխորկաբար նետուցան լժշնամիների խրան մէջ. զէնքերն ահեղ շացեցին և ընկնողների հեծիւնով դաշտը լժընդաց: Հակառակորդներից մի մարդ անդամ նորից քաղաք չէր հասնիլ, եթէ Աթենաս որոտագոչ ձայն չարձակէր, որ ամեն ըի ոսկորի մէջ թափ անցաւ:

«Գաղաքարեցէք այս դառն մարտից, ով մարդիկ», աղաղակեց դիցուհին:

Թշնամիները սարսուացին, գետին ընկան, և
զէնքերը ձեռքից դուրս թուան։ Յետոյ նորից
վեր կացան և խուճապական տագնապով դէպի
քաղաք վագեցին։

Աղխմես արծուի նման ետևներից սրացաւ:
Այն ժամանակ Արամազդ մի բոցավառ շանթ-
արձակեց վերևից, և սոսկալի որոտմամբ ամ-
բողջ երկիրն սասանեց:

«Քաջդ Աղիսես, Լայերտէսի գերապանծ որդիդ», զոչեց գարձեալ զիցուհին. «Վերջ տուր կրուին, որպէս զի դու էլ զոհ չփնաս ամպրպացին Արամազդի բարկութեան»:

Ողիսես աստուածալին պատուէրը լսեց, սուրբ
պատեանի մէջ դրաւ և նահանջեց:

Վեհ դիցուհին այնպէս արաւ, որ բոլոր ժողովուրդը միրով ընդունեց իւր արքային, ապա թէ խաղաղութիւն և բարօրութիւն հաստատուեցան երկրի մէջ:

ՎԵՐՋ



ԱՐԴՅՈՒՆԱԿ	ՈՒՂԻՂ
կը. ՏԱՇ	
20. 8 ն. զինուէին	զենուէին (այսպէս և այլուր):
23. 6 վ. վատնեյուց	վատնելուց
25. 3 վ. ննջեցաւ	ննջեց
27. 1 ն. սրանանալով	սրանալով
39. 10 վ. երեկ	երէկ
43. 1 ն. մէնակ	մենակ (այսպէս և այ- լուր):
45. 2 ն. քստումն	ցնցումն
65. 2 վ. Ովգիւգիս	Ովգիգէ (և այլուր):
» 14 վ. սրտահառած	սրտահառած
» 5 ն. սեթոյը	սեաթոյը
68. 5 վ. լսեցեք	լսեցէք
71. 14 վ. գոտեմարտում	գոտեմարտում
74. 12 վ. ստեալ ստեալ	ստէպ ստէպ (և այլուր):
80. 4 վ. գեր	գէր
82. 9 ն. չեր դադարեւ	չէր դադարեւ
93. 2 ն. թէակեան	թէակեան
94. 7 ն. Արամազմից	Արամազդից
96. 1 ն. .	,
98. 10 ն. գեղավարս	գեղավարս
99. 10 վ. եղջեւրի	եղջերուի
122. 9 վ. կետեր	կէտեր
134. 3 ն. Ճշտիւ	Ճշգիւ
135. 3 ն. վերադարձի	վերադարձի
136. 8 վ. ամունուս	ամուսնուս
161. 7 ն. պաճկոն	բաճկոն

Էջ. Տաշ.

162. 2 ն. սաւտպան
164. 8 ն. աճկալրեաց
175. 1 վ. Ողիսկ.
176. 10 ն. չըհաշեցին
185. 1 ն. հետը
189. 3 ն. եթէ
192. 1 ն. միանգայն
207. 2 ն. պանդուան-
դաններ
220. 2 վ. բռունքով
229. 13 վ. գրնից
252. 8 ն. Ողիսկել
254. 9 վ. երդվու եմ
262. 1 ն. սրսում էի
283. 9 ն. բոլոր
- պաշտպան
անձկայթեաց
Ողիսկւս
չըհաշեցին (և այլութ):
հետը
եթէ
միանգամայն
պատուանդաններ
բռունցքով (և այլութ):
գրնից
Ողիսկւսի
երդվում եմ
սրսում էի
բոլոր

5000

Ա. Պ.

Հայ

100-

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1207987

ՀՀ Ազգային գրադարան



NL1207986

